


ԴԻՎԱՆ
ՀԱՅ ՎԻՄԱԳԻՐՈՒԹՅԱՆ

VI





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СВОД
АРМЯНСКИХ НАДПИСЕЙ

ВЫПУСК

VI

ИДЖЕВАНСКИЙ РАЙОН

СОСТАВИЛИ

С. А. АВАКЯН, Р. М. ДЖАНПОЛАДЯН

CORPUS INSCRIPTIONUM
ARMENICARUM

LIBER

VI

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԻՎԱՆ
ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ԴՐԱԿ
VI

ԻԶԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ

ԿԱԶՄԵՑԻՆ

Ս.Ա.ԱՎԱԳՅԱՆ, ՀՌՄ ԶԱՆՓՈԼԱԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

902.6 (c 43)
Ա. 77

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ք. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ս. Գ. ԲԱՐՈՒԴԱՐՅԱՆ, Կ. Գ. ՂԱՅԱԴԱՐՅԱՆ

Պրակի խմբագիր՝ Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լուսանկարաճանապարհները տեղեկում և լուսանկարչական բոլոր աշխատանքները կատարել են
Մ. Գ. ԱՀԱՐՈՆՅԱՆԸ և Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆԸ

Գծագրերը Ն. Հ. ԽԱՆՁԱԳՏԱՆԻ

Ա. 10602
703(02)—77 18—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Գիվան հայ վիմագրության» մատենաշարի ներկա պրակում հավաքված են այժմյան Իջևանի շրջանի ճարտարապետական հուշարձանների որմերին իրորագրված կամ ներկանյութերով գրված 365 արձանագրություններ, որոնք կարևոր և արժանահավատ աղբյուրներ են պատմական Հայաստանի այս շրջանի քաղաքական պատմության, սոցիալ-տնտեսական իրավիճակի, կենցաղի ու մշակույթի ուսումնասիրության համար:

Հնում Աղստևի արգասաբեր հովիտը և այն եղբրող անտառապատ լեռնալանջերը կազմում էին միջնադարյան Հայաստանի Գուգարքի նահանգի Կողբուփոր գավառի մի մասը: Ավելի ուշ, արաբական տիրապետության ժամանակաշրջանում և հետագայում այդ շրջանն անվանվել է Կայենի գավառ կամ Սևորգյաց երկիր, իսկ նրա հյուսիս-արևելյան հատվածը՝ նաև Մահկանաբերգ:

Բազրատունիների դարաշրջանից այստեղ հատ ու կենտ հուշարձաններ են պահպանվել՝ Մորո ձորո խաչաձև հատակագծով եկեղեցին և երկրի հյուսիսային սահմանները հսկող մի քանի ամրոցներ (Բուղուր, Մանթաշ, Աղջկարերդ և այլն): Կայենի և Մահկանաբերդի շինարարական մշակութային կյանքի աննախադեպ ծաղկումը տեղի է ունենում XII—XIV դարերում, երբ այդ զավառներն անցնում են Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյան իշխանների տիրապետության տակ: Կառուցվում կամ նորոգվում են մի շարք վանական նշանավոր համալիրներ՝ Հաղարծնի, Նոր Գետիկի, Մակարա, Դեղձուտի, Սրվելի, Կիրանց, Առաքելոց և այլ վանքերը, առևտրական տարանցիկ ճանապարհների վրա կառուցված Առաքելոց, Կոմանիձոր ավանները, Ասլահի, Սրանոցի կամուրջներն ու կարավանատները, նոր բերդեր ու ամրոցներ (Բերդաբար):

Այստեղ են ապրել և ստեղծագործել միջնադարյան Հայաստանի ակնառու ուսումնական այրեր Մխիթար Գոշը, Խաչատուր Տարոնացին, Կիրակոս Գանձակեցին, Հովհաննես Արմանեցին, ճարտարապետ-քանդակագործ վարպետներ՝ Հաղարծնի հոյակերտ սեղանատունը կառուցող Գրիգորէսն ու Մինասը, Գոշավանքի նրբաքանդակ խաչարձանները կերտող հռչակավոր Պաղոսը, Մակարավանքի հուշարձանները քանդակագործող Սրիտասարդը, Դեղձուտի վանքի զարդաքանդակների հեղինակներ Քաղաքն ու Պաղոսը և շատ ուրիշներ: Առանձնապես նշանակալից է Հայաստանի և այս գավառի հոգևոր ու մշակութային կյանքում Մխիթար Գոշի ունեցած վիթխարի վաստակը: Նա հիմնադրեց Նոր Գետիկի կենտրոնը և վանական դպրոցը՝ բարձր զարգացած դպրության մեջ գրչության մեջ, բազմաթիվ աշակերտներով, որոնք այլուր շարունակեցին իրենց մեծ ուսուցչի վեհ գործը:

Կայենի և Մահկանաբերդի վերոհիշյալ կենտրոններում բարձր զարգաց-

ման հասավ նաև ձեռագրերի արտագրության և վիմագրության արվեստի։ Ն. Գետիկի, Գեղձուտի, Հաղարծնի վանքերը գրչագրությունը ուսանելու էին գալիս նույնիսկ կենտրոնական Հայաստանի կամ Արցախյան աշխարհի գրչության օջախներից։ Պահպանված վիմական արձանագրությունների հնագրական հատկությունների ուսումնասիրությունից երևում է, որ այստեղ գործել են հմուտ փորագրող-գծողների և կաղմող-նկարիչների բազմաթիվ սերունդներ, որոնք ստեղծել են վիմագրության իրենց ինքնուրույն ոճն ու դպրոցը՝ ճոխացնելով ավանդներով հարուստ հայկական հնագրության մշակույթը։

Ն. Գետիկի վանքում բարձր կատարելության է հասնում քարի սրբատաշ մակերեսի կամ ծեփածածկույթի վրա ներկանյութերով արձանագրելու արվեստը, որը Հայաստանի մյուս գավառներում հաղվադեպ էր կիրառվում։

Սույն պրակում տեղավորված վիմական արձանագրությունները մեծ մասամբ վատ են պահպանվել։ Ժամանակի, բնության և մարդու ավերածությունների հետևանքով շատ բնագրեր հողմահարվել, եղծվել, անընթեռնելի են դարձել և դժվար են վերականգնվում։ Անցյալ դարի կեսերից սկսած այդ արձանագրությունների մի մասը ընդօրինակվել և հրատարակվել է Հ. Շահխաթունյանցի, Ս. Զտիլյանցի, Մ. Բարխուդարյանցի, Մ. Սմբատյանցի, Մ. Տեր-Մովսիսյանի և ուրիշ տեղագրողների երկերում։ Սակայն նախկին հրատարակումները չեն կարող բավարարել արդի արձանագրագիտության պահանջները, քանի որ հարազատ չեն քարի վրա փորագրվածին, թերի են և գիտական-քննական չլինելով՝ հնարավորություն չեն ընձեռում յուրաքանչյուր առանձին դեպքում ստուգելու վերծանության հավաստիությունը։ Իբրև ընդհանուր կանոն, անցյալ դարում ընդօրինակվել են միայն լավ երևացող, դյուրին ընկալվող բնագրերը, եղծված, հողմահարված, դժվար մատչելի արձանագրությունները դուրս են մնացել տեսադաշտից։ Ավելի բարվոք են վերջին ժամանակներս հրատարակված վերծանությունները (Գ. Սարգսյան, Հ. Սղիաղարյան, Հո. Զանփուլադյան), սակայն սրանք ևս չունենալով բնագրերի լուսանկար կամ գծագիր պատկերներ, ամենաանհրաժեշտ բացատրականներ և, լիակատար չլինելով, շատ բան չեն ավելացնում նախկինում հրատարակվածներին։

Ներկա հատորն այժմյան Իջևանի շրջանի տարածքում պահպանված բոլոր մեծ ու վոքր արձանագրությունների լիակատար հավաքածուն է։ Բնագրերը մեջ են բերվում ըստ առանձին բնակավայրերի, նրանց մերձակայքում տեղավորված հուշարձանների և վերջիններիս արտաքին կամ ներքին ճակատների։ Տրվում է նախ արձանագրության գծագիր պատճենումը, ապա նրա վերծանությունը՝ հատուկ նշաններով արտահայտելով սեփական վերականգնումները կամ հավելումները։ Այնուհետև մեջ են բերվում բնագրի մատենագիտությունը, կարևոր տարբերությունները և հնարավորին չափ հանդամանալի մեկնաբանությունները։ Վիմական բնագրերի բացատրականում աշխատել ենք քիչ ծանոթ կամ առաջին անգամ հրապարակվող նյութերը ներկայացնել ավելի մանրամասն, իսկ լայնորեն հայտնի ու մեկնաբանված բնագրերի մասին նշել ենք համառոտակի՝ շարագրելով միայն նոր նկատառումները։

* * *

«Գիվանի» այս պրակի հեղինակներից Հո. Զանփուլադյանը հավաքել և վերծանել է Հաղարծնի, Նոր Գետիկի, Զուխտակ վանքի և Մաթոսավանքի արձանագրությունները, իսկ Ս. Ավագյանը՝ Իջևանի շրջանի մնացած հուշարձաններինը (Մակարավանք, Մորո ձորո վանք, Առաքելոց, Գեղձուտ, Սամսոն և այլն)։ Տարիներ առաջ, դեռևս 1917 թ. Հաղարծնի և Գոշավանքի հուշարձանների արձանագրությունները ընդօրինակել էր ակադեմիկոս Հ. Օրբելին և ավելի ուշ՝ 1942 թ. իր սեպագիր նյութերը տրամադրել Հո. Զանփուլադյանին՝ տեղեկությունները նորից ստուգելու և լրացնելու հավաքածուն։

Հո. Ջոնփոլադյանը իր թեկնածուական դիսերտացիայի նյութ ունենալով «Մխիթար Գոշը և Ն. Գետիկի վանքը», բազմիցս եղել է Գոշավանքում և Հազարծնի վանքում՝ ի նորո ընդօրինակել պահպանված բնագրերը, ճշգրտել և ամբողջացրել հավաքածուները:

Սակայն սույն հատորը հրատարակության պատրաստելու ընթացքում, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հանձնարարությամբ, Ս. Ավադյանը 1971—1972 թթ. այցելելով Ջուխտակ վանք, Մաթոսավանք, Գոշավանք և Հազարծնի վանք հուշարձանախմբերը, նորից է ստուգել բոլոր վերծանությունները, նրանցում կատարել բազմաթիվ էական ուղղումներ, տյլև հավաքել, վերծանել նոր՝ հավաքածուից դուրս մնացած արձանագրություններ (Մաթոսավանք—8, Ջուխտակ վանք—6, Հազարծնի վանք—3, Գոշավանք—21):

Այս վիմագրական գիտարշավին մասնակցել և արձանագրությունների ընդօրինակություններին օժանդակել են նաև Ս. Եսայանը, Ս. Մարտիրոսյանը և Խ. Վարդանյանը:

Պրակում զետեղված բոլոր արձանագրությունների, այդ թվում նաև՝ Հազարծնի, Ն. Գետիկի, Մաթոսավանքի, Ջուխտակ վանքի բացատրականները և հուշարձանների նկարագրությունները կազմել է Ս. Ավադյանը:

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Բաբխուղարյանց—Մ. Բաբխուղարյանց, Արցախ, Բաբու, 1895;
 Բաբխուղարյանց ՄԵԵԲ—Ս. Բաբխուղարյանց, Միջնադարյան հայ ճարտարագետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963;
 Եղիազարյան, 1954, Ժ—ԺԱ—Հ. Եղիազարյան, Հաղարծնի վանքը և նրա վիճագրությունը, «Էջմիածին», 1954, Ժ, ԺԱ;
 Եղիազարյան, 1959, է—Ը—Հ. Եղիազարյան, Նոր Գետկա վանք կամ Գոշավանք, «Էջմիածին», 1959, է—Ը;
 Кучук-Иоаннесов—Кучук-Иоаннесов, Сведения и заметки о старинных арм. рукописях и арм. надписях в пределах России, Древности Восточные, IV, М., 1913.
 Հառուրյունյան—Ի. Հառուրյունյան, Գոշավանք կամ Նոր Գետկա, «Ազգագրական հանգես», № 10, Քիֆլիս, 1903;
 Հովսեփյան ՆԱ—Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակութային պատմության, պրակ Ա, Երուսաղեմ, 1935;
 Ծանխարունյանց Ա—Հ. Ծանխարունյանց, Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, Վաղարշապատ, 1842;
 Орбели И. Т.—Орбели И. Избранные труды, 1963.
 Չալալյանց Ա—Ս. Չալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1842;
 Ջանփոլաղյան—Հո. Ջանփոլաղյան, Մխիթար Գոշը և Նոր գետիկի վանքը, «Պետական պատմության թանգարանի աշխատություններ», հատ. 1, Երևան, 1948;
 Սարգսյան, 1954, Ե—Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, Ե;
 Սարգսյան, 1954, Գ—Գ. Սարգսյան, Գեղձուտի վանքը և նրա վիճագրությունը, «Էջմիածին», 1954, № 4;
 Սարգսյան, 1955, է—Ը. Գ. Սարգսյան, Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղին, «Էջմիածին», 1955, № է—Ը;
 Սմբատյանց—Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1895;
 С. Т. Е. С. Еремян—Агарцинская надпись 1184 г., Сборник в честь И. А. Орбели, М.-Л., 1960.
 ՎՏ—Կ. Կասաբյանց, Վիճական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913;
 Տեր-Մովսիսյան—Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շենքերը, Երուսաղեմ, 1938;

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

- Գծիկով բնագրի գծագրության մեջ նշանակված են համապատասխան քանակի եղծված գրերը;
- • • Կետերով բնագրի գծագրության մեջ նշանակված են եղծված գրերը՝ անկախ նրանց քանակից;
- [] Փակագծով նշանակված են եղծված գրերի վերականգնումները;
- [] Փակագծով նշանակված են բնագրում փոթազրոյի բաց թողած գրերը կամ առանց հապավման նշանի սղումները (վերծանության մեջ);
- () Փակագծով նշանակված են բնագրի մեջ եղած ակներև ավելորդ գրերը (վերծանության մեջ);

Գ Ի Լ Ի Զ Ա Ն

ՋՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ

Ջուխտակ վանք հուշարձանախումբը տեղավորված է Դիլիջան քաղաքից 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառապատ լեռնալանջին, Թթու ջուր աղբյուրից փոքր-ինչ վերև: Բաղկացած է երկու առանձին կանգնած եկեղեցիներից և շուրջը տարածվող գերեզմանոցից: Հուշարձանախմբի Ջուխտակ վանք անվանումը ժողովրդական է, մատենագրական աղբյուրներում վանական կենտրոնի մասին տեղեկություններ չկան: Հուշարձանների պատերին փորագրված արձանագրություններում ավանդված է մենաստանի պատմական անվանումը՝ մի դեպքում Պետրոսի վանք, մի ավանագրում՝ Գիշերավանք:

ա. Աստվածածին եկեղեցին վանքի արևմտյան շինությունն է, կառուցված վանքի առաջնորդ Հայրապետի ջանքերով՝ 1201 թ.: Եկեղեցին դրսից և ներսից քառակուսի հատակաձևով, անսյուն անգմբեթ, թաղակապ, երկթեք տանիքով, փոքր չափերի (8,6 x 6,4 մ) շենք է, շարված սրբատաշ դեղնավուն քարերով: Միակ մուտքը արևմտյան պատից է, որի կիսակլոր ճակատակալի վրա պահպանվել է հուշարձանի շինարարական արձանագրությունը՝ մասամբ հողմահարված և եղծված: Եկեղեցու պատերի վրա ներսում և դրսում փորագրված են նաև մի քանի նվիրատվական արձանագրություններ:

բ. Ս. Գրիգոր եկեղեցին գտնվում է նախորդից մի քանի մետր արևելք, փոքր-ինչ ներքև: Կենտրոնագմբեթ շենք է, որմնամուկների վրա հենվող չորս կամարներով, առանց սյուների, միջին մեծությամբ (9,7 x 7, 5 մ), կառուցված գորշավուն, համակ սրբատաշ քարերով: Հուշարձանի ավանդատները ձևավորված են նրբաքանդակ դարդերով, որոնք աչքի են ընկնում իրենց ճաշակով և կատարման վարպետությամբ: Եկեղեցին շինարարական արձանագրության չունի, դրսի և ներսի սրբատաշ պատերի վրա փորագրված են մի քանի նվիրագրեր: Աստվածածին եկեղեցու արևմտյան բարավորին փորագրված շինարարական բնագրից կարելի է կոահել, որ ս. Գրիգոր եկեղեցին արդեն գոյություն ուներ, երբ Պետրոսի վանքի առաջնորդ Հայրապետը 1201 թ. կառուցում էր Աստվածածինը:


2. ՋՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արաաքուռա, արևելյան պատի հարավային ծայրին, կիսաեղծ, 6 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՅԱՅՍՄԵՐԳԻԲԷՇԵՐԱՇԱԿԻՆՈՐԳՆԵՑԻ
ՉԱԶՈՑ ԿՐԱՅ ՎԱՆԱՅ ԱԾ
ԱԾԻՆ ՎՄԻՄ ՐԱՊԵՄԻ
Ն ԵԻՆԱԵՄ: Բ: ԶԱ ՅԱՅՍՎԱԱ
ՑՍՀԱԵԼՔ ԱՆ: ՅԶԸ: ՀԱՅԱՊԵՐԱՑՆԵԻԸՆԴՅՈՒԴԱ
Ի ԵՂԻՑԻՆԲ

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ
Է ՇԵՐԱՆՇԱՀԻ, ՈՐ ԳՆԵՑԻ
|ՉԱՐՁՈՑ ԿՐԱՅ . . . «ԵԻ
ԵՏՈՒ» ՎԱՆԱՅ ԱԾ| ԱԾԻՆ,
Վ|ԱՊԵՐԱ| ԻՄ . . . «ՀԱՅՐԱ
ՊԵՏԻՆ ԵԻ ՆԱ ԵՏ: Բ: ԺԱՄ
. «ՈՎ» ՅԱՅՍ
ՎԱՆԱՅՍ ՀԱՆԵԼ ԶԱՆԱ,
:ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԵԻ ԸՆԴ
ՅՈՒԳԱՍԻ ԵՂԻՑԻ: ԱՄԷՆ:

Գիտելիք. Բնագրի միջամասը խիստ հողմահարվել է և դժվար է վերականգնվում: Նվիրագիրը ժամանակամերձ է եկեղեցու կառուցմանը, քանի որ այստեղ հիշատակված է վանքի առաջնորդ և Աստվածածին եկեղեցին կառուցող Հայրաշիրու: Ինչպես նրանում է անեծքի ձևակերպումից, նվիրատու Շերանշահը գնել և վանքին է նվիրել ինչ-որ հողատարածություն կամ այգի, որի անունը չի որոշվում:

1. ՁՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արաաքուսո, արևմայան մուտքի ճակատակալ քարի վրա, կիսանդժ. 10 տող.



ՈՅ ԹՈՒԻՆ, ՀԱՅՈՑ (1201), Ի ԹԱԳՍԻՈՐՈՒԹԵՄՆ՝ ԼԱՇԱԻ, Ի ՏԵՂԻՈՒԹԵՄՆ՝ ԻՒԱՆԵԻ, ԵՍ՝ ՀԱՅՐԱՊԵՏ, ԱՌԱՋՆՈՐԳ՝ ՍԲ ՈՒՍՅԻՍ, ՈՐ ԿՈՉԻ ՊԵՏՐՈՍԻ ՎԱՆՍ, ՇԻՆԵՑԻ ՉՄԲ ԱԾԱԾԻՆՍՄԵԾ ՅՈՒՍՈՎ, ԵՒ ԿԱՐԳԵՑԻ ՉՃՐԱԳԱԼՈՅՑՆ | :Բ: ԼՈՐԱՆՆ ԻՆՉ ՊԱՏԱՐԱԳԵԼ, ԵՒ :Ա: ԻՄ ԵՂԲԱԻՐՆ՝ ՇՄԱԿՈՆԻ ԵՒ ՉԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՍ ԻՄ ԾՆՍԱԻՂԱՑՆ ԵՒ ՉԱՅԼՆ՝ ՀԱՄԲԱՐԱԿԱՍՑ: ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐՈՅՍ ԱԻՐՉՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԳԱՏԱՊԱՐՅԻ Ի ՏԷ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

Հրատ. Բարխուդարյանց, 361
Լուսակ. 1

Գիտելիք. Բնագրի ՈՅ (1201թ) թվագիրը համապատասխանում է նրանում հիշված Վրաց թագավոր Գևորգի Լաշալի և Չաքարյան Իվանի իշխանության ժամանակներին: Հայտնի է, որ Թամար թագուհու որդի Գևորգի Լաշան թագուհու կենդանության ժամանակ էլ հիշատակվում էր իբրև Վրաստանի թագավոր և քանիցս այդ ձևով վկայված է հալ վիճագրության մեջ: Այսպես, Հոռոմայր վանքի վերևի եկեղեցու ՈՅԾ (1206 թ.) թվականի շինարարական արձանագրության մեջ հիշատակվում է, ի թագաւորութեան Լաշայի, յամիրապասալարութեան Ռաքարէի եւ որդւոյ իւրոյ Շահնշահի...: 2-րդ տողում ի թագաւորութեան Լաշայի, ի տէրութեան Իւանի Բարխուդարյանցը վերծանել է. ամիրութեան Լաշայի, ի տէրութեան... Խանին, որ ակներև վրիպում է և անիմաստ. նույն ձևով է բնագիրը իր գրքուկում հրատարակել է Ի. Էլլարյանը: 7-րդ տողում Շահնշահի եւ բառերից հետո 7—8՝ տառաւեղ եղծված և դժվար է վերականգնվում: 8-րդ տողում իմ ծնաւդացն-ից հետո 6—7 տառաւեղ քայքայված է, հետևելով Կոշի նույն ժամանակների մի բնագրին, այդ մասում վերականգնում ենք՝ [եւ զայլն համբ] արակյաց:

3. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևելյան պատին, լուսամուտից ներքև, աջ կողմը լրիվ եղծված, 8 տող.

| | |
|-------------------------------|---|
| ԿԱԿԸ ԱՅ ԱՅՍՄԵՐԳԻՐԸ . . . ԴԱԲՁ | ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է . . . ԴԱԻԹԻ |
| Ի ԵՒ ԱՇՈՏՈՅ | ԵՒ ԱՇՈՏՈՅ ԶՈՒ |
| ՉՈՒՉԱՅՆԳԻ | ՉԱՅՆ ԳԻ ԱՌԱՋՆՈՐԳ |
| ԱՌԱՋՆՈՐԳ | Ա. ԺԱՄ ԻՐ ՄԻ : ՈՎ, ՉԱՅՍ |
| ԱՂԱԻԻՐԿ | Յ ԺԸ, ՀԱՅՐԱՊԵՏԱՑ |
| ՈՎ ՉԱՅՍ 3 | ՄԵՂԱՑՆ ՏՐ Է : |
| ՁԸՀԱՅՐԱՊԵՏԱՑ | |
| ՄԵՂԱՑՆՏՐԷ | |

Գիտելիք. Արձանագրության առղավերջերը լրիվին եղծվել, չեն կարդացվում: Պահպանված առաջարքից հասկացվում է, որ նվիրատուներ Դավիթը և Աշոտը ինչ-որ հանդամաս կամ ալգի (Ձուղախ) են նվիրել վանքին և դրա դիմաց պատարագածամ ստացել:

4. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևելյան պատի հյուսիսային ծայրին, սկիզբը եղված. 5 տող.

| | |
|---------------------------------|---|
| ՏՎԻ Չ . . . ԾՈՎԻՆ | ՏՎԻ Չ . . . ԾՈՎԻՆ |
| ՆԻՍ Ի Հ ՈԳՈՅ | ՆԻՍ Ի Հ ՈԳՈՅ ԳԱ |
| ԳԱ . . . Ի ՏԱԻՆԻՆ | Ի ՏԱԻՆԻՆ ՄՈՎ, ՀԱՄԵԼ, ՉԱՆԱ |
| ՆԵԼ ԶԱՆԱ : ՅԺԸ : | : ՅԺԸ : Հ ԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԱԾ Է |
| Ք ԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎԱԾ Է | |

5. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, հարավային պանդառան մուտքի ճակատին, 4 տող.

| | |
|---------------------------|---------------------------------|
| ՅԱՅՍՄԻՄԱՆԻ : Ա : ԶԱԻՏԱԻՆԻ | Յ ԱՅՍՄ ԽՈՐԱՆԻ : Ա : ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ |
| ՄԲ ՍԱԳԻՆ ՍԱԳԻ ԱՍՅԵՆ | ՄԲ ՍԱԳԻՆ ՍԱԳԻՍԻ ԱՐԱՍՑԵՆ, |
| ՉԻ ՆՈՒ ԱԴԵԱԲԲՇԻՆԵՑԱԻՍ | ՉԻ ՆՈՐԱ ՍՐԴԵԱՄԲԲ ՇԻՆԵՑԱԻ ԽՈՐ |
| ՈՒՍ ՈՎ ՉՁԱՆ ԽԱՓՆ ԷԴԱՅԻՄԷ | ՐԱՆՍ : ՈՎ ՉԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ |
| | Ի ՏԷ : |
| | Հրատ. Орбели, ИТ, 481. |

6. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, հյուսիսային պանդառան մուտքի ճակատին, 5 տող.

| | |
|--------------------------|--------------------------------------|
| Ի ՌՎ ՈՃՉ ԵՍՄԱՅՐԱՑԵԱԼՍ | Ի ԹՎԻՆՆՆՆՆՆՆՆՆՆ (1207). ԵՍՄԱՅՐԱՑԵԱԼՍ |
| ՉԻՆԵՑԻ ՉԽՈՐԱՆՍԻԱԱԼԱՐԴԵԱ | ՇԻՆԵՑԻ ՉԽՈՐԱՆՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ |
| ՆՑԻՄՈՅ ԵԻԱՌԱՋՆՈՐԳՍՈՐԱ | ԻՄՈՑ, ԵՒ ԱՌԱՋՆՈՐԳԻ ՍՈՐԱ ԵՏՈՒՆ Ի |
| ԵՏՈՒՆԻ ՏԱՐՈՄՆՄԻԱԲԶԱԺ ՏԻՆ | ՏԱՐՈՒՄՆ ՄԻ ԱԻՐ ԺԱՄ ՏՐԵԱՌՆԸՆԳԱ |
| ԸՆԴԱՌԱՋԻՆ ՈՒՍԱՓԱՆԷԴԱՅԻՄԷ | ՌԱՋԻՆ : ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ Ի ՏԷ : |
| | Հրատ. Орбели, ИТ, 481. |

Գիտելիք. Նույն բովանդակության այս բնագրերը ցույց են տալիս, որ միջնադարում նվիրատուները կարող էին իրենց ընծաները ձևակերպել իբրև արդեն կառուցված շենքերի առանձին հատվածների գնում: Տվյալ դեպքում Սարգիսը և Մայրացյալը վճարել են Աստվածածին եկեղեցու հատվածին և հյուսիսային ավանդատների մասավոր արժեքները, այդ գործարքը ձևակերպելով իբրև շինարարության նպաստավորում: Հավանաբար երկու դեպքում էլ նվիրատվությունը և այդ մասին արձանագրելը տեղի է ունեցել եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո. ըստ որում եկեղեցին շինվել է 1201թ. իսկ Մայրացյալի նվիրագրերը փորագրվել՝ 1207թ.: Իրողությունը առաջինը մատնացույց է արել Հ. Օրբելին՝ «Անիի արձանագրություններում երկու տերմինների մասին» արժեքավոր ուսումնասիրության մեջ (1921թ.):

7. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, հարավային պատին, 3 տող.

ՅԱԻՈՒՐ ՏԱԻՆԻ ՎԱՐԱԳԱԽԱ
 ՉԻՆ: Ա: ԳԱՄ ՄԻՒԹԱՐԱ ԱՌՆԵՆ
 ՈՎ ԽԱՓԱՆ Ե ԴԱՏԻ ՏԷ

ՅԱԻՈՒՐ ՏԱԻՆԻ ՎԱՐԱԳԱ. ԽԱՉԻՆ : Ա:
 ԺԱՄ ՄԽԻԹԱՐԱ. ԱՌՆԵՆ: ՈՎ, ԽԱՓԱՆԵ,
 ԴԱՏԻ ԻՂ ՏԷ:

8. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևմտյան լուսամուտի պսակի վրա, 1 տող.

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴ ՊԵՏ ՅԱՂԱԻՌՍ ՅԻՇԵՑԷՔ

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴՊԵՏ ՅԱՂԱԻՌՍ ՅԻՇԵՑԷՔ:

Գիտելիք. Անտարակույտ հուշարձանը կառուցող ճարտարապետ-վարպետի հիշատակագրությունն է: Ինչպես ակնհայտ է եկեղեցու արեմտյան մուտքի բարավորի արձանագրությունից, հուշարձանը կառուցել է վանքի վանահայր Հայրապետը՝ 1201 թ.: Այս բնագրերը վկայում է, որ շենքի շինարար ճարտարապետը եղել է վարդապետ Սարգիսը: Առկա տվյալներով զժպար է որոշել, թե Սարգիսը ի՞նչ մասնակցություն է ունեցել հուշարձանախմբի մյուս եկեղեցու՝ «. Գրեգոր շինությունը. ոտկալն վերջինս իր ճարտարապետական ձևերով ու հորինվածքով շատ քիչ ընդհանրություն ունի Սարգսի կառուցած Աստվածածին թաղակապ սագաշեն եկեղեցու հետ:

9. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. հարավ. պատին, երեք քարերի վրա 7 տող.

| | | |
|---------------|--------------|------------------|
| ՅԱՆՈՒՆԱՅԱՅԱ | ՄԵՐԳԻՐԷ ՉԱԳԵ | ՑԻԱՏ ԱՇԱՏԻԵԻ |
| ԽԱԻԲԻՆՏՎԱԲԶՈՒ | ՊԱՂԻՆԱՅԳԻ | ՆԻԳԻՇԵՐԱՎԱՆԻՑ |
| ՍԲԳՐԻԳՈՐԻՍՅԱ | ՊԱՂՈՐԴՈՒԹԵՆ | ԱՐԱՏԱԵԻԱՅԱԻ |
| ԱՖԱՆԱՅՍԵԻՏՎԱԲ | ԲՊԱՏԱԲԱԳԻՏԱ | ԻՆԻՍԲԳՐԻԳՈՐԻԱՄԱԸ |
| ԻԲԻՆԵԻԱ:ԱՏԱՇ | ԻՏԻՆՈՎՈՂԶՈՒՅ | ԱՅԳԻՆՅԱՅՍԵԿԵՂ |
| ԵՅԷՍՏԱՆԵ:ՅԲԸ: | ՏԱՅՐԱՊԵՏԱՅՆ | ԱՆԻԾԱԾԷՄ.....Ն |
| ԽԱՓԱՆ ԵԻԱ ՏԻ | ՏԻՆԵ: | |

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է ԶԱԳԵՑԻ ԱԻՏԱՐՇՍԱԿԻՆ ԵՒ ԽԱՐԻՔԻՆ, ՏՎԱՔ ԶՊ . . ՊԱՂԻՆ ԱՅԳԻՆ Ի ԳԻՇԵՐԱՎԱՆԻՑԻ ՄԲ ԳՐԻԳՈՐԻՍ, ՅԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵՆ ԱՔՐԱ-
 ՀԱՄՍ. ԵՒ ԱՅԼ ՄԻՍԱԲԱՆԱՅՍ: ԵՒ ՏՎԱՔ :Բ: ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՄԲ ԳՐԻԳՈՐԻ :Ա:
 ԽԱՐԻՔԻՆ, ԵՒ :Ա: ԱԻՏԱՐՇՍԱԿԻՆ: ՈՎ ՈՐ (Ժ) ԶԱՅՄՄՄ ԱՅԳԻՆ ՅԱՅՍ ԵԿԵՂ ԵՑԷՍ
 ՀԱՆԷ, :ՅԺԲ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԱՆԻԾՍԾ Է, ՈՐ ԴՁԺԱՄՐԻՆ ԽԱՓԱՆԷ, ԳՍՏԻ Ի ՏՆԷ:

Լուսանկ. 2

Գիտելիք. Արձանագրութիւնը փորագրված է կղել հուշարձանի հարավային պատի երեք սըր-
 րաաաշ քարերի վրա, որոնք այժմ ընկած են պատի տակ: Նվիրատուները ձագեցի են, հավանաբար
 Ձագավանքից կամ Ձագ գլուղից: 2-րդ տողում նվիրված այգու անունը կամ որ հանդամատում
 գտնվելը չի վերականգնվում՝ մի քանի առատեղ ջարդված լինելու հետևանքով: Նույն տողում ա-
 վանդվում է մենաստանի պատմական անունը՝ Գիշերավանցից՝ սբ Գրիգոր, այսինքն միաբանու-
 թիւնը կամ վանքը կոչվել է Գիշերավանք: 2—4-րդ տողերում Խաբիբ անունը փորագրած է ղ>խ
 խլացումով: 5—6-րդ տողերում յայս եկեղեցես բարբառային ձևով է, ժամանակի գրաբարով սպա-
 սելի էր յայսմ եկեղեցւոջէ կամ յայսմ եկեղեցւոյս:

10. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. Ա. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, հարավային պատին,
 մի քարի վրա, 5 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅԵՍԱԿԼԻԹ
 ԱՅ ՄՄԱՅԲԱԵՑԱՅՄԲ ԳՐ
 ԻԳՐԱՎԱՅԲԱՆՔ ՍԵՏՈՒՆ: ԱՊ
 ԱՄԱԿԻՆԱԿԱՆԱՅԱՆՁԱԴԱԵՆԿԱ
 ԱՐԻՉ ՔԱՅ ՆԻՆ ԱՅ:

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՏԱԼԻԹՄԱՅՍ ՄԻԱՅ
 ԲԱՆԵՑԱՅ ՄԲ ԳՐԻԳՈՐԻ: ՄԻԱՅԲԱՆՔՍ
 ԵՏՈՒՆ :Ա: ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ԾԱՌ
 ԶԱՐԴԱՐԻՆ: ԿԱՍԱՐԻԶՔ ԱԻՐՀՆԻՆ
 ՅՍԱՅ:

Լուսանկ. 3

Գիտելիք. Միաբանողի անունը կարելի է կարդալ նաև Տալիթայս, ըստ որում առաջին շարքի
 վերջին գիրը նման է ավելի լս-ի քան ք-ի: Վերականգնում ենք Տալիթայ, քանի որ այս անունը
 գործածական է եղել հայկական միջավայրում՝ XII—XIII դարերում և ստուգաբանվում է, մինչդեռ
 Տալիթայ այլուր չի վկայված և ընդունելի մեկնություն չունի: 2—3-րդ տողերում միայնացեցայ,
 միայնացքս բառերում յ-ն ավելադրաբար է կիրառված, հետևելով միջին դարերում առաջացած
 այն օրինաչափության, ըստ որի յ-ն կարող էր որոշ դեպքերում գրվել, բայց չարտասանվել:

11. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. Ա. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, բեմի կիսակլոր պատի
 հյուսիսային մասում, 4 տող.

ԱՅՍԻՄԳԻՐ ԷԲԷԿԻՍԵԻԲԱՐԻՆ
 ԻՄ ԳՆԵՑԱՔԶԱՋՈՅԻ ՄԱՆՍ
 ՆԱՆԱՊԱՋՄԵ ԶՊԱՍ ԱՐԱԳ
 ԵԼԿԱՍ ԱԻՉԳՐՈՅԱՐ ՆՆԻՆԱՅ:

ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ԲԷԿԻՍ ԵՒ ԲԱԻ
 ՐԻՆԻ, ՈՐ ԳՆԵՑԱՔ ԶԱՋՈՅ ԽՈ
 ՐԱՆՍ: ՀԱՆԱՊԱՋ ՄԵՉ ՊԱՏԱՐԱ
 ԳԻԵԼ: ԿԱՏԱՐԻԶՔ ԳՐՈՅՍ ԱԻՐ
 ՀՆԻՆ ՅՍԱՅ:

Լուսանկ. 4


Գիտելիք. Եկեղեցու խորանը գնելու գործարքը կատարվել և սույն բնագիրը փորագրվել է
 նույն կարգով, ինչպես տեսանք ներկա պրակի № 5, 6 նվիրագրերի մեկնության մեջ:

12. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑԻ. ներքուսա, հարավային պատին, 5 առդ.

Ի ՏԱՆԻ ՄԲ ՔԱՌԱ
ՍՆԻՑՆ:Ա: ՊԱՄԱՐ
ԱԳԱՍՑԵՆ ԽՐ
ԻՇԱՅԻ ԿԱՄԱԻՉ
ՔՆԱՐՀՆԻՆ ՅԱՅ

Ի ՏԱՆԻ ՄԲ ՔԱՌԱՍՆԻՑՆ :Ա:
ՊԱՄԱՐՍԳ ԱՐԱՍՑԵՆ ԽՈՐԻՇՍԱՀԻ:
ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ:

12ա. ԶՈՒԽՏԱԿ ՎԱՆՔ. Ս. ԳՐԻԳՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ բեմի արևելյան կիսակլոր պատին, պարզ խաչերի մեջ



ա) փոքր ոլոսուհանից հարավ, 2 առդ.

ԴԵՂԿԱՆ Է ԽԱՉՍ:

բ) նույն պատուհանի սակ, 4 առդ.

ԱՇՈՏԱԾԵՐԻՆ:

Գիտելիք. Դատելով հիշատակագրութունների երևելի տեղադրութունից, նվիրատուները մեծահարուստ ու ազդեցիկ իշխաններ են եղել: Առաջին անունն է Դեղիկ, բազմիցս հիշատակված միջնադարի վիճակագրում և ձեռագրերի հիշատակարաններում: Մյուս նվիրատուի անունը՝ Աշոտածեք, մատենագրության մեջ չի հանդիպում: ԺԲ—ԺԳ դարերի վիճական բնագրերում վկայված են անձնանուններ՝ Վարհամաճայր, Պապածայր, Գուրածեք և այլն, որտեղ ծայր (—ծեք, ծեք) արմատը կարող է հանդես գալ իր՝ բարձրագույն, լավագույն, կատարյալ, առաջնակարգ իմաստային երանգներով: Այս կարգի բաղադրյալ անձնանունների մասին ավելի մանրամասն կարելի է իմանալ՝ Ս. Ավագյան, Վիճական արձանագրութունների հնչյունաբանութուն. 1973, էջ 108:

ՄԱԹՈՍԱՎԱՆՔ


Հուշարձանների այս խումբը գտնվում է Դիլիջան քաղաքից 3,5 կմ արևմուտք, գետակի աջ ափի անտառածածկ սարահարթի վրա, Զուխտակ վանք հուշարձանախմբի դիմացի լեռնալանջին: Մաթոսավանքը բաղկացած է իրար կից երեք շենքերից՝ փոքր եկեղեցուց, գավթից և հարավից նրանց հարող զրատնից: Հուշարձանախմբից հարավ-արևելք տարածվում է պատմական գերեզմանոցը՝ անմշակ տապանաքարերով և խաչքարի պատվանդաններով:

ա. Եկեղեցին փոքր չափերի (6, 5×3,5), թաղակապ ծածկով շինութուն է, շարված կիսամշակ խոշոր քարերով: Միակ մուտքը արևմտյան պատից է, որի ճակատակալ կիսակլոր քարին փորագրված է մենաստանի հիմնադրման արձանագրութունը: Արևմտյան պատի մեջ, մուտքի երկու կողմերին ագուցված են քանդակազարդ խաչքարեր և ձևավոր բեկորներ, արձանագրութունների հատվածներով: Ամենայն հավանականությամբ, վանքը քաղկեդոնիկ միաբանութուն է ունեցել, քանի որ շինարարական արձանագրության մեջ հատուկ շեշտված է իշխանութեան Աւագին, ողորմութեամբ Պղնձաճանցն Աստուածածնին: Եկեղեցու հյուսիսային պատի տակ ընկած է մի գեղաքանդակ մեծ խաչքար՝ 1251 թ. արձանագրությամբ:

բ. Դավիթը. կից է եկեղեցուն արևմուտքից, մուտքը հյուսիսից է: Սա գրեթե քառակուսի հատակաձևով թաղակապ շենք է, կառուցված տարբեր մեծություն հանքաքարի կիսս մշակ քարերով և ներսից սվաղված կրաշաղկախով: Լուսավորվում է շատ աղոտ, արևմտյան պատի մեջ բացված նեղ լուսամուտից: Կառուցման ժամանակը անհայտ է, հավանաբար շինվել է գրատան հետ միասին՝ եկեղեցուց որոշ ժամանակ հետո: Դավթի հատակին կան մի քանի տապանաքարեր՝ անմշակ և անարձանագիր:

գ. Դրատունը կից է գավթին հյուսիսից և նրա հետ հաղորդակցված է լայն բացվածքով: Դրատունը ես թաղակապ փոքր (4x3,5) շենք է, շարված խոշոր հարթված քարերով: Բացի գավթի հետ ընդհանար բացվածքից, գրատունը առանձին մուտք ունի նաև արևելյան պատից: Լուսավորվում է հարավային պատի մեջ բացված երկու նեղ լուսամուտներով:

13. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի ճակատակալ կիսակլոր քարին. արտաքուստ, կիսաեղծ, 8 սող.



բարավորի վրա. ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՅՈՐԳԱՆԱՆ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՎԻՆ ՈՂՁ (1247), ՅԻՇԽԱՆՈՒԹԵՐԱՆ՝ ԱԻԱԳԻՆ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԻՔ ՊՂՆՁԱՅԱՍՆ ԱՅԱԾՆԻՆ ԵԻ ԱՌԱՋՆՈՐԴԹԲԴԵԱՄԻՔ ՊԵՏՐԵԻ ԵԻ ՏՐՂԱՄԱՉԱՍՊԱ: ՈՐՔ ԵՐԿՐԱՍԳԵՔ ՅԻՇԵՑԵՔ Ի ՔՍ ՁՇՆՈՂՔ ՄԵՐ՝ ՁԵՆՈՔՆ ԵԻ ՉԱՄՈՒՍԻՆ ԻԻՐ ԵԻ ՉՄԽԹԱՐ, ՄԵՂՆ ՈՍ, ՉՈՐՆԱԹԱՆԵԼՆ, ՅՈՐԳԱՆԱՆ, ՀՈՒԻՄՍԻ, ՅՈՂԱՆ, ՄԱՐԻԱՆԵՂԻ

Հրատ. Բարխուդարյանց, 303
Լուսակ. 5

Գիտելիք. Արձանագրությունը խիստ քայքայված է և դժվար է վերծանվում: Այլ է պատճառը որ նրա միակ հրատարակող Բարխուդարյանցը արտագրել է միայն մի մասը՝ այն էլ էական աղավաղումներով: Կամարի հիշատակագրությունները Բարխուդարյանցը կարդացել է Անդալիս փոխ. Սեդախն, ձախ կողմում բաց է թողել Հռիմսիմե անունը: Բարավորի բնագրում աղավաղված են ա-

նունները. զամուսին իւր վերծանվել է զՄարթա իւր, Մենու-ը՝ Մենաւոս, Ջորնաթանելն՝ զոր(դին) նաթանաեյն, մնացած տնունները՝ Յորդանան, Հոիմսի, Յոհան, Մարիան չեն ընդօրինակվել:

Կամարի վրա, ձախ կողմում. ԱԾ ՈՂՈՐՄԻ ՀՌԻՄՍԻՄԵ|, ԽԱԶԱՏՈՒՐԻՆ:
Կամարի վրա, աջ կողմում. ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՂԲ|ԱԳԵՂԻՆ ԵՒ ՍԵԴԱԻՆ:

14. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի հարավային կողմի երեսին, 10 տող.

Ե Ս Պ Ե Տ Ր Է
Է Ն Ա Ա Ձ Ա Ս
Ն Ա Մ Ա Ե Ց Ա
Ձ Օ Ո Վ Բ Է Ա
Ա Ա Բ Ա Ղ Ո Ղ
Ո Ւ Ր Դ Ա Յ Ա Ց
Ն Յ Ո Վ Ո Ւ Ի
Ա Ա Է Ա Ս Ի
Ի Յ Է Ա Ա Ե
Է Ց Ց

ԵՍ՝ ՊԵՏՐԷ| ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊ |ՀԱՍՏԱՏԵՑԱՔ| ԶԾՈՎՔՆ ԵՒ
ԴԱՐ|ԱՍԱՆԱՔ ԺՈՂՈՎ|ՈՒՐԴ ԱԾԱԾ|ՆԻՍ: ՈՎ ՈՐ Խ Ա Փ Ա Ն Է
ԴԱՏԻ| Ի ՏԷ, ԱՆԱՆԵ| Է ԾԾ:

Հրատ. Բարխուղարյանց, 364:

Գիտելիք. Բնագիրը լավ է պահպանվել, սակայն վերջամասը, անհծքի բանաձևը անսովոր է և դժվարությամբ է վերծանվում: Վանքի առաջնորդներ Պհարեն և Համադասալը երկու գլուղերի՝ Ծովքի և Դարատանաքի համայնքները հաստատում են իբրև Աստվածածնի ժողովուրդ, հոտ: Բարխուղարյանցը այս մասում կարդացել է՝ համարեցաք զԾովքն, եղաք սահման ժողովուրդ Աստվածածնիս, որ հեռու է քարի վրա փորագրվածից և միազնում է երկրորդ համայնքի՝ Դարատանաքի անունը՝ փոխարենը վերահանգնելով եղաք սահման բալը:

9—10-րդ տողերում Անանե կամ Նանանե է ՆԾ անհծքը մեղ համար անհասկանալի է, թերևս քաղկեդոնիկների համար սովորական նշովք:

15. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի հյուսիսային կողմին, նախորդի դիմաց, խաչքարի պատվանդանի վրա, կիսատ, 2 տող.

... Լ Ի : Ե Զ Ը : Հ Ա Ր
Ա Պ Ե Մ Ա Ն Ն Ձ Ա Ա Է

. . . . Լ Ի : Յ Ժ Ը : Հ Ա Յ Ր | Ա Պ Ե Տ Ա Ց Ն
Ն Ձ Ո Վ Ա Ց Է :

16. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ բարավորից հյուսիս, 1 տող.

: Գ Ո Ն Ն Է Ի Ա Ձ Ս Գ Ո Ն Ն Է Խ Ա Ձ Ս :

17. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան պատին, բարավորից հյուսիս. խաչքարի խաչթևերի մեջ, 3 տող.

Տ Ր Ա Ց
Ո Ղ Ո Ր Մ Ի
Ս Ա Ն Ա Ս Ա Ա Յ

ՏՐ ԱԾ |ՈՂՈՐՄԻ| ՍԱՆԱՍԱՐԱՑ:

18. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ Թաղը գոտկող կամարի հիմքի վրա, 11 տող.


ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍՄԻ
ՈՒԱՆ ՄԻԱԲԱԵՑ
Ա Ի ՄԲ ԱԾԱԾԻՆՍ
ԵԻ ԷՏՈՒ ԸՆԾ ԱՅԵԻ ՅՈՐ
ԴԱԱ ԵՏԻՆՁ. Բ: ՊԱ
ՄԱԿԻ ՄԱՆԻ ՄԲ
ՈՅԻ ԱՂԻՆ: Ա: ԻՆ
Ձ Ռ: Ա: ՄԻՐԱՆՅԻ
Ն ԱՆԻ ԱՓԱ ՈՎ
ԽԱՓԱՆԷ ՄԵՐ ՄԵ
ՂԱՅՍ ՏԵՐ Է

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՄՐՈՒԱՆ ՄԻԱԲԱՆԵՑՍ. Ի ՍԲ
ԱՍՏԱԾԻՆՍՍ ԵԻ ԷՏՈՒ ԸՆԾԱՅ: ԵԻ ՅՈՐՎԱՆԱՆ
ԵՏ ԻՆՁ : Բ: ՊԱՍԱՐԱԳ Ի ՏԱԻՆԻ ՄԲՈՅ ԽԱՁԻՆ,
:Ա: ԻՆՁ, ՈՒ :Ա: ՏԻՐԱՆՑԻՆ ԱՆԽԱՓԱՆ: ՈՎ՝
ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՏԵՐ Է:

Գիտելիք. Նվիրագրի ժամանակը կարելի է որոշել նրանում վկայված Յոթագանի միջոցով, որը հիշատակված է նաև եկեղեցու ՈՂՁ (1247) շինարարական արձանագրության մեջ:

19. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին հենված, պատվանդանից ընկած մեծ (3x1, 25x08մ) խաչքարի ճակատին և խաչթևերի արանքում, խոշոր գրերով.

ՇՆՈՐՀԻՆ ԱՅ ԵՍՄԻ ԲԱԵԻ ԱՌԻ . . .



ՇՆՈՐՀԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ ԵԻ ԱՄՈՒՄԻՆ
ԻՄ՝ ԿԱՆԳՆԵՑԱ՝Ք ՁԽԱՁ
ԵՐՍ ԲԱՐԵԽԱԻՍ ՄԵՁ: ԹՎ, ԻՆ, Ձ (1251):

Հրատ. Բարխուդարյանց, 384:

Գիտելիք. Առաջին տողի շարունակությունը մնացել է խաչքարի հարավային կողի վրա, որով նա հպված է դետնին: Պակասող մասում Բարխուդարյանցը կարդացել է... ես՝ Մխիթար և Արուսե (կանգնեցաք), այսինքն պարզ երևացող ամուսնու գրերից հետո վերականգնել է՝ Արուսե անունը՝ փոխանակ ամուսին, բացի դրանից, խաչթևերի մեջ հստակ կարդացվում է ոչ թե սուրբ խաչս, այլ՝ զխաչերս:


20. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ. ԳՐԱՏՈՒՆ. հյուսիսային կամարի վրա, 1 տող.

ՄԻ ԱԾ ՈՂՈՄ ԲԱԳՈՒՎ Է

ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԹՎ.ԳՈՒՂԷ:

Գիտելիք. Անձնանունը Թագուհի է, որի տրական հոլովածներ կանոնավոր պետք է լինեն՝ Թագուհւոյ: Այստեղ միջին հայերենի ազդեցությունը տեղի է ունեցել եայլ>է հնչյունափոխություն՝ Թագուհի+այ=Թագուհիայ>Թագուհեայ>Թագուհե ընթացքով: Իրողությունը դիտվում է միայն միջին դարերի վիմական ընագրերում և ձեռագրերի հիշատակարաններում:

21. ԴԻԼԻՁԱՆ. Երկրագիտական թանգարանում պահվող խաչքարի թիկունքին, չորս բեկորների վրա, 13 տող.



ՄԱՆԿՈՒԻ ԽԱՆԻՆ ՀՐԱՄԱՆՈՎՆԻ, ԿՊԱՄԱԻ
 ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԷ
 ՐՈՒԹԵԱՆ՝ ԱԻԱԳԻՆ, ԳՈՆՑԻՆ, ՉԱԻԱ
 ԿՍՑ ԻՒՐՈՑ, ԱԾԱՍԾԻՐ ՊԱՐՈՆ ՈՒՄԵԿԻՆԻ,
 ՉԻ ՆԱ ԵՂԵԻ ՓՐԿՂՈՒԹԻՒՆԻՆ՝ ԵՒԿԵՂԵ
 ՑԵԼԱՅ ԵՒ ԱՉԱՏԵՑՈՒՄ ԲՈՒՄԱՆՆԱՅ
 ՉԱՐԷ: ԱՌԱՂՅՆՈՐԳՈՒԹԵԱՆ ՍՄԱՐԳՍԻ:
 ՈՎ՝ ԽԱՓԱՆԷ, ՅՄԱՅ ՆՁՈՎԱԾ Է՛:

Լուսակ. Յ

Գիտելիք. Այս փոքրիկ խաչքարի (70×40×15 սմ) 4 բեկորները թանգարան են բերվել Դիլիզան—Կուլթիշե ճանապարհից դեպի աջ, անսառնի մեջ ընկած Տախտ հանդամասի գլուղատեղի եկեղեցու փլատակներից: Հավանաբար, եկեղեցու փլուզման հետևանքով խաչքարը շարժվել, մի քանի բեկորների է բաժանվել, որոնցից պահպանվել են միայն չորսը: Խաչքարի երեսին քանդակված է պարզ խաչ՝ եզերված երկրաչափական գուսպ զարդաքանդակներով, որոնք առանձնապես չեն փալլում կատարման արվեստով: Դրա փոխարեն խաչքարը արժեքավոր վիմագրական հուշարձանի նշանակություն է ստանում շնորհիվ այն կարևոր 13 տողանի արձանագրության, որը փորագրված է նրա թիկունքի հարթված մակերեսին: Անտարակույս է, որ խաչքարը մինչև արձանագրվելը, իբրև հարթված բեկոր, դրված է եղել եկեղեցու պատի մեջ՝ թիկունքով դեպի դուրս, այլ կերպ ասած, այն շինքի համար ծառայել է իբրև երեսապատման մշակված քար և միայն հետագայում է նրա մակերեսին փորագրվել քննությունն առարկա բնագիրը: Թեև արձանագրությունն անթվագիր է, նրա ժամանակը մի քանի տարվա ճշտությունը որոշվում է նրանում հիշատակված պատմական անձների ժամանակագրությամբ: Պատմագրական աղբյուրներից և վիմագրությունից հայտնի է, որ աթաբեկ Իվանի որդի Ավագը (այլ աղբյուրներում՝ նաև Սարգիս) ամիրսպասալարություն, ապա նաև աթաբեկության է հասել և ժառանգել հոր տիրությունների վրա իշխանություն իրավունքը նրա մահվանից մի քանի տարի հետո՝ 1233 թ: Նույն աղբյուրները նշում են նաև Ավագի մահվան ստույգ ժամանակը՝ 1250 թ.: Ակներև է, որ վերծանվող բնագիրը պետք է գրված լինի մինչև այդ թվականը: Մյուս կողմից հայտնի է նաև, որ բնագրում հիշատակված ասուուածա-սեբ պարոն Ումեկը՝ Կաբինից Արևելյան Հայաստան է տեղափոխվել 1242 թ.՝ մոնղոլների կողմից հայրենի քաղաքը գրավելուց և ավերելուց հետո: Սրանից հետևում է, որ բնագիրը փորագրված պետք է լինի 1242—1250 թթ. ընթացքում:

Չաքարյան Ավագի, Գոնցալի և նրանց զավակների հիշատակությունը արձանագրության բուն բովանդակության հետ ուղղակիորեն չի առնչվում և տվյալ իրադրության մեջ սոսկ մատնանշում է պարոն Ումեկի բարեգործությունների ժամանակը և տեղը: Բնագրի հիմնական գործող անձը, որի գործողությունների և հիշատակի հավերժացմանն է ծառայեցված սույն արձանագրությունը, պարոն Ումեկն է, որը, հավանաբար, միջնորդություն է հարուցել Մանգու խանի առջև և սրա հրամանով շրջակայքի եկեղեցիները և քահանաներին աղատել մոնղոլական հարկատվությունից (զի նա եղել փրկութիւն եկեղեցեց եւ ազատեց քահանայս ի չարե...)

Արդ, ո՞վ է պարոն Ումեկը և ինչո՞ւ է նրա անունը հիշատակված այսպեղի:
 Ավագ ձարի որդի Ումեկի և նրա հետնորդների տոհմագրությունն ու գործունեությունը տվե-


լի քան մեկ դարի ընթացքում (1242—1345) բավականաչափ լուսաբանված է պատմագրութիւն մեջ, և այստեղ դրան անդրադառնալու հարկ չկա: Ն. Գետիկի վանքի Աստվածածին եկեղեցու 1283թ. արձանագրութիւնից գիտենք, որ մեծատուն Ումեկը 40 հազար կարմիր դուկատով գնել է վանքը՝ հավանաբար բոլոր այն սահմաններով, որոնք հաստատվել էին ղեռև Ջաքարե և Իվանե իշխանների կողմից (եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրաղարձիւք՝ լեռնէ ի լեռնէ...):

Մեր նորահայտ արձանագրութիւն վերծանութիւն տեսակետից հետաքրքրութիւն ներկայացնող խնդիրն է ոչ միայն Ն. Գետիկի վանքի հետգնված հողատարածութիւնների սահմանների հարցը, այլև այն պարագան, թե երբ է կատարվել ուղղ գործարքը, և ումից է Ումեկը գանձագին արել զԳետիկ: Նոր Գետիկի վաճառքի մասին միակ աղբյուրը՝ Ումեկի որդի կրտսեր ճարի վերոհիշյալ արձանագրութիւնը չի տալիս այս հարցերի պատասխանը, այստեղ հարեանցի նշված է. իմ հայրն Ումեկ գնեալ էր զԳետիկ ի խՈ՛ կարմիր դուկատի...: Ժամանակի պատմիչները լուծում են այս մասին. նույնիսկ Կիրակոս Գտնձակեցին, որ ապրել, սովորել է Ն. Գետիկում և իր «Պատմութիւն» մեջ հատուկ դախններ նվիրել վանքի այդ տարիների անցուղարձին, ոչինչ չի հիշում այդ մասին: Նորագույն հետազոտողներից հարցի գիտակ Գ. Հովսեփյանը ենթադրաբար նշում է, որ «Ումեկի գնումը կատարված պետք է լինի 1242—1250 թթ. ընթացքում»: Մեր նորահայտ արձանագրութիւնը, որ անվիճելիորեն փորագրված պետք է լինի Ումեկի կողմից Ն. Գետիկը և շրջակայքը (այդ թվում նաև Տաթա գյուղատեղի եկեղեցին, որտեղ գտնվել է արձանագրված խաչքարը) գանձագին անելուց հետո, գալիս է մեկ անգամ ընդմիջտ լուծելու այդ խնդիրը և հաստատելու բազմապատակ բանասեր Գ. Հովսեփյանի կռահումն այն մասին, որ Ն. Գետիկի առուծայի տեղի է ունեցել Ումեկի և Ջաքարյան Ավագի միջև 1242—1250 թթ., այսինքն վաճառական Ումեկի Արեւելյան Հայաստան տեղափոխվելուց հետո (1242) և մինչև Ավագի մահը (1250): Բանի որ արձանագրված խաչքարի բեկորները հայտնաբերվել են Գոշավանքից ոչ հեռու գտնվող գյուղատեղից, ուստի դժվար չէ համոզվել, որ այդ գյուղատեղը ևս իր երբեմնի սահմաններով Ն. Գետիկի վանքապատկան կալվածքների մեջ է եղել XIII դարի սկզբներին և հավանաբար այն ևս գանձագին է արվել Ումեկի կողմից: Այլապես պարոն Ումեկի հիշատակութիւնը քննվող արձանագրութիւն մեջ կմնար միանգամայն անհասկանալի:

Արձանագրութիւնը հետաքրքիր է իր հնագրական հատկութիւններով: Տառաձևերը մեծ մասամբ կանոնավոր բոլորաձև երկաթագիր են, փոքր-ինչ ձգված ու նեղացված: Ա—ի ստեղծները մեծ մասամբ անհավասար են փորագրված, ըստ այդմ՝ ձախ ստեղծը կարճ է բոլոր այն դեպքերում, երբ նախորդ գիրը ունի իջնող գծիկ, մնացած դեպքերում աջ ստեղծը ավելի կարճ է ձախից: Աւագին, ածաւեր, ալ բառերում ա—ի աջ ստեղծը կարճեցված է շարունակութիւն վրա, աղատված տեղում և գիրը կամ հապավման գծիկը տեղավորելու համար. և գիրը ամենուրեք անհամաձայն է բնագրի տառատեսակներին՝ կարճ է ու շղաղիր:

Նորահայտ արձանագրի լեզուն այդ դարերի գրական հայերենն է, գրաբարը, սակայն չի փախլում դասական ձևերով և զգալի չափով մոտեցած է խոսակցական լեզվի իրողութիւններին: Նկատելի են այս շեղումները՝ Մանկու խաչին հրամանովն, փոխ. հրամանաւ Մանկու խաչին, եկեղեցեց, ազատեց (<եկեղեցեաց, ազատեաց), Գոցցին (<Գոցցային), որ խափանէ (<որ խափանիցէ):

ԼՈՅՍՆ ԵՒ
 ՎՍԻՐԱՄԱՅՐՆ
 ... ԿՐՈՍԿՆՆԿԻ



22. ԳԻԼԻՁԱՆ. Երկրագիտական թանգարանում ցուցադրվող փոքրիկ խաչքարի երեսին, խաչի երեք կողմերին, 1 տող.

ՏԻՐԱՄԱՅՐՆ ԼՈՅՍՆ ԵՒ ԶԿԻՐԱԿՈՍ ՅԻՇԵՑԵՔԻ:

Գիտելիք. Բաց վարդագույն տուֆից փոքրիկ խաչքարը (60 × 35 × 10 սմ) նույնպես թանգարան է բերվել Տաթա հանգամասի եկեղեցու ավերակներից, սակայն սա չի ազդեցվել պատի մեջ, այլ կանգնած է եղել պատվանդանի վրա: Լոյս, ըստ չր. Աճառյանի ար. անձնանուն է՝ վկայված XIII—XIV դարերի վիճագրութիւն մեջ և ձեռագրերի հիշատակարաններում: Քննվող տապանագրում այն իգ. անուն է՝ տիրամայրն Լոյսն:

1 Տե՛ս չր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, 1944, էջ 435—436:

Կ Ո Ւ Յ Բ Ի Շ Ե Վ

Հ Ա Ղ Ա Ր Ծ Ի Ն

Միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային նշանավոր կենտրոն Հաղարծնի վանքը գտնվում է Իջևանի շրջանի Կուլրիշե գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արևմուտք, երկու ձորակներով եզերված բարձրավանդակի կենտրոնում, անտառապատ լեռների գրկում:

Վանքի հիմնադրման մասին մատենագրական տեղեկություններ չկան և ստույգ հայտնի չէ, թե երբ և ով է կառուցել նրա առաջին շինությունները: Հարևան Ն. Գետիկ վանքի վարդապետ, պատմիչ Կիրակոս Գանձակեցին, նկարագրելով Մխիթար Գոշի կառուցած Աստվածածին եկեղեցու օժման հանդիսությունները (1196) նշում է, որ դրանց մասնակցել է նաև Հաղարծնի վանքի առաջնորդ Պապատր Տարոնացի վարդապետը, որը, ըստ պատմիչի, շինացրել էր մինչև արգ լքված և կիստվեր վանքը: Այստեղից ակներև է, որ Ն. Գետիկ վանքի հիմնադրումից շատ առաջ Հաղարծնի մենաստանը գոյություն ուներ, հանդիսանալով հյուսիսային Հայաստանի ակնառու օջախներից մեկը: Սակայն Հաղարծնի համակառույցի մեջ մտնող շինությունները մեծ մասամբ XIII դարի գործեր են և քիչ բան են ասում հուշարձանախմբի հնագույն շինքերի մասին: Վանքի ամենահին կառույցը՝ ս. Գրիգոր եկեղեցին վիմագիր հիշատակություններ չունի, ուստի և անորոշ է նրա կանգնման ժամանակը: Սակայն գտված մի վիմագրից գիտենք (սույն պրակի № 62), որ 1184թ. Վրաստանի թագավոր Գեորգիի և նրա իշխանների Սարգիս Ջաքարյանի, Ամիր Գրգի և ուրիշների հրամայմամբ վանահայր Պապատրը և Սուքիասը նորոգել են եկեղեցին, մեծամեծ նվերներ ստանալով թագավորից: Այստեղից ակներև է, որ 1184 թ. նորոգվող եկեղեցին պետք է որ կառուցված լիներ դրանից առնվազն մի քանի դար առաջ:

Ներկայումս Հաղարծնի համակառույցի մեջ մտնում են հետևյալ շինքերը.

տ. Ս. Գրիգոր եկեղեցին տեղավորված է հարթակի կենտրոնում, գավթի արևելյան կողմում: Միջին մեծությամբ (9×8,5մ) գմբեթավոր սրահ է, արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով: Շարված է դեղնագույն սրբատաշ ծակոտկեն քարերով, ներսի պատերը կիսատաշ են: Պալատների միացման անկյուններից բարձրացող կամարները իրենց վրա են կրում սուր վեղար ունեցող ութանիստ թմբուկը: Եկեղեցին քանիցս նորոգվել է, առաջին անգամ, ինչպես տեսանք, 1184 թվականին:

բ. Գավիթը կից է ս. Գրիգոր եկեղեցուն արևմուտքից: Միջին դարերի հայկական մյուս գավիթների նման այս գավթի հատակաձևը ևս համարյա քառակուսի է՝ կանգնած չորս միապաղաղ սյուների և ութ որմնասյուների վրա, որոնք միանում են կամարներով ու կազմում շինքի թաղակապ ծածկը՝ կենտրոնի երգիկով: Գավթի միակ մուտքը տրեմտյան պատից է և արտաքուստ ձևավորված գլանաձև որմնասյուներով զարդարված շրջանակով: Մուտքի շրջանակի բոլոր ձևավոր ու հարթ մակերեսները, կիսաշրջանաձև ճակատակալը ծածկված են արձանագրություններով: Այստեղ է նաև Ջաքարյան Իվանի ընդարձակ վիմագիրը՝ Հայոց աշխարհը սելջուկներից ազատագրելու և ի հավերժացումն նոր վախճանված Ջաքարիայի հիշատակի, գավիթը կառուցելու մասին:

գ. Կաթողիկե եկեղեցին գտնվում է ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմում: Արևմտյան մուտքի ճակատակալի արձանագրության համաձայն (սույն պրակի № 104) այն կառուցել է Հարթի որդի Պալթը՝ 1194թ.: Եկեղեցին միանավ, թաղակապ ծածկով, անգմբեթ փոքրիկ շինք է, շարված

կապտագուլն բազալտի սրբատաշ քարերով, կրաշաղախով: Արևելյան կողմում ունի կիսակլոր փոքր արսիզ՝ ցածր բեմով:

գ. Ս. Ստեփանոս եկեղեցին կանգնած է առանձնակի, ս. Գրիգոր եկեղեցուց արևելք, մի քանի մետր հեռու: Գեներոնագմբեթ, փոքր չափերի, գողտրիկ շինություն է՝ արտաքուստ ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակաձևով, ուղղանկյուն խաչթևերով: Շարված է կապտագուլն բազալտի սրբատաշ քարերով, տանիքը պատած է ձևավոր սալաքարերով: Հարավային պատի վրա, լուսամուտից վերև փորված է արևի գողտրիկ ժամացույց՝ Ա—ԺԲ ելնդավոր գրերով, իսկ սրանից ներքև՝ եկեղեցու XVII դարում կատարված վերանորոգման ընդարձակ արձանագրությունը (№ 110): Հուշարձանի շարվածքի առանձին քարերի վրա, տարբեր դիրքերով փորագրված են Ա, Ս, Մ, Թ, Բ, Կ և այլ գլխագրեր, որոնք, հավանաբար, կառուցող վարպետների նշաններն են:

ե. Աստվածածին եկեղեցին գտնվում է հուշարձանների գլխավոր խմբից հյուսիս-արևելք, Կաթողիկե եկեղեցուց մի քանի մետր հյուսիս: Հուշարձանը գմբեթավոր ընդարձակ գահլիճ է, արտաքուստ երկարաձգված ուղղանկյուն, ներսից խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով: Պաշտեհների միացման անկյուններից ձգվող կիսասյուների միանում են կամարներով, որոնց վրա հանգչում է կլոր թմբուկ և սրածայր վեղար ունեցող գմբեթը: Եկեղեցու արտաքին երեսապատ քարերը կապտագուլն բազալտից և դեղնագուլն կրաքարից են: Կառուցման ժամանակը և կառուցողներն անհայտ են. հարավային մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված են՝ ձախ անկյունում՝ ԻԶ Լ (1281), իսկ տղում՝ ԹՎՇԻ (1071): Հետազոտողներից ոմանք այս բնագիրը մի ամբողջություն են համարում և այն վերծանում ԻԶԼ ԹՎ[ից] շի[ցեցալ], այսինքն հուշարձանի կառուցումը համարում 1281 թ.: Մյուսները պահպանված գրերը երկու տարբեր արձանագրություն են համարում և առաջարկում ձախակողմյան ընդունել եկեղեցու նորոգման տարեթիվը (1281), իսկ աջակողմյանը՝ նրա հիմնադրման կամ շինության (1071): Հարցի քննությունը տալիս ենք այդ բնագրի (№ 81) ժանոթադրության մեջ: Աստվածածին եկեղեցուն արևմուտքից կից է եղել ընդարձակ գավիթը, որից միայն արևմտյան և հյուսիսային պատերի որոշ հատվածներ են պահպանվել, մնացածը ավերված է:

զ. Սեղանատան հոյակերտ շենքը տեղավորված է հուշարձանախմբի հյուսիս-արևմտյան անկյունում: Այս կառույցը բազմադարյան հայ ճարտարվեստի աչքի ընկնող կոթողներից է, աշխարհիկ ճարտարապետության ակնառու նվաճումը: Սեղանատան, կամ, ինչպես նշված է արձանագրության մեջ, տրապեզի շենքը ուղղանկյուն երկարաձիգ հատակաձևով ընդարձակ սրահ է, թաղակապ, երկու երդիկ ունեցող ծածկով: Գեներոնի երկու կարճ սյուները և որմնասյուները միանում են խաչաձև կամարներով, որոնք իրենց վրա են պահում ընդարձակ շինության թաղակապ ծածկը, երկու խոշոր, երկթեք բացվածքով և ստալակտիտներով ձևավորված երդիկներով: Ներսից պատերին կից ամբողջ երկարությամբ շարված են քարե սրբատաշ նստարաններ, որոնց վրա ճաշկերույթի ժամանակ նստել են վանքի միաբանները: Սեղանատանը շարված է սրբատաշ ծակոտկեն կրաքարով, տանիքը պատած է եղել սալաքարերով: Հարավային գլխավոր մուտքի շրջանակի արձանագրությունից իմանում ենք (սուլն պրակի № 117), որ ոմն Կուսաս 1248 թ. նպաստավորել է սեղանատան շինությանը (ետու ազգնութիւն տրապիսզիս):

է. Արքայական դամբարանը տեղավորված է ս. Գրիգոր եկեղեցու գավթի հարավային պատի տակ, նրան կից: Ուղղանկյուն հատակաձևով, մատուռանման փոքրիկ շենք է եղել (2,5×1,5 մ), որի միայն հիմնապատերն են մնացել: Ներսում երեք տապանաքարեր են՝ հարթ, կիսամշակ: Հյուսիսային կողմի կապտագուլն բազալտի տապանաքարի վրա փորագրված է՝ ՄԲՏ ԹԳ, որ վերծանվում է Սմբատ թագաւոր: Մեջտեղի, նույնպես բազալտե տապանաքարի վրա պահպանվել են առանձին գրեր, որոնք հավաստիորեն չեն վերծանվում: Հարավային տապանաքարը կրաքարից է, մանր բեկորների է վերածվել, տապանագիրը եղծվել, ուստի չի իմացվում, թե ում գերեզմանն է: Հավանական է մտածել, որ այստեղ թաղված են Կյուրիկյան թագավորները:

ը. Մատուռները և խաչքարերը գտնվում են հուշարձանների գլխավոր խմբից դեպի արևելք, ժայռոտ բլրի լանջին: Փոքրիկ մատուռներ են (4×2 մ), կառուցված վանքի մյուս շինությունների հետ միաժամանակ, կամ փոքր-ինչ ուշ: Նրանց մոտ կանգնած գեղաքանդակ խաչքարերի արձանագրություններն ունեն 1218, 1219 թթ. (№№ 123, 124): Կարելի է ենթադրել, որ հենց այդ ժամանակներում էլ շինվել են մատուռները և խաչարձանները:

Հաղարծնի վանքը հարուստ է վիճակական արձանագրություններով. սուլն ժողովածուում տեղա-
 փոխված են հուշարձանների որմերին փորագրված 103 մեծ ու փոքր վիճագրեր, որոնք կարևոր ան-
 դեկլություններ են հաղորդում Կալենի և Մահկանաբերդի գավառների քաղաքական պատմության
 ստեղծման տեսանկյան իրադարձությունների, մշակույթի ու կենցաղի մասին: Վիճագրերը մեծ
 մասամբ վատ են պահպանվել, դարերի ընթացքում հողմահարվել, եղծվել են և դժվարությամբ են
 վերծանվում: Արձանագրությունների ընդօրինակման և հրատարակման գործը սկիզբ է առել դեռևս
 անցյալ դարի կեսերից: Առաջին անգամ 1842 թ. Հաղարծնի վանքի երկու արձանագրություն է
 հրատարակել Հովհ. Շահխաթունյանցը: Այնուհետև գրեթե միաժամանակ վանքի 18 բնագրեր է իր
 գրքում գետեղել Մ. Ջալալյանցը: Ավելի ուշ, 1895 թ. հրատարակված իրենց տեղագրական երկե-
 րում Մ. Սմբատյանցը և Մ. Բարխուդարյանցը նույնպես ընդօրինակել են հուշարձանախմբի վի-
 մագրերը, ըստ որում, առաջինը հրատարակել է 7, իսկ երկրորդը՝ 10 արձանագրություն: Ընթա-
 ցիկ դարի սկզբին Մ. Տեր-Մովսիսյանը «Ազգագրական հանդեսում» (1913, գիրք 25) հրատարակեց
 Հաղարծնի վանքի 39 արձանագրություններ, որոնք անփոփոխ տեղ են գտել նույն հեղինակի՝ Տա-
 թևի, Հաղարծնի և Դաղի վանքերի մասին հետազոտում գրած մենագրության մեջ (1938, Երու-
 սաղեմ): Հաղարծնի վանքի վիճագրերի առավել ընդարձակ հավաքածուն պատկանում է Հ. Նշիա-
 դարյանին, որը «Էջմիածին» ամսագրի 1954 թ. երեք համարներում (IX, X, XI) հրատարակած
 իր հոդվածում համառոտ նկարագրելով հուշարձանախմբի կառուցվածքները, ներկայացնում է
 նրանց պատերին փորագրված շուրջ 70 բնագրերը, սեփական, նախորդների համեմատությամբ
 զգալիորեն հարազատ վերծանություններով, սակայն առանց հետևելու ժամանակակից արձանագրա-
 գիտության մեջ ընդունված հրապարակման կանոններին և առանց գետեղելու այդ բնագրերի մեկ-
 նությունները:

Արձանագրությունների վերոհիշյալ վերծանությունները քանի որ անհարազատ են բնագրին,
 քարի վրա փորագրվածին, այդ պատճառով սուլն ժողովածուի համար պակաս օգտակար նշանակու-
 թյուն կարող են ունենալ. բոլոր տեղագրողներն իբրև ընդհանուր կանոն արտագրել և հրատա-
 րակել են միայն լավ երևացող և հեշտ ընդօրինակվող բնագրերը, եղծված դժվարընթեանների արձա-
 նագրությունները անտեսվել են: Այս առումով, ավելի բարվոք են Մ. Տեր-Մովսիսյանի և Հ. Նշիա-
 դարյանի վերծանությունները, թեև նրանցում ևս քիչ չեն աղավաղումները և անհասկանալի տար-
 ընթերցումները: Հաղարծնի վիճագրերից միայն մեկն է (սուլն պրակի № 62) արժանացել պատմա-
 բանասիրական հանգամանալի հետազոտության և գիտական հրապարակման՝ Մ. Երեմյանի և
 Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածներում:

Ներկա ժողովածուն Հաղարծնի վանքի վիճագրերի լիակատար հավաքածուն է և հրատարակ-
 վում է առաջին անգամ: Վերծանությունները նոր են, ըստ ամենայնի ճշգրտված: Նախորդ ընդ-
 օրինակողների ընթերցումները մեջ ենք բերում և քննում միայն այն դեպքերում, երբ կասկածելի
 ենք համարում մեր սեփական ընդօրինակությունը, կամ այն նկատառումով, որ բնագրերը անցյալ
 դարում ավելի անխաթար է եղել, ուստի և նրա նախկին ընթերցվածները կարող են օգնել բնագրի
 ավելի հավաստի վերականգնմանը:

23. ԳԱՎԻԹ. արտաքուստ, արևմտյան դռան բարավորից վերև, 11 սող.

ԿԱՄԱԻ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ. ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ Է ԵՒ ԱՐՁԱՆ ՄՇՏԸՆՋԵՆԱԻՈՐ
 ՈՐԳԵԱՑ ՄԵԾԻՆ ՍԱՐԳՍԻ, ՅԱԶԳԷ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆ՝ ԻՒԱՆԷՒ ԵՒ ՉԱՔԱՐԷԻ, ՅՈՐԺՍՄ
 ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆՆԻ ԱՅ ԷՀԱՍ ՅԱՐԱՐԱԾՍ ԵՒ ԵՏ . . . Ն ԱՐԱՌԻՆՆԻ ՏԻՐԵԼ
 ՍԷՓԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵՐԱՆՆԻ ՆԱԽՆԵԱՑ ՄԵՐՈՑ, ԵՏ Ի ՉԵՌՍ ՄԵՐ ՅՈՒԱԶ
 ՉԱՆԱՌԻԿ ԴԱՆԱԿՆ ՍՆԲԵՐԴ, ԵՒ ԶԹԱԿԱՌՈՐԱՆԻՍՏ ՔԱՂԱՔՆ ԱՆԻ, ԱՊԱ ՉԱՄՈՒՐՆ
 ԲՅՆԻ, ՉՄԱՐԱՆԳ, ՄԻԶՔ ԵՒ ԳԱՎԱԶԱՆՔԻ Ի ԹԱՒԷԺ, ՉԿԱՐՆՈՑ ՔԱՂԱՔ ՄԻՆՉԵԻ
 ԽԼԱԹ, ՉՇԱՔԻ ԵՒ ՉՇՐՈՒԱՆ, ՊԱՐՏԱԻ, ՄԻՆՉԵԻ ԲԵԼՈՒԿԱՅՆ ԵՒ ՉԱՅԼ ԲԱԶՈՒՄՍ
 ԻՊԻՒԱՆՑ ՈՍՀՄԱՆԱԻՔ, ՉՈՐ ԱԻԵԼՈՐԴ ՀԱՄԱՐԵՑԱՔ ՅԻՇԱՏԱԿԵԼ: ԱՅԼԵԻ ԱՆԲԱՐ-

ԿԱՆԱԼԻՆ, ինք սիրեց զԹԱԳՍ ՊԱՐԾԱՆԱՑ ԳԼԽՍ ԻՄՈ ՋԶԱՔԱՐԻԱ, ԵՒ ԿՈԶԵՑ ԱՌ ԻՆՔՆ, ԲՈՐՈՎՁԵՌՆ ԵՂԵԻ ԱՐԻՈՒԹԻՐԻՆ Ս, ԵՒ ԵՄ՝ ՇԻՆԵՑԻ Ի ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՎԱՆՔՍ ՀԱՂԱՐԾԻՆ ԺԱՄԱՏՈՒՆ ՎԻՄԱՐԴԵՆ ԿԱՄԱՐԱԿԱՊ, Ի ԴՐԱՆ ՄԲ ԳՐԻԳՈՐԻՍ: ԵՒ ՄՈՐԱ ՋԱՒԱԳ ԽՈՐԱՆԻՆ՝ ՊԱՏԱՐԱԳՆ ՋԱՔԱՐԷԻ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ ԱՆԽԱՓՈՒՆ: ԿԱՏԱՐԻԶՔ ԳՐՈՑՍ ԱՒՐՀՆԵԱԼ ԼԻՑԻՆ ՅԱՑ:

Հրատ, Շահաթունյանց, Բ, 370, Ջալալյանց, Ա, 131—132, Սմրատյանց, 183, Բարխուդարյանց, 386, Տեր-Մովսիսյան, 77, ՎՏ, 141, Եղիազարյան, 1954, Ժ, 40:

Գիտելիք. Բնագիրը հրատարակվել է բազմիցս, սակայն ցարդ գիտական, քննական ընդօրինակություն չունի և շատ կետերում կասկածելի է: Շրջանակի աչ կողմի 2-րդ տողում Միչք և Գալազանք տեղանունները Ջալալյանցը կարդացել է մինչև Գալազանք, Տեր-Մովսիսյանը՝ միճար և Գալազանք, Եղիազարյանը՝ Զ. և Գալազանք: Շարունակության վրա զՇաքի և զՇրուան, Ջալալյանցը տալիս է զՇրուան Զիրևան, Եղիազարյանը՝...ԵւՋերուան: Նույն տողում ևւ եա...ն. արառին բառերը որոշակի չեն, հավանաբար այդ բառերն ավելորդ են փորագրված, քանի որ նախադասությունը ամբողջանում է առանց դրանց՝ եւ եա տիրել սեփական ժառանգութեանն և այլն:

Բնագիրն իր կառուցվածքով ու բովանդակությամբ հիշեցնում է Մորո ձորո վանքում նույն իվանեի թողած մի այլ ընդարձակ արձանագրություն (սուլն պրակի № 280:) Երկու դեպքում էլ սկիզբը շարագրվում է երկու եղբայրների՝ Իվանեի և Ջաքարիայի անունից և հանրագումարի բերվում նրանց մղած պատերազմները օտար նվաճողների դեմ, թվարկվում ազատագրված բնակավայրերն ու ամրոցները: Ապա հաղորդվում է Ջաքարիայի մահվան և նրա հիշատակը հավերժացնելու նպատակով կատարվող շինարարության կամ նորոգության մասին: Այսպես, այս բնագիրը կարող է ծառայել իբրև գավթի շինարարական արձանագրություն, վկայելով, որ նրա կառուցումը ավաշտվել է Ջաքարիայի մահվանից (1213) ոչ այնքան ուշ: Սակայն գավթի արձանագրություններում կան այնպիսիները, որոնք փորագրվել են Ջաքարիայի մահվանից, ուրեմն և գավթի շինությունն ավարտելուց տարիներ առաջ: Այսպես, սուլն պրակի № 24 բնագիրը 1208 թ. է, № 72-ը 1207 թ., իսկ մուսթի ներսում փորագրված Գերգի նվիրագիրը ստուգապես թվագրված է ՈԼ (1181 թ.) ի թագաւորութեան Գեաւրգեա, երբ Ջաքարիան և Իվանեն Վրաց արքունիքում դեռ չէին հասել իրենց բարձր դիրքին, և այդ պաշտոններում էր նրանց հայր Սարգիսը:

Հավանական է մտածել, որ Իվանեի խոսքը ոչ թե գավթի ի նորո շինելու մասին է, այլ նորոգելու, վերականգնելու, ըստ որում շինել բալը վիմագրության մեջ հաճախ արտահայտում է նաև նորոգելու իմաստ: Մյուս կողմից, հնարավոր է նաև, որ վաղ շրջանի մեր նշած նվիրագրերը փորագրված լինեն ավելի ուշ, սակայն տարեթվերը դրված լինեն հինը, նախնականը: Իբրև նրման օրինակ կարելի է մատնացույց անել Մորո ձորո վանքի 1197 թ. բնագրերից մեկը (№ 258), որտեղ Իվանեի քույր Նանան հայտնում է յորժամ շինեաց Իւանե զվանքն Մորո ձորո..., մինչդեռ նույն հուշարձանի այլ վիմագրերից ակներև է, որ վանքը հիմնադրվել է դրանից գարեր առաջ և Իվանեն ոչ թե շինել, այլ նորոգել է Մորո ձորո վանքի Աստվածածին եկեղեցին:

24. ԳԱՎԻԹ. արտաքուստ, մուսթի ճակատակալ քարի վրա, 13 տող.

ԹՈՒԻՆ, ՈՇԵ (1206), Ի ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՋԱՔԱՐԷԻ ԵՒ ԻԻԱՆԷԻ՝ ԵՒ ՅԱԽԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ, ԵՄ՝ ԽԱԼԹ, ՈՐԴԻ ՍՄՊԱՍՏԱՑ, ԻՄ ԳԵՂՆ ՔԱՆԱՔԵՌ ՍԿԱՆԴԱՐԱՆՅ ՀՈՂՆ ԳՆԵՑԻ ԵՒ Ի ՀԱՂԱՐԾԻՆՍ ԷՏՈՒ, ՎԱՍՆ ԻՄ ՀՈԳՈՑՍ ԵՒ ՎԱՍՆ ՅԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ՝ ԿԵՆԱՑ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ ՍԻԱԳԻՆ. ԵՒ ՄԻՍԻԱՆՔՈՒ ՋՍԱՌՋԱՐԴԱՐԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼԸՍՏԵԱՆՆ ԺԱՄՆ ԻՆՁ ԷՏՈՒՆ ՋՍՄԵՆ ԵԿԵՂԵՑԵԱՑՍ: ՈՎ ՋԱՑԳԻՆ ԱՍՏԻՑ ՀԱՆԷ, ԿԱՄՁԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ. ԻՄ ՄԵՂՍՑՍ ՏԷՐ Է ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ:

Հրատ, Շահաթունյանց, Բ, 604, Ջալալյանց, Ա, 132, Սմրատյանց, 183, Բարխուդարյանց, 138, Տեր-Մովսիսյան, 68, ՎՏ, 47, Եղիազարյան, 1954, Ժ, 41: Լուսակն. 7

25. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի շրջանակի վրա, շրջանակի եզրերին, 1 սող.
ԿԱՄԱԻՆ ՄՅ, ԵՄ ԳԱԳՍ ԵՒ ԱՇՈՏ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՄԻ ԳՐԻԳՈՐԻՍ ԵՒ ՉՄԵՐ ՀՈԳՈ
ՊԱՀՈՒՍՏՆ ՅՄԾԱՆՆԻՍ ՇԻՆՈՒԹԻՒՆՆՄ ՏԻԱՔ: ԵՊԻՍԿՈՊՈՍՄ, ՎԼԱՐԴԻԱՊԵՏՍ, ԵՒ
ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԼԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ, Ի ՏԱԻՆԻ ԵՐԵՄԻԱԻ
ՄՍՐԳԱՐԼԻՆ, ՈՐԶՍՓ ԵՍ ԿԵՆԿՍՆԻ ԵՄ:

Հրատ. Զալայանց, Ա, 131, Տեր-Մովսիսյան, 68, Եղիազարյան, 1934, Ժ, 40

Գիտելիք. Հորիզոնական տողի վրա նախիկ վր և միարանքս Տեր-Մովսիսյանը և Եղիազարյանը, հե-
տևելով Զալայանցին, կարդացել են, որ սարկալազ վարդապետ և միարանք, որ ակնհայտ վրի-
պում է, քանի որ հաղիվ թե սարկալազը հիշատակվիր վարդապետից առաջ:

26. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի շրջանակի հյուսիսային մասում, ներքեից, 2 սող.
ԵՄ ՍԱՐԿԱԻՍԳ ԶԻՄ ՀՈԳՈ ԱՐԳԻՆՍՍ Ի ՄԻ ԳՐԻԳՈՐԻՍ ԼՏՈՒԻ: ՀԱՅՐՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ
Ա ՊԱՏԱՐԱԳ ԼՏՈՒՆ ԻՆՉ Ի ՏԱԻՆԻՆ ԿԻՐՎԻ: ՈՎ ԶՍՈՆԵ, ԳՍՏԻ ՅՄՅ:

Հրատ. Զալայանց, Ա, 131, Տեր-Մովսիսյան, 80, Եղիազարյան, 1934, Ժ, 41.

Գիտելիք. Սարկալազ նվիրատուի անունն է: Առաջին տողում ի սր. Գրիգորս Լաուի, հայրս
և միարանքս Ա պատարագ հառուց նախադասությունները ըստ վերծանողների ճիշտ չեն կար-
դացել՝ հառու ի հայրս և միարանքս: Միայն առաջացել է հառու լայնածի բառանշատու մից, որ
դիտվել է իրրև հառու և ի նախդիր, մինչդեռ նույն ժամանակների այլ վիմագրերից հայտնի է, որ
աամ բալի անց. կատարյալ ժամանակի լ գեմքը կարող է լինել նաև առուի, ետուի, ետուի, այսինքն
ի դիմալին վերջավորություն հավելումով, մյուս բալերի հետևությունը.

27. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի շրջանակի վրա, նախորդի աակ, 2 սող:
Ի ՏԱԻՆԻՆ ԻԳՆԱՏԻՈՍԻ : Ս: ԺԱՄ ԱՌՆԵՆ ՇԵՐԱՆՇԱՀԻ: ՈՎ ԽՍՓԱՆԵ, ԳՍՏԻ ՅՄՅ:

Հրատ. Զալայանց, Ա, 131, Տեր-Մովսիսյան, 68, Եղիազարյան, 1931, 7, 11.

28. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի շրջանակի ձախ կողմում, նախորդի աակ, 2 սող.
ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ԵՄ ՔՐԻՍՏՈՍՍԱՏՈՒՐ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՄԻ ԳՐԻԳՈՐԻՍ: ՎԼԱՐԴԻԱՊԵՏՍ
ՅՈՎԱՆԼԵՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ : Ս: ՊԱՏԱՐԱԳ ԼՏՈՒՆ, Ի ՏԱԻՆԻ ՄԻ ՅԱԿՈՒՍ: ԽՍՓԱՆՈՎՆ
ԳՍՏԻ:

Հրատ. Զալայանց, Ա, 133, Տեր-Մովսիսյան, 80, ՎՏ 238, Եղիազարյան, 1934, Ժ, 43.

29. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի շրջանակի վրա, բարավորից հյուսիս, 4 սող.
Ի ՏԱԻՆԻ ՔՐԻՍՏՈՍՆԻՑ ՏԱՐՆԻՆ : Ս: ՊԱՏԱՐԱԳ ԼՏՈՒՆ ՄԻԹՍՐՍ ԵՒ ՍԻՍԱԻՆ ՏՐ
ՅԼՈՎԱՆԵՍՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ԱՆԽՍՓԱՆ:

Հրատ. Եղիազարյան, 1934, Ժ, 41.

30. ԳԱՎԻԹ. արաաքուսա, մուսքի կամարին, 2 սող.

Դեղձուտի վանքը գտնվում է Լճկանի շրջանի Գետաշեն գյուղից մոտ 6 կմ հարավ-արևմուտք, մի անտառապատ լեռնալանջի բացատում: Գետաշեն գյուղից դեպի վանքը տանող սալլային ճանապարհը Կոնեն գետակի ձախ ափով բարձրանում է մինչև Սամսոնի ջուր և Կոնեն գետակների խոտնման վայրը և անցնելով Չալդոշանի կամուրջով՝ բաժանվում երկու ճյուղի, որոնք երկուսն էլ տանում են Դեղձուտ, մեկը հյուսիսից, մյուսը հարավից: Սրանցից առաջինը թեքվում է աջ և անտառապատ սարի զառիվեր լանջով անցնելով, միանում դեպի արոտավայրերը տանող անտառային ճանապարհին, որը հասնում է մինչև Դեղձուտ գյուղատեղիի գերեզմանոցը, որտեղից էլ մինեղ արահետով թեքվում դեպի մոտակա վանքը: Երկրորդ ճանապարհը թեքվում է ձախ, անցնում լեռնալանջի հարավային լանջով, Խնձորկուտի ձորի ձախ ափին ի վեր և մոտենում վանքին մինչև մեկ կմ, որտեղից դեպի վանքն է ձգվում անտառային զառիվեր կածանը:

Դեղձուտի հուշարձանախումբը տեղավորված է Խնձորկուտ կամ Սամսոնի ջուր գետակի ձախ ափին, անտառապատ լեռնաշղթայի արևելյան լանջի ընդարձակ բացատում: Այստեղից բացվում է Կոնեն և Խնձորկուտ ձորերի ու անտառածածկ լեռների համալնապատկերը, իսկ դեմ հանդիման, անդնդախոր ժայռերի ծերպերին վեր է խոլանում պատմական Բերդաքարը՝ Մահկանաբերդի իշխանների երբեմնի ամրոցը:

Դեղձուտի վանքի շրջակայքում պահպանվել են հետևյալ հուշարձանները.

ա. Դյուղատեղ Դեղձուտ, տարածվում է վանքի ջուրջը, դեպի հյուսիս և արևմուտք, մինչև արոտավայրերը տանող ճանապարհը: Այստեղ երևում են բնակարանների բաղամթիվ ավերակներ, որոնցից մի քանիսն ավելի ընդարձակ են և, հավանաբար, պատկանել են վանքի միաբանությունը, քանի որ ավելի մոտ են հուշարձանների գլխավոր խմբին: Դյուղատեղը ծածկված է խիտ անտառով, միայն հյուսիս-արևմտյան թաղամասն է անտառազուրկ, ծածկված փարթամ բուսականությամբ: ր. Մասուռ և զերեզվանոց, գտնվում են Դեղձուտ գյուղատեղիի հյուսիս արևմտյան ծայրին, ճանապարհի եզրին, բլրի վրա: Մասուռը փոքր չափերի է (4×3 մ)՝ կառուցված կապտավուն որձա-

քարի մանր կտորներով: Ծածկը թաղակապ է եղել, փլված է, մնամ են միայն պատերը՝ հաղիվ մեկ մետր բարձրությամբ: Մասաոի շրջակայքում տարածված է պատմական ղերեղմանոցը՝ բաղմաթիվ անմշակ տապանաքարերով և խաչքարերի միաստիճան քառակուսի սրբատաշ պատվանդաններով: Առաջարկը չեն պահպանվել: Թեև արձանագրություններ չկան, սակայն խաչքարերի պատվանդանների մշակման ոճից դատելով, կարելի է ղերեղմանոցը և մատուռը ժամանակամերձ համարել վանքի կառուցվածքներին:

գ. Դեղձուտի հուշարձանների հիմնական խումբը բաղկացած է գլխավոր եկեղեցուց, նրա գավթից և երկրորդ եկեղեցուց: Բացի սրանցից, առանձին ուշադրության են արժանի դավթի կենտրոնում ընկած Առաքել վարդապետի արձանագրված տապանաքարը և նրա կանգնեցրած գեղաքանդակ, ընդարձակ շինարարական արձանագրությամբ խաչքարը, որը, ցավոք, պատվանդանից ընկնելով, ջարդվել, մի քանի բեկորների է վերածվել:

Անցնում ենք առանձին հուշարձանների նկարագրությանը:

ա. Գլխավոր եկեղեցին ուղղանկյուն հատակագծով դժբեթավոր դահլիճ է, կառուցված բաց մոխրագույն և դեղնավարդագույն անդեղիտի սրբատաշ քարերով, առանց սյուների, չորս հիմնական և երկու երկրորդական որմնասյուներով, վերջիններն արևմտյան պատի վրա են, մուտքի երկու կողմերին: Եկեղեցու արտաքին ճակատների սրբատաշ մակերեսները մշակված են բարձր ճաշակով և մեծ վարպետությամբ: Հարավային, արևելյան և հյուսիսային պատերի վրա կան երկուական անկյունաձև որմնախորշեր, ճոխ քանդակազարդված պսակներով, որոնք պարուրված են երկուական կիսասյուների շրջանակներով: Գեղեցիկ են ձևավորված արևելյան պատը հյուսիսային և հարավային պատերին միացնող անկյունները: Սակայն հուշարձանի քանդակազարդերի պսակը պետք է համարել արևմտյան գոտն շրջանակը, որն իր կատարման արվեստով և զարդերի հորինվածքով կարող է մրցել հարկական լավագույն շքամուտքերի հետ:

Ներքուստ, եկեղեցու հյուսիսային պատին, լուսամուտից արևելք, խոշոր տառերով փորագրված է ՉԷՇ, որը, ինչպես կտեսնենք, եկեղեցու շինության թվականն է:

բ. Գավթից կից է եկեղեցուն արևմուտքից. կառուցված է նույն բաց վարդագույն անդեղիտի սրբատաշ քարերով, առանց սյուների, ութ որմնասյուների վրա, որոնք իրար միանալով կամարներով, խաչաձևվում են անկյուններում՝ կազմելով շենքի ծածկը: Ուշադրավ է գավթի հյուսիսային և հարավային պատերի վերևի կորացող հատվածների շարվածքը՝ շարքերի ստորին եզրերը հաջորդաբար մի քանի սմ առաջ են դրված վերին եզրից, որի հետևանքով ստացվել է ոչ թե հարթ մակերես, այլ աստիճանաձև: Հարավային պատի մեջ բացվում են ղուլգ լուսամուտներ, որոնք իրարից անջատված են ութանիստ ամբողջական սրբատաշ սյուներով: Գավթի հատակը և տանիքը սուլածածկ են:

գ. Գավթի կենտրոնում, հատակին, ընկած է ավաղաքար, մի քանի տեղից կտորված մի մեծ տապանաքար, որի վրա իրար ագուցված գեղաքանդակ խոշոր տառերով փորագրված է վանքի առաջնորդ Առաքել վարդապետի անունը:

դ. Խաչքարը կանգնեցված է եղել գավթի մեջ բացվող եկեղեցու մուտքի հյուսիսային կողմում գտնվող պատվանդանի վրա: Ներկայումս խաչքարը, մի քանի բեկորների վերածված, ընկած է պատվանդանից ոչ հեռու, գավթի հատակին՝ հուշարձանի բեկորների և փարթամ մացառների մեջ: Հուշարձանների պահպանության աշխատողները 1948 թ. Դեղձուտի վանքի մաքրման աշխատանքներ կատարելիս, հավաքել են խաչքարի պահպանված բեկորները և խնամքով տեղավորել գավթի հատակին՝ աշխատելով հնարավորին չափ վերականգնել խաչքարի ամբողջականությունը, մանավանդ նրա ընդարձակ, շատ կարևոր արձանագրությունը: Յավոք, այդ աշխատանքները լիակատար հաջողությամբ չեն պսակվել, պակասել են մի քանի բեկորներ, որը և խանգարել է այդ արժեքավոր արձանագրությունը լրիվ վերականգնելու:

Դեղձուտի վանքը իբրև հուշեոր ու մշակութային կենտրոն իր ծաղկմանն է հասնում մանավանդ Մահկանաբերդի իշխան ամիրսպասալար Մադունի տիրապետության օրոք: Ձեռագրերի հիշատակարաններից հայտնի է դառնում, որ Դեղձուտի վանքը նաև գրչության օջախ էր Առաքել վարդապետի ժամանակ, որի մոտ ուսանելու և ձեռագրեր արտագրելու էին գալիս տարբեր գավառներից՝ նույնիսկ այնպիսի նշանավոր հոգևոր կենտրոնից, որպիսին էր Գանձասարի վանքը: Դեղձուտի վանքի ձեռագրական հավաքածուների հարստության մասին է խոսում պատվիրատուի այն վկայու-

թյունը, ԸՅ Ն. Դետիկում չգտնելով արտադրվելիք ձևազրի օրինակը, ստիպված դալիս է Դեղձուտ և շատու գրեյ զգիլիքս զայս այլ և այլ գրչաց»։ 1280 թ. գրված մի ձևազրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ ոմն Գևորգ որդի Պաքուտա, Խոռին Հզարայ, յերկրեց Սաղեցնոյ ի մեծահըն- չակ քաւարանէն Դանձասարայ» ուսանելու էր եկել յերկիրս Մահկանաբերոյ, ի վանս Դեղձու- տի, առ ոտս Առաքել վարդապետի»։ Այնուհետև Դեղձուտ խնդրում է հիշել Վահրամ ե Ստեփան հոգևոր եգրայրներին, որոնք ոչ միայն ձևազրի օրինակն են տրամադրել արտադրելու համար, այլև՝ ի միում խցի պանդխտանեաք, և որոնք այդ օրերին թոգել են գրչին մենակ և մեկնել իրենց երկիրը՝ Ալրարատյան գավառը։

Որ Դեղձուտի վանքը գրչութիւն վայր է եղել, վկայում է նաև մի սովոր տոնապատճառի հիշատակարանը՝ գրված Շմալոն գրչի և Դրիգոր քահանայի ձեռքով, ոմն Սարգսի պատվերով. Արդ ես՝ Սարգիս յարժ էի դեգերել առ ոտս կենդանի վիմիս Առաքել վարդապետի, ի դաւառիս Մահ- կանաբերոյ, ի պարոնութիւն արարակ Սագունից, ետու գրել զգիրս զայս այլ և այլ գրչաց, զի օրինակ չգտանեաք զկարգ ասացուածոց յիմանեալ միայնարանին ի Դետիկ, ի թվ հա[յոց] 21Գ1։

Վերևի հիշատակարանը կարևոր է նաև նրանով, որ այնտեղ ավանդվում է հուշարձանախմբի հնադուլն և ստույգ անվանումը՝ Դեղձուտ, ըստ երևույթին Դեղձուտ անտառամասի անունով, որ- տեղ կառուցված է վանքի համալիրը և որը տեղացիների շրջանում մինչև օրս էլ պահպանում է այդ անունը։

Բանասիրութիւն մեջ այն կարծիքն է հայտնվել, որ Դեղձուտի վանքի առաջնորդ հռչակավոր վարդապետ Առաքելը Վանական վարդապետի աշակերտներից է, Վարդանի, Կիրակոսի և Յովսէփի ուսումնակիցր, որի մասին հիշում է Դրիգոր Ականցին (Մաղաքիա Աբեղա), նոյնպէս եւ գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիրակոս, Առաքելն և Յովսէփ խաչանման րաժանեալ զաշխարհն Արևելքից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ հոգւոյն սրբոյ...) (ՍՊՔ, 1870, 42)։


Այս կարծիքի հեղինակ բազմավաստակ Գ. Հովսէփյանին անծանոթ են եղել ոչ միայն վերո- հիշյալ խաչքարի, այլև Դեղձուտի վանքի մնացած արձանագրութիւնները, որոնք լրջորեն առար- կամ են այդ վարկածի դեմ։ Չէ որ այդ բնագրերից իմանում ենք, որ նուստ սպասաւոր բանի այ Առաքել վարդապետը Կիլիկիայի Տարսոն գավառից էր, եկել էր Մահկանաբերոյ, հիմնարկել ու ծաղկման հասցրել Դեղձուտի վանքը, երկար տարիներ եղել նրա և Առաքելոց վանքի համբավա- վոր առաջնորդը, մահացել և թաղվել նույն վանքի գավթում։ Առաքելի արձանագրութիւն մեջ ակնարկ անդամ չկա Արևելյան Հայաստանի այս գավառներում նրա ուսումնառութիւն մասին, քանի որ նա նուստ սպասաւոր բանի այ էր դեռևս Տարսոնում։ Բացի դրանից, Առաքելի են- թաղրյալ աւսումնակիցներ Վարդանը և Կիրակոսը նույնպէս չեն հիշում նրան, թեև սպասելի էր, որ նրանք իրենց պատմութիւններում ինչ որ չափով կանդրադառնալին Դետիկին այդքան մոտ Դեղձուտի մեծահոյակ վանքի և նրա նույնքան հռչակավոր առաջնորդի մասին, մանավանդ, որ նա իրենց դասընկերն է։

Դեղձուտի վանքի գործունեութիւն եռուն ժամանակը XIII դարի երկրորդ կեսն է, Առաքել վարդապետի առաջնորդութիւն շրջանը, որից հետո պատմական ու վիմագրական տեղեկութիւններ չկան։ Պետք է ենթադրել, որ վանքն իբրև հոգևոր կենտրոն և գրչութիւն օջախ շարունակել է իր գոյութիւնը նաև հետագա դարերում։ Այդ են ցույց տալիս հուշարձանախմբի մոտակայքում ուշ ժամանակներում կատարված մի շարք կառուցումները, մասնավորապէս գլխավոր եկեղեցուց 5 մ հյուսիս մեծ թաղակապ եկեղեցին, Դեղձուտ գլուղատեղիի շինութիւնները և այլն։ Դեղձուտի հու- շարձանախմբի վիմագրութիւնը աղքատ է, ընդամենը 12 մեծ և փոքր արձանագրութիւն։ Վանքի կառուցվածքների շինարարական արձանագրութիւնները, ինչպէս կտեսնենք, փորագրված են վե- րոհիշյալ խաչքարի վրա և այդ է պատճառը, որ հիմնադիր Առաքելը հարկ չի համարել լուրա- քանչլուր կառուցի համար կրկնել դրանք։


241. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔԻ, գլխավոր եկեղեցու մուտքին կից, նրա հյուսիսային կողմում գտնվող պատվանդանի վրա եղած մեծ խաչքարի երեսի արձանագրութիւն- ները.

ա. խաչի շրջանակը եզերող թեք մակերեսներին, սկսած ձախակողմի ներքևի մասից, 1 տող.

¹ Գ. Հովսէփյան, Հավուց թառի ամենափրկիչը, Երուսաղեմ, 1937, էջ 62.



ԼՈՅՆ: ՔԻԱՅՄԵՐՈՒԻԾԱՓԷ
ՄԻՔԵԻԻԾԱԳՍԱ



ԿԻՆՈՊՈՂՉ ԱՍԵՆՐՎԷ

ՍԵՆՈՒՔԻՎԻՍՆԱՆՍՈՒՊԻՂ

ՆՅԱԼԷ ԱՄԵՆ ԱՍՈՒՔԻՎԻՍՆԱՆՍՈՒՊԻՂ

ՊԵՏԻՔԵԻԻՎԻՍՆԱՆՍՈՒՊԻՂ
ՄՐ - - - - -

ԴԱԻՐՂՆԵԱԼ Է ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՒ ԱՄԵՆԱԻՐՂՆԵԱԼ ԽՈՉՆՈՒՐԳՐ ՓՐԿԱԳՈՐԾ
ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԽԱՉԵԼՈՑՆ ՔԻ ԱՅ ՄԵՐՈ, Ի ԾԱԳԷՄ ԻՆՉԵԻ Ի ԾԱԳՍ ԱՇԽԱՐՀԻ
ԾԱԳԻՆ, ՈՐ ՈՉ ՀԱՏ ԵՒ ՈՉ ՎՃԱՐ . . . : ԲԱՐՉՈՂ Է ՅԻ, ՔԱԻԻՉ ԱՄԵՆ ՄԵՂԱԻՈՐԻ
ՄԵՉ ԲԱՐԷԽՐԱԻՍ:

բ. խաչքարի ճակատին, աջակողմյան մասը խիստ վնասված, 5 սող.

ՂԻՆ ԱՅ ՉԱԻՐՈՒԹԻՅ ԶԱՇԽԱ ---
ԷՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐԱԹԱԲԱ ---
ՌԷԵԼՍԵՆԱՍՏՍՊԱՍԱՌՐԲԱԵԿՆ ---
ԷՆ ԿԻԼԻԿՌԳԷ ԱՌԷՆ ՈՒՐՍՈՆԻ ԿԱՄ ---

. . . «ԱՆԵՂԻՆ ԱՅ ՉԱԻՐՈՒԹԵԱՄԻՐ, ՅԱՇԽԱՐԶԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱԲՍՂԱ ՂԱՆԻՆ»
ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ՝ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԱԹԱԲԱՄԿ ՍԱԴՈՒՆԻՆ, ԵՍ՝ ԱՊԱՔԵԼՍ,
ՆՈՒԱՍՏ ՍՊԱՍԱԽՈՐ ԲԱՆԻՆ... «ԱՅ, ՅԵՐԿՐԷՆ ԿԻԼԻԿՈ, Ի ԳԱԽԱՌԷՆ ՏԱՐՍՈՆԻ,
ԿԱՄՐԱԿՑՈՒԹԵԱՄԻՐ ԵՂԲ...»

գ. խաչի հորիզոնական թևերի տակ, աջ և ձախ հարթությունների վրա, նա-
խորդի շարունակությունը ձախ հարթության վրա 11 սող, աջի վրա՝ 11 սող.

ԱՅՍ ՇԻՔՑ
ԼԶԷԿԵԼԷՑ
ԻՍԱԵՆԱՅՊ
ՏՐԱՍՏՈՐԲ
ԷՉԳԷԹԵԿԵ
ՔՑԼԶԱԵՇ
ԱՍԱՅԵԿԿԱԼԻ
ՆԵՂԺԱԿԵԿԻԴԱ
ՌԵԱՇԽԱՏՈՐԲ
-- ԽԱՍՄԵԶ
-- ՏՆՈՂԱՑ Մ-

--- ԻՊԱՌՆԻՆ
ԷՉԱԱԿԱՑ Ե
ՌԱՌԵՂԷՉ
ԵՌԵՏԱԵԼԵԹ
ԱԿԵՆԱՑԼԵՐՈՅ
ԱԲԵՊԱԿՈՊ
ՍՈՐԵՉԱԶԱՍ
ԱՏՐՅՈՎԱԵՍ -
ՌԷՉԵ ԳԱՐԴՍՍ
ԵՐԵԼԵՐՅՈՅՍ

ԱՐՑՍ ՇԻՆԵՑԱՔ ԶԷԿԵՂԵՑԻՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵՐԱՄԻՐ ԵՒ ԶԳՍ-
ԻԹՍ ԵՒ ԿԱՆԳԵՑԱՔ ԶՍԲ ՆՇԱՆՍ
ԱԾԸՆԿԱԼ, Ի ՆԵՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԳԱՌՆ
ԱՇԽԱՏՈՒԹԵՐԱՄԻՐ ԲԱՐԵՊԵԱԻՍ ՄԵԶ
ԵՒ՝ ԾՆՈՂԱՑ ՄԵՆ

ԲՐՈՑ) . . . ԵՒ ՊԱՐՈՆԻՆ ԵՒ ԶԱ-
ԻԱԿԱՑ ՆՈՐԱ, ՈՐ ԵՂԵԻ ԶԵՌՆՏՈՒ
ԵՒ ՄԽԻԹԱՐ ԿԵՆԱՑ ՄԵՐՈՑ, ԱՐՔԷ-
ՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵՐԱՆ՝ ՀԱՂԲԱՏԱ ՏՐ
ՅՈՎԱՆԵՍԻԻ, ՈՐ Է ՀԵԶ ԵՒ ՄԱՐԳԱ-
ՍԷՐ ԵՒ ՄԵՐ ՅՈՅՍ:

դ. խաչքարի հարավային կողին, 19 առդ, կիսահղծ.

ԱԿ... ՂՈՎՐ... ԲՆԱԿԻԶՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԿԱՏԱՐԵՆ ՄԵԶ :Դ: ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԶԱՄԷՆ
 ԵԿԵՂԵՑԻՔՍ ԾՆՆԻԴԻՆԵՆ :Ը: ԱԻՐԵԱԿԻՆ: ԿԱՏԱՐԻԶՔՆ ԱԻՐԶՆԻՆ ՅՄԹ. ԹԷ ՈՔ
 ՅԷԿԵՂԵՑՈՅՍ ԻՐԱՑ ՊԱԿԱՍԵՑՆԷ, Ի ՄԵԾՍԱ ՎՐԱՄՐ ԴՓՈՔՈՒՆՑՆ՝ ՈՐՈՇԵԱԿ ԼԻՑԻ
 ԴԻ՝ ՏԷ: ԴՓՎԻՆ՝: ԶԻԳ: (1274):

ե. խաչքարի հորիզոնական թևերից վերև, փոքրիկ խորաքանդակ խաչերի թևերի միջև, 2 առդ

ձախ կողմի

աջ կողմի

ՔՍ ԱԾ՝ ՈՂՈՐՄԻ ՊԱԻՂՈՍՈՅ

ՔՍ ԱԾ՝ ՈՂՈՐՄԻ ՔԱՂՂԱՔԻՆ

Հրատ. Սարգսյան, 1933, Գ, 41, Բարխուդարյան Ս., ՄՀՁՔ, 148, Լուսակ. 140

Գիտելիք. Խաչքարը հայկական բարձրաքանդակ խաչքարի լավագույն օրինակներից կարելի է համարել: Այն կերտված է բարձր ճաշակով, գերազանց վարպետությամբ, զուրկ է ավելորդ խրճողումներից: Խաչքարի ամբողջ հորինվածքը միանգամայն համապատասխանում է այն նպատակներին, որոնց իրագործման համար կանգնեցվել է: Սա գերեզմանական կոթող չէ, ոչ էլ պատմական որևէ իրադարձության հավերժացման հուշարձան: Առաջիկ մտահղացմամբ խաչքարը պետք է պատմեր Դեղձուտի վանքի բոլոր շինվածքների հիմնարկման, կառուցման ողջ տարեգրությունը, հիշատակեր կառուցողների, վարպետների, հովանավորողների անունները: Առաջիկ ե կառուցող վարպետներ Պաղոսն ու Քաղաքը չեն ցանկացել այդ տարեգրությունը փորագրել ընդունված ձևով՝ խաչքարի պատվանդանի կամ ճակատի հարթ մակերեսներին կամ, որ ավելի տարածված էր, թիկունքի ընդարձակ տարածության վրա: Նրանք ձգտել են ամբողջ ծավալուն բնագիրը տեղավորել խաչքարի երեսին՝ առանց որևէ չափով աղարայնու նրա ավանդական ձևերը: Այդ նպատակով ըստեղծել են խաչքարի ճակատային մասի, քիվի, խաչթևերի վերևի և ներքևի հարթ մակերեսներ՝ տախտակները, որոնք սովորաբար ծածկված էին լինում մասամբ խաչքարի շրջանակով, մասամբ էլ երկրաչափական հյուսկեն քանդակներով: Ահա խաչքարի հորինվածքի մեջ մտնող այդ հարթ տախտակների վրա, գեղեցիկ, խոշոր տառերով և անսովոր, բայց հմուտ տառակցումներով, փորագրվել է այս տարեգրությունը, իսկ խաչի նեղ ու թեք երիզների վրա՝ կրոնական բովանդակությամբ մի օրհնություն:

Չնայած խաչքարի պակասող բեկորներին, արձանագրության հիմնական բովանդակությունը վերականգնվում է: Առաջին անգամ այս կարևոր բնագիրը վերծանել և հրատարակել է Գ. Սարգսյանը: Մինչ այդ գիտությունը շատ քիչ բան էր հայտնի Դեղձուտի վանքի մասին, քանի որ պատմագրական տեղեկությունները սակավ են, իսկ հուշարձանի վիմագրերն էլ, լինելով զուտ նվիրատրվական, չեն նպաստում այդ հարցերի լուսաբանությանը: Իջևանի շրջանի հուշարձանների «Ուղեցուցը» միայն ակնարկում է այս խաչքարի բեկորների գոյությունը մասին՝ առանց փորձելու վերծանել բնագիրը:

Արձանագրութիւնը մասնակի վերականգնումներից հետո պարզում է վանքի հիմնադրման հանգամանքները. ես՝ Առաքելս Գուռուստ սպասաւոր բացին այ . . . յերկրէն Կիլիկոս, ի գաւառէն Տարսուցի շինեցաք զեկեղեցիս ամենայն պատրաստութեամբ: Եւ զգաւիրս և կանգնեցաք զսր Գըշացն անձընկալ... յարքեպիսկոպոսութեան Հաղրատա տէր Յովաքսի...: Բնագիրը վերջում թվագրված է ՉԻԳ (1274), որը հաստատվում է նաև Հաղրատի առաջնորդ Յովանիսի հիշատակութեամբ (1280—1280): Առաքել վարդապետի անունը հիշատակված է իբրև վանքի առաջնորդ նոս Ասիլի ՉԽԱ (1292) մի արձանագրութեան մեջ՝ փորագրված գավթի հյուսիսային որմնասյան վրա: Եվ վերջապես նույն Առաքելի անունն է քանդակված գավթի կենտրոնում գտնվող վերոհիշյալ տապանաքարի վրա՝ այս արձան մեական և շիրիմ հանգստարան Առաքելի հրչակաւոր վարդապետի: Միայն վանքի մեծահամբավ առաջնորդը կարող էր թաղվել գավթի կենտրոնում: Ինչպես արդեն նշել ենք, Առաքել վարդապետի մասին է պատմում նաև Առաքելոց վանքի Ձուլդ եկեղեցիների մոտ ընկած խաչքարի արձանագրութիւնը, որտեղ նա հիշվում է իբրև վանքի առաջնորդ, մեծ վարդապետ, որ էր Գմանցալ սր առաքելոցն, եւ էր զուռն եւ արևելք երկրիս: Այսպիսով Գեղձուտի այս խաչքարի արձանագրութիւնից իմանում ենք.

ա. Հուշարձանախմբի գլխավոր եկեղեցին, գավթի և խաչքարը (զսր Գըշացն անձընկալ) կառուցել է Կիլիկիտի Տարսոն գավառից ինչ-ինչ պատճառներով այստեղ եկած վարդապետ (Գուռուստ սպասաւոր բացին այ) Առաքելը:

բ. Խաչքարը կանգնեցվել է այդ կառուցումներն ավարտելուց հետո, կառուցողների ու նպաստավորների հիշատակը հավերժացնելու նպատակով՝ ՉԻԳ-1274 թ.:

գ. Խաչքարը Պաւղոս և Քաղաք վարդապետների ստեղծագործութիւնն է, որոնց անունները փորագրված են խաչքարի քիվի տակ, երկու փոքր խաչերի թևերի մեջ: Շատ հավանական է, որ Պաւղոսը և Քաղաքը լինեն նաև հուշարձանախմբի եթե ոչ շինարար-ճարտարապետները, ապա առնվազն քանդակագործող-վարդապետները, ինչպես իրավամբ նկատում է Ս. Բարխուդարյանը, քանի որ խաչքարի բարձրարվեստ զարդերը շատ կողմերով հիշեցնում են եկեղեցու և գավթի զարդաքանդակները:

Արձանագրութեան հրատարակիչներ Գ. Սարգսյանը և Ս. Բարխուդարյանը հիմնականում ճիշտ են վերծանել պահպանված հատվածները, իսկ Բարխուդարյանը տրամաբանութեամբ նաև աշխատել է վերականգնել որոշ պակասող տառաշարքեր: Մեր վերծանութեան համար հիմք է ծառայել սեփական ընդօրինակութիւնը տեղում, ինչպես նաև խաչքարի լուսանկարն ու նշված հրատարակութիւնները: Ստորև թվարկում ենք այն շտկումներն ու փոփոխութիւնները, որ կատարել ենք նախորդ վերծանութիւններն ավելի ճշգրիտ դարձնելու նպատակով:

ա. Խաչքարի ճակատի արձանագրութիւնը երկու վերծանողի մոտ էլ սկսվում է... Էին այ գաւրութեամբ... բառերով, որոնց շարահյուսական իմաստն անհասկանալի է: Մեր կարծիքով սա բնագրի առաջին տողը կամ սկիզբը չէ, այլ երկրորդը. բացի դրանից առաջին գիրը ոչ թե է է, այլ՝ Ղ, ըստ այդմ էլ հիշյալ տառաշարքը պետք է կարդալ... ղին այ գաւրութեամբ, կամ բառի առաջին եզրը վերականգնելով՝ [անն]ղին այ գաւրութեամբ:

բ. նույն շարքում, շարունակութեան մեջ... յաշխարհակալութեան բառից հետո պակասող մասում Բարխուդարյանը վերականգնել է Հուլաղու դանին, որ մեր կարծիքով անընդունելի է, քանի որ Հուլաղու դանը հենց հայկական մատենագրական աղբյուրների վկայութեամբ (Վարդան Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի, Սամուել Անեցի և այլն) մեռել էր արձանագրութիւնը փորագրելուց տասը տարի առաջ՝ ՉԻԳ—1285 թ.: Եթե բնագրի պակասող մասում հիշատակված է եղել աշխարհակալի անունը, ապա հարմար է վերականգնել Հուլաղուի որդու՝ Աբաղա դանի անունը, որն իշխել է այդ տարիներին (1285—1282):

գ. Խաչքարի ճակատի արձանագրութեան վերջավորութիւնը Բարխուդարյանը վերծանել է՝... ի գաւառէն Տարսուցի կամաւն... և շարունակութիւնը որոնել ոչ թե խաչքարի աջ կողմի հարթ մակերեսի վրա, որ ավելի բնական և օրինաչափ կլիներ, այլ՝ ձախ կողմի վրա, ուստի ստացվել է... կամաւն... պարոնին եւ գաւաղացն ցորա...: Մեզ թվում է այստեղ ավելի ընդունելի է Սարգսյանի վերծանութիւնը, որը վերջին տողը վերծանելով... ի գաւառէն Տարսուցի կամակցութեամբ..., աշխատել է շարահյուսական կապ ստեղծել աջ կողմի բնագրի հետ: Սակայն նրա մոտ այդ կապը չի ստեղծվել, որովհետեւ աջ կողմի արձանագրութեան սկիզբը երկու հրատարակիչի մոտ էլ սխալ է ընթերցված՝... այս շինեցաք զեկեղեցիս, փոխանակ ացս կամ արցս շինեցաք զեկեղեցիս: Արդ, որ

ընթերցվածն է սառու՞ այս շինեցաք... թե՛ արցս շինեցաք: Անառարկելի է, որ առաջին գիրը ա-է, քանի որ պահպանվել է նրա ստորին մասը՝ աջակողմյան թեք գծիկով: Երկրորդ գրի միայն ստորին կիսակլոր բացվածքն է մնացել, որը կարող է լինել կամ Յ-ի կամ Յ-ի ստորին մասը: Ուշադիր քննելով այդ երկու գրերի բացվածքների ձևերը բնագրի մյուս բառերում, նկատում ենք, որ այստեղ փորագրվել է ոչ թե Յ, այլ՝ Յ: Այսպիսով, ունենալով արցս բառավերջը, առաջարկում ենք արձանագրության ճակատի մասի և աջակողմի հատվածի հետևյալ կարգը... ի գաւառէն Տարսոնի, կամակցութթ [եղբ] արցս շինեցաք զեկեղեցիս... և այլն:

Մեր կարծիքով, անընդունելի պետք է համարել Բարխուդարյանի առաջարկած՝ ի գաւառէն Տարսոնի կամ[աւն]... պարոնին եւ զաւակացն նորա վերծանութլունը. նախ ասն պատճառով, որ կամաւն, շնորհիւ վիմագրերում սովորաբար վերագրվում է աստծուն, ուստի անսովոր է աշխարհիկ իշխանութլան նման հորջորջումը, և ապա՝ եթե նույնիսկ ընդունենք կամաւն պարոնին հատվածը, այդ դեպքում տարակուսանք է առաջացնում շարունակութլունը... կամաւն... զաւակացն նորա: Այնինչ, ինչպես հետո կտեսնենք, այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պարոնի և նրա զավակների կամքը կատարելուն, այլ նրանց բարեխոսութլոյանը (բարեխոսութլոյան մեզ եւ ծնողաց մերոց... եւ պարոնին եւ զաւակաց նորա): Բացի դրանից, այս սողի պակասող մասի վրա, ըստ չափումների, պետք է լինեին 9--10 գրեր, մինչդեռ Բարխուդարյանի մոտ վերականգնված է միայն դրա մի մասը՝ երեք գիր (կամ[աւն]), մնացածը բաց է թողնված: Մյուս կողմից, Բարխուդարյանի վերծանութլունից անհասկանալի է մնում, թե ինչու Առաքելը արձանագրության շարադրանքն սկսելով եզակի թվով, առաջին դեմքով (ես՝ Առաքելս նուստ սպասաւոր բանին այ), այնուհետև անցնում է հոգնակի թվին (շինեցաք... կանգնեցաք... բարեխոսութլոյան մեզ). և որ մասում է տեղի ունենում այս անցումը: Մարգարանի և մեր վերականգնման մեջ այդ երկբայութլունը վերանում է, քանի որ ի գաւառէն Տարսոնի, կամ[ակցութթ եղբ] [արցս] շինեցաք զեկեղեցիս և այլն, միանգամայն բնական է և օրինաչափ եզակիից հոգնակիին անցնելը:


գ. Արձանագրության 3 հատվածների հաջորդականութլունը խախտելու հետևանքով Բարխուդարյանի վերծանութլան մեջ իզուր է առաջանում նաև երկրորդ և երրորդ հատվածների միջև, մի բան, որ ոչ մի չափով չի կարելի բացատրել բնագրի այդ հատվածների խաթաբամբ, ըստ որում 2-րդ հատվածի վերջը և երրորդի սկիզբը պահպանվել են անեղծ, և նրանց ընթերցումը ոչ մի կասկած չի հարուցում: Չնայած դրան, այդ մասերը շարահյուսական կապ չունեն և իմաստային ամբողջութլուն չեն կազմում: Ահա Բարխուդարյանի ընթերցածը. արքիպիսկոպոստոսեան Հաղթատա ար Յովանէսի, որ է նեզ եւ մարգաւէր եւ մեր յոյս այս շինեցաք զեկեղեցիս... և այլն: Մարգարանի և մեր վերծանութլունը զուրկ է այսպիսի անճշտութլունից, որովհետև չի խախտում երեք հատվածների իրական հաջորդականութլունը:

Աջ կողմի 3-րդ շարքում զաւակաց նորա Բարխուդարյանը կարդացել է զաւակացն նորա: Ճակատի 3-րդ շարքում Բարխուդարյանը վերծանել է՝ ես՝ Առաքելս, այնինչ բնագրում Առաքելս է: Ձախ կողմի 12-րդ շարքում Բարխուդարյանը կարդացել է. ի նեղ ժամանակի, ի գառն աշխատութեամբ, երկրորդ ի նախդիրը քարի վրա չկա և ավելորդ է:

Աջ կողմի 22-րդ շարքում Բարխուդարյանը վերծանել է արքիպիսկոպոստոսեան պետք է լինի յարքիպիսկոպոստոսեան:

Խաչքարի խաչի շրջանակի թեք երիզների վրալի բնագիրը ևս Բարխուդարյանը ընթերցել և վերծանել է նույն հաջորդականութլամբ, այսինքն սկսելով խաչի աջ կողմից և ավարտելով ձախով: Մենք հակառակ հաջորդականութլամբ ենք ընթերցել և գտնում ենք, որ իրականը այդ է: Այստեղ, վերևի հորիզոնական երիզի վրա Բարխուդարյանը կարդացել է. ի ծագմանէ մինչեւ ի ծագս, մինչդեռ քարի վրա փորագրված է. ի ծագէ մինչև ի ծագս աշխարհի ծագին, ըստ այդմ, ծագմանէ ձեն անընդունելի է, որովհետև խոսքը ոչ թե ծագումն (ի ծագմանէ) քառի մասին է, այլ ծագ (ի ծագէ) բառի, որը նշանակում է ծայր, եզր, սահման: Բացի դրանից, վնասված մասում կարելի է տեղավորել առառավելն 3 գիր, իսկ Բարխուդարյանի վերծանութլան մեջ ավելացված է վեց տառ:

242. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավիթ, արտաքուստ, արևմտյան մուտքից հարավ, պարզ խաչի թևերի արանքում 7 տող.



ՅԻՇԵԱ ՔՍ ԱԾ՝ ՉՀՈՈՈՍՄՇՆԱՀ ԵՒ ՈՂՈՐՄԵԱ՝ Ի ՔՈՒՄ ԳԱԼԼՍՏԵԱՆԴԻ: ԱՄԷՆ:

Հրատ. Սարգսյան, 1953, Դ, 43, Լուսակ. 141

Գիտելիք. Հոռոմշահը նվիրատուի անունն է: Այստեղ ունենք այդ անվան հնագույն հիշատակությունը, քանի որ մինչ այս առաջինը համարված Ախթամարի արձանագրության մեջ հիշվածը ավելի ուշ շրջանի է:

243. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավիթ, արտաքուստ, արևմտյան պատի հյուսիսային մասում, մուտքին կից, 3 տող.


ՏՐԱԾՈՒՄԵԱ
ԿՈՍՏԱՆՏԻՆԻՔՈՒ
ՄԳԱԼԼՍՏԵԱԴ:

ՏՐ ԱԾ, ՈՂՈՐՄԵԱ՝ ԿՈՍՏԱՆՏԻՆ Ի ՔՈՒՄ ԳԱԼԼՍՏԵԱՆԴԻ:

Հրատ. Սարգսյան, 1953, Դ, 43:

Գիտելիք. Կոստանար նվիրատուն է: Գալբատեանգ ձևը արտացոլում է ը ձայնավորի ուղղագրության և արտասանության վիճակը այդ դարերում:

244. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ, գավիթ, հատակին ընկած, մի քանի տեղից ջարգված տապանաքարի վրա. խոշոր գեղաքանդակ կցագրերով, 2 տող.



ԱՅՍ ԱՐՁԱՆ ՄԵԱԿԱՆ ԵՒ ՇԻՐԻՄ ՀԱՆԳՍԱՐԱՆ ԱՌՄԱԻՔԵԼԻ Ի ՀՐՁԱԿԱՒՈՐ ՎՐԱՐԴՐԱՊԵՏԻ:

Հրատ. Սարգսյան, 1953, Դ, 43, Լուսակ. 142

Գիտելիք. Դեղձուտի վանքի հիմնադիր և բազմամյա առաջնորդ Առաքել վարդապետի գերեզմանաքարն է: Մահվան թվականը ստույգ չի որոշվում: Նրա անունը հիշատակվում է նաև գավթի

ՉԻԵ (1276 թ) արձանագրութիւն մեջ՝ յառաջնորդութեան վարդապետին ձեռով, ինչպէս նաև Առաքելոց վանքի Չուլզ եկեղեցիների մոտի խաչքարի ՉԺՉ (1287 թ) արձանագրում՝ յառաջնորդութեան մեծ վարդապետին Առաքելի, Ասիլի ՉԽԱ (1292 թ) նվիրագրում, որը փորագրված է գավթի կամարի վրա, Առաքելը դեռ առաջնորդ է հիշվում: Սա հռչակավոր վարդապետի մասին վերջին հիշատակութիւնն է:

Առաջին շարքում այս արձան մեռական, Սարգսյանը կարդացել է մեռակնա, որ իմաստից զուրկ է: Մեր կարծիքով տառաշարքը պետք է ընթերցել մեռական և վերականգնելով փորագրիչի բաց թողած ն-ն վերժանել մեռական (միայնակ, մեռակ, առանձին):

2-րդ շարքում հրատարակողը կարդացել է հանգստարան :հ: Առաքելի, մենք է էական բալը չենք տեսնում:

245. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավիթ, հարավային կամարի վրա, նախորդի դիմաց, 7 տող,

Ի ԹՎԻՍ: ՉԱ

ՅԱՌԱՋՆՈՂՈՒԹԵ ԱՌ

ՎԵՆ: ԵՍԱԻԼԵԿԻՅԵՐԿՐԷ ՄՁ

ԱԳԵՄԱՅԻ Մ ԲԻՃԵԵԹԸԲԷՄՈ

ԵՉՆՇԱՍՅԻՇԱՄԿ ԵՉ Ե

ԾՆԿՅԻՄ+ ՈՅ Ե ՉԿԱԿԱՅԻՄՅ

ՄԲ ՄԳ + + + ՄԲ ԿՆԱՍ


Ի ԹՎԻՍ: ՉԽԱ (1292)|, ՅԱՌԱՋՆՈՂՈՒԹԵՄՎԱՆ՝ ԱՌՄԱՔԵԼ՝ ՎՄԱՐԳՎԱՊԵՏԻՆ, ԵՍ՝ ԱՍԻԼՍ ԵԿԻ ՅԵՐԿՐԷՆ ՄԻՁՍԱԳԵՏԱՑ Ի ՄԲ ՈՒԽՏՍ, ԵԻ ԵՂԲԱՐՔ ԷՏՈՒՆ ՉՆՇԱՆՍ ՅԻՇԱՍԱԿ ԻՆՁ ԵԻԾՆԻՈՂԱՑ ԻՄՈՑ ԵԻ ՉԱԻԱԿԱՑ ԻՄՈՑ: ՄԲ ՍՄԱՐԳՐԻՍ, ՄԲ ՄԷՆԱՍ:

Հրատ. Սարգսյան, 1958, Գ, 43:

Գիտելիք. Ուխտավոր Ասիլը տեղ չի գտել Հր. Աճառյանի բառարանում, որովհետև արձանագրութիւնը ուշ է հրատարակվել: Ասիլը սովորական նվիրատու կամ ուխտավոր չէ, այլ խոշոր վաճառական, ինչպէս իրավամբ նշում է Սարգսյանը, այլապես հազիվ թե այդ խառնակ ժամանակներում որևէ հավատացյալ Միջագետքից հասներ Մահկանաբերդ, գավառի հեռավոր Դեղձուտի վանքը ուխտի: Ասիլի նվերների մասին բնագրում չի հիշվում, թեև դժվար չէ եզրակացնել, որ նրանք բավական մեծարժեք են եղել, քանի որ սովորական պատարագների փոխարեն իբրև հատուցում նրան ընծայվել է վանքի մասունքներից մեկը կամ մի քանիսը (հառուց գեշացնս յիշաւառկ), մի բան, որ հազվագեպ էր լինում: Հետաքրքիր է, որ այս Ասիլը ժամանակակից է մեծահարուստ վաճառական պարոն Ումեկին, ձաբի որդուն, որին մոնղոլները նույնպէս Ասիլ էին կոչում:

Մեզ համար անբացատրելի է բնագրի վերջում փորագրված սր Սարգիս, սր Մեռաս:

246. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գլխավոր եկեղեցի. հարավային ավանդատան առաջին հարկի մուտքի ճակատակալին, երեք բարձրաքանդակ խաչերի միջև, 1 տող.



ԽԱՉԵՐՍ ԽՈՒԹԼ ԵՆ:

Հրատ. Սարգսյան, 1958, Գ, 43: Լուսանկ. 145

Գլխաւ ինքն խոթում նշանակում է երջանիկ, օրհնեալ: Տվյալ հիշատակութեան առթիւ կարելի է մեկնութիւն տալ կամ ընդհանուր իմաստով, առանց կոնկրետ անձանց նվիրվելու՝ խաչերս խուփ-լու հն, այսինքն՝ այս խաչերը օրհնված, երջանիկ են: Կամ, որ ավելի հավանական է, Խուփու հռական անձնանուն է, ուստի ընագիրը կարելի է հասկանալ՝ խաչերս Խուփուհնն են, ինչպես ունենք այլուր՝ խաչս նմայ Է (Խորանաշատ), խաչս Թամարին Է (Ն, Վարագ): Երկու դեպքում էլ ստիպ-ված ենք ընդունել, որ փորագրողը բաց է թողել բառի վերջահանգ ուն:

246ա. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գլխավոր եկեղեցի, ներքուստ, հյուսիսային պատին, պատուհանի կլոր շրջանակից աջ, մի քարի վրա, խոշոր գրերով.



Է ԹՎԻՆ, ՁԷ (1258). ՇԼԻՆԵՑԱԻ:

Հրատ. Սարգսյան, 1953, Գ. 40,
Լուսանկ. 143

Գիտելիք. Առաջին վերծանող Սարգսյանը այս գրերը համարել է եկեղեցու շինութիւնն սկսե-լու կամ ընթացքի թվականը՝ ի թուին ՁԷ շինեցաւ: Սակայն գավթի խաչքարի արձանադրու-թեան մեկնութեան ժամանակ նկատեցինք, որ այդ ընագիրը, ուրեմն և նրա մեջ հիշատակված շինա-րարութիւնը թվագրված է ՉԻԳ—1274 թ.: Այս հակասութիւնն առաջին անգամ մատնանշել է Ս. Բարխուդարյանը՝ միջնադարյան ճարտարագիտների մասին իր արժեքավոր ուսումնասիրութեան մեջ: Նրա կարծիքով սխալ է ՉԷՇ գրերը թվական համարել, քանի որ նախ՝ այդ տառերից առաջ կամ հետո չկան Թ, ԹՎԻՆ, ԹՎԿԱՆԻՆ բառերը, որոնք տվյալ պարագայում անհրաժեշտ էին, և եր-կրորդ, անսովոր է թվագիրը փոքր տառով գրելը, ինչպես արված է այստեղ՝ Է-ն փորագրված է Չ-ի կլորութեան մեջ, ավելի փոքր: Սակայն Բարխուդարյանի ամենամեծ կովանը խաչքարի մեծ արձանագրութեան թվագիրն է՝ ՉԻԳ—1274 թ., որը նրա կարծիքով վանքի բոլոր կառուցվածքների ավարտման տարեթիւն է, ուստի ՁԷ թվական չէր կարող լինել:

Կասկած չի կարող լինել, որ Դեղձուտի վանքի գլխավոր եկեղեցին, գավթի և խաչքարը (որի նը-ման մի այլ խաչքար էլ, ի դեպ, կանգնած է եղել եկեղեցու նույն մուտքի հարավային կողմում) չէին կարող հիմնարկվել և ավարտվել միաժամանակ, այն էլ շատ կարճ ժամանակում, մեկ կամ մի քանի տարում: Մյուս կողմից, անառարկելի է նաև, որ վանքի գավթի, հայկական մյուս գավթ-ների նման, կառուցվել է եկեղեցին ավարտելուց որոշ ժամանակ անց, քանի որ դրա հետևանքով եկեղեցու արևմտյան ճակատի որոշ ձևավորված մանրամասներ ծածկվել են հետագայում եկեղեցուն կից կառուցված գավթի որմնասյուներով, որով և խախտվել է այդ ընդհանուր պատի ձևավորման նախնական ավարտվածութիւնը: Այս բոլորից ելնելով, հանգում ենք այն եզրակացութեանը, որ ՉԷՇ գրերը եկեղեցու շինութիւնն սկսելու, կամ նրա շարվածքը մինչև կլոր պատուհանը հասցնելու թվականն է, իսկ խաչքարի նշած ՉԻԳ թվականը՝ ամբողջ շինարարութիւնն ավարտելու և խաչ-քարը կանգնեցնելու տարեթիւնը: 16 տարվա տևողութիւնը (1258—1274) միանգամայն բնական և սովորական է Դեղձուտի նման հուշարձանախմբի կառուցումը գլուխ բերելու համար:

Այն վարկածը, թե թվագրի տառերը չեն կարող մեկը մյուսի մեջ կամ ավելի փոքր գրվել, հերքվում է բազմաթիւ նույնանման օրինակներով, որոնցից նշենք միայն երկուսը. Հովհանավանքի աթոռիկի հյուսիսային պատին, ներքուստ արձանագրված է ԻԹՉԻԹ, այսինքն Չ-ի բացվածքի մեջ ավելի փոքր Թ-ն, իսկ սրա աջ ստեղծի վրա՝ Ի—ՉԻԹ: Հաղբատի տապանագրերից մեկի վրա փո-կրագրված է ՇՂԴ, որտեղ ավելի փոքր ՂԴ գրերը տեղավորված են խոշոր Շ-ի աղեղի մեջ:

Այնին արձանագրութիւնների մի զգալի մասի տարեթիւները փորագրված են նույն եղանակով: Եթե նույնիսկ ընդունենք Ս. Բարխուդարյանի տեսակետը և ՉԷՇ համարենք կիսատ մնացած ար-ձանագրութեան պատահիկ, ապա այդ դեպքում էլ նշված գրերը միայն ժամանակ կարող էին ցույց տալ, ինչ-ինչ պատճառներով ընդհատված նվիրատուական կամ այլ բնույթի արձանագրութիւնների տարեթիւնը:

247. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավթի հարավ - արևելյան որմնասյան վրա, խոյակից ցած, միակտոր քարի վրա, 9 տող.

Ի ԹՎԻՆ Ե
 Ս ԱԻԱ ՏՈՒ
 ՐԲԼԵ ԱՆԵՑԱ
 ՄԲՈՒՏԻ ՍՅԱ
 ՌՄԷՆ ՌՊԱՎ
 ՊԵՏԵՏԱՆԻՆ
 ԱՎԱՐԱՆԻՐ
 ՍԱԳԻՄՔԻ
 ԱԵՂԱՑԱՄ

Ի ԹՎԻՆ, ԳԻԵ (1276), ԵՍՄՄԱՐԻԱՄՏՈՒՐ ՄԻԱԲԱՆԵՑԱՎ ՄԲ ՈՒԽՏԻՍ ՅԱՍԻԱՋՆՈՐ-
 ԴՈՒԹԵՐԱՆ՝ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԷՏՈՒՆ ԻՆՁՂ Ա ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՄԲՂ ՍԱՐԳՍԻ: ՈՐ ԽԱՓԱ-
 ՆԵՂ, ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏՐ ԴԵ:

Հրատ. Սարգսյան, 1953, Գ, 42:
 Լուսակ. 144

Գիտելիք. Միաբանողի անունը դժվար է վերծանվում. Սարգսյանը վերապահությամբ այն վերծանել է Բարիանուր, որը կասկածելի է. նախ՝ Ս-ին միացած Բ-ի գլխիկը չի փորագրված, և ապա՝ անսովոր է ա-ի և Բ-ի աղբյուրի միացումը:

Ծ-րդ շարքում յառաջնորդութեան վարդապետին, ինչպես նշել ենք, խոսքը Դեղձուտի վանքի առաջնորդ Առաքել վարդապետի մասին է:

248ա. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավթի, ներսում, ջարգված փոքրիկ խաչքարի ճակատին և խաչթևերի միջև.

ճակատին

† Կ Ա Մ Ա Ի Ն ԱՅ Ե Ս Ա Ր Ե Ի Հ Ա Մ Կ Ա Մ Ա Ի Ն Ա Յ Ե Ս Ա Ր Ե Ի Հ Ա Մ . . .

խաչթևերի արանքում

ԹՎ ԶԼ

ԻՂ ԹՎԻՆ ԶԼ (1281):

248բ. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավթի, ներսում, եկեղեցու մուտքի դիմաց, հատակին հավասար հինգ տապանաքարերից կենտրոնում եղածի վրա, 1 տող.

Ս Ա Ն Ա Յ Ի Հ Ի Ա Ն


ՍԱՆԱՅ ԻՇԽԱՆ

248գ. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավթի, արտաքուստ հարավային պատի կենտրոնում, մի քարի վրա, խոշոր, գեղաքանդակ դրերով.

Յ Ա Յ

ՅՐԱՍՈՒԾՈՒԹ

248ր. ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔ. գավիթ, արևելյան պատին կից հյուսիսային որմնամուկի խոյակին հենված կամարի վրա, պարզ խաչերի մեջ, 3 տող.



ՄԲ ՓԿԿԻԿ, ՄԲ ԱՄՏՈՒԱՄԵԱՅ-

ԾԻԿՆ, ՄԲ ՅՈՎԱՆՆ ԷՍ:

Ս Ա Լ Ա Հ

Սալահ (Սալա) գյուղը տեղավորված է Գեաիկ գետակի աջ ափին, Իջևանից մոտ 30 կմ հարավ-արևմուտք, Մուրղուղ լեռնաշղթայի արևմտյան լանջին: Մատենագրական աղբյուրներում պատմական գյուղի և շրջակայքի հուշարձանների մասին վկայություններ չեն հանդիպում, սակայն այստեղ պահպանված ճարտարապետական կառուցվածքների ուսումնասիրությունից պարզվում է, որ բնակավայրը ժամանակի շին ու բարգավաճ գյուղերից մեկն է եղել, իսկ նրա սահմաններում գտնվող Աստվածածին վանք-մենաստանը՝ հյուսիսային Հայաստանի հոգևոր ու մշակութային աչքի ընկնող օջախներից մեկը:

Ներկայումս գյուղի շրջակայքում պահպանվել են հետևյալ հուշարձանները.

ա. Կամուրջ. Կառուցված է Գեաիկի վրա, գյուղի հարավային եզրին: Միակամար, փոքր կամուրջ է, շարված մանր որձաքարերով, ամուր կրաշաղախով: Կամարի թռիչքը 8 մ է, իսկ անցուղու լայնությունը՝ 2 մ: Կամուրջի ավելի մեծ քարերով շինված խելերը հաստատուն հենված են գետափի ժայռերին, որի շնորհիվ դիմացել են լեռնային գետակի ավերածություններին: Չեն պահպանվել անցուղու վերևի շարվածքները, որոնք հավանաբար սրբատաշ են եղել: Կամուրջի կառուցման ժամանակն անհայտ է, դատելով կառուցման եղանակից, այլև հարևան հուշարձանների թվագրությունից, կամուրջը կարելի է համարել XII—XIII դարերի շինություն: Չի հիմնավորված Ի. Էլլարյանի վարկածը, ըստ որի այս կամուրջը VII դարի գործ է: Այս կամուրջի գոյությունը ցույց է տալիս, որ այստեղով է անցել միջնադարյան Հայաստանի կենտրոններից դեպի հարևան երկրներն անցնող կարավանային ճանապարհների ճյուղավորումներից մեկը:

բ. Մատուռը գտնվում է Ասլահ գյուղից 1 կմ արևելք, Կրասնոսելսկ տանող ճանապարհի ձախ եզրին: Խճուղին լայնացնելու հետևանքով մատուռի հարավային հիմնապատերը համարյա մերկացել են, և շինությունը մնացել է կախ ընկած դեպի ճանապարհը: Փոքրիկ մատուռ է (3×2 մ), շարված տարբեր մեծություն անմշակ լեռնաքարերով, կրաշաղախով: Ծածկը թաղակապ է, միակ մուտքը՝ արևմուտքից, արևելյան կողմում ունի փոքրիկ, ցածր խորանիկ: Մատուռը կանգուն է, խարխիված են հարավային և արևմտյան պատերը:

գ. Անուպատ Աստվածածին. Տեղավորված է գյուղից 2,5 կմ հյուսիս-արևելք Աղնաբազ անտառամասում, սարալանջի վրա, լեռնային վտակի աջ ափին, նրանից 200 մ հյուսիս: Դրսից ու ներսից ուղղանկյուն հատակաձևով կենտրոնագմբեթ կառուցվածք է, շինված դեղնավուն համակ սրբատաշ չեչաքարերով, կրաշաղախով: Մկեղեցու ներսում հարավային և հյուսիսային պատերի վրա կան ելունակներ, որոնցից բարձրացող որմնասյուները միանում են կամարներով և իրենց վրա պահում գլմբեթը՝ սրածալր վեղարով: Միակ մուտքը արևմտյան պատից է, արևելյան ճակատի վրա կան երկու եռանկյունաձև խորշեր: Դմբեթի գլանաձև թմբուկը ունի 3 մ բարձրություն, նրա վրայով անցնում է 30 սմ լայնության քանդակաղարջ գոտի: Դմբեթի վեղարը և եկեղեցու տանիքը ծածկված են եղել սրբատաշ սալաքարերով, որոնցից միայն մի քանիսն են մնացել ուսնիքի վրա, իսկ վեղարը լրիվ մերկացել է: Դիվանի խորանի երկու կողմերում կան երկու երկհարկանի ավանդատներ, որոնք արևելյան կողմից ունեն փոքրիկ, ցածր խորաններ:

Հուշարձանը չնայած իր պատկառելի հնութիւնը, կանգուն է, քայքայվել, թափվել են միայն քիվի ձևավոր քարերը, վեղարի և տանիքի սրբատաշ սալերը: Եկեղեցու արևմտյան դռան ճակատակալ կիսակլոր քարը և նրա պսակող կամարը պատած են եղել սպիտակ կրաշաղախի ծեփով, որի վրա եղել են ընդարձակ արձանագրութիւններ՝ դրված կարմրագեղով: Ժամանակի ընթացքում կրաշաղախի ծեփը մեծ մասամբ հողմնահարվել, թափվել է, որի հետևանքով արձանագրութիւնները, ըստ երևույթին շինարարական, ոչնչացել են: Մնում են միայն դրանց մի քանի աննշան բեկորներ:

Հուշարձանից դեպի հարավ ե արևելք պահպանվել են բազմաթիվ կառուցվածքների մնացորդներ՝ քարակույտերի և փոսերի ձևով: Պետք է ենթադրել, որ դրանք վանքի միաբանութիւնն բնակելի և տնտեսական շենքերն են եղել: Եկեղեցուց արևելք տարածվում է երբեմնի դուղատեղը, որը ծածկված է խիտ անտառով, մնում են մի քանի շենքերի հիմնապատերը:

Ինչպես նշեցինք, այս հուշարձանի մասին մատենագրական տեղեկութիւններ չկան: Հուշարձանների պահպանութիւն մարմինների ցուցակներում ու արխիվային նյութերում այն անվանված է մենաստան-անապատ, իսկ կառուցումը վերագրվում է XI—XII դարերին: Անհասկանալի է չհիմնավորված է մենաստան-անապատ անվանումը, որի համար, ըստ երևույթին հիմք են ծառայել ոչ թե պատմագրական կամ վիճակագրական նյութերը, այլ հուշարձանի ներկայիս ինքնամփոփ ու անպատական վիճակը: Եկեղեցու վիճակագրութիւնն աղքատ է՝ երկու նվիրագրութիւնն՝ ավանդատների ճակատներին և արևմտյան դռան ճակատաքարի վրա դրված են մի քանի եղծված բառեր: Արձանագրութիւնները ժամանակակից են եկեղեցու շինութիւնը, այստեղ հուշարձանն անվանվում է Աստվածածին: Հուշարձանի շինարարական արձանագրութիւնը հավանաբար եղել է արեւմտյան դռան ճակատաքարին դրված կարմրագեղով, որից, ցավոք, միայն առանձին գրեր են պահպանվել:

Արձանագրութիւնների տառաձևերի հնագրական հատկութիւններից դատելով, դրանք XII—XIII դարերի գործ կարելի է համարել:

249. ՍԱԼԱՀ. Աստվածածին եկեղեցու հարավային ավանդատան առաջին հարկի մուտքից վերև, 7 տող.

Ե Ա Ն Ո Ն Ա Յ Ե Ս Ա Ղ Ո Կ Ղ Ս Ե Լ Ռ
 Դ Ի Բ Մ Ո Ս Գ Լ Ա Ո Լ Ս Ի Ն Ի Մ Գ Ե Ն Ե Մ Ի
 Ա Բ Ա Ե Կ Ա Բ Մ Բ Ա Ծ Ա Ծ Ն Ի Ս Լ Ը Ս Ս Մ Ե Ր Ո Լ Մ
 Ա Բ Է Ռ Ն Ս Ո Լ Ե Ղ Ե Ղ Ի Ն Ո Լ Թ Բ Լ Վ Դ Ն Տ Ա Ս Ս Ա Ս Ե Կ
 Ի Ն Է Բ Կ Ա Ս Ա Գ Զ Ր Ա Ի Տ Ն Ե Բ Ա Ի Ն Ռ Ե Ա Կ Կ Ե Ն
 Դ Ն Ի Ե Մ Ե Ռ Ո Ս Ո Լ Ն Լ Յ Ե Ս Ե Լ Ի Կ Ի Մ Ի Ն Կ Ո Վ Խ Ա
 Կ Ն Ե Ի Մ Մ Ե Ղ Ա Կ Ն Կ Ա Ս Ա Կ Ն Է

Յ Ա Ն Ո Ն Ա Յ, Ե Ս՝ Ա Շ Ո Ի Շ Ս Ե Ի Ո Ր Դ Ի Ս Ի Մ Ո Ս Գ Ե Ի Ա Մ Ո Ի Ս Ի Ն Ի Մ Գ Ե Ն Ե Մ Ի Ա Բ Ա Ն Ե Ց Ա Բ Մ Բ Ա Ծ Ա Ծ Ն Ի Ս Ե Ի Ը Ս Տ Մ Ե Ր Ո Ի Մ Ի Կ Ա Ր Ի Չ Ե Ռ Ն Տ Ո Ի Ե Ղ Ե Շ Ի Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ի Ե Ի Վ Դ Ա Ր Ի Գ Դ Ա Պ Ե Տ Ի Ն Ի Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ց Ի Ն Չ, Բ. Պ Ա Տ Ա Բ Ա Գ Ջ Ր Ա Ի Ր Հ Ն Ե Բ Ա Ի Ն: Ո Ր Չ Ա Փ Կ Ե Ն Դ Ս Ն Ի Ե Մ... Ո Ր Ո Ի Ս Ս Ի Ն Ե Ի Յ Ե Ս Ե Լ Ի Ց Ի Մ Ի Ն Չ: Ո Վ Խ Ա Փ Լ Ա Ն Ե, Ի Մ Մ Ե Ղ Ա Ց Ն Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Է:

Գիտելիք. Արձանագրության մի քանի տառաձևեր՝ շ, և, ձ անսովոր են, հիշեցնում են նոտրգիր: Առաջին շարքում նվիրատուի անունը վերծանում ենք կասկածանքով՝ Աշուշ, կարելի է կարդալ նաև Աղուշ, ղ, շ, գրերի նմանության պատճառով: Անվան երկու ձևն էլ առաջին անգամ է հանդիպում և այլուստ վկայված չէ: 2-րդ շարքում անհասկանալի է մնում որդու անունը, որ վերապահորեն ընթերցում ենք Ոսգ (թերևս Ոսկան անվան կրճատ ձևը): Նույն շարքում անսովոր է նաև ամուսնու անունը՝ Գեմե, որը պարզ երևում է և վարանման տեղիք չի տալիս: 3-4-րդ շարքերում՝ ըստ մերում կտրի ձեռնառու եղև..., խախտված է նախադասության համաձայնությունը, պետք է լիներ՝ ձեռնառու եղաք, թողնում ենք անփոփոխ, նվիրատուի ոճի հատկությունը համարելով:

6-րդ շարքում եղծված լինելու հետևանքով պարզ չի կարդացվում.. որչափ կենդանի եմ... բառերին հաջորդող տառաշարքը:

250. ՍԱԼԱՀ. Աստվածածին եկեղեցի. արտաքուստ, մուտքի կամարի կենտրոնում, շաղախի վրա կարմրագեղով 1 տող.

...ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵՄԱՆ՝...

Նույն մուտքի ճակատակալին, կրաշաղախի վրա կտրմրագեղով, ավելի մանր տառերով.

...ԱԲՐԱՀԱՄ՝... ԲԵՁՁՑԵ...

251. ՍԱԼԱՀ. Աստվածածին եկեղեցի. հյուսիսային առաջին հարկի ավանդատան մուտքից դեպի հարավ, գլխավոր խորանի որմնասյան կրաշաղախի վրա, 6 տող.

Յ Ա Մ Ե Ո Ւ Թ
 Բ Ե . Ա . Պ Ա Մ
 Ա Ր Ա Գ Ա Ն
 Խ Ա Փ Ա Ն Ս Ա
 Ս Ն Ե Ա Մ Ի Ն
 Է

ՅՍՅՏՆՈՒԹԻԻՒՆ՝ .Ա. ՊԱՏՄԱՐԱԳ Ե ԱՆԻ-
 ԽԱՓԱՆ ՍԱՍՆԵՍԱՅԻՆԻ Է:

Գիտելիք. Սասնալ ար. անձնանուն է՝ Սասուն գավառի անունից¹: Դործածական էր XIII դարի ընթացքում: Այստեղ անվան ուղղականը Սասնեայ է, որն անժանոթ է հայ իրականությանը: Եթե փորագրողը չի սխալվել, ապա Սասնեայ նոր անուն է կամ թերևս Սասնայի իգ. տարբերակը.

252. ՍԱԼԱՀ. Աստվածածին եկեղեցի, արտաքուստ, արևմտյան ոլատի մեջ ազուցված փոքրիկ խաչքարի ճակատին, կիսանդ, 1 տող.

ՄԲ ԽԱԶՍ ԲԱՐԷՆԱԽՍ...

¹ Տե՛ս Հր. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 394.

Վ Ե Ր Ի Ն Ա Ղ Դ Ա Ն

Գլուզը գտնվում է Իջևանից 4 կմ հարավ-արևմուտք, Աղզան գետակի երկու ափերին և տարածվում է մի քանի կմ: Պատմագրական տվյալներ գլուզի և շրջակայքի մասին չկան, սակայն պահպանված բազմաթիվ հուշարձանները վկայում են, որ միջնադարում այստեղ բնակչությունը բավականաչափ բազմամարդ է եղել: Այս շրջանը նույնպես Կայն գավառի բարգավաճ բնակավայրերից է:

Գլուզի մեջ ներկայումս քիչ թե շատ հնություն ունեցող հուշարձաններ չեն պահպանվել: Ղուզական գերեզմանոցի տապանաքարերն ու խաչքարերը նոր ժամանակների են, իսկ Վերին թաղի եկեղեցու շենքը նույնպես XVIII դարից այն կողմ չի անցնում: Անկասկած է, որ հնում ես այս ձորում բնակավայրեր չեն եղել: Նրանք տեղավորված են ավելի վերևում, անտառապատ լեռնալանջերին, լեռնաշղթայի սարահարթի վրա, լեռնային գետակների վերին հոսանքների հովիտներում, Բուդուրի սարի լանջերին և ստորոտներին:

Գլուզի տարածքի վրա պահպանված առավել ուշագրավ հուշարձանները.

ա. Բուդուրի ամրոցը գտնվում է գլուզից 2 կմ արևելք, համանուն լեռան գագաթին: Բավականաչափ ընդարձակ, մինչև մի քանի տասնյակ հեկտար տարածություն են շրջափակում ամրոցի պարիսպները: Պատերը եռաշարք են, խիստ լայն (2,5 մ), շարված բնական խոշոր, անմշակ քարերով, առանց շաշխի, նման ցիլիսիական բերդերին: արևելքից, հարավից և հյուսիսից շրջապատում են լեռան գագաթը և միայն արևմտյան կողմից ամրոցը պաշտպանված է անմատչելի գահավեժ քարաժայռի լանջով: Դեռևս կանգուն են պարսպապատների որոշ հատվածները՝ 1—2 մ բարձրությամբ: Լեռնագագաթի հարթության վրա մնում են տների մնացորդներ՝ քարակուտերի և փոսերի ձևով:

բ. Եկեղեցի «Յղցի», կառուցված է Բուդուրի սարի հյուսիսային լանջին, մի հարթության վրա, բացատում, փոքրիկ մատուռի շենք է (4×3մ), շարված անմշակ որձաքարով: Մուտքը արևմտյան պատից է, կիսակլոր ճակատաքարն ընկել է: Մատուռի ներսում կան խաչքարերի անարձանագիր բեկորներ: Արևելյան խորանի լուսամուտի վրա գրված է մի պարզ խաչքար:

գ. Եկեղեցի Գմբեթ, գտնվում է գլուզից 4 կմ հարավ-արևելք, Բուդուրի սարի հարավային լանջին, Գմբեթ կոչվող անտառամասում: Փոքր չափերի (5×4մ), թաղակապ ծածկով եկեղեցի է, թաղը և խորանի ծածկը սրբատաշ են, իսկ արտաքուստ՝ շարված տարբեր մեծության հանքաքարերով և կրաշաղախով: Կտուրը երկթեք է եղել՝ ծածկված սրբատաշ սալքարերով, որոնք թափվել են: Թաղի արևմտյան հատվածը փլված է: Եկեղեցու ներսում, հատակին ընկած մի բեկորի վրա փորագրված են ՇԿԸ գրերը, հավանաբար արձանագրության բեկոր է:

Շրջակայքում գերեզմանոց է, սալաձև անմշակ տապանաքարերով:

դ. Տախտաեղծի եկեղեցին գտնվում է գլուզից 4 կմ հյուսիս համանուն դաշտամասում, մի բլրակի վրա, դեպի սարերը տանող ճանապարհին, անտառի մեջ: Փոքրիկ մատուռ է (5×4մ)՝ կառուցված կրաքարի մանր կտորներով և կրաշաղախով: Ծածկը թաղակապ է եղել, փլվել է, կանգուն են արևելյան խորանը և շենքի պատերը՝ 1—2 մ բարձրությամբ: Եկեղեցու հյուսիսային կողմում մի կանգուն խաչքար կա՝ պարզ գծագրական խաչերով, անարձանագիր: Նույնանման մի խաչքար էլ գտնվում է սրանից 100 մ արևելք, մի ծառի տակ:

կ. Ամրոց Մանթաշ կալա, գանձում է գլուղից մոտ 7 կմ հյուսիս-արևմուտք, Աղսակ գետի աջ ափին բարձրացող սրածալր լեռան գագաթին: Բարձունքի անցանելի հատվածները ամրացված են հաստ և ամուր պարսպապատերով, որոնք ունեն բազմաթիվ բրգաձև աշտարակներ՝ պատերի մեջ թողնված կլոր, փոքր անցքերով: Պարիսպները շարված են մանր ավազաքարով, կրաշաղախով: Ամրոցը կրկնահարկ է, սանդղավանդի ձևով. առաջին հարկը բավական ընդարձակ է, մոտ 2 հեկտար հարթ մակերեսով, հյուսիսում բարձրանում է մի այլ քարածալու, որի վրա տեղավորված է ամրոցի երկրորդ աստիճանը՝ միջնաբերդը: Սա նույնպես ամրացված է բրգավոր պարիսպներով և արևելյան կողմից ունի մի մեծ մուտք: Միջնաբերդը բռնում է մոտ 0,5 հեկտար տարածություն: Ամրոցի հիմնական մուտքը բարձրավանդակի հարավ-արևմտյան անկյունից է, լեռնապարսպի արևմտյան կողմից. գագաթի բուրգի վրա նկատելի են հատուկ դիտանոցների և փոքրիկ պահակատան շենքի մնացորդներ: Ամրոցի երկու մասերում էլ նկատելի են բազմաթիվ շինությունների հիմնապատերը, ըստ որում միջնաբերդի շենքերն ավելի փոքր չափերի են եղել, քան ստորին մասինը: Ամրոցի կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ:

Բագրատունիների ամենանշանավոր ամրոցներից է եղել Հովհ. Դրասխանակերտցին Աղստևի ձորում և Կալեն գավառում հիշատակում է մի կարևոր ամրոցի մասին, որը, հավանաբար, սա է: Պարսպապատի վերնամասերը մեծ մասամբ քանդված են, մնում են նրանց ստորին հատվածները՝ 1—4 մ բարձրությամբ:

զ. Սկեղեցի վ. Լաչիևիդյա գյուղատեղում, գանձում է գլուղից 5 կմ հարավ-արևելք, անտառի մեջ, ճանապարհից դեպի հյուսիս: Պահպանվել է արևելյան խորանը և արևմտյան պատը: Թաղակապ, խոշոր շենք է (11×5 մ), շարված որձաքարով, կրաշաղախով. ներքուստ ունեցել է սպիտակ կրաշաղախի ծեփածածկով, որի վրա նշմարվում են որմնանկարների մնացորդներ: Կառուցման ոճով պատկանում է XII—XIII դարերին, թեև արձանագրություններ չեն պահպանվել:

է. Զուլգ եկեղեցիներ ն. Լաչիևիդյա գյուղատեղում, գանձում են գլուղից մոտ 3 կմ հարավ-արևելք, Սղնախի ջուր վտակի աջափնյա հարթության վրա, անտառի մեջ: Արևելյան եկեղեցին տեղացիների շրջանում կոչվում է Սղծաձորի սբ նշան. սա փոքր չափերի է (6×4 մ), թաղակապ, ծածկը կիսով չափ խոնարհված է, քանդված է նաև հարավային պատը:

Երկրորդ եկեղեցին, որ արձանագրության մեջ Աստվածածին է կոչվում, նախորդից մոտ 100 մ արևմուտք է ընկած. սա ավելի մեծ չափերի է (7×5 մ), նույնպես թաղակապ ծածկով, Գլխավոր խորանի բնմը քանդվել, հավասարվել է հատակին: Այս եկեղեցին ևս իր կառուցողական առանձնահատկություններով և պահպանված արձանագրության հնագրությամբ XII—XIII դարերի գործ է: Արևմտյան դռան ճակատակալ քառանկյան քարի վրա ներքուստ փորագրված է մի անթվակիր նվիրատվական արձանագրություն՝ խիստ եղծված և հողմնահարված:

Զուլգ եկեղեցիների շրջակայքում կան տների բազմաթիվ ավերակներ: Հավանաբար Սղնախի ջուր վտակի ափերին հնում բնակավայրեր են եղել:

ը. Մատուռ Ս. Կիրակի խոջաբազար գյուղատեղում, կանգնած է գլուղից 2 կմ հարավ-արևելք, Արաբի ձորից դեպի արևմուտք, Քոսաղբուր հնավայրի և աղբուրի մոտ, սարալանջին: Տեղացիների շրջանում հուշարձանը հայանի է խչրազարի խաչ անունով: Սա գմբեթավոր փոքրիկ մատուռ է (4×4 մ)՝ կառուցված մի խոշոր ժալուրակորի վրա, գետնից 2 մ բարձրությամբ: Ներքուստ պատերի անկյուններում մոտ մեկ մետր բարձրության վրա ազուցված են չորս ելուստներ, որոնց վրա հենվում են ծածկի կամարները՝ իրենց վրա կրելով փոքրիկ գմբեթը՝ սրբատաշ գլանաձև թմբուկով և սրածալր վեղարով: Պատերի մեջ բացվում են մեկական փոքր ու նեղ լուսամուտներ, երկուսը՝ թմբուկի արևելյան և արևմտյան կողմերից: Մատուռի մուտքը արևմտյան պատից է, որի շրջանակի հյուսիսային կողը կարմիր գրանիտից մի կիսամշակ խաչքար է: Մատուռը կանգուն է, քանդված են գմբեթի վեղարն ամբողջությամբ և թմբուկի արևելյան մասը, թափված են թմբուկի հիմքի և ծածկի քիվերը:

Հուշարձանի շուրջը, Արաբաձորի աջ կողմի սարահարթի վրա տարածվում է գերեզմանոցը՝ բնական սալի անմշակ տապանաքարերով: Մատուռի ճակատակալ կիսակլոր քարի երեսին և գոան շրջանակի խաչքարի վրա կան արձանագրություններ:

253. Վ. ԱՂԴԱՆ. Ներքին Լաչինդայա դյուղատեղիի Կրկրորդ եկեղեցու արևմրայան դռան ճակտտակալ երկարավուն քարին, ներքուստ, 4 տող կիսահղծ.

+ ԿԱԲԱԵՐԻ ԱՅ ԵՍ ԼՈՒՍԵՐՍՄԱԲՆԵՅԱԱԾՈՂՈՐ

+ ԱԾՈՒՒ ԱԾԱԾՆՍՍԵՏՈՒ: Մ: ՄՊ: ԱԿՄԲՆՔՍԵՏԼՈՒԵՐ

ԹԱԵՐԻՈՒ. Բ.ԶԱԻՏՆԻ ԾԱՌ-ՉԱԴԴԱՐԻ: Ա: ՀԱԵԻՄԻ. . . .

Մ: ՀՆԱԲ. ԼԵՐԻԴ. ԱԼԱՍԹԵ. ՈՒԽՓԵ ԱՅԻ ԱՅ Մ
Ա

ԿԱՄԱԿ, ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ, ՅԵՍ՝ ԼՈՒՍԵՐՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ [ԱԾ ՈՂՈՐ] ԱԾՈՂՈՐՄԻՒ ԱԾԱԾՆԻՍ, ԵՏՈՒ :Մ: ՄՊ,ԻՏՂԱԿ: ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏԼՈՒՆ, ԼՈՒԵՐԹԱՄԵՐԻՆ ՍԻ .Բ. ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ԾԱՌ-ՉԱՐԴԱՐԻՆ՝ :Ա: ՀԱԻՐ ԻՄԻՆ.[ԱՄԷՆ] ՇՆԱԻՈՐ, .Ա. ՄԱԻՐ ԻՄ՝ ԱԼԱՍՄԹԵ. ՈՎ ԽԱՓԵ, ԴԱՏԻ ԼՅԱՅ: ԱՄԷՆ]:

Դիտելիք. Արձանագրութիւնը մեզ է հասել քիչ թե շատ անաղարտ վիճակով, սակայն նրա վերծանութիւնը որոշ զժվարութիւններ ունի. հեղինակը կամ փորագրողը անփութ գտնվելով, տեղ-տեղ ավելորդ բառեր են մտցրել, որով և անհասկանալի է դարձել բնագիրը:

Առաջին շարքի վերջում և երկրորդի սկզբում կարդացվում է անոյնը և անոյնը, որոնց իմաստն անհասկանալի է, եթե ընդունենք, որ դա Աստվածածին եկեղեցու համար իբրև որոշիչ է ծառայում, այդ դեպքում անբացատրելի կմնա նրա կրկնութիւնը: Ավելի հավանական է ենթադրել, որ հեղինակը պարզապէս սխալմամբ է փորագրել այդ բառերը, որոնք չեն առնչվում բուն բնագրին:

Նույն շարքում նվիրատուի անունը կազմող տառաշարքը պարզ չի կարդացվում, նույն տառաշարքը կրկնված է նաև երկրորդ շարքում՝ միաբանքս հո Լուեր (հավանաբար ա-ն բաց է թողնված, պետք է լինի Լուեր). նույնպէս անհասկանալի կապակցութիւն մեջ: Այդ անունը վերապահորեն վերծանում ենք Լուեր-ար. անձնանուն, որ գործածական էր XIII—XV դարերում:

3-րդ շարքի սկզբի տառաշարքը զժվարանում ենք վերծանել, քանի որ հատվածը չի կապակցվում ոչ նախորդ և ոչ էլ հաջորդ մասերի հետ և թվում է, ավելագրութիւն է վերը նշված անոյնի նման:


Նույն շարքում ծառայողարիւն. :Ա: հաւր իմ ին վերջին գրերը՝ ին պետք է կցել հոր անվանը՝ Շնաւոր[իւն], որը փորագրված է հաջորդ շարքի սկզբում ամեն փակագրից հետո:

4-րդ շարքի սկզբում և վերջում միևնույն ամեն բառը կրկնված է, ըստ որում նույն փակագրով, այն տարբերութիւն, որ տողավերջինը առանց գծիկի է:

4-րդ շարքում նվիրատուի մոր՝ Ալամսիթիին արվելիք պատարագի թիվը՝ ա-ն փորագրիչը նախապէս բաց է թողել և հետո ավելացրել 5-րդ շարքում առանձին, համապատասխան տեղից ցած: Ալամսիթի կամ Ալամսի իդ անձնանուն է, հանդիպում է առաջին անգամ, թեև նրա բաղադրիչները՝ Ալամ և Սիթի (Սթի) առանձին-առանձին կամ այլ զուգորդութիւններով գործածական են XII—XIII դարերում:

Նույն շարքում նվիրատուի հոր անունը Շնաւոր ար. իդ. անձնանուն է, որի ուղիղ ձևն է Շնորհաւոր, զանազան հնչյունափոխված ձևերով (Շնաւոր, Շնահոր, Շնովոր, Շնահվոր և այլն) լալն տարածում է ունեցել XIII—XVII դարերում պատմական Հայաստանի բոլոր գավառներում:

254. Վ. ԱՂԴԱՆ. Ս. Կիրակի մատուռի ճակատակալ կիսակտր քարի վրա, արտաքուստ, 5 տող.



ԿԱՄԱՎՆ ԱՅ, ՂԱՆՈՒԹԻՒՆԻՆ|ԱՐՂՈՒՆԻՆ, ԹԱԳՄԱԿՈՐՈՒԹԻՒՆԻՆ|ԴԵՄԵՏՐԻ, ԵՍՄԿԸՐՄԻՉՍ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԾՆՆՈՂԱՅ ԻՄ ԵԻ ՎԱՍՆ ԹՈՂՈՒԹԵԱՆԻ ԵԻՄԵՂԱՅ ԻՄՈՑ: ԱՄԵՆ: ԹԻՎ ԶԼԵ (1286):

Լուսակ. 85

Գիտելիք. Ճակատակալ քարը տորոնագուն գրանիտ է, նրա վրա փորագրված բնագիրը հիմնականում լավ է մնացել և ընթերցվում է հավաստիորեն: Միայն տեղ-տեղ կրաջրերի հոսքի հետևանքով որոշ գրեր եղծվել են և լավ չեն երևում: Արձանագրությունը հորինված է լեզվաքերականական մի շարք մեղանչումներով, թեև նրա տառաձևերը կանոնավոր են և վկայում են փորագրող վարպետի հմտության մասին (բացառություն է կազմում ց գիրը, որը թեև հանդիպում է այլուր ևս, սակայն այստեղ չի ներդաշնակվում բնագրի մյուս տառատեսակներին):


2-րդ շարքում՝ թագորութիւն Դեմետրի կապակցության մեջ առաջին բառում առ հնչյունակապակցությունը չի փորագրվել: Եթե փորագրողի պատահական վրիպում չհամարենք, պետք է ընդունենք այդ բառի բարբառային արտասանությունը՝ թագոր, որ այժմ էլ դիտվում է Հյուսիսային Հայաստանի մի քանի խոսվածքներում:

3—4-րդ շարքերում... շինեցի գեկեղեցիս ծնողաց իմ, այստեղ անտարակույս մի բառ բաց է թողնված՝ յիշատակ, յանուն, յերկարկենդանութիւն և այլն:

5—6-րդ շարքերում վասն թողութեան մեղաց իմոյ, փոխանակ՝ իմոց, գրչի սխալն է:

Արձանագրության հեղինակը լավ չի պատկերացրել ութիւն վերջածանցի գրաբարյան ուղղագրության և հապավման կանոնները, ուստի գրում է ղանութիւն Արղունիւն (փոխ. ի ղանութեան), թագորութիւն Դեմետրի (թագաւորութեան), այն էլ առանց հապավման նշանի:

255. Վ. ԱՂԴԱՆ. Ս. Կիրակի մատուռի արևմտյան մուտքը կազմող գրանիտե կարմիր խաչքարի ճակատին և վերևի խաչթևի երկու կողմերում, 3 տող.



ԱՐՍՏՈՒԾՈՂՎ, ԵՍ՝ ԱԼԱՓԷՍ ԵՏՈՒ ԶՄԱՏՆԱՐԿՍ |ՄԽԻԹԱՐԻ ՔՐԱՂԱՆԱՑԻՆ, ԵԻ ՆԱ ԵՏ :Ա: ՊԱՏՆԱՐԱԳՂ ԱՂԳԱԻ Ի ՏԱԻՆԻ ՄԲԽԱԶԻՆ:

Լուսակ. 86

Գլխեղիք. Խաչքարի շրջանակը կազմվել է զույգ սկոսավոր գծերով: Բուն խաչը պարզ, անզարդ խորաքանդակ է, որն առաջացել է խաչի ուրվագիծը ակոսելու միջոցով: Արձանագրությունն առաջին սողը փորագրված է խաչքարի վերևի մասում, շրջանակից դուրս և ավելի խոշոր աստերով: Մնացած երկու սողը գրված է ուղղահայաց վերի խաչթևի երկու կողմերում, համեմատարար մանր գրերով:

Առաջին շարքում նվիրատուի անունը պարզ կարդացվում է Ալափես, որն անշուշտ, Ալափայ անունն է ս դիմորոշ հոդով՝ Ալափայս>Ալափես, այ երկբարբառի պարզումով է ձայնավորի, որ շատ տարածված հնչյունափոխություն է գրեթե բոլոր բարբառներում (հմմտ. քանափայ>քանափայն>քանափեն, փեսայ>փեսայն>փեսեն և այլն):

Չ-րդ շարքի սկզբում ՄԽ հապավումը, թեև առանց գծիկի, վերականգնում ենք ՄԽԹար: Նույն շարքում քի սովորական հապավումը՝ քանափայն, իսկ շարունակության վերջում՝ եւնա ետ: Ա: պատ: Ա, այստեղ վերջին ա-ն չի կապվում նախորդ պատ. (արագ.) ի հետ, քանի որ նրանից անջատված է երկու կետով, որն իրենից առաջ արդեն ունի ա: Մենք վերապահությունը այստեղ վերծանում ենք՝ ետ: Ա: պատարագ ազգաւ ի տաւնի ՍԲ Խաչին, կապակցությունը հասկանալով այն իմաստով, որ այդ Ա պատարագը պետք է տրվի՝ ազգաւ, այսինքն նվիրատուի ողջ աղաթյունը կամ գերդաստանին: Արձանագրության առաջին և միակ վերծանող Մ. Բարխուդարյանցը այս հատվածը վերծանել է... ետ Ա պատարագ զգափթս ի սուրբ Խաչին, որ շատ հեռու է իրականից և անիմաստ:


Խաչքարը և նրա արձանագրությունը հավանաբար ժամանակամերձ են մատուռի շինությունը՝ XIII դարի վերջերին (ՁԼԵ-1296):

Թ Ա Լ Ա

Կլուղը տեղավորված է Թալա գետակի ափերին, Լճանից 1,5 կմ հյուսիս-արևելք: Նրա մասին մատենագրական հիշատակություններ չկան, քանի որ այժմյան բնակավայրը հին պատմություն չունի: Սակայն գլուղի շրջակայքում պահպանված նյութական մշակույթի հուշարձանները ցույց են տալիս, որ միջնադարում այստեղ եղել են մի քանի բնակավայրեր՝ բավական խիտ բնակչությամբ և զարգացած տնտեսությամբ:

Դրանցից են՝ Միջնաշենի եկեղեցին, որը գտնվում է Թալա և Ենոքավան գլուղերի միջև, Թալա գետակի ձախ ափին: Հյուսիսային պատով հենված է վերևից պոկված մի վիթխորի ժալարեկորի վրա: Ծածկը թաղակապ է եղել, երկթեք տանիքով: Եկեղեցու շուրջը մեծ գերեզմանոց է՝ բազմաթիվ տապանաքարերով ու խաչքարերով, որոնցից քիչ բան է պահպանվել: Խաչքարերից մեկը կանգնած է ժայռե պատվանդանի վրա և ճոխ քանդակագործեր ունի: Եկեղեցու արևմտյան պատի հարավային անկյան մոտ ընկած գեղաքանդակ խաչքարի միայն հարավային կողին փորագրված բազմատող արձանագրության որոշ բառեր են կարդացվում. խաչքարի երեսի քանդակները և արձանագրության ձախակողմյան հատվածը հողմահարվել, քալքալվել են: Փոքրիկ եկեղեցու շենքեր կան նաև գլուղի արևելյան կողմում, ձորակղզին, հարավային մասում, կալերի մեջ: Զույգ մատուռների պատերը 2 մետր բարձրությամբ պահպանվել են կոլտնտեսության կայերից մի քանի մետր հարավ:

256. ԹԱԼԱ. գլուղից 3 կմ հյուսիս, Ենոքավանի ձանապարհին, Թալա գետակի ձախ ափին, փոքրիկ կիսաքանդ եկեղեցու արևմտյան գոտն հարավային կողմում ընկած մի գեղաքանդակ խաչքարի կողին, խիստ եղծված արձանագրության մնացորդներ, 13 տող.



. . . ՀԱՄ . . . ՍՅԱ . . . ՍՇ . . . ՏԱ Ս . . . ԱԵԻ ՅԻԻԲՈ ԱՆԱՈՐ . . .
[ՎԱՊԽՃԱՆԵ . . . ՑԷՍԱԻ . . . [ԹՈՒԻՆ] ՍԻԳ:

Լուսակ. 87

Գլխովիք. Տողերի համարակալումը պայմանական է, սկզբում պետք է լինեի առնվազն մեկ տող: Հավանաբար խաչքարի կողի այս արձանագրությունը ինքնուրույն չի եղել, այլ հանդիսանում է խաչքարի ճակատի հիմնական բնագրի շարունակությունը և վերջաբանը: Տառաձևերի կանոնավոր, բոլորածե գեղեցիկ երկաթագիրը բնորոշ է XII—XIII դարերին, որ և պետք է համարել խաչքարը կանգնեցնելու հավանական ժամանակը: Այս ենթադրության օգտին են խոսում նաև բնագրի վերջում երևացող ՈՒԳ գրերը, որը, հավանաբար, խաչքարի թվագիրն է (1174):

Ե Ն Ո Ք Ա Վ Ա Ն

Գլուղը գտնվում է Իջևանից 6 կմ հյուսիս-արևելք, Թալա գետակի ձախ ափի լեռնալանջին: Թալալի ձորն այս մասում գահավեժ է, գրեթե ուղղահայաց, ժալազագաթների հարթության վրա ընկած է գլուղը: Պատմական աղբյուրներում գլուղի մասին տեղեկություններ չեն պահպանվել, սակայն նրա շրջակայքում եղած տարրեր հուշարձանները վկայում են, որ հնում Թալա գետակի ափերը ես խիստ բնակեցված են եղել: Ներկայումս գլուղում և մերձակայքում կան հետևյալ հուշարձանները.

ա. Եկեղեցի-մառուռը գտնվում է գլուղի հարավային ծայրին, ձորի եզրին: Շարված է կիսամշակ որձաքարի բեկորներով և կրաշաղախով: Ծածկը թաղակապ է՝ երկթեք կտուրով: Մուտքը արևմտյան պատից է, նրա շրջանակի հարթված երեսներին գծագրված են պարզ խաչեր: Պատերը ներսից սվաղված են կրաշաղախով, որի վրա նշմարվում են սևաներկ որմնանկարների մնացորդներ: Եկեղեցու շուրջը, մինչև ձորի եզրերը տարածվում է պատմական գերեզմանոցը, որը ժամանակամերձ է եկեղեցուն: Եկեղեցու մուտքից 10 մ արևելք, մի սեղանաձև կիսամշակ տապանաքարի հարթ մակերեսին քանդակված է պարզ գավազան և երկտող արձանագրություն, որը եղծված է: Առաջին տողի վրա հազիվ նշմարվում են Թաթոս, իսկ երկրորդի վրա՝ ԹվիՍ Ռի:

բ. Եկեղեցի Օկոնաթալ, գտնվում է գլուղից մոտ 17 կմ արևմուտք, նույնանուն հանդամասում, մի լայն բացատի մեջ, գետակի ձախ ափին: Շինված է որձաքարի տարբեր մեծ ության բեկորներով: Եռանավ բազիլիկայի նման շենք է, ներսից 11×7 մ չափերի: Ներսում կան չորս սրբատաշ կլոր սյուներ, որոնց վրա հենվող կամարները գոտկում են եկեղեցու ծածկը՝ ստեղծելով երեք նավեր: Արևելյան խորանի երկու կողմերում կան մեկական ավանդատներ: Հյուսիսային ավանդատան մուտքի ճակատին ագուցված է կապտագույն քարից մի խաչքար՝ հեծյալի բարձրաքանդակով: Եկեղեցու արևմտյան մուտքի երկու կողմերում կանգնեցված են երկու խաչքարեր, որոնցից հարավայինի երեսին նույնպես քանդակված է գինավառ հեծյալ: Եկեղեցուց մի քանի մետր արևելք, գետնի մեջ խրված մի կանգուն թևավոր խաչ կա, որը, հավանաբար, XII—XIII դարերի է: Շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանոցը՝ XIX—XX դարերի անզարդ տապանաքարերով:

գ. Ասավածածիճ Եկեղեցին գտնվում է գլուղից մեկ կմ հարավ, ձորի մեջ, գետակի ձախ ափի մի բլրակի վրա: Փոքր չափերի շենք է (4×3 մ), շարված տարբեր մեծ ության հանքաքարի բեկորներով: Գլխավոր խորանը՝ ցածր բեմով, արևելքից է, սրա հյուսիսային կողմում, եկեղեցու հատակագծից դուրս, նրան կցված է միակ՝ հյուսիսային ավանդատունը՝ զեպի բեմը բացվող մուտքով: Եկեղեցու շրջակայքում կան բազմաթիվ տապանաքարեր ու անարձանագիր խաչարձաններ, սակայն մշակման եղանակով եկեղեցուն ժամանակամերձ (XIII դար): Հավանաբար հնում գլուղը տեղավորված է եղել այս ձորում, այդ են ցույց տալիս դուրդատեղիի բնակարանների ավերակները, որոնք տարածվում են առավելապես եկեղեցուց արևելք ու հարավ: Շենքի ճակատներին ագուցված են խաչքարերի քանդակազարդ բեկորներ:

Արձանագրությունը փորագրված է հյուսիսային ավանդատան մուտքի երկարավուն ճակատաքարի երեսին, շղագրի և բոլորագրի տառերով, անսովոր տառաձևերով: Այս տեսակետից հատկապես ուշագրավ են վ, ա, պ, լ ա, և գրերը, որոնք հազվադեպ նմուշներ են հայ վիմագրության մեջ:

Առաջին շարքում. ես՝ Ածայտուր եզնեցի զԼուսերին զայգին., վկայված է ե(է) նախահա-
 վելվածի անհարկի կիրառություն՝ բազմավանկ բայածևի հետ առաջին դեմքում (սպասելի էր
 գնեցի). իրողությունը, ինչպես նշել ենք, հաճախ է դիտվում միջին դարերի վիմագրերում ու ձե-
 ոագրերի հիշատակարաններում, և վկայում է, որ նրա նշանակությունը այդ ժամանակներում
 այլևս չէր գիտակցվում: Ածայտուր անձնանվան մեջ յնուկնպես անհարկի է գործածված և պարզում
 է այդ գրի ուղղագրության վիճակը միջնադարում (յ կարող էր գրվել հին ուղղագրության հետևու-
 թյամբ, բայց չարտասանվել): ԶԼուսերին զայգին, զ նախդիրը կրկնված է:

2-Յ-րդ շարքերում, որ գնել ին պարոնաց կամակցութեամբ..., գնելին, գնել էին (<գնեալ
 էին), բալի անցյալի վաղակատար ժամանակի խոսակցական ձևն է, որ կա ներկայումս մի քանի
 խոսվածքներում (Արարատյան, Ղարաբաղի, Լոռու և այլն): Նշված կապակցությունը պետք է
 հասկանալ որ գնել էին պարոնաց կամակցութեամբ:

5-րդ շարքում նվիրատուի մոր անունը Տիրոցմայր է (ետուն իմ մայրն՝ Տիրոցմայրն), որը
 տրական հոլովում օրինաչափորեն դարձել է Տիրոցմայրն: Հազվադեպ իգ. անձնանուն, որը կազմվել
 է Տիրոց ար. անվան և մայր բառի հարադրությունով:

257. ԵՆՈՔԱՎԱՆ. Աստվածածին եկեղեցի, գյուղից մեկ կմ հարավ, Թալա գե-
 տակի ձախ ափին կառուցված փոքրիկ եկեղեցու միակ հարավային ավանդատան
 մուտքի ձակատակալ երկարավուն քարին, անկանոն շղագրով, 8 տող.

Յ ՈՒՍՈՍԿ ԿՅ ԵՍ ԱԾԱՅՈՒՆ ԵԳՆԵՅԻ ԶԼՈՒՍԵՐԻՆ
 ԶԱԳԻՆ ԿԱԲԱՍԱԿ ԵՍ ԵՍ ԵՍ ԵՍ ԵՍ ԵՍ
 ՊԱՐՈՆԱՅ ԿԱՄԱԿՑՈՒԹԵՐ ՊԱՐՈՆ ՍԳԻՐՆԸ
 ԱՎԵՑԻ ԱԲԱԾԱԾԵՆԻՍ Ե ՄԻԱԲԱՆՔՍ ԵՍ
 ՈՒՆ ԻՄԱԿՆԻՆ ՄԻՐՈԳՄԱԿՆ. Կ. ԶԱՄ
 ՄԱԷ Ի ՄԲՍԳՍԻՆ ԿԱՄԱՐԻ ԷՔՆ ԱՆՆԻՆ ԿԱՅ
 ՄՏԱԵԼ ԶԱԿՅ ԶԱՅԳԻՆ ԶՈՎԱԶ Ե Յ ԺԸ ՏԱՅՐ
 ԹԻՍ ԷԽ

ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ԵՍ՝ ԱՄՏՈՒԱԾԱՅՈՒՐ ԷԳՆԵՑԻ ԶԼՈՒՍԵՐԻՆ ԶԱԳԻՆ ՅԱԲԱՍԱՎ ՅԻՐ
 ՈՐԳՈՅՆ, ՈՐ ԳՆԵԼ ԻՆՊԱՐՈՆԱՅ ԿԱՄԱԿՑՈՒԹԵԱՄԻՔ ՊԱՐՈՆ ՄԱՐԳՄԻԻ: ԸՆԾԱՅԵՑԻ
 ՄԲ ԱԾԱԾԵՆԻՍ, ԵԻ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ԻՄ ՄԱԻՐՆ՝ ՏԻՐՈՅՄԱԻՐՆ .Ա. ԺԱՄ ԻԻՂ ՏԱ-
 ԻՆԻ ՄԲ ՄԱՐԳՍԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՆԻՆ ՅԱՅԻ: ՈՐ ՀԱՆԵԼ ԶԱՆԱՅ ԶԱՅԳԻՆ,
 ՆԶՈՎԱԾ Է ՅԺԸ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆԻ: ԹՎԻՍ ԶԽ (1291):

ՄՈՐՈ ԶՈՐՈ ՎԱՆՔ

Իջևանի շրջանի հնագույն և ճարտարապետական ուշագրավ հորինվածքով այս հուշարձանի մասին մատենագրական վկայություններ չեն պահպանվել: Հյուսիսային Հայաստանի Գալեհ և Մահկանա-
րերդ գավառների մյուս, հարևան հոգևոր ու մշակութային կենտրոնների՝ Հաղրատի, Ն. Գետիկի, Հաղար-
ծնի, Դեղձուտի, Մակարա վանքերի վիմագրության և պատմագրական աշխատություններում ևս
որևէ հիշատակություն չենք գտնում հուշարձանախմբի պատմական կյանքի մասին:

Նորագույն տեղագրական գրականության մեջ Մորո ձորո վանքին անդրադարձել է միայն Մ.
Բարխուդարյանցը, որն իր «Արցախ» գրքում մի քանի տողով նկարագրել է Ա. Աստվածածին
եկեղեցու տեղագրությունը, կառուցվածքը և պահպանության վիճակը այցելության ժամանակ՝ XIX
դարի կեսերին: Բարխուդարյանցը իր գրքում զետեղել է վանքի 3 արձանագրություն՝ ոչ այնքան
հաջող վերծանությունը: Տարիներ առաջ հրատարակված Իջևանի շրջանի պատմական հուշարձանների
«Ուղեցույցը» (կազմող՝ Հ. Նդիազարյան) մի էջ է նվիրել Մորո ձորո վանքի ընդհանուր նկարա-
գրին և վիմագրությանը, որը քիչ բան է ավելացնում եղած տեղեկություններին:

Հուշարձանախմբի Մորո ձորո Աստվածածին անվանումը գալիս է նրա պատերին փորագրված
արձանագրություններից: Անտարակույս է, որ Մորո ձորո կարող էր ծագել այն ձորի կամ գյուղի
անունից, որի սահմաններում կառուցվել էր վանքը: Հիրավի, հուշարձանից մոտ մեկ կմ դեպի
հարավ-արևելք, ձորակի ձախ կողմում, «Պամբի սար» անտառամասի կենտրոնում մի բացատ կա,
որն ամբողջությամբ ծածկված է մորու թփիկներով և այդ պատճառով տեղացիների շրջանում
Մորու թալա է կոչվում: Հավանական է, որ հնում Մովիղի ձորակը նույնպես ծածկված է եղել
մորու թփերով և կոչվել է Մորու ձոր, որից և տեղանունը անցել է նրա ձախ ափի հարթության
վրա կառուցված վանքին:

Մորո ձորո ս. Աստվածածին վանքը տեղավորված է Մովիղ գյուղի արևմտյան թաղամասում,
այգիների մեջ՝ շրջապատված դարավոր վիթխարի ընկուզենիներով: Հուշարձանախմբի կառուցվածք-
ներից ներկայումս կանգուն են Աստվածածին եկեղեցին և նրա շուրջը տարածվող պատմական
գերեզմանոցի մի քանի քանդակազարդ խաչքարերը, ինչպես նաև ձորակի հակառակ ափին գտնվող
առանձին խաչարձանների պատվանդանները, որոնք թեև թվագրված արձանագրություններ չունեն,
սակայն իրենց շինության ու քանդակազարդերի ոճով ժամանակամերձ են եկեղեցու վերակառուց-
մանը (XII—XIII դդ.): Վանքի օժանդակ տնտեսական շենքերի և միաբանության կացարանների
ավերակները քարակույտերի ու խանդակների ձևով երևում են եկեղեցուց դեպի հարավ և արևելք
ոչ այնքան հեռու, իսկ դրանից դեպի արևելք Համզալի լեռնալանջին ու Գարմաքար ժայռաբե-
կորից ներքև միջնադարում տեղավորված է եղել վանքապատկան գյուղը, որի մնացորդները պահ-
պանվել են գյուղի այգիներում ու բանջարանոցներում՝ Մովիղի ջուր գեաակի երկու ափերին:

Առաջին հայացքից արտաքուստ հուշարձանը անշուք տպավորության է թողնում. քանի որ
նրա երբեմնի սրբատաշ երեսապատերը, ծածկի ձևավոր սալերն ու քիվերը վատ են պահպանվել,
մեծ մասամբ խարխլվել, թափվել են՝ մերկացնելով եկեղեցու կմախքը, որը տեղ-տեղ վերանորոգ-

ված է անարվեստ եղանակով: Եկեղեցին փոքր չափերի (դրսից՝ 8,4×8,6 մ) գմբեթավոր գողտրիկ շինույթովն է, արտաքուստ և ներքուստ խաչաձև հատակագծով, որի ընդերքը խաչթևերը կիսաշրջանաձև են, բացի հարավայինից, որն արտաքուստ ուղղանկյուն է: Եկեղեցու կիսակլոր պատերի արտաքին երեսապատման սրբատաշ քարերը ժամանակի ընթացքում պոկվել, ընկել են, ուստի հետագայում ստիպված են եղել երեսապատերը վերաշարել մեծ մասամբ տարբեր գույնի կիսամշակ քարերով, տեղ-տեղ օգտագործելով նաև բեկորներ: Անվիճելի է, որ ամբողջ հուշարձանը նախապես շարված է եղել գորշագույն բազալտի սրբատաշ սալերով, որոնց առանձին հատվածներ անաղարա պահպանվել են ներսում, խաչթևերի կիսակլոր պատերի, թաղերի և կամարների վրա: Սկզբնական սրբատաշ երեսապատերը XII—XIII դարերում կատարված վերանորոգումների հետևանքով մեծ մասամբ փոխարինվել են կամ մուգ դեղնագույն սրբատաշ չեչաքարով (թմբուկի արտաքին երեսապատ), կամ սպիտակավուն տաշված ավազաքարով (թմբուկի ներսի մակերեսը, թաղերը, գլխավոր խորանի կիսակլոր պատերը և ալլն), որոնք հեշտութամբ զանազանվում են գորշ բազալտի հնագույն երեսապատերից:

Եկեղեցու կիսաշրջանաձև խաչթևերը վերևում իրար հետ միանում են խիստ շեշտված պայտաձև կամարներով, որոնք հենվում են խաչթևերի անկյուններում հաղիվ գծագրվող ուղղանկյուն որմնամուկների վրա: Այդ կամարների վրա հանգչում է գմբեթի զլանաձև թմբուկը՝ չորս կողմերից բացվող լուսամուտներով, որոնք իրենց անհամեմատ մեծ չափերով (1,1×0,55 մ) հիշեցնում են վաղ շրջանի հայկական հուշարձանները:

Հնագույն կառուցողական ձևերի տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես թմբուկի հյուսիսային լուսամուտը, քանի որ մյուս երեքը խարխուլվել են, քանդվել, իսկ նրանց պսակող շրջանակները չեն պահպանվել: Հյուսիսային լուսամուտի բացվածքը վերևից ծածկված է երկարավուն ուղղանկյուն սրբատաշ քարով, որը VII դարի պսակներից հատուկ կամարաձևի փոխարեն հարթ հորիզոնական է: Սակայն լուսամուտի շրջակալի ավանդական ձևը պահպանելու ձգտումով, ալդ քարի հարթ մակերեսին վերանորոգող վարպետը փորագրել է պայտաձև կամար՝ նախնական շրջանին հատուկ քանդակազարդերով: Այդ կամարաղեղից դեպի աջ, հարևան քարի վրա, անաղարդ պահպանվել է մեծ վարպետութամբ կատարված նույն բարձրաքանդակը, որն իր մեծությամբ և քանդակման նրբութամբ նույնպես բնորոշ է հայկական հնագույն կոթողներին (Չվարթնոց): Թմբուկի արևելյան մակերեսին, ներքուստ քանդակված է Գրիստոսի խաչելության տեսարան, իսկ սրանից փոքր-ինչ հարավ՝ մի թռչունի խորաքանդակ (հավանաբար աղափնի): Սրանք երկուսն էլ ուրվագծված են պարզ ու անպաճույճ գծերով, անարվեստ և, ըստ երևույթի կատարվել են հապճեպորեն, եկեղեցու նորոգումների ժամանակ: Նույնը չի կարելի ասել խաչթևերի կամարների միացման անկյուններում տեղավորված առասպելական կենդանիների և հաշկապարիկների բարձրաքանդակների մասին, որոնք այժմյան եղծված ու ալլափոխված վիճակով էլ բարձրարվեստ քանդակների նմուշներ են և իրենց զուգահեռներն ունեն վաղ շրջանի հուշարձաններում (Գնդեվանք):

Հուշարձանի ծածկը անմխիթար վիճակում է: Գմբեթի վեղարն ամբողջությամբ կործանված է, ծածկի սրբատաշ սալերը չեն պահպանվել: Թափվել ու անհետացել են բոլոր քիվերը, պատերի ու գմբեթի վերին շարքերը: Քանդված է արևմտյան խաչթևի թաղն ամբողջությամբ, իսկ արևելյանի՝ մի զգալի մասը, որով և խաթարվել է աթաբեկ Իվանեի ընդարձակ շինարարական արձանագրությունը:

Եկեղեցու ներսը համեմատաբար քիչ է տուժել. նախնական սրբատաշ շարվածքը այստեղ պահպանվել է առավելապես բարձրում՝ խաչթևերի թաղերը, կամարները, բնի վերևի բարդ ձևավոր գոտին, թմբուկի ներսի մակերեսի որոշ մասեր ներկայանում են սկզբնական տեսքով: Ինչ վերաբերում է խաչթևերի կիսաշրջանաձև պատերին, ապա դրանք մեծ մասամբ վերաշարված են անմշակ կամ կիսատաշ քարերով, տեղ-տեղ նաև սվաղված են կրաշաղախով:

Մորո ձորո վանքի հնության ամենաբնորոշ զարդաքանդակը, անշուշտ, արևելյան աբսիդի թաղի հիմքով ձգվող և բարդ ձևավորում ունեցող կիսակլոր գոտին է, բաղկացած իրար հաջորդող չորս շարք զարդերից, որոնք առանձին-առանձին կամ տարբեր զուգադրումներով հանդիպում են հալ դասական ճարտարապետության VII դարի հուշարձաններում:

Դրանք են՝ փոքր թեքութամբ իրար վրա հենված նշտարաձև քանդակազարդերի շարանը (Արուճ, Սիսիան, Թարգմանչաց վանք, Անիի Պալատական եկեղեցի և ալլն), թեք հարթության

վրայով ձգվող ատամնաշարի քանդակը՝ շախմատաձև դասավորված ատամիկներով (Երերուլք, Ավան, Արամուս, Գայանե)։

Ինչպես երևում է Աստվածածին եկեղեցու ճարտարապետական ձևերի այս համառոտ քննությունից, հուշարձանի կերպարում դիրկընդիսառն հանգես են գալիս թե պատկանելի հնության, մինչև VII դարը հասնող հանգույցներ ու մանրամասներ (խիստ շեշտված պայտաձև կամարները, արևել- VII դարը հասնող հանգույցներ ու մանրամասներ (խիստ շեշտված պայտաձև կամարները, արևել-

յան արսիդի քանդակազարդ գոտին, թմրուկի հյուսիսային լուսամուտի պսակը և այլն) և թե ակնհայտորեն հետնադարյան վերափոխություններ ու նորամուծություններ (հարավային մուտքի շրջանակը, գմբեթի թմրուկն արտաքուստ և այլն), որոնք աչքի են զարնում առաջին իսկ հայացքից։ Դժվար է հաստատապես պնդել, թե Մորո ձորո վանքը ժամանակակից է VII դարի ան հուշարձաններին, որոնց ճարտարպետի մի քանի բնորոշ հատկանիշներ գտնամ ենք այստեղ։ Մակախ առավել դժվար է եկեղեցու շինությունը վերագրել XII դարավերջին, հիմք ընդունելով նրա պատերին փորագրված արձանագրությունները, որոնցում պարզ ընթերցվում է մի ղեպքում՝ շինեցի գ Ածածիս... մյուսում՝ շինեաց Իււանէ զվաճքս Մորո ձորոյ, ըստ որում երկու բնագիրն էլ ժամանակամերձ են իրար, կամ նրանց ժամանակների տարբերությունը մեկ տասնամյակից չի անցնում, որի ընթացքում հազիվ թե երկու անգամ կառուցվեր նույն եկեղեցին։ Մեր կարծիքով, խոսքն այստեղ շինքը վերանորոգելու մասին է, քանի որ շինել բայը վիմագրական հուշարձաններում հաճախ կիրառվում է նաև նորոգել կամ վերադարձնել նշանակությամբ։


Կասկածից վեր է, որ Մորո ձորո վանքի Աստվածածին եկեղեցին կառուցվել է շատ ավելի վաղ, քան նրա պատերին փորագրված վիմագրերը, որոնք բոլորն էլ վերաբերում են հուշարձանի վերակառուցումից հետո եկող շրջանին և ընդգրկում մոտ 60—70 տարվա ժամանակամիջոց (XII դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի առաջին տասնամյակները)։

Հավանական է ենթադրել, որ VII—VIII դարերում կառուցված վանքը ավերվել ու ամալացել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում և միայն հետագայում, XII դարի կեսերին, Մահկանաբերդի Արծրունիների և Ջաքարյանների կողմից հիմնովին վերանորոգվելով, դարձել է այս գավառի հնագույն և նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը։ Ինչպես ասվեց, Մորո ձորո վանքի պատմական կյանքի ստույգ վկաները նրա պատերին փորագրված հիշատակագրություններն են որոնք հասնում են մինչև XIII դարի առաջին կեսը, որից հետո վանքի հետագա գործունեություն մասին տեղեկություններ չկան։ Պետք է ենթադրել, որ շուտով վրա հասած մոնղոլական ավերիչ ասպատակությունների և դաժան հարկահանության հետևանքով վանքը զրկվել է ձեռք բերած արտոնություններից, քայքայվել և, կորցնելով իր առաջնակարգ վիճակը Մահկանաբերդ գավառում, հաջորդ դարերում շարունակել իր գոյությունը իբրև գյուղական եկեղեցի, որպիսին նրան տեսնում ենք XIX դարավերջին։ Մորո ձորո վանքի փոխարեն հետագայում, Ամիր Քրդի հետնորդների տիրապետության ժամանակաշրջանում կառուցվում են հոգևոր և մշակութային նոր կենտրոններ և ընդարձակվում հները։ Այս տեսակետից առանձնապես բեղմնավոր են աթաբեկ, ամիրսպասալար Մադուն Բ-ի և նրա որդի Խուլուբուղայի իշխանության տարիները (XIII դարի երկրորդ կես), երբ ծավալվում են Մակարա, Առաքելոց, Գիրանց և ուրիշ վանական համակառուց- ների ընդարձակման աշխատանքները, կառուցվում ու բարձր զարգացման է հասնում հուշակավոր Առաքելի հիմնադրած Դեղձուտի վանքը։ Մորո ձորո վանքի արձանագրությունները թվով այնքան էլ շատ չեն, սակայն իրենց բովանդակությամբ կարևոր են, քանի որ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն վանքի, այլև ողջ գավառի և իշխանական տների պատմության մասին։ Հնագույն անթվագիր արձանագրությունները եկեղեցու հյուսիսային խաչթևի թաղի վրայի, մոտավորապես նույն բովանդակության, արձանագրերն են, որոնցում վրաց Գևորգի թագավորը Մորո ձորո վանքն ազատում է հարկատվությունից։ Մնացած բնագրերը նվիրատվական են, բացի Նանա և Իվանե Ջաքարյանների արձանագրություններից, որոնք վերաբերում են վանքի վերանորոգմանը, ինչպես նաև վանահայր Գրիգորիսի հիշատակագրությունից՝ վանական տնտեսությունը ընդարձակելու մասին։

Մորո ձորո վանքի վիմագրությունը ուշագրավ է նաև իր հնագրական հատկություններով. տառաձևերը մեծ մասամբ կանոնավոր բոլորագիր երկաթագիր են, ավելի երկարավուն։ Սովորական տառակցումներից բացի հանդիպում են միայն այս միջավայրին հատուկ միացումներ (Գ-Ի, Թ-Գ և այլն)։ Արձանագրությունների մեծ մասում ա գրի աջ ստեղծին ներքևից բարակ գծիկով աղեղ է փորագրված, որը իր տարբեր ձևերով հատուկ է ինչպես նախնագույն, այնպես էլ X—XI

դարերի վիճակագրությանը: Մորո ձորո վանքի արձանագրությունների հնագրությունը ցույց է տալիս, որ այսպեղ աշխատել են հմուտ փորագրող-գծող վարպետներ, որոնք ստեղծել են կայծերի ու Մահկանաբերդի վիճակագրական հատուկ ոճը, որը իր մի շարք ինքնուրույն գծերով գալիս էր ճարտարապետական արվեստի հարուստ հարկական վիճակագրական մշակույթը: Արձանագրությունների լեզուն ժամանակի գրաբարն է, բարբառալին իրողությունների զգալի ներթափանցումներով:

258. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. տրտաքուստ, եկեղեցու զմբեթի թմրուկի հարավահայաց երեսին, խիստ հողմահարված. 7 տող.



Ի ԹՈՒԻՆ, ՈՒՁ, (1197) Ի ԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒՑ ԵՂԲԱՐՑ՝ ՉԱԲԱՐԵԼԵԻ ԻԻԱՆԵ, ՇԻՆԵԱՑ ԻԻԱՆԵ ՉՎԱՆԲՈՒ ՄՈՐՈ ՁՈՐՈ: ԵԻ ԵՄ՝ ՆԱՆԱ ԿԱՄԱԿԻՑ ԵԻ ԱԻԳՆԱԿԱՆ ԵՂԷ ԱՇՄԱԾՆԻՍՍ ԵԻ ՄԻԱԲԱՆԵՑԱ ՄԲ ՈՒՑՏԻՍ ԵԻ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱԻՐՍ ԳՐԻԳՈՐԻ: ԵԻ ՄԻԱԲԱՆԲՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՆՁ ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ ՉԱԻԱԳ՝ ԼԻՆԳՇԱԲԱԹ ԱԻՐՆ ԵԻ ՉԼՈԳՈՅՆ ԳԱԼՈՒՍՏՆ: ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍ ԴԱՆՈՒԱՄԲՆ՝ ԱՑ

Լուսակ. 88

Գիտելիք. Արձանագրությունը հարավահայաց տեղագրության հետևանքով չափազանց հողմահարված է, եղծված և հատկապես առաջին տողերը զժվարություններ են վերականգնվում:

Առաջին տողի սկզբի թվագիրը վերապահություններ վերականգնում ենք ՈՒՁ, թեև խ-ն հատակ չի երևում և ավելի նման է ի-ի: Սակայն ՈՒՁ ընթերցումն անհրաժեշտ է, քանի որ այդ ժամանակ (1177) Նանան հաղիվ մի քանի տարեկան լինելու թվագրին հաջորդող տառաշարքը բառանշատման ենք ենթարկում վերապահորեն, քանի որ այդ մասը պարզ չի կարգացվում և զժվարություններ է կապակցվում հետագա բովանդակությանը: Տարակուսելի է իվանն անվան կրկնությունը:

4-րդ շարքում եւ միաբանեցա սր ուխտախս եւ պատուաւկան հաւրս Գրիգոր... պետք է լինել՝ պատուաւկան հաւրս Գրիգոր, այդ է պահանջում հատվածի անմիջական շարունակությունը:

7-րդ շարքում անեծքի բանաձևի վերջին բառերը փորագրված են մանր գրերով, ավելի պակաս խորություններ և խապառ եղծվել են: Պահանջված մի քանի գրերը թուլ են տալիս մոտավոր ճշտություններ վերականգնելու այս տողը:

Չնայած արձանագրության եղծված և անվերծանելի հատվածներին, նրա հիմնական բովանդակությունը վերականգնվում է. ամիրսպասալար Սարգիս Մեծի դուստր, Չաքարիալի և իվանեի քուլր Նանան միաբանել է Մորո ձորո վանքին, «կամալից եւ աւգնական» եղել իվանեին՝ վանքի շինության գործում: Այս բնագիրը կարևոր է նրանով, որ նոր տեղեկություններ է հաղորդում Գյուրիկյան վաղամեծիկ Աբաս Բ թագավորի կին Նանալի շինարարական գործունեության մասին: Մինչ այս՝ Նանալի կառուցներից հայտնի էին Սանահնի միակամար կամուրջը, որ նա կառուցել է ամուսնու հիշատակին, Հովհաննավանքի բուրգավոր պարիսպները և, վերջապես, նույն վանքի գերեզմանոցում իր որդեգիր «ճորակերտ վարդապետ», նույնպես վաղամեծիկ Մարգարեի հիշատակին կանգնեցրած խաչարձանը: Նշված հուշարձանների շինության ժամանակները ստույգ կերպով որոշված չեն, հայտնի է միայն, որ սրանք բոլորն էլ Նանան կառուցել է իր ամուսին Աբաս Բ-ի մահվանից հետո (1192): Ներկա արձանագրությունը, եթե նրա թվագիրը ճիշտ ենք վերծանել (1197), ստույգ թվականով առաջին հիշատակությունն է Նանալի կառուցողական գործունեության մասին:

259. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. արտաքուստ, եկեղեցու գմբեթի թմբուկի արևմտյան
երեսին, քայքայված, 5 տող.

ԵՍՀ ԱՅՐԳՐԻԳՐՈ . . . Ս ԱՌԻ Չ

ՎԱՆՔՍՇԻՆԵՑԻ ՉԱԾԱԾԻՆ Ս

ԱԿԻ ՉԱՅԳԻՆ ԳՆԵՑԻ ՉԸ Ա

ՂԱՅՆ ՅԻՇԵՍ ԸԻ ԲԻ ԲՍ ԱՂ

ԱՉԵՄ

ԵՍ՝ ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՌԻ ԱՎԱՆՔՍ,

ՇԻՆԵՑԻ ՉԱՍԱԾԻՆՍԱՐԿԻ ՉԱՅԳԻՆ,

ԳՆԵՑԻ ՉԱՍՂԱՑՆ: ՅԻՇԵՍԱԻՔ Ի ՔՍ

ԱՂԱՉԵՄ:

Լուսակ. 89

Հրատ. Բարխուդարյանց, 342,

Գիտելիք. Արձանագրությունը խիստ հողմահարված է, կիսակործանված է կարողաց-
վում: Այդ է երևի պատճառը, որ նրա առաջին հրատարակիչ Մ. Բարխուդարյանցը մեջ է բերել
միայն մի քանի անկապ բառեր, իսկ մնացածը համարել անընթեռնելի: Արձանագրության հեղինակ
հայր Գրիգորիսը, այլ բնագրերում Գրիգորը, Մորո ձորո վանքում հայանի երկրորդ առաջնորդն է:
Առաջին անգամ իբրև աղապիսին նա հիշատակվում է Նանայի 1197 թ. արձանագրում: Գրիգորիսը
գործել է մինչև XIII դարի առաջին տասնամյակը, քանի որ աթաբեկ Իվանին 1213 թ. արձանա-
գրության մեջ վանքի առաջնորդ է հաստատում յազգե յազգ, մինչև յաւիաեան հայր Եվազրին:

1—2-րդ շարքերում առի զվառքս, պետք է հասկանալ ոչ բառացի, վանքը գնելու իմաստով,
այլ ստանձնեցի վանքի առաջնորդությունը: Այս հատվածը Բարխուդարյանը բաց է թողել:

2-րդ շարքում շինեցի զԱծածինս, դժվար է ստույգ որոշել, թե որ շինքի շինությունն է
վերաբերում խոսքը: Բուն եկեղեցին, ճիշտ է, Աստվածածին է անվանվում, սակայն նրա կառուցումը
արդ շրջանին չի կարող պատկանել, որովհետև ինչպես երևում է Վրաստանի թագավոր Գեորգի
Գ-ի և Ամիր Բրդի արտոնագրերից, Մորո ձորո վանքը գոյություն ուներ և արտոնություններ էր
ստանում դրանից շատ առաջ, համենայն դեպս մինչև 1184թ.: Հավանական է որ շինեցի զԱծածինս
վերաբերում է կամ եկեղեցու վերանորոգմանը, կամ հուշարձանախմբի այլ կառուցվածքների (մա-
տուռ, խաչարձան), որոնք չեն պահպանվել:

3—4-րդ շարքերում արկի զայգին, գնեցի զջաղացն ցուլց է տալիս, որ Մորո ձորո վանքն
ունեցել է ոչ փոքրաթիվ միաբանություն, որի կարիքները հոգալու նպատակով ստեղծվել է վա-
նական տնտեսությունը:

260. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, եկեղեցու գլխավոր խորանի թաղի կեն-
տրոնական հատվածի վրա, քիվից մի շարք վերև: Արձանագրությունը եղել է 7
քարի վրա, որոնցից 3-ը ընկել են, իսկ մնացածները իրենց տեղում են: Ընկածնե-
րից 2-ը՝ 5-րդ և 6-րդ գտնվում են ըմբի վրա, 4-րդը անհետացել է:

ա. արձանագրության ոկիղըը 3 քարի վրա.

ԻՌՎՅ:ՈԿԲ:ԹԱԳԱ ՌՌԹԵՆՆ ԳԻԱՐ ԳԵՍԵՔՐ . . .
ՉԱՔԱ Ե ԱՌԱՔՉԵՐԿ ԻՐՍՀԱՈՑԻՅԱՄԵՆ ԵՆԱՅԵՇԻՆԵ
... ՄՍԻՐԵԱՑՉ ՆԱԱԾԵԻԱՌԻՆ ԲՏԱՄ ԵԻՉ . . .
ԱԾԱԾԻՆ Ս ՎՍՅԵՐԿԱԿԵՆ ԴԱՌՈՒԹ ԵԱԳԻՆ ԵԻ Շ
Ա ՉԾՐԱԼՌՑԻՆԺ ԱՆ ԻՍՀԱԱՉԱ ՏԻՆԿԱՏԱԻ
ՌԻԱՓԱՆԵԼԸԱՆԱՄ ԵՐԱՉ ԳԻՍԵՆ ԱՑՆՊԱՏԱ
ԵԻԱԳՐԻ ՀԵՉԻ ԵԻՍ ՈՆԱՀԻ ԵԻ ՀԱՍՏԱ ՏԵ

ը. 4-րդ քարի բնագիրը (վերականգնում).

ԴԻԲ ԱԻՐՍՊԱ
ՑԱԲ ՉՈՒԻՏՍ
ՍՈՒԳ ԵԹՈՂՏԻ
ԱՀՆՇԱՀԻՆ Ե ԵԴԻԼՈՒ
Ն ՄԻՆՉԵԻ ԳԱԼՈՒ
ԱԿԱՆԵ ՆՄՈ

ՑԻՉՆԱԱՆԱՋ

5-րդ քար

6-րդ քար

ՍԱԼԱՍԱԳԻՄԹ
ՌԿԱՂԻՑ ՀԵԼԵ
ՄԱԼԻԵՍԱԹԱ
ԺԿԵՄՍՊԱՍԱ
ՍՏՆԻԻ ԿԱՍԱԻ
ԳԵՑԱՍԻ ԱԾ՝

Ա... ԻՄԵԵԻ
ԱԵԼԿԱՅՐՉԱԲ
ԲԱԿԻԻԱԵԵՏ
ՌԱՑՍՌԱՉԱ
ՉԲՀՐԱՄԱԱՑ
ԻՆՍՅԱԲԱԸՆ

7-րդ քար

ԻՐՍՊԱՍԱԱԸ
ԹԲՆԱՅ՝ԱԴ
ՆՄՈԳԵԼՉՍԲ
ԲԵԾԻՉԱՍԿԻՆ
ՐՈՑԱՐՅ ԼԵՍՑ ԻՆ
ԻԴՈՒԹԵՅ՝ ԱԻՐ

Ն ՄԴՅԱՉԳՅԱ

ԳՄԻՆՉԵԻՅԱ ԻՏԵԱ

ի թվահիշյ շՄԱՅՈՑ: ՈԿԲ: (1213) ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵՆՆ ԳԻԱԻՐԿԷ, ՄԵՔ՝ ՈՐԴԻԻՔ Ա-
ՐԻՐՍՊԱՍԱԼԱՐՍՍԱՐԳՍԻ՝ ԱԹԱԲԱԿ՝ ԻՒԱՆԷ ԵՒ ԴԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐՍՍԱՐԳՍԱՐԷ
ԱՅԻՍՔ ԶԵՐԿԻՐՍ ՀԱԵՅՈՑ Ի ՅԱՆԱԻՐԷՆԱՅ ԵՒ ՇԻՆԵՐՏԱՔ ԶՎԱՆՔՍ՝ ՈՐ ՎԱԿՈՒՑ
ՀԻՏԷ ԱԻԱՐԵԱԿԿԱՅՈՒ, ԶԱԻՐՈՒԹԵԱՍԻՐՆ ԱՅ: ԱՐԴԻ, ԹՈՐԺԱՄ ՍԻՐԵԱՑ ԶՆԱ
ԱՅ ԵՒ ԱՌ ԻՆՔ ՏԱՐԱԻ ԵՒ ԶՄՈՒԳ ԵԹՈՂ ՏՐՈՏՄԱԼԻ, ԵՍ՝ԱԹԱԲԱԿ ԻՒԱՆԷ ԵՏՐՈՒ
ՆՈՐՈԳԵԼ ԶՄԲԱԾԱԾԻՆՍ, ՎՄԱՄՆ՝ ՅԵՐԿԱՐԿԵՆԴԱՆՈՒԹԵՄԱՆ՝ ԱԻԱԳԻՆ ԵՒ
ՇՄՈՂՆՇԱԿԻՆ ԵՒ ԵԴԻ ԼՈՒԾ ԻՎԵՐԱ ՍՊԱՍԱԻՈՐԱՑ ՍՈՐԱ՝ ԶԱԻՐՆ՝ ՄԵԾԻ ԶԱՏԿԻՆՍԱ
ՃՐՍԳԼՈՒՑԻՆ ԺԱՄՆ ԻՄ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿԱՏԱՐԵՆ ՄԻՆՁԵԻ ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ: ԿԱՏԱ-
ՐԻՁՔ ՀՐԱՄԱՆԱՑ ԴՄԵՐՈՑ ԱԻՐՀՆԵՍՑԻՆ, ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ԶԱՆԱ, ՄԵՐ ԱԶԳԻ ՄԵ-
ՂԱՑՆ ՊԱՐՏՄԱԿԱՆ Է: ՆՈՐՈԳԵՑԱԻ ՍԲ ԱԾԱԾԻՆՍ ՅԱՌԱՋՆ ՈՐԴՈՒԹԵՄԱՆ՝ ՀԱԻՐ
ԵՒԱԳՐԻ ՀԵՁԻ ԵՒ ԽՈՆԱՐՀԻ: ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶՆԱ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՍԶԳԷ ՅԱԶԳ,
ՄԻՆՁԵԻ ՅԱԻՏԵԱՆ:

Լուսակ. 90.

Գիտելիք. Արձանագրութիւնը փորագրված է եղել արևելյան խաչքարի թաղի կենտրոնական հատ-
վածի 7 սրբատաշ քարերի վրա, բնմի ձևավոր գոտուց մեկ շարք վերև Ներկայումս այդ քարերից
իրենց տեղում են առաջին երեքը և վերջին՝ 7-րդը, իսկ միջամասի 3 քարերը պոկվել, ընկել են:
Սրանցից երկուսը՝ 5-րդը և 6-րդը հայտնաբերվել են հուշարձանի բեկորների մեջ և նրանց վրա
փորագրված գրերը վերծանվում են հաջողությամբ: Այսպիսով, 7 քարերից պակասում է միայն
մեկը՝ 4-րդը: Բացի դրանից, տեղում մնացած 3-րդ քարի տողավերջի և 7-րդի տողասկզբի մա-
սերը 2—3 տառանոց շարքվել են, գրերը եղծվել, աստի և նրանց տառաշարքերը դժվար են կա-
պակցվում համապատասխան տողերի հետ: Արձանագրության ամբողջություները վերականգնելու
համար անհրաժեշտ էր առանձին հատվածների պահպանված տառաշարքերը հարադրել, կատարել
նախնական բառանշատում, որը հնարավորություն կտար վերականգնել 4-րդ՝ անհետացած քարի
բնագիրը, ինչպես նաև 3-րդ և 7-րդ քարերի վնասված մասերի գրերը և այսպիսով շարահյուսա-
կան կապ ստեղծել արձանագրության առանձին հատվածների միջև: Այսպիսով, այս վերականգնու-
մով գիտական շրջանառության մեջ է դրվում Ջաքարյան եղբայրների՝ մինչև այժմ անհայտ
երկարաշունչ և ուշագրավ արձանագրութիւնը, որն արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում
այդ տոհմի կառուցողական գործունեության և հոգևոր կենտրոնների մասին: Արձանագրության
հրատարակմամբ ճշտվում է ամիրսպասալար Ջաքարիայի մահվան թվականը՝ ՈԿԲ (1213): Վեր-
ծանվող բնագիրն իր կառուցվածքով հիշեցնում է Ջաքարիա և Իվանե եղբայրների մի այլ նշանա-
վոր արձանագրութիւնը Հաղարծնում, որը թեև անթվակիր, սակայն ստուգապես նույն ժամանակի
է: Երկու դեպքում էլ բնագրի առաջին մասը շարադրվում է երկու եղբայրների անունից և պատմում
նրանց ազատագրական արշավանքների, Հայոց երկիրը յանաւրիճաց ազատելու, վաղուց հետե
աւերեալ վանքերը վերանորոգելու մասին: Երկրորդ մասը Իվանեի անունից է. այստեղ խոս-
վում է Ջաքարիայի մահվան (յարժամ սիրեաց զնա օձ եւ օռ ինք տարաւ...) և նրա հիշատակը
հավերժացնելու մասին:

Հոգևոր հիերարխիայի բարձր աստիճանների ժառանգական իրավունքը հանրահայտ իրողու-
թիւն է միջին դարերում, և դրա ամենացայտուն օրինակը Անիի կամ Շիրակի եպիսկոպոսական
աթոռն է, որը մեկ դարից ավելի հաջորդաբար դազեցնում էին Պահլավունի իշխանական տան
հոգևոր հայրերը: Սակայն հոգևոր հիերարխիայի միջին աստիճանների, որպիսիք են առանձին
վանքերի առանջորդները, ժառանգական իրավունք սահմանող վկայութիւններ մեզ հայտնի չեն,
և ավարակ Իվանեի սրին հրամանագիրը հայր Եվագրին յազգե յազգ մինչև յաւիտեան, Մորո
ձորո վանքի առաջնորդ հաստատելու մասին այդօրինակ միակ վկայութիւնն է վիճաբանական հուշար-
ձաններում:

Առաջին շարքում թագաւորութեան Գիւարգէ կապակցութեան մեջ Գիւարգէ սեեռական հոլովածեր չպէտք է փորագրողի վրիպում համարել, որովհետեւ ի հանդող անունների սևռ. տրական հոլովների Է (=ե) հոլովակազմիչը օրինաչափ երեւոյթ է 10—14-րդ դարերի հայ վիմագրութեան մեջ և հաստատուում է բազմաթիւ օրինակներով: Գրաբարում այս իրողութիւնը չի դիտուում և նման դեպքերում սպասելի է եայ (Գիւարգեայ): 2-րդ շարքում հառց, անտեսվել է յ-ն, այսպիսի գրութիւնը սովորական է արձանագրութիւններում և արտացոլում է յ հնչյունի արտասանութեան և գրութեան վիճակը այդ շրջանում, ըստ այդմ, յ կարող էր որոշ դիրքերում գրվել, առանց արտասանվելու, իսկ այս դեպքում, ընդհակառակը, կարող էր չգրվել, բայց արասանվել:

5-րդ շարքում զերագլուցին բառը խոսակցական լեզվի ազդեցութեամբ փորագրվել է առանց ա հոդակապի: Գրաբարում և այլ վիմագրերում օրինաչափ է հոդակապով բարդութիւնը՝ ճրագլուցին (<ճրագլուցյց):

261. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, հյուսիսային խորանի թաղի վրա, քիվից վերև, 4-րդ դարերի վրա, 5 տող.

Կ Ա Մ Ա Ն Ա Յ Ե Ի Ո Ղ Ո Մ Ո Ի Թ Բ Թ Ե Ա Մ Ի Ն Գ Ի Ա Գ Ե
Ե Ա Ա Ի Բ Գ Ո Ի Բ Դ Ս Ա Ռ Ի Գ Ի Բ Ա Ջ Ա Տ Ռ Թ Ե Ի Թ Ա Գ
Մ Բ Ա Ծ Ա Ծ Ն Ի Ս Մ Մ Ա Ե Ն Յ Ո Վ Ա Կ Ի Ե Ի Ն Ա Ե Տ Ի Ն Զ
Ի Տ Ա Ի Ն Ա: Զ Ա Ջ Ծ Ա Ռ Զ Ա Դ Ա Ն Ո Վ Ի Ա Փ Ա Ն Է
Դ Ա Տ Ի Յ Ա Յ

ԿԱՄԱՆ ԱՅ ԵԻ ՈՂՈՄ ՈՒԹԲԹԱՄԻՆ ԹԱԳԱԻՈՐԻՆ ԳԻԱԻԳԵ, ԵՍ՝ ԱՄԻՐ ՔՈՒՐԻՍ
ԱՌԻ ԳԻՐ ԱՋԱՏՈՒԹԵՒԱՆ՝ Ի ԹԱԳԱԻՈՐԵՒՄԸ ԱԾԱԾՆԻՍ ՄՈՐՈ ՁՈՐՈ, ՀԱԻՐՆ ՅՈՎ
ՎԱՆԻՍԻ: ԵԻ ՆԱԵՏ ԻՆՁԻ ՏԱՐԻՆ :Ա: ԺԱՄ ՋԾԱՌՋԱՐԻԱՐՆ: ՈՎ ԽԱՓԱՆԵ՛, ԳԱՏԻ ՅԱՅ:

Լուսանկ. 91

262. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, հյուսիսային խորանի թաղի վրա, քիվից վերև, նախորդի շարունակութեան վրա, 6 տող.

Ա Ն Ո Ւ Ա Մ Բ Ա Ե Ն Ա Կ Ա Լ Ի Ն Ա Յ Ե Ս Գ Ի Ա Բ Գ Ի Բ Ա Գ Ա Ի
Ո Ա Յ Թ Ա Ե Տ Ո Ի Զ Մ Ո Ո Ձ Ո Ո Վ Ա Ն Ե Ս Կ Ա Ն Յ Ո Ա Ա Ի Ս
Ե Ի Ա Ա Ի Ա Ջ Ա Տ Ա Ե Ն Ա Յ Ն Ա Կ Ե : Ա Ի Բ Գ Ի Դ Ի Ն Կ Ո Գ
Յ Ո Ղ Ո Թ Բ Ո Ի Ն Ջ Ա Ղ Ա Ե Թ Ա Ն Ե Ն : Ո Մ Ե Ի Կ Ր Ա Ա Ա Յ Ս Կ Ա
Կ Ա Ռ Ա Կ Լ Ի Ն Ի Ա Յ Կ Ր Ա Ա Ի Ն Ե Կ Ա Կ Ա Ո Կ Ա Ս Տ Ա Տ Է Գ Ի Ր Ս
Ա Ն Ռ Ա Մ Բ Ն Ա Յ

ԱՆՈՒԱՄԲ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ՝ ԳԻԱԻԳԻ ԹԱԳԱԻՈՐԱՑ ԹԱԳԱԻՈՐԻ ԵՏՈՒ
ՋՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔՍ ՀԱԻՐՆ ՅՈՎԱՆԻՍԻՒՍ ԵՒ ԱՐԱՐԻ ԱՋԱՏ ՅԱՄԵՆԱՅՆ ՀԱՐԿԵ:
ԱՄԻՐ ՔՐԳԻՆ ՀՈԳԹՈՂՈՒԹԵԱՄԲ, ՈՐ ԻՆՁ ԱՂԱԻԹՔ ԱՐՆԵՆ: ՈՐ ՄԵՐ ՀՐԱՄԱՆ-
ԱՑՍ ՀԱԿԱՌԱԿ ԼԻՆԻ, ԱՅ ՀՐԱՄԱՆԻՆ Է ՀԱԿԱՌ: ՀԱՍՏԱՏ Է ԳԻՐՍԱՆՈՒԱՄԲՆ ԱՅ:

Լուսանկ. 92

Հրատ. Բարիուղարյանց, 312,

Գիտելիք. Համարյա նույն բովանդակութեան այս արտոնագրերը Մորո ձորո վանքի հնագույն հիշատակարաններն են: Թեև նրանք չեն թվագրված, սակայն ժամանակը որոշվում է նրանցում

հիշատակված անձերի ժամանակագրությունը: Հայտնի է, որ Վրաստանի Գեորգի Գ թագավորը գահակալել է 1156—1184 թթ. Այս նույն ժամանակներում էր գործում նաև Կայենի և Մահկանաբերդի իշխան Ամիր Քուրդ Արծրունին, Ջաքարիայի և Իվանեի մորեղբայրը, աթաբեկ ամիրսպասալար Մադուն Բ-ի մեծ պապը՝ Ամիր Քուրդը վիթխարի հեղինակություն ունեւր Վրաց արքունիքում, որի շնորհիվ Գեորգի Գ-ի ժամանակ հասել էր Տփլիսի ամիրապետի բարձր դիրքին:

Վերծանվող բնագրերից հայտնի է դառնում, որ Մորո ձորո վանքը XII դարի երկրորդ կեսերին հասնելով բարձր զարգացման, հանդիսանում էր Մահկանաբերդի իշխանների հնազույն և հոգևոր ու մշակութային նշանավոր կենտրոնը: Այդ է պատճառը, որ Ամիր Քուրդը իր հոգստութեամբ Գեորգի Գ-ից թագավորական հատուկ արտոնագիր (գիր ազատութեան) է բերում Մորո ձորո վանքին, որով թագաւորաց թագաւորը վանքն աղատում է յամենայն հարկէ և հանձնում հայր Յովանեսի առաջնորդութիւնը:

Երկրորդ արտոնագիրը շարադրված է թագաւորաց թագաւոր Գեորգիի անունից և հաղորդում է նույն գիր ազատութեանը: Պետք է ենթադրել, որ Ամիր Քուրդի արձանագրութիւնը ինչ-որ ժամանակով նախորդել է Գեորգի Գ-ի արտոնագրին, քանի որ տեղավորված է թաղի արևմտյան, ձախ կողմում, որտեղից ավելի հավանական է բնագրի սկիզբը, մինչդեռ Գեորգի Գ-ի արտոնագիրը փորագրված է նույն թաղի արևելյան՝ աջ կողմում, իբրև նախորդի շարունակություն:

Հավանական է, որ Ամիր Քուրդը Գեորգի Գ թագավորից ձեռք բերելով գիր ազատութիւնը, նախապես որոշել է այդ իրողութիւնը արձանագրել իր անունից (առի գիր ազատութեան) և հետո միայն նույնը կրկնել է վրաց թագաւորաց թագաւորի անունից, ըստ երևույթին նպատակ ունենալով արքայական հրովարտակի նշանակութիւն տալ այդ արտոնագրին:

Գիւարդէ անձնանվան սեռական հոլովածն է, որի մասին նշել ենք նախորդ բնագրերի մեկնութիւններում: Նույն անվան մեջ ու-ի փոխարեն աւ արտացոլում է բաղաձայնից առաջ աւ երկբարձաւի պարզումը օ-ի և որոշ դեպքերում սրա նույնանալը ու-ի հետ:

3—4-րդ շարքերում Ամիր Քուրդին հոգստութեամբ, պետք է հասկանալ՝ միջնորդութեամբ, ընդառաջելով նրա ցանկութեանը:

263. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, գլխավոր խորանի թաղակապի մասում, քիվից վերև, երկու քարի վրա, 7 տող.

ԻՅԱՆՈՒՆ ԱՅԵՍՅՈՎԱՆԷ ՍՄԻԱՅԲԱՆԷ
ՑԱՅԱԾԱԾՆԻՍԵԻՎԱՅՐՍ ԳՐԻԳՈՒԵԻԱՅԼ
ՄԻԱԲԱՔՍԵՏՈՒՆԻՆՁ:Է:ԱԱՄՁ.ԷԿԵ
ՂԵՑԻՍԻՆԱՄԱՐԴԻԱ:ՁՅՈՎԱՆՈՒՄԱՆ
ԵԻԴ:ԱԻՐՎԵՐԻՐԱՅԼ:Գ:Ի Ն ՁԵԻԲ:ԱՄ
ՈՒՍՆՈՅԻՄՈՅՈՐԻԱՓԱ ՆԵՄԵՐՄԵՂԱ
ՑՆՊԱՐՄԱԿԱՆԷԿԱՄԱԻՔԻՆԱԻ ՀՆԻՅԱՅ

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՅՈՎԱՆԷՍ ՄԻԱՑԲԱՆԵԹԱՅ ԱՄԱԾՆԻՍ, ԵԻ ՀԱՅՐՍ ԳՐԻԳՈՐ ԵԻ ԱՅԼ՝ ՄԻԱԲԱՔՍԵՏ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Ե ԺԱՄ ՁԵԿԵԹԵՑԻՍ Ի ՆԱՒԱՍԱՐԳԻ՝ :Ա: ՁՅՈՎԱՆՈՒՍԱԻՆԵԻ :Դ: ՍԻՐ՝ ՀԵՏ ԻԻՐ: ԱՅԼ :Գ: ԻՆՁ, ԵԻ :Բ: ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՄԵԴԱՅՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ՝ ՅԱՅ

Գիտելիք. Արձանագրության ժամանակը որոշվում է Դրեգորիսի առաջնորդության տարիներով (1197—1213):

3-րդ շարքում ետուն ինձ Ե ժամ զեկեղեցիս, ակնհայտ է փորագրողի սխալը, զ նախդիրի փոխարեն պետք է լիներ յ: Նույն բառի մեջ Ե-ի դիմաց գրված է Կ: Այս գրերի, ուրեմն և հնչյունների շվոթումը, որ սովորական է X—XIV դարերի վիմագրության մեջ, ցույց է տալիս, որ սրանք որոշ դիրքերում նույնացել էին և այլևս տարբեր հնչյուններ չէին արտահայտում, ինչպես այդ դիտվում էր հին գրական հայերենում: 4-րդ շարքում՝ :Ա: զՅովանու տունին տեղի է ունեցել վերը նշված սխալը՝ ղ նախդիրը անհարկի է փորագրված:

4—6-րդ շարքերում նվիրատուին խոստացած 5 պատարագներից մեկը պետք է կատարվի Յովանու տունին, չորսը՝ հետ իւր, դրանից հետո: Այլ :Գ: ինձ եւ :Բ: ամուսնոյ իմոյ, այստեղ այլ նշանակում է՝ նաև, բացի գրանից. քանի որ պատարագների թիվը արդեն մեկ անգամ բաժանված է ըստ նրանց կատարման ժամանակի, ուստի այստեղ նոր՝ ըստ պատկանելիության բաժանումից առաջ դրված է այլ շաղկապը:

264. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, գլխավոր խորանի հարավային պատին, մի դեղնավուն քարի վրա, կիսաեղծ, 7 տող,

ԵՍԱԲՈՒՂԱՄՐԵԻ...
ԵՂԲԱՅՐՍԳՐԻԳՐՄ...3
ԲԱՆԵՑԱՔ ԱԾԱԾՆՍՍԻ
ՆՈՔԱՅԵՄ ՈՒՆԻՆՁ...ԱԻ
ԲԶԱՄՆՈՐԿԻՐԱԿԵ...Վ
ԽԱՓԱՆ ԷԻՄՄԵՂ...
ՊԱՐՄԱԿԱՆԷ

ԵՄ՝ ԱՔՈՒՂԱՄՐ ԵԻ ԴԻՄԻԵՂԱՑԱՑՐՍ
ԳՐԻԳՈՐ ՄԻՍԱԹԲԱՆԵՑԱՔ ԱԾԱԾ-
ՆԻՒՍ ԵԻՆՈՔԱՑ ԵՏՈՒՆ ԻՆՁ... ԱԻՐ
ԺԱՄ ՆՈՐ ԿԻՐԱԿԵՂՆ: ՈՂՎԽԱՓԱՆԷ,
ԻՄ ՄԵՂԱՑՆԻՂ ՊԱՐՍԱԿԱՆ Է:

Լուսանկ. 94

Գիտելիք. Արձանագրված քարի աջ անկյունը շարդվել է, որի հետևանքով տողավերջում 3—4 գրեր չեն կարդացվում:

2—4-րդ շարքերում միայնացեցաք. նոքայ բառերում յ-ն ավելադրություն է, որ հաճախ է հանդիպում X—XIV դարերի վիմական գրագրերում և ձեռագրերի հիշատակարաններում: Ձեռք չուղղում, քանի որ արդ

երևույթը արտացոլում է յ-ի ուղղագրության վիճակն այդ դարերում:

4-րդ շարքում պատարագների քանակը հնարավոր չէ վերականգնել, որովհետև այդ մասը շարդված է:

265. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, հյուսիսային խորանի կամարի վրա, կիսաեղծ, 6 տող.

... ԴԱՆ ՄԻ ԱՅԲ ԱՆ ԵՑԱ ԱԾԱԾԻՍԻ:
ԴԱԿԵ ԿՆ ՈՎԵՄ Ա ԲԱՆԲՍԻ ԴԱԹԻԵԻ Ա
ԿՈՐ ԱՍ ԱՆԻՆԷՄ
ԶԱՄԳՐԵՑԻՆԻՆՁ
ՈՎԽԱՓԵԴԱՍ
ԻՅԱ +

ԵՍ ԱՊՈՒԱՆ ՄԻԱՅԲԱՆԵՑԱ ԱԾԱԾԻՆԻՍ :Ի:ԴԱՀԵԿՆՈՎ: ՄԻԱԲԱՆՔՍ Ի ԴԱԻԹԻ ԵՒ
ՅԱԿՈՐԱ ՏԱԻՆԻՆ :Ա:ԺԱՄ ԳՐԵՑԻՆ ԻՆՁ: ՈՎ ԽԱՓԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

Լուսակ. 95

Գիտելիք. Առաջին շարքում նվիրատուի անունը դժվար է վերականգնվում, առդասկղբին շարդ-
ված է 2—3 տառատեղ, հաշված նաև հավանական ԵԱՐ, մնում է պակաս միայն մի գիր, որը և
համարում ենք ա-ն: Այսպիսով, ստացվում է [Ա]ոան, հազվադեպ անձնանուն հայ իրականության
մեջ:

2-րդ շարքում դառնեցան բառի վերջնթեր ա-ն գործիական հոլովում շեշտազրկվելով սղվել է՝
դառնեցնով: Ա կալուն ձայնավորի հնչյունափոխությունը հին հայերենում չէր դիտվում, ուստի այս
երևույթը բարրառալին հնչման ազդեցությունը պետք է բացատրել, պայմանով, եթե բացառվի
փորագրողի սխալը:

5-րդ շարքում խափե. դժվարանում ենք խափանել բալի դիմավոր ձևը համարել՝ ով խա-
փանե, քանի որ այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու է բաց թողնված այն կապակ-
ցությունը: Ավելի հավանական ենք գտնում խափե համարել խաբել բալի դիմավոր ձևը, որտեղ
պատմական հնչյունափոխությունը ձայնեղ ք-ն շնչեղ խուլ փ է դարձել:

266. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, գլխավոր խորանի թաղակապ հատվածի
հյուսիսային մասում, քիվից վերև, 9 տող.

:Թ:ՈԿՁ
ԵՍՄԻԹԱՐԵԻԱՄ
ՈԻՍԻՆԻՄՄԻ ԱԲԱՆ
ԵՑԱՔԵԿԵՂԵՑՈՅԱԵԻԵ
ՄԻՆՏԵՉՅԱՄ ԱԶԱԶ
ՆԻՆԲ:ՄԻՆԻՆ ՁԱՀԱ
ԲԿԵԻՈՐԻՆՈՐԻ ԱՓԱՆ
Է ԻՄՆԵԱՅՆ ՊԱՐՏԱԿ ԱՆ
ԳՐԱԶԵԻ ԽԱՂԻՆ ԱՐԶ ԱԹԻ

ԼԻ ԹՆԻՆ: ՈԿՁ (1217):| ԵՍ՝
ՄԻԹԱՐ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԻԱԲԱ-
ՆԵՑԱՔ ԵԿԵՂԵՑՈՅԱ: ԵՒ ԵՍՈՒՆ ՄԵՁ
ԺԱՄ ԱԾԱԾԻՆԻՆ :Բ:ՄԻՆ ԻՆՁ, :Ա:
ՀԱՐԿԵԻՈՐԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵ-
ՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆԷ: ԳՐԱԾ Է Ի
ԽԱՂԻՆ ԱՐԾԱԹԻ:

Լուսակ. 96

Հրատ. Բարխուդարյանց, 342:

Գիտելիք. Արձանագրությունը փորագրված է միակտոր սրբատաշ քարի վրա, պահպանվել է
անհղծ, վերծանվում է անսխալ: Տարակարծության տեղիք է տալիս վերջին տողը, որը ինքնուրույն,
անկախ նախադասություն է: Այս շարքի բոլոր տառաձևերը նորից ստուգելով տեղում և լուսանկարի
վրա, համոզվեցինք, որ բնագիրը բացարձակ ճիշտ է արտագրված: Արդ, ինչպես հասկանալ գրած է
ի խաղին արծաթի: Այս արձանագրության միակ հրատարակիչ Մ. Բարխուդարյանցը հատվածը կար-
դացել է գրած աղին արծաթագին, որ ոչ միայն հեռու է իրականից, այլև չի արտահայտում
որևէ մտավոր իմաստ:

Հարցը բարդանում է նաև նրանով, որ գրած է ի խաղին արծաթի կապակցությունը անսովոր
է սովյալ ժամանակի համար նաև իր քերականական կառուցվածքով. ստորոգյալը արտահայտված է
հարակառար դերբայով, որ հազվադեպ է այս դարերի վիմագրության մեջ: Կարելի էր ի խաղին
արծաթի համարել ակնարկ ժամանակի մասին, եթե նվերները դրամական լինեին (դահեկան, սպի-
տակ, դուկատ) և նվիրատուները հարկ համարեին հատկապես նշելու այդ գրամների՝ սովյալ ժա-
մանակահատվածում ունեցած արժեքնի մասին: Սակայն նվերների մասին բնագրում ոչ մի ակնարկ
չկա, իսկ արձանագրությունն էլ հենց սկզբից թվագրված է՝ ՈԿՁ (1217), ուստի անհավանական
է, որ նրա հեղինակները անհրաժեշտություն զգալին այս ոչ մեծ նվիրագրի վերջում նորից շեշտելու
ժամանակը, այն էլ առանձին նախադասությամբ: Ավելի ուշագիտ քննելով արձանագրության տա-
ռաձևերը, նկատում ենք, որ խաղին տառաշարքում ղ շղագիրը այնքան էլ նման չէ այս բնագրի
մյուս դ-երին և հնարավոր է այն կարդալ նաև չ կամ շ: Չ կարդալու դեպքում քննվող նախադա-
սությունը կդառնա՝ գրած է ի խաղին արծաթի, որ մենք ամենից ավելի հավանական ենք համարում,

ենթադրելով, որ փորագրողը կարող էր չ գիրը գծել Ղ-ի նման: Այստեղից, բնագրի հեղինակներն այս տողն ավելացնելով ուղում են ընդգծել, որ նույն նվիրագիրը գրված է նաև վանքի սրբու-
թյուններից մեկի՝ արծաթի խաչի վրա:

Նվիրատվության և հատուցման գործարքը հավերժական ու անխախտ դարձնելու նպատակով կատարվող նման երկրորդումը անսովոր չէ հալ վիմագրության մեջ:

267. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուսա, եկեղեցու թմբուկի վրա, հյուսիսային լու-
սամուտի քանդակագործ պսակից հա-
րավ, շղագիր տառերով, 2 տող.

ԲՍ ԱԾ ՈՂՈՐՄԻ

յՈՏԱՆԱ

ՔՍ ԱԾ, ՈՂՈՐՄԻԹՈՂԱՆԱ:

Գիտելիք. Ամենայն հավանականությամբ այս հիշատակագրությունը վերաբերում է Մորո ձորո վանքի մեզ հայտնի առաջին առաջնորդ Յոհաննիսին: Ծիշտ է բնագիրը փորագրված է թմբուկի ներսի մակերեսին, աչքի չընկնող, անմատչելի մասում, որտեղ սովորաբար իրենց անուններն էին թողնում շենքը կառուցող ճարտարապետ-վարպետները, սակայն հաջորդ արձանագրությունը, որը նույնպես փորագրված է թմբուկի ներսում, նման տառաձևերով և անվիճելիորեն վանքի առաջնորդ Գրիգորիսին է վերաբերում, հաստատում է մեր այն միտքը, որ Յոհաննեսը ոչ թե շինարար վարպետն է, այլ վանքի վանահայրը:

Ինչպես նկատել ենք, հուշարձանի հնագույն արձանագրություններում Վրաց Գեորգի Գ թագավորը հատուկ արտոնագրով Մորո ձորո վանքն ազատում է հարկերից և հանձնում հալը Յոհաննեսի տնօրինությանը: Վանքի վիմագրության տվյալներից դատելով, նրա առաջնորդությունը շարունակվել է մինչև 1197 թ., երբ նրա փոխարեն առաջնորդ է հիշվում Գրիգորիսը:

268. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, գմբեթի թմբուկի վրա, հարավային լու-
սամուտից արևելք, շղագիր տառերով, 3 տող.

ԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՐԳ
ՈՐԻՍԻ ԵՒ ԻՐ Ծ

ՆՈՂԱԿՆ

ԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՐԻԻԳՈՐԻՍԻ ԵՒ ԻՐ
ԾՄՆՈՂԱՑՆ:

Գիտելիք. Գրիգորիսը կամ Գրիգորը առաջին անգամ Մորո ձորո վանքի առաջնորդ է հիշվում Նանալի 1197 թ. արձանագրության մեջ: Հավանաբար այդ թվին կամ դրանից ոչ շատ առաջ նա փոխարինել է վանքի՝ մեզ հայտնի առաջին վանահայր Յոհաննեսին: Հետագա բնագրերը, որոնցում փորագրված է Գրիգորիսի անունը անթվագիր են, ուստի դժվար է որոշել թե մինչև երբ է շարունակվել նրա առաջնորդությունը: Հայտնի է միայն, որ աթաբեկ Իվանի 1213 թ. արձանագրության մեջ արդեն վանքի առաջնորդ է հաստատվում հալը Եվազը: Իվանին Աստվածածին եկեղեցին նորոգել է Եվազի առաջնորդության տարիներին, ուստի պետք է ենթադրել, որ Եվազը Գրիգորիսին փոխարինել է 1213 թվականից մեկ կամ երկու տարի առաջ: Բնագրում Գրիգորիսի անունը փորագրված է Գրգորիսի ձևով: Մենք վերականգնում ենք ուղիղ ձևը, հիմք ընդունելով № 259 արձանագրությունը, որը գրված լինելով հենց իր՝ Գրիգորիսի կողմից, ավելի հավաստի է: Մյուս կողմից, Գրգորիսի արտացոլում է անձնանվան բարբառային արտասանությունը, եթե բացառվի պատահական վրիպման հնարավորությունը:

269. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, գլխավոր խորանի թաղի վրա, կենտրոնական մասում, քիվից վերև, 5 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՅԵՍՍԱՍՆԱՅՍՄԻ
 ՁՄՈՅ ԱԾԱՆՍԵՒՅԱՅ
 ԻՆՁՏԱՆ : Բ: ՁԱՄՁՎԱԴԴ
 Ձ:Ա:ԱՐՆ ԻՆՁ:Ա:Ծ ՈՒ
 ԲՄԱԿԱ ՆԵ

ԱՅԲԱՆԵՅԱՅԻՄՄԴԱԻՔ ՍՄՈՅ
 ԲՍԳՐԻԳՄ ԵԻԱՅԼՄԻԱՅԲԱ ՆԲՍԵՄՈՒՆ
 ՅՎԱԻՆ ՇԱ ԲԱՁՆԱՐՆԵԻ ՁԿԻՐԱԿԵՆ
 ՇԿԱՆ:ՈՎԻ ԱՓԱՆԵՄԵՐՄ ԵՂԱՑՆՊԱ
 ԵԻԿԱՍԱՄԻՉ ԲԵԱՐՅՆԻՆ ՅԱՅ

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՍԱՍՆԱՅՍ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՅ ԻՄ ՈՐԴԱԻՔՍ ՄՈՐՈՑՁՈՐՈՑ ԱԾԱԾ-
 ՆԻՍ, ԵԻ ՀԱՅՐՍ ԳՐԻԳՈՐ ԵԻ ԱՅԼ ՄԻԱՅԲԱՆՔՍ ԵՏՈՒՆԻՆՁ ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ՝ Ձ-
 ՎԱՐԴԱՅՎԱՐԻՆ ՇԱԲԱԹՆ ԱԻՐՆ ԵԻ ՁԿԻՐԱԿԵՆ, Ձ:Ա: ԱԻՐՆ ԻՆՁ, :Ա: ՇՈՒՇԿԱՆ:
 ՈՎ ԽԱՓԱՆԷ, ՄԵՐ ՍԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է, ԵԻ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Բարխուդարյանց, 342,
 Լուսաճկ. 97

Գիտելիք. Թեև արձանագրությունն անթվական է, նրա ժամանակը որոշվում է վանահայր Գրիգորիսի տարիներով՝ 1197—1213 թթ.: Ուրեմն նվիրատուի անունը՝ Սասնայ այստեղ վկայված է առաջին անգամ: Առաջին շարքում որդավքս փոխանակ կանոնավոր որդավքս չենք ուղղում, համարելով տեղական խոսվածքների արտահայտություն (աւ=օ=ո փոփոխությունն բաղաձայնին նախորդող դիրքում):

270. ՄՈՐՈ ՁՈՐՈ ՎԱՆՔ. ներքուստ, եկեղեցու արևմտյան խաչթևի ներքևի դեպի մուտքը նայող մասում. կիսաեղծ, 7 տող.

ԱՆՇԱՅՄԻ
 ՆԵՑԱՅԱԾԱԾՆԻ
 ՌՆԻՆ Ձ:Բ:ԲԱՐ
 ... ԻՆՁ:Ա:ԾԻՐ
 ԻՈՎՁԱԻՆԵՄԵ
 ԱՑՆՊԱՐՄԱԿ
 ԱՆ, Է

ԴԵՍ՝ ԵՐԱՆՇԱՀ ՄԻՐԱՄԱՆԵՑԱՅ
 ԱՆՍԱՆԻՄՍԻՆ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Բ: ՔԱ-
 ՌԻՍՈՒՆՔ՝ :Ա: ԻՆՁ, :Ա: ԾԻՐՄԱՆ-
 ԻՆ: ՈՎ, ՁԱՌՆԷ, ՄԵՐ ՄԵՂԱՑՆ
 ՊԱՐՏԱԿԱՆ Է:

Գիտելիք. Արձանագրված քարի ձախակողմյան մասը, տողերի սկիզբը հողմահարվել, քայքայվել է, ուստի բնագիրը հնարավոր է վերականգնել միայն դատողության ուժով:

Առաջին շարքում նվիրատուի անունը վերապահորեն վերականգնում ենք Նրանջան, առգասկզբի շարքված մասի վրա պետք է լինեին 3—4 տառ, որոնցից երկուսը՝ ես:

Նրանջան անձնանունը Հր. Աճառյանը ծագած է համարում պարս. Իրանջան ձևից, միջնադարում գործածական է եղել իրանական նախնադուլին Նրան, էրան ձևը, ըստ այդմ էլ անձնանունը

ավանդված է Երանշահ, Երանշայ, Էրանշահ ձևերով: Նույն անվան Ռանշահ փոփոխակը (նախահունչ ե-ի անկում) հանդիպում է Մակարավանքի գլխավոր եկեղեցու մի արձանագրության մեջ:

Մեր բնագրի Երանշահը. եթե այն ստույգ է վերականգնված, այդ անձնանվան հնագույն հիշատակությունն է և վերաբերում է XIII դարի առաջին տասնամյակին:

4-5-րդ շարքերում Միրանին անունը նույնպես վերականգնում ենք ոչ հաստատորեն: Տողավերջում պարզ երևում են Միր գրերը, իսկ հաջորդ տողի սկզբում պակասում է 2—3 տառատեղ, որին հետևում է ին վերջավորությունը: Եթե մեր վերծանությունը ստույգ է, ապա այս նվիրագրում առկա է Միրան իգական անվան միակ վկայությունը (XIII դար):

Ա Յ Գ Ե Հ Ո Վ Ի Տ

ՍՐՎԵՂԻ ՎԱՆՔ

Իջևանից 30 կմ արևելք անտառապատ լեռնալանջերին տեղավորված է Ալգեհովիտ գյուղը, որի մասին մատենագրական տեղեկություններ չկան: Սակայն գյուղում և նրա մերձակալքում դեռևս կանգուն են մի շարք հուշարձաններ, որոնք վկայում են, որ հնում այստեղ եղել են մի քանի բնակավայրեր, իսկ գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառի բացատում կանգնած Սրվեղի վանքը Կայնի գավառի հոգևոր ու մշակութային նշանավոր կենտրոնների շարքին է դասվել:

Համառոտակի նկարագրենք Ալգեհովիտ գյուղի տարածքի և շրջակալքում պահպանված առավել ուշագրավ կառուցվածքները:

ա. Եկեղեցի Մահմուդ եղծի. գտնվում է գյուղի արևելյան կողմում, մոտ 2 կմ հեռու, անտառի մեջ, Մահմուդի յալ սարալանջում: Փոքրիկ մատուռ է, կառուցված լեռնաքարի մանր բեկորներով: Ունի թաղակապ ծածկ, որը գոտկում են հյուսիսային և հարավային պատերից բարձրացող սրբատաշ որմնասյուները: Հուշարձանի կառուցման ժամանակն անհայտ է:

բ. Կոտրած եղծին կառուցված է գյուղից 2 կմ հարավ, նույնանուն հանդամասում. փոքրիկ մատուռ է, կիսով չափ ավերված: Պահպանվել են մատուռի պատերը՝ 2—3 մ բարձրությամբ: Հուշարձանի շուրջը տարածվում է գերեզմանոցը՝ բնական կամ կիսամշակ տապանաքարերով: Կառուցման ժամանակն անհայտ է:

գ. Եկեղեցի Վարդխանատի խաչ. գտնվում է գյուղից մեկ կմ հարավ-արևելք, մի բլրի գագաթին: Փոքրիկ մատուռ է (5×4 մ), կառուցված լեռնաքարի մանր բեկորներով, թաղակապ է եղել: Խորանի փոքրիկ բեմի վրա իբրև վիմաքար է դրված մի քանդակազարդ մեծ խաչքար, որը ակնհայտորեն XII—XIII դարերի է և այստեղ է բերվել այլ տեղից: Վարդխանատ է կոչվում (խմհատ = խամ հատել, անտառում մշակելի հողակտոր պատրաստել) այն բացատի անունով, որի մերձակալքում կառուցվել է եկեղեցին:

դ. Մատուռ ս. Սարգիս. կառուցված է մի բարձունքի վրա, գյուղի հյուսիսային կողմում: Շենքը փոքր չափերի է (3×3 մ), շինված սովորական լեռնաքարի մանր բեկորներով: Մնացել են միայն մատուռի հիմնապատերը:

ե. Դիտակայան-պահակատունը գտնվում է գյուղից արևմուտք, Աղստե գետի աջ ափին կոլտնտեսության չորանոցների մոտ: Մահմանապահային դիտակայան է, կառուցված մասամբ գետաքարի մանր կտորներով, մասամբ թրծած աղյուսով՝ թուլ կրաշաղախով: Դիտանոցը քառահարկ է, արտաքուստ գլանաձև աշտարակ է հիշեցնում, ներքուստ առաջին երեք հարկերը քառակուսի են, վերջինը՝ նորից գլանաձև: Մուտքի միակ դուռը ստորին հարկից է, արևմտյան կողմից, մյուս հարկերը կարելի է բարձրանալ պատերի վրայով անցնող աստիճաններով: Բոլոր հարկերի պատերի մեջ էլ ներքուստ կան մի քանի կամարակապ մեծ խորշեր, որոնց վրա նկատվում են փոքրիկ թեք անցքեր՝ հրազենների համար, ինչպես նաև լուսամուտաձև նեղ անցքեր՝ դիտակելու համար:

զ. Արվեղի վանք հուշարձանախումբը տեղավորված է գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառի մեջ, մի սարահարթի վրա, խաչի տակ դաշտամասում: Գլխավոր եկեղեցին գմբեթավոր դահ-


լիճ է, կառուցված թրծած աղյուսով, միայն պատերի ստորին շարքերը, մոտ 1 մ բարձրությամբ շարված են մուղ վարդաղուլն անդեզիտի սրբատաշ քարերով: Եկեղեցին անսյուն է, երկու զույգ որմնասյուներն իրար միանալով, սլաքաձև կամարներով իրենց վրա են պահում երկարավուն, 12 նիստով գմբեթը՝ սրածալր վեղարով: Եկեղեցու ներսում հյուսիսային պատի վրա կառուցված է կամարավոր մի խորշ՝ մկրտութան ավազանով. վերջինս փորված է ձագարաձև՝ ստորին մասում ջուրը դուրս հոսելու հատուկ անցքով: Հուշարձանը ժամանակի ընթացքում ենթարկվել է մի շարք վերանորոգումների, որոնց հետքերը նկատելի են նրա պատերի վրա: Ամբողջովին վերանորոգված են արևելյան ճակատի երկու անկյունները, բեմի կենտրոնական մասը, արևմտյան դռան շրջանակը և անկյունների հատվածները, մասնակի վերանորոգման է ենթարկվել նաև գմբեթը: Այդ նորոգումների ընթացքում պատերի շարվածքի մեջ դրվել են բազմաթիվ բեկորներ և քանդակագործ խաչքարերի կտորներ, հաճախ շրջված վիճակով և արձանագրված: Հյուսիսային պատի շարվածքի մեջ դրված է մի արձանագիր բեկոր, ըստ երևույթին դռան շրջանակի ձևավորված հատված, որը կրաշագանակ է ծածկված: Տարակույս չի կարող լինել, որ այդ ձևավոր և արձանագրված բեկորները, որոնք չեն մերված աղյուսաշեն եկեղեցու ընդհանուր նկարագրին, բերված են այլ հուշարձանից, կամ նույն տեղում եղած ավելի հին կառուցվածքի ավերակներից:

Դիսպոզիտ եկեղեցուց ոչ այնքան հեռու, XIX դարում կառուցվել է մի այլ եկեղեցի՝ Աստվածածին անունով: Կառուցել է Ուզունթալա գյուղի համալնքը՝ քահանա տեր Հովհաննեսի առաջնորդությամբ՝ 1889 թ.: Այդ մասին արձանագրված է մկրտութան ավազանի մոտ գտնվող քարի վրա:

Սրվեղի վանքի շրջակայքում նկատվում են բազմաթիվ շենքերի մնացորդներ, հիմնապատերի և քարակույտերի ձևով: Կան նաև բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր: Վանքից հարավ և հյուսիս ընդարձակ տարածություն են գրավում պատմական դուռատեղերը: Վանքից ոչ հեռու պահպանվել են զանազան սպասարկու շենքերի և մի ձիթհանքի հիմնապատեր: Այստեղ պահպանված շրատար կավե խողովակներն ապացույց են, որ ջուրը վանք է բերվել մի քանի կիլոմետր հեռու՝ բարձր սարից: Սրվեղի վանքն ունեցել է բարձր պարսպապատեր, որոնց հիմնապատերն են մնացել:

Սրվեղի վանքի գլխավոր եկեղեցու հիմնադրման ժամանակի մասին որոշակի քիչ բան կարելի է ասել, քանի որ պատմական հիշատակարաններ չկան, իսկ հուշարձանի վիճակը թույլ է տալիս շատ աղքատ լինելով, ոչնչով չի նպաստում այդ խնդրի պարզելուն: Նկարագրական գրականության մեջ, ինչպես նաև հուշարձանների պահպանության մարմինների թղթերում ստույգ որոշված է Սրվեղի վանքի ս. Նշան եկեղեցու կառուցման թվականը՝ ՈԱ.—1152 թ, որը, սակայն, ինչպես կտեսնենք, ոչ մի առնչություն չունի շենքի հիմնադրման ժամանակի հետ և արդյունք է պահպանված տառաշարքերի սխալ վերծանության:

271. ԱՅԳԵՀՈՎԻՏ. ՍՐՎԵՂԻ ՎԱՆՔ. ներքուստ, հյուսիսային պատի մեջ ազուցված մի ձևավոր մշակված քիվի քարի վրա, շրջված դիրքով, մկրտութան ավազանից վերև, 2 տող.



ՍԲ ՅՈՎՂԱՆՆԻՍՄ| ԱՐՏԱԻԱԶ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍՄ| ԶԵՌԱՄԲ ՅՈՎԱՆՆԻՍՄ|:

Հրատ. Բարխուդարյանց, 340, Բարխուդարյան Ս., ՄՀՃՔ, 42, Լուսանկ. 99

Գիտելիք. Դժվար է ասել, թե աղյուսաշեն հուշարձանի որ մասում է նախապես դրված եղել բարդ մշակում ունեցող այս բեկորը: Կասկածից վեր է, որ այն այժմյան տեղում չի եղել: Ամենայն հավանականությամբ, մշակված բեկորը եկեղեցու մուտքի շրջանակի մի հատվածն է կազմել, որի վրա էլ փորագրվել է շինարարական այս արձանագրությունը: Միայն լրացուցիչ ճարտարապետական-գեղարվեստական վերլուծությունը կարող է պարզել, թե որն է այս բեկորի սկզբնական տեղը. արդյոք այս հուշարձանի մասն է եղել, թե բերված է մի այլ կառուցվածքից: Բնագրի առաջին հրատարակիչ Մ. Բարխուդարյանցը այն վերծանել է՝ ԹԻՒ ՈԱ ԵՍ Արաուազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննեսի: Հետագա ուսումնասիրողները, հիմք ընդունելով խաթարված բնագրի այս վերծանությունը, Սրվեղի վանքի գլխավոր եկեղեցին համարել են հայկական ճարտարապետության աղյուսաշեն սակավաթիվ հուշարձաններից հնագույնը՝ կառուցված Յովհաննես ճարտարապետի ձեռքով ՈԱ—1152 թ.: Իրականում, հուշարձանի, ինչպես և լուսանկարի վրա այդ բեկորի տառաշարքերը փոքր-ինչ այլ կերպ են կարդացվում, առաջին տողում, բեկորի ավելի լայն, հարթ մակերեսին խոշոր գրերով փորագրված է. ՄՔ Յով[անն]ես, իսկ երկրորդ տողում, բեկորի նեղ, ձևավոր մակերեսին, ավելի մանր գրերով... Արաուազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննեսի[ի]: Ինչպես տեսնում ենք, այստեղ տարբերիվ չկա, և Մ. Բարխուդարյանցի ԹԻՒ ՈԱ թվագիրը գալիս է ՄՔ Յով[անն]ես անվան սխալ վերծանությունից, ըստ այսմ, ՄՔ գրերը վերծանվել են ԹԻՒ, իսկ ՅՈՎ գրերը դարձել են ՈԱ թվագիրը: Բացի դրանից, բնագրի սկզբում չկա և չէր կարող լինել ԵՍ զերանունը, քանի որ նրա փոխարեն սպասելի էր՝ մեք:

Այս արձանագրությանը վերջերս անդրադարձել է նաև Ս. Բարխուդարյանը՝ Յովհաննես ճարտարապետի ժամանակը որոշելու կապակցությամբ: Այստեղ նույնությամբ մեջ բերելով Մ. Բարխուդարյանցի հիշյալ վերծանությունը, հեղինակը հուշարձանի կառուցման ժամանակը համարում է նույն ՈԱ—1152 թ., և ներկայիս հուշարձանը անվերապահորեն վերագրում Յովհաննեսին: Ընդամենն, անբացատրելի է մնում, թե ինչու եկեղեցու կառուցման մասին շինարարական այս արձանագրությունը փորագրված է մի ձևավոր բեկորի վրա, որը ագուցված է հուշարձանի հյուսիսային պատի մեջ, այն էլ շրջված վիճակով:

Սույն մեր վերծանությունից հետո բաց է մնում ոչ միայն Սրվեղի հուշարձանի կառուցման ժամանակը, այլև այն պարագան, թե որ հուշարձանին է պատկանում շրջված վիճակով պատի մեջ ագուցված ձևավոր քարաբեկորը, կամ որն է Յովհաննես վարպետի կառուցած եկեղեցին:

272. ԱՅԳԵՆՈՎԻՏ. ՍՐՎԵՂԻ ՎԱՆՔ. արտաքսուստ, արևելյան պատի հյուսիսային անկյան մոտ, մի կարմրավուն ըազարո քարի վրա, կիսաեղծ, 6 տող.

Ի ՈՏ: ԹՈՒՒ
 ԵՍԱՆԱԺԱՆ
 ՈՐԴՍԲՈՒԽՏԻՍ
 ԲԱԵԻԱՍՈՒ
 ԱԻՐՆ: ԱՂԱԶ
 ԵՐԿՐՊԱԳԷՔՅ

Ի ՈՏ (1201) ԹՈՒԻՐՆ . . . | ԵՍ՝ ԱՆԱՐ-
 ԺԱՆ . . . | ԱՌԱԶՆ՝|ՈՐԴ՝ ՄՔ ՈՒԽՏԻՍ...
 ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹ ԻԻՆ՝ . . . | ԱԻՐՆ: |
 ԱՂԱԶ՝ԵՄ՝ . . . : |ՈՐՔ՝| ԵՐԿՐՊԱԳԷՔ
 Յ՝ԻՇԵՑԷՔ՝ . . .

Հրատ. Բարխուդարյանց, 340,
 Լուսակ. 100

Գիտելիք. Անտարակույս է, որ բեկորն այս վիճակով բերվել է որևէ տեղից և ագուցվել եկեղեցու աղյուսաշար պատի մեջ, հավանաբար վերանորոգումների ընթացքում: Արձանագրված քարը շարված է երկու մասի և այստեղ պահպանվել է նրա ձախ հատվածը, իսկ աջ մասը, որտեղ եղել է բնագրի շարունակությունը, անհետացել է: Այս և եկեղեցու շարվածքում տեղագրված մյուս մշակ-

ված քարերի բեկորները վկայում են, որ Սրվեղի վանքի մոտակայքում եղել է ավելի հին, քարակերտ մի հուշարձան, որը ժամանակի ընթացքում ինչ-ինչ պատճառներով ավերվել է, նրա բեկորները օգտագործվել են այժմյան աղյուսաշեն եկեղեցու շարվածքում:

2-րդ տողում ես անարժան, Բարխուդարյանցը կարդացել է ես Անանիա, 3-րդ տողում՝ որդ սբ ուխտիս՝ որդի սուրբ ուխտիս:

273. ԱՅԳԵՀՈՎԻՏ. ՍՐՎԵՂԻ վանք, եկեղեցու բեմի վիմաքարի ճակատին, կիսահղձ, 4 տող.

ԿԱՆԳՆԵՑԱԻ ՍԲ

ՆՇԱՆՍ ԲԱ

ՐԵԽԱԻՍՈՒ

ԹԵ ՈԱՏԻ...

ԿԱՆԳՆԵՑԱԻ ՍԲՆՇԱՆՍ ԲԱՐԵՆԱԻՍՈՒԹԵԼԱՆ, ՈԱՏԻ . . .

Հրատ. Բարխուդարյանց, 340:

Գիտելիք. Հրատարակիչը 3—5-րդ շարքերում վերծանել է Բարխուդարյանցից Ո ամի և այսանց դիտել Ո (1151 թ) տարեթիվ: Դժվար է համաձայնել այս վերծանության հետ, թեև պահպանված տառաձևերը մոտավորապես նույն գծագիրն ունեն: Մեր համոզմամբ բարխուդարյանցից բառից հետո պետք է լինի ոչ թե խաչքարի կանգնեցման տարեթիվը, այլ այն մարդու անունը, որի հիշատակին կանգնեցվել է: Սակայն եղած գրերով այդ անձնանունը դժվար է վերականգնել:

274. ԱՅԳԵՀՈՎԻՏ. ՍՐՎԵՂԻ վանք. արտաքուստ, արևելյան պատի հարավային անկյան մոտ ազուցված խաչքարի կողքին, միակտոր քարի վրա, կիստեղձ, 4 տող.

..... ԹՈՐՈՍԿԱ

ՆԿՆԵՅԻԶԽԱԶՍԻ

ԲԱՐԵՆԱԻՍՈՒԹԵՆ

ԴՍՄ . . . ԹՈՐՈՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱԶՍ ԻԲԱՐԵՆԱԻՍՈՒԹԵԼԱՆ . . . :

.....

Գիտելիք. Փոքրիկ խաչքարի բեկոր է, որ բերվել է ալյուստ և ազուցվել պատի մեջ: Առաջին տողի սկզբում եղել է թվականը, որը վերականգնել անհնար է: 4-րդ շարքում պետք է լինի այն մարդու անունը, որի հիշատակին կանգնեցվել է խաչքարը: Դատելով տառաձևերի հնագրությունից, այս արձանագրությունը ժամանակամերձ պետք է լինի նախորդ՝ ՈԾ (1201) թվակիր բնագրի հետ:

275. ԱՅԳԵՀՈՎԻՏ. ՍՐՎԵՂԻ վանք. հյուսիսային պատի տակ ընկած բեկորներից մեկի վրա.

..... ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑԻ

Ա Չ Ա Ջ Ո Ւ Ր

Մ Ա Կ Ա Ր Ա Վ Ա Ն Ք

Գլուղը տեղավորված է Իջեանից 15 կմ հյուսիս-արեւելք, Արխաշան և Պալտաթափ լեռների ստորոտներին, Աչաջուր գետակի ափերին: Ներկայիս գլուղը հիմնվել է անցյալ դարում և բնակա-նաբար գուրկ է պատմական հուշարձաններից: Հին Աչաջուր գլուղատեղին գտնվում է ալտեղից մոտ 3 կմ արեւմուտք, վերոհիշյալ լեռնագագաթների արանքում տարածվող սարահարթի վրա, Մա-կարավանք հուշարձանախմբից հյուսիս: Գլուղատեղում և շրջակայքում պահպանվել են միջին դա-րերի նյութական մշակութի բազմաթիվ հուշարձաններ, որոնցից կարևորների տեղագրութունն ու նկարագրութունը տալիս ենք ստորև.

1. Հին Աչաջուր գլուղատեղ, գլուղի մասին մատենագրական վկայութուններ չեն հանդիպում: Նրա անվանումը դժվար է բացատրել հայերենի բառաքննութամբ: Գլուղատեղը բռնում է մի քա-նի տասնյակ հեկտար տարածություն, որտեղ պահպանվել են բազմաթիվ բնակարանների և այլ ըն-դարձակ շինությունների ավերակներ: Գլուղատեղի հյուսիսային թաղամասում, Արխաշան լեռան լանջերին տարածվում է պատմական գերեզմանոցը՝ բնական սալ տապանաքարերով և խաչքարերի բազմաթիվ պատվանդաններով: Գլուղատեղի կենտրոնում տեսանելի են կրաշաղախով շինված մի ընդարձակ շենքի՝ հավանաբար գլուղական եկեղեցու հիմնապատերը: Գերեզմանոցում արձանա-գրություններ չկան, սակայն պահպանված խաչքարերի և սրանց պատվանդանների մշակման ոճը վկայում է, որ դրանք ժամանակամերձ են Մակարավանքի հուշարձանախմբի կառուցումներին (XII—XIII դդ.):

2. Պիպիս գլուղատեղը գտնվում է Աչաջուր գլուղից 4 կմ հարավ-արևելք, անտառապատ լեռնալանջի Պիպիս դաշտամասում, Մակարավանքից մեկ կմ հարավ-արևմուտք: Պահպանվել են մի քանի քարակույտեր և բնակարանների հիմնապատեր: Ավելի բարվոք վիճակում է գլուղի եկե-ղեցին, որը կառուցված է գլուղի կենտրոնում, մի բլրի գագաթի հարթութան վրա: Եկեղեցին միջին մեծության շենք է, շարված կրաքարի մանր, հղկած կտորներով, ամուր կրաշաղախով, առանց սյուների, թաղակապ ծածկով: Միակ մուտքը արևմտյան պատից է, արևելյան կողմում ունի կիսակլոր խորան՝ փոքրիկ բեմով, որի երկու պատերին կան փոքրիկ խորշեր: Շենքը լուսա-վորվում է արևելյան և արևմտյան պատերի մեջ բացվող երկու նեղ ու փոքրիկ լուսամուտներով: Եկեղեցուց հյուսիս, սարահարթի վրա տարածվում է գլուղի պատմական գերեզմանոցը՝ բնական անմշակ կամ կիսամշակ տապանաքարերով և մի քանի քանդակազարդ անարձանազիր խաչքարերով, որոնց քանդակների մոտիվները հիշեցնում են XIII—XIV դդ. հուշարձանները: Պիպիս անունը այլ-ուստ ավանդված չէ, հավանաբար տեղական ծագում ունի, նշանակությունը մեզ անհայտ է:

3. Նաճատաղ եկեղեցին կառուցված է Աչաջուրի հյուսիս-արևմտյան կողմում բարձրացող լեռան գագաթի հարթութան վրա, գլուղից մոտ 2 կմ հեռու: Դրսից և ներսից ուղղանկյուն հատակագծով մի փոքրիկ շենք է (5+3,5 մ), շարված սև ու կարմրավուն տուֆ քարերով և կրաշաղախով: Արև-մուտյան պատն ամբողջությամբ, անկյունները և լուսամուտների շրջանակները սրբատաշ են, իսկ մյուս պատերի միայն հիմնապատերն են սրբատաշ ու խոշոր քարերով շարված: Մնացած հատված-ները մանր քարերով ու կրաշաղախով են: Ունեցել է թաղակապ ծածկ, որն ամբողջովին փլվել է,

մնում են հյուսիսային և հարավային պատերի երկուական սրբատաշ ելուստները, որոնց վրա հենվել են թաղը զոռակող որմնակամարները: Մուտքն արևմուտքից է, արևելյան կողմում ունի կիսակլոր խորան՝ փոքրիկ բեմով: Հյուսիսային պատի մեջ կառուցված է հատուկ խորշ՝ մկրտութիան փոքրիկ ավազանով:

Եկեղեցին ավերակ վիճակում է, կանգուն են պատերը՝ 2—3 մ բարձրությամբ: Հուշարձանը ուշ շրջանի՝ հավանաբար XVII—XVIII դդ. կառուցվածք է: Չնայած դրան, դժվար է որոշել, թե ինչու է եկեղեցին այդ անունով կոչվում և ում նահատակության հետ է կապված նրա կառուցումը:

4. Ս. Հովհաննես եկեղեցին տեղացիների մոտ հայտնի է Սրբաճես անունով, գտնվում է գյուղից 3 կմ հյուսիս-արևմուտք, անտառածածկ բարձրության վրա: Միջին մեծության մատուռ է (5×3մ)՝ կառուցված կրաքարի մանր, թեթևակի հարթված կտորներով, կրաշաղախով, թաղակապ ծածկով: Միակ մուտքը արևմուտքից է, արևելյան կողմում ունի կիսակլոր խորան՝ փոքրիկ բեմով: Պատերը ներսից սվաղված են եղել սպիտակ կրաշաղախով, որի վրա նշմարվում են գունավոր որմնանկարների բնկորներ՝ անձրևաջրերից եղծված: Մուտքի ճակատակալ կիսակլոր, կարմրավուն քարն ընկել է, նրա երեսին երեք բարձրաքանդակ խաչեր են կերտված: Պորանի կիսակլոր պատին կարմրադեղով արձանագրություններ են գրված, որոնք մեծ մասամբ եղծված են:

Բլրի գագաթը շրջափակված է եղել քարաշեն պարսպապատերով, որոնցից միայն մի քանի հատվածներ են պահպանվել: Մատուռի շրջակայքում՝ նկատելի են տների ավերակներ և բնական սալքարերի տապանաքարեր: Բլրի արևմտյան կողմում, մատուռից 500 մ հեռու, պատվանդանի վրա կանգնած է մի քանդակազարդ խաչքար, կերտված մոխրակարմրավուն անդեզիտի ամբողջական բեկորից: Պաշտարան արձանագրությունն չունի, զարդարված է մեծ վարպետությամբ կատարված բուսական քանդակներով, կան նաև .երկրաչափական շքեղ զարդաքանդակներ, որոնք երկզում են խաչքարի շրջանակը:

5. Մակարավաճք. հուշարձանախումբը տեղավորված է Աջաշուր գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, Պալտաթափ սարահարթի վրա, երկու ձորակների մեջ տարածված անտառածածկ լեռնաբազկի կենտրոնում: Դիրքը հիրավի բարձրահայաց է և իշխող. այստեղից դիտողի առջև փոփոխվում են ոչ միայն Աղստե գետի ողջ հովիտը մինչև Գուռ գետը հատող լայնատարած տափաստանները, այլև Աղստեի աջափնյա հանդիպակաց լեռնաշղթայի համալսապատկերը՝ անտառապատ լանջերով և անդընդախոր ձորերով: Հուշարձանների այս խումբը միջնադարյան հալ ճարտարապետության նշանավոր կոթողներից է, իսկ արտաքին հարդարանքի և հատկապես քանդակազարդերի նրբությունը ու կատարելությունը հալ մշակույթի պատմության անկրկնելի նմուշներից մեկը: Մինչև վերջերս Մակարավանքի հուշարձանները գրեթե անհայտ էին գիտությանը: Հրապարակի վրա էին միայն նախկին տեղագրողների՝ Ջալալյանցի և Բարխուդարյանցի խիստ համոռոտ նկարագրությունները և մի քանի վիմական արձանագրությունների ընդօրինակությունները՝ վերծանված պակասավոր ու աղավաղված: Մակարավանքի առաջին հանգամանալի ուսումնասիրությունը կատարել է բանասեր Գ. Մարգարյանը, որը դեռևս 1950 թ. դեկտեմբերի 1-ին հուշարձանախմբի մաքրման աշխատանքները, միաժամանակ հետազոտել է համակառուցի շինությունները, ընդօրինակել և վերծանել պահպանված վիմական արձանագրությունները: Մակարավանքի մասին Գ. Մարգարյանի ուսումնասիրությունը հրատարակվել է «Եջմիածին» ամսագրի 1954 թ. 4 համարներում որից և օգտվում ենք սուլն տեսությունը կազմելիս:

Մակարավանքի հուշարձանների հիմնական խումբը բաղկացած է հետևյալ շենքերից. հին եկեղեցի, գլխավոր եկեղեցի, գավիթ, Ասավածածին եկեղեցի, նշտարատուն, մատուռ, աղբյուր, դարպասի պարիսպներ, գերեզմանոց, բնակելի և օձանդակ շենքեր:

Ա. Հին եկեղեցին համակառուցի՝ ներկայումս պահպանված շենքերից հնագույնն է, տեղավորված է սարահարթի հյուսիս-արևելյան ծալրին, հուշարձանախմբի արևելյան մասում: Եկեղեցին ներքուստ խաչաձև, իսկ արտաքուստ երկարավուն քառանկյունի հատակածև շինություն է, կառուցված կարմրավուն խոշոր քարերով, կրաշաղախով, ըստ որում մինչև ծածկի կամարների հիմքերը շարված են կոփածո քարերով, ներքուստ սվաղված, իսկ դրանից վերև, ներառյալ և գմբեթը՝ սլորբատաշ, բաց աղլուսագուն քարերով: Եկեղեցու միակ մուտքը արևմտյան պատից է և բացվում է գավթի մեջ: Հուշարձանը մի քանի անգամ վերակառուցման է ենթարկվել, որի հետևանքով նրա նախնական ձևերը զգալի չափով փոխվել են, հետագա շրջանի գործ է եկեղեցու ծածկի և գմբեթի

ւրրատաւ: շարվածքը, որը փոխարինել է սկզբնական կոփածո հասարակ շարվածքին: Եկեղեցու բեմը սովորականից փոքր-ինչ բարձր է, նրա աստիճանները գրված են եղել հյուսիսային ծալրից, այժմ խարխուլված են: Բեմի ճակատի ողջ մակերեսը ծածկված է բուսական և երկրաչափական նուրբ քանդակազարդերով, որոնք ամփոփված են շեղանկյունաձև շրջանակների մեջ: Ծակատի այսպիսի հարդարումը, հավանաբար, նախորինակ է հանդիսացել գլխավոր եկեղեցու բեմի զարդաքանդակների համար, թեև վերջիններս քանդակների մոտիվներով և նրանց նրբութամբ ու կատարելիությամբ զգալի չափով գերազանցում են նախորինակը: Հին եկեղեցու կառուցման ժամանակը հայտնի չէ, անտարակույս է, որ սա հուշարձանախմբի հնագույն կառուցվածքն է, որի ոճային հատկություններից դատելով, կարելի է X—XI դդ. գործ համարել: Եկեղեցու վիմագրությունն աղքատ է, մինչև վերջերս բանասիրությանը հայտնի էր միայն արևելյան պատի մի կիսաեղծ, անթվակիր արձանագրություն՝ Գ. Սարգսյանի վերծանությունը: Այս պրակում երևան են գալիս ևս երկու նվիրագրեր՝ փորագրված եկեղեցու ներսում, գլխավոր խորանի թաղի վրա: Երեք բնագիրն էլ հիմնականում նվիրատուական են և քիչ բան են ասում հուշարձանի հիմնարկման, վերանորոգումների կամ պատմական անցքերի մասին: Ակներև է, որ երեքն էլ ժամանակամերձ են իրար, փորագրված Հովհաննես Ա-ի առաջնորդության տարիներին, երբ կատարվում էին եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Բ. Գլխավոր եկեղեցին տեղավորված է հուշարձանների խմբի հարավային կողմում, սարահարթի կենտրոնում: Սա գմբեթավոր դահլիճների տիպի, միջին չափերի շենք է (13,5×9 մ), արտաքուստ երկարավուն քառանկյունի, ներքուստ խաչաձև հատակաձևով: Կառուցված է տարբեր երանգների բաց-վարդագույն և պղնձագույն ֆրիլիտի սրբատաշ քարերով, ամուր կրաշաղախով: Հուշարձանի արտաքին տեսքը շնորհիվ սրբատաշ քարերի բազմերանգության զուսպ է ու տպավորիչ, չկան ավելորդ մանրամասներ և խճողող քանդակազարդեր: Արևելյան և հարավային ճակատների գույգ կամարակապ անկյունաձև որմնախորշերը, ինչպես նաև ուղղանկյուն լուսամուտների և կլոր լուսանցքերի քանդակազարդ շրջանակները խախտելով հարթ մակերեսների միապաղաղությունը՝ կենդանություն են հաղորդում նրանց, հաճելի դարձնում տեսողության համար: Նույն հարավային ճակատի լուսամուտի տակ աչքի է դարձնում ճանկերում ցուլ բռնած արծվի բարձրաքանդակը, որը կատարված է մեծ վարպետությամբ: Արևմտյան պատի մեջ բացվող հիմնական մուտքը երիզվում է չորս շարք նրբահյուս քանդակներով, իսկ նրա վերնամասի հարթ մակերեսը ծածկված է գուլնզգույն քարերի դրվագազարդով: Նույնպիսի ձևավորում ունի նաև հյուսիսային գավթի մեջ բացվող մուտքի շրջանակը, միայն այստեղ գուլնավոր դրվագազարդի փոխարեն գրված է ճակատակալ անզարդ քարը:

Եկեղեցու ներսի տարածությունն ընդարձակ է, լուսավոր և տպավորիչ: Խաչքների անկյուններում հյուսիսային և հարավային պատերի մոտ կանգնած չորս հուժկու հնգանիստ մուլթերը իրար են միանում բարձր կամարներով, տանիքի կենտրոնում ստեղծելով քառակուսի բացվածք, որի շրջանակի վրա հանգչում է գմբեթը: Գլխավոր խորանի կիսակլոր պատի մեջ կան 13 գոգավոր խորշեր, որոնք իրարից բաժանվում են զուլգ կամարակապ որմնասյուներով: Բեմը սովորականից բարձր է և եկեղեցու հետ հաղորդակցվում է հարավային ծալրին կցված աստիճաններով: Բեմի ճակատի ողջ հարթությունը ծածկված է անկրկնելի ճարտարությամբ կատարված նուրբ քանդակազարդերով, որոնք, իրավամբ, հայկական միջնադարյան արվեստի գլուխգործոցների թվին են դասվում: Բեմի 4 մ երկարություն և մեկուկես մ լայնություն ունեցող ճակատը երիզված է կիսագլանաձև լալն շրջանակով, որի ամբողջ մակերեսը քանդակված է ոչ այնքան խոր հյուսկեն զարդերով: Շրջանակի ներսում, երկու ամբողջական հարթ սալերի վրա դասավորված են երեք շարք բարձրաքանդակներ, որոնք սերտորեն միահյուսված են իրար հետ: Վերին և ստորին շարքերի զարդաքանդակները առնված են ութանկյուն աստղիկների մեջ, որոնք երիզվում են կրկնակ շրջանակներով: Երկու շարքերի տասներեքական աստղիկներն իրար միանալով կազմում են ամբողջ հորինվածքի միջին շարքը և տալիս տասներկու ավելի փոքր չափերի վեցանկյուն աստղիկներ, որոնց մակերեսները նույնպես պատած են բուսական հյուսածո քանդակներով: Ութանկյուն աստղիկների քանդակազարդերը ևս մեծ մասամբ բուսական են, սակայն մի քանիսի զարդերի հիմնապատառի վրա քանդակված են նաև առասպելական կենդանիներ՝ մարդու գլխով, գալարվող ձկներ, իսկ մեկի վրա՝ գործիքները ձեռքին մարդու կերպարանք, երիտասարդ եռատող մակագրությամբ:

Մինչև վերջերս գլխավոր եկեղեցու շինութեան ժամանակը և կառուցողի անունն անհայտ էին, քանի որ մատենագրական միակ աղբյուրը, որտեղ հիշատակված է Մակարավանքը՝ Կ. Գանձակեցին միայն հարևանցիորեն, ի թիվս այլ կենտրոնների, նշում է նաև այս վանքի անունը, առանց տարբերակելու, թե որ կառուցվածքի մասին է խոսքը: Եկեղեցու պատերին փորագրված արձանագրությունները ևս քիչ բան են հաղորդում մեզ հետաքրքրող հարցերի մասին, քանի որ դրանք մեծ մասամբ նվիրատուական բնույթի են և անթվակիր: Դրանցից արևելյան պատի 3 բնագրերում հեղինակները նվերներ են մատուցել «ի շինութիւն եկեղեցոյս ..», այսինքն կարելի էր մտածել, թե ժամանակամերձ լինելով եկեղեցու կառուցմանը, կարող են նպաստել այդ ժամանակը որոշելուն, սակայն, ցավոք, այդ բնագրերն անթվական են, իսկ նրանցում հիշատակված անձերը չեն կարող ժամանակագրական կռիվն հանդիսանալ:

Ներկայումս, շնորհիվ Գ. Սարգսյանի, ստուգապես հայտնի է, թե ով, երբ և ինչ հանգամանքներում է կանգնեցվել այս հուշարձանը: Նա 1953 թ. եկեղեցուց մի քանի մետր հարավ հայտնաբերեց մի մեծ գեղաքանդակ խաչքարի չորս առանձին բեկորները, որոնց թիկունքին փորագրված ծավալուն արձանագրության մեջ պատմվում է այդ ամենի մասին: Շինարարական բնագրի վերծանությունից պարզվում է, որ Վ. գլխավոր եկեղեցին կառուցվել է ՈՄԴ (1205) թվականին, Հովհաննես Ա-ի վանահայրության տարիներին, ր. եկեղեցին շինել է Բազազ իշխանի որդի Վարդանը, գ. խաչքարը կանգնեցվել է եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո՝ ի հավերժացումն կառուցողի և նպաստավորողների հիշատակի:

Այսպիսով, Մակարավանքում, ինչպես և Դեղձատի վանքում, եկեղեցու շինարարական արձանագրությունը փորագրված է ոչ թե նրա պատերին կամ մուտքի ճակատակալին, ինչպես ընդունված էր, այլ առանձին խաչքարի վրա, որը կանգնեցվել է եկեղեցուց ոչ հեռու, հավանաբար նրա հարավային պատի արևելյան անկյան մոտ, հատուկ պատվանդանի վրա: Ավելի հանգամանորեն այդ մասին կխոսվի խաչքարի արձանագրության մեկնաբանության առթիվ:

Գ. Գավիթը կառուցված է հուշարձանախմբի հյուսիս-արևելյան մասում, արևմուտքից հարավ է չին եկեղեցուն, իսկ հյուսիսից՝ գլխավոր եկեղեցուն: Գավիթը դրսից և ներսից քառանկյունի (13 + 12.9 մ) հատակաձևով գմբեթավոր դահլիճ է, իր կառուցման ձևերով նման չորս սյունանի մյուս ժամանակներին: Ծենքն արտաքուստ անշուք տպավորություն է թողնում. նրա արևելյան ու հարավային պատերը ծածկված են չին և գլխավոր եկեղեցիների համապատասխան ճակատներով, իսկ հյուսիսային ճակատը նախում է ձորակին և անմատչելի է գիտողի համար. Դրա փոխարեն արևմուտքյան ճակատը աչք է շոյում ոչ միայն երեսպատման վարդազույն քարերի տարբեր երանգներով, այլև ճակատի զուսպ հարթության վրա մեծ ճաշակով ձևավորված մուտքի շրջանակով և դրանից վերև տեղավորված առասպելական կենդանիների բարձրաքանդակներով: Տպավորիչ է դավթի ներքին տեսքը. չորս միապաղաղ գլանաձև սյուների վրայից բարձրացող լայն կամարների և նրանց հատման անկյուններում առաջացած գեղաքանդակ առաստաղների վրա, դահլիճի կենտրոնի վերևում նստած է ութանկյունի երգիկը, որի վրա կանգնած է եղել սյունազարդ գմբեթը: Գավթի ներսի քանդակազարդերը կատարված են մեծ վարպետության մեջ և վկայում են քանդակող վարպետների գեղարվեստական բարձր ճաշակի մասին: Այդ քանդակներից առանձնապես աչքի են ընկնում կամարաղեղների արանքի հարթ մակերեսների՝ առաստաղների բուսական ճոխ քանդակազարդերը, ինչպես նաև նույն կամարների հիմքերում կամ սյուների խողակների վրայի դրախտահավերի բարձրաքանդակները: Գմբեթի հիմքը կազմող սալերը ծածկված են երկրաչափական զարդերով և կիսագլանաձև ելուստներով բաժանվում են բազմաթիվ հատվածների, որոնց վրա փորագրված են առանձին տառեր՝ ուղիղ և շրջված՝ Ս, Մ, Դ, Ո, Ա, Ն, ԴԴ, ՍԱ: Ենթադրվում է, որ այս գրերը կառուցող վարպետների նշաններն են, կամ գուցե նրանց անունների սկզբնագրերը: Գավթի շինութեան ժամանակը և կառուցողն անհայտ են: Դատելով գավթի վիմագրության տվյալներով, հատկապես հարավ-արևելյան ավանդատան պատին փորագրված Սարգիս քահանայի նվիրագրով, 1224 թը վականին գավիթը կառուցված էր:

Դ. Նշտաբառուներ գտնվում է հուշարձանախմբի հյուսիս-արևելյան անկյունում, չին եկեղեցուն և գավթին կից: Սա քառակուսի հատակաձևով և թաղակապ ծածկով փոքրիկ շինություն է (5 + 3,5 մ), շարված սպիտակավուն շերտավոր սալաքարերով և ներսից սվաղված կրաշաղախով: Արևելյան պատի հյուսիսային մասում կա կրակ վառելու հատուկ բուխարիկի խորշ: Գավթի հետ հաղորդակցվում

է ոնդհանուր մուտքով: Այս շենքի նշանակութունը մեղ համար պարզ չէ. միայն լրացուցիչ ուսումնասիրութիւնը կարող է պարզել նրա ինչ լինելը: Նշխարատուն ենք անվանում, հետեւելով նախորդ տեղագրողներին (Մ. Ջալալյանց, Գ. Սարգսյան): Կառուցման ժամանակը նույնպես վիճելի է. Իջևանի շրջանի հուշարձանների «ՈՒղեցուլը» գտնում է, որ շենքն իր կառուցման տեխնիկայով ժամանակամերձ է Հին եկեղեցուն, այսինքն X դարի գործ է, իսկ Գ. Սարգսյանը, ընհակառակը, ավելի ուշ ժամանակներում կառուցված օժանդակ, տնտեսական շենք է համարում:

Ե. Աստվածածին եկեղեցին կառուցել է Մակարավանքի առաջին առաջնորդ Հովհաննես Ա-ն, իր ծնողների և եղբայրների հիշատակին (1198 թ.): Եկեղեցին փոքր չափերի գողտրիկ հուշարձան է, ներքուստ խաչաձև, արտաքուստ ութանիստ, կառուցված վարդագույն և կարմրամոխրագույն խոշոր, սրբատաշ քարերով: Կանգնած է առանձնակի, գլխավոր եկեղեցուց մի քանի մետր արևելք, սարահարթի հարավ-արևելյան ծայրին: Իր ճարտարապետական հորինվածքով և հատկապես արտաքին հարդարանքով հիշեցնում է Անիի Աբուղամրենց եկեղեցին, միայն ավելի համեստ ծավալներով: Շենքն արտաքուստ, ստորին մասում՝ գետնախարիսխի բարձրութամբ հարթ շրջանաձև է և ավարտվում է կիսազլանաձև քիվով, իոկ սրանից վերև՝ ութանիստ: Հուշարձանը լուսավորվում է չորս փոքր լուսամուտներով, որոնցից արևմտյանը կլոր է, իսկ մյուսները՝ ուղղանկյուն և նեղ: Բոլոր լուսամուտները պսակված են ճոխ ձևավորված շրջանակներով: Եկեղեցու չորս նիստերի վրա կան անկյունաձև որմնախորշեր, որոնք հենվում են գետնախարիսխի քիվի վրա և բարձրում ավարտվում ճառագայթաձև դարդարված կիսակոնաձև գագաթներով: Այս խորշերի գագաթները և լուսամուտների պսակները շրջանցելով, հուշարձանը գրկում է մի ելնդավոր գեղաքանդակ գոտի, որի վրա համաչափորեն դասավորված են առլուծների, թռչունների և վարդյակների բարձրաքանդակներ: Եկեղեցու միակ մուտքը արևմտյան խաչթևից է, այն երիզված է երկու քանդակազարդ շրջանակներով: Այս եկեղեցին Մակարավանքի թվագիր հնագույն կառուցվածքն է, շինարարական արձանագրութիւնը փորագրված է արևմտյան մուտքի կիսակլոր ճակատակալի վրա: Վերջերս վերծանվեց եկեղեցու գլխավոր խորանի արևմտյան պատին փորագրված մի այլ ընդարձակ արձանագրութիւն, որը կարևոր տեղեկութիւններ է հաղորդում հուշարձանախմբի մասին:

Զ. Փոքրիկ կիսավերակ մատուռը տեղավորված է Աստվածածին եկեղեցուց հյուսիս, համարյա նրան կից: Փոքր չափերի (3x2 մ) շենք է, շարված վարդագույն բազմերանգ քարերով, ունի թաղակապ ծածկ: Մատուռի պատերին արձանագրութիւններ չկան, կառուցման ժամանակն անհայտ է: Դատելով նախնական երեսպատման սրբատաշ քարերի մշակման ոճից՝ նրա շինութիւնը կարելի է ժամանակամերձ համարել հուշարձանախմբի մյուս շենքերի հիմնադրմանը:

Է. Աղբյուրի շենքը գտնվում է վանքի պարսպից դուրս, դարպասից մոտ 100 մ հյուսիս-արևելք: Սա մի երկարավուն (7x3 մ) կառուցվածք է, պատերը ներքուստ և արտաքուստ երեսպատված են սրբատաշ, գորշագույն սալերով: Արևմտյան և հարավային պատերի անկյունում տեղադրված է սրբատաշ քարից մի ավազան, որից ջուրը հոսել է հարավային պատի մեջ բացված անցքով: Զուրը կավի խողովակներով բերվել է արևմտյան կողմի սարալանջից բխող աղբյուրից, որը հոսում է մինչև օրս: Մակարավանքի վիմագրութիւն մեջ աղբյուրի շենքի կառուցման մասին հիշատակութիւններ չկան. միայն Հին եկեղեցու գլխավոր խորանի թաղի վրա փորագրված արտոնագրից իմացվում է, որ նվիրատուն վանքին նվիրել է ի թիվս այլ արդյունքների նաև «Բ աւզ (աւազան) ջուր : Ի: գիշեր»: Թվում է, այստեղ խոսքը ոչ թե վանքապատկան աղբյուրի մասին է, այլ ուրիշ ջրավազանի, որ նվիրատուն երկու գիշեր տրամադրել է վանքին՝ այգիները ջրելու համար:

Ը. Մակարավանքի դարպասը գտնվում է հուշարձանախմբից 30 մ արևմուտք: Դարպասի 3,5 մ լայնութիւն բացվածքը փորված է ժայռաբեկորի մեջ: Պահպանվել է դարպասի կամարաձև թաղը, որը շարված է շերտավոր կրաքարի սալիկներով և հենվում է երկու կողմերում կանգնած ժայռերի վրա: Մուտքի ճակատային մասն ունեցել է բազալտե սրբատաշ կամար, որից միայն մի քանի քարեր են մնացել, ձախ կողմում ընկած է այդ կամարի հենարանը կազմող սրբատաշ քարը՝ ձևավորված երեք փոքրիկ կիսասլուներով և բուսական քանդակների նեղ շերտով: Հուշարձանախումբը չորս կողմից շրջափակված է եղել տարբեր շարվածքի, մեծ մասամբ անշաղխ պարսպապատերով, որոնցից մնացել են մի քանի աննշան հատվածներ: Դժվար է ասել, թե երբ են կանգնեցվել պարսպը և դարպասը. վերջինիս ձևավոր քարերի մշակման եղանակը հիմք է տալիս

կարծելու, որ այդ հատվածի շինութիւնը պետք է ժամանակամերձ լինի հուշարձանների գլխավոր խմբի կառուցմանը:

Թ. Օժանդակ անտեսակցան շենքեր. Հուշարձանախմբի շրջակայքում, պարսպապատերից դուրս և ներս պահպանվել են դանազան շենքերի բազմաթիվ ավերակներ: Սրանից առավել ամբողջական են մնացել Մակարավանքի հարավ-արևմտյան մասում գտնվող երկու մեծ սենյակների բարձր պատերը (2—3 մ), սրանցից արևելյանի վրա պահպանվել է բուխարիկի խորշը: Տնտեսական սենյակների հիմնապատեր են մնացել նաև գլխավոր եկեղեցուց մի քանի մետր հարավ, որոնցից մեկի հատակին ընկած են Բազազ իշխանի որդի Վարդանի շինարարական արձանագրութիւնն ունեցող խաչքարի երկու հիմնական բեկորները: Տների ավերակներ կան նաև հուշարձանախմբից ավելի հեռու, նրանից մոտ մի քանի հարյուր մետր արևելք ե հարավ: Այս բոլորը ցույց են տալիս, որ հնում, վանքի շրջակայքում եղել են մի քանի գյուղեր, հավանաբար վանքապատկան, թեև այդ մասին ստույգ վկայութիւններ չկան:

Ժ. Գերեզմանոցները երկուսն են, մեկը տարածվում է վանքի դարպասից մոտ 150 մ արևմուտք, մի անտառապատ բարձունքի վրա, աղբյուրի շենքից փոքր-ինչ արևմուտք, Այստեղ պահպանվել են բազմաթիվ անդարդ տապանաքարեր, որոնցից երկուսն ունեն Խոփն դարերի տապանագրեր: Կան նաև մի քանի խաչքարեր՝ նույն ժամանակներին բնորոշ դարձաքանդակներով: Հին գերեզմանոցը ընկած է վանքի հարավ-արևմտյան կողմում, պարսպից դուրս, սարալանջին: Տապանաքարերը մեծ մասամբ բնական խոշոր սալաքարեր են՝ կիսամշակ: Երևում են մի քանի որմնափակ խաչարձանների ավերակները, որոնք շարված են եղել սրբատաշ քարերով, ամուր կրաշաղախով՝ կանգնած ամբողջական քարե երկաստիճան պատվանդանների վրա: Բուն խաչքարերը սովորականից մեծ են, կերտված կարմրամոխրագույն անդեզիտից կամ ավազաքարից և ունեն ճոխ քանդակազարդեր: Արձանագրութիւններ չեն նկատվում, ձևավորման արվեստով խաչքարերը XII—XIII դարերի են:

* * *

Մահկանաբերդի հոգևոր և մշակութային նշանավոր կենտրոն Մակարավանքի մասին մատենագրական սեղեկութիւնները սակավ են. միակ հիշատակութիւնը գտնում ենք՝ Կիրակոս Գանձակեցու «Հալոց պատմութիւն» մեջ: Պատմելով Հաթերքի իշխան Վախտանգի կին Արդու խաթունի կողմից՝ Ն. Գեաիկ վանքի համար նրբահյուս վարագույր գործելու մասին, Գանձակեցին հայտնում է, որ տիկինը իր դուստրերի հետ նման վարագույրներ է գործել ի թիվս այլ վանքերի, նաև Մակարավանքի համար. «Եւ ոչ միայն այս եկեղեցույս արար ծածկութ, այլև այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ և Մակարայ վանից և Դադի վանից, քանզի լոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կիներն»¹: Նոր Գեաիկի Աստվածածին եկեղեցին, որի օծման հանդիսութիւնների ժամանակ Արդու խաթունը նվիրել էր իր գործած վարագույրը, ավարտվել է ՈՍԵ (1196) թվականին: Այս մասին պատմում է ոչ միայն եկեղեցու արևմտյան պատին փորագրված շինարարական արձանագրութիւնը, այլև սրահի մասն վրա իր երկի համապատասխան դրվագները հյուսող Կ. Գանձակեցին. «Եւ ապա սկսան հիմն արկանել մեծափառ եկեղեցույն, սկսեալ ի ՈՍ թուականին Հալոց, զկնի չորս ամաց առնլոյ դերուսաղէմ Մալահազնին, և կատարի լամս հինգ ի խանգար զատկին լուսաց»²: Մակախն այս թվականը չի նպաստում Արդու խաթունի՝ Մակարավանքի համար վարագույր գործելու և նվիրելու տարեթիվը որոշելուն, քանի որ պատմագրի ասածից չի հասկացվում, թե երբ է գործվել Մակարավանքի «ծածկութը», Ն. Գեաիկից հետո, թե նրանից առաջ: Այսպիսով, վանքի կառուցվածքների և պատմական կլանքի ժամանակագրութիւն միակ աղբյուրը նրա հարուստ վիմագրութիւնն է, որը մեծ մասամբ անաղարտ է պահպանվել և վերծանվում է հաջողութիւնով: «Մակարավանք» անունը միայն մեկ անգամ է հիշատակվում վիմագրութիւն մեջ. դա գլխավոր եկեղեցու արևելյան ճակատին փորագրված Աշոտ իշխանի երկարաշունչ արձանագրութիւնն է. մնացած դեպքերում ամենուտին փորագրված Աշոտ իշխանի երկարաշունչ արձանագրութիւնն է. մնացած դեպքերում ամենուտին հիշվում են ընդհանուր ձևով՝ «ուխտ», եկեղեցի բառերը, ավելի հաճախ՝ «Աստվածածին» անունը, ըստ որում վերջինս հանդիպում է ինչպես գավթի, այնպես էլ Հին և գլխավոր եկեղեցիների վիմագրերում: Պետք է ենթադրել, որ «Աստվածածին» անունը չի վերաբերել որևէ առանձին հուշարձանի, այլ ընդհանուր է եղել ամբողջ վանքի համար:

Հարկ ենք համարում նշել, որ Մակարավանք անունով X դարի մի կենարոնագմբեթ եկեղեցի է պահպանվել նաև Արթիկի շրջանի Պեմզաշեն ավանից 1 կմ դեպի արևելք:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հալոց, Երևան, 1961, էջ 210:

² Նույն տեղում, էջ 212:

276. ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևելյան տատին, փոքրիկ լուսամուտի շրջանակը կազմող մուգ կարմրագույն քարի վրա, խիստ հողմտհարված, 8 տող.

Ի ՈՒ ԵՍ Յ ՈՂ ԵՒ ԿԱ
 ԵԿԵՂ ԲԱՆՔՍ ՏՈՒԱՔ ԿՐԺԱԲԻՄԱ
 ԻՆՉԻԱՉԳԻԻՏԻՆ ԱՐՆ ՈՂ ԽԱ
 ԱՆԷ ՄԱՍՆ ԵՒ ԲԱՃԻՆ ՉՅՈՒԴԱՅԻՆ
 ԱՌՑԷ ԵՒ ՆՐԱ ՄԵՂԱՑՆ ՊԱՄ
 ԱԿԱ ԵՂԻՑԻ ԱՌԱՋԻ ԱՅ: ՈՂ
 ԳԻՐՍ ՉԵՂԷ ԻՆՔՆ ԵՂԻՑԻ ՉԵՂ

Ե Ա Լ

Ի ՈՒ ԵՍՐԱՌԱՋՆՈՐԳԻ ՅՈՂԱՆԷՍԻ ԵՒ ՄԻԱՂ
 ԵԿԵՂ ԲԱՆՔՍ ՏՈՒԱՔ ՄԻ ԱԻՐ ԺԱՄ Ի
 ՏԱՐԻՆ ԽԱՉԳԻԻՏԻՆ ԱԻՐՆ
 ՈՎ ԽԱՓՊԱՆԷ ՄԱՍՆ ԵՒ
 ԲԱԺԻՆ ՉՅՈՒԴԱՅԻՆ ԱՌՑԷ
 ԵՒ ՆՐԱ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱ-
 ԿԱՆ ԵՂԻՑԻ ԱՌԱՋԻ ԱՅ:
 ՈՎՂՉԻԳԻՐՍ ՉԵՂԷ, ԻՆՔՆ ԵՂԻՑԻ ՉԵՂԱԼ:

Հրատ. Մարգսյան, 1954, Գ. 32:

Գիտելիք. Հրատարակելով այս բնագիրը, Գ. Մարգսյանը չի անդրադարձել նրա բովանդակությանը, այնտեղ հիշատակված անձանց ժամանակագրությունը: Բացի դրանից, վերձանողը փոքր պատահանի երկու կողմերին փորագրված տառաշարքերը երկու տարբեր արձանագրության բեկորներ է համարում, մինչդեռ դրանք նույն արտոնագրի հատվածներն են, ըստ որում աջ կողմինը ձախի անմիջական շարունակությունն է: Հիշվելի, լուսամուտի հյուսիսային կողի համեմատաբար անեղծ պահպանված արձանագրությունը ինքնուրույն, ամփոփ իմաստ չի արտահայտում, ամբողջացած չէ, քանի որ արտահայտում է բնագրի միայն վերջաբանը՝ հատուցման և անեծքի բանաձևը, իսկ արձանագրության սկիզբը, որտեղ պետք է լիներ ժամանակի մատնանշումը, նվիրատուն և նվերները, այստեղ չկա, պետք է որոնել մի այլ տեղ: Ահա բնագրի այդ նախաբանը եղել է լուսամուտի հարավային կողմի նույնպիսի մի քարի վրա, որը հողմահարվել, խիստ քայքայվել է և նախնական ութ տողերից միայն 1, 2 և 8-րդ տողերի սկզբի մի քանի գրերն են երևում:

Առաջին շարքի սկզբին պարզ նշմարվում են ՈՒ գրերը, որ, անշուշտ եղել է թվագիր: Ինչպես գիտենք, Մակարավանքի Աստվածածին եկեղեցու ճակատակալի շինարարական արձանագրության թվականն է ՈՒԷ (1198) և փորագրված է վանքի՝ մեզ հայտնի առաջին առաջնորդ Հովհաննես Ա-ի կողմից: Քանի որ Հին եկեղեցու քննվող արձանագրության մեջ ևս վանքի առաջնորդ է հիշվում նույն Հովհաննեսը, ուստի այստեղ ևս թվագրերը պետք է լինեին ՈՒԷ-ի ժամանակամերձ մի տարեթիվ, ամենայն հավանականությամբ սրանից ավելի վաղ:

277. Հին Եկեղեցի. ներքուստ, արևելյան խորանի կիսակլոր պատի հարավային մասում, քիվից ներքև, երկու սրբատաշ, վարդագույն քարի վրա, 5 տող.

† ԱՆՈՒԱԲԵՆ ԱՅ ԱՅ ՍԻՄ ԳԻՐ Է ՅՈՂԱՆԻՍԻ Մ

ԱԲԱԿԱԿԱՆ ՍԱԿՆ Մ ՄԻԱԲԱՆ ԵՑԱ ՄԵՉԵԻԵՏ

ԴԱԿԱՆԻԵԻ ԱՅԼ ԱԴԻԻՆՔՅԵԿԵՂԵՑԻՍԵԻ ՄԵՔՏՈՒԱԲ

ՉՎԱԴԱՎԱՌՆ ԱՌԻՐՆ ԶԱՆ ՉԱԵՆԵՆ, ԵՂԵՑԻՔՍ

. . . . ՆՉՈՒԱԾԷ ՅԱՅԵԻՆ ՄԱՄԵՂԱՑՆ ՏՐԷ

ԱՆՈՒԱՄԲՆ ԱՅ, ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՅՈՂԱՆԻՍԻ, ՈՐ ԴՏՈՒՄՔ ԱՐԱԿԱՆՍԱԿՆ, ՈՐ ՄԻԱԲԱՆԵՑԱԻ ՄԵՉԵԻ ԵՑ . — ԴԱԿԱՆԻ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻԻՆՔ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ԵՒ ՄԵՔ ՏՈՒԱՔ ԴՄԱՍՉՎԱՐԴԱՎԱՌՆ ԱՌԻՐՆ ԺԱՄՆ ՉԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ | .

ՈՎ ԱՓԱՆԵ՛, ՆՉՈՎԱԾ Է ՅԱՅ ԵՒ ՆՈՐԱ ՄԵՂԱՑՆ ՏՐԷ՛Ր Է:

Գիտելիք. Այս արձանագրության մասին մատնացույց է արել Գ. Սարգսյանը Մակարավանքի մասին հոդվածում: Ըստ նրա, չին եկեղեցու արևելյան խորանի թաղի այս և հաջորդ արձանագրությունները հայտնաբերել են ճարտարապետներ Բ. Արզումանյանը և Շ. Ազատյանը՝ հուշարձանը չափազերելիս: Երկու բնագրերն էլ շատ վատ են պահպանվել, հողմահարվել են, եղծվել և դժվար են ընթերցվում, ուստի մեր վերծանությունը տեղ-տեղ մնում է անհասկանալի կամ կասկածելի:

Չ-րդ շարքում նվիրատուի անունը՝ Արալաբա[իև] վերականգնում ենք կասկածանքով, չնայած բոլոր գրերի ընդօրինակությունը հավաստի է: Անձնանունը, եթե այն ստույգ է վերծանված, այլուստ վկայված չէ: Նույն շարքի վերջում... միարձեցեալ մեզ եւ եւ... եղծված է մոտ 2—3 տառատեղ, այստեղ, հավանաբար, եղել է տրված գահեկանների քանակը, քանի որ շարունակության վրա ունենք դեպքի բառը: Այս բառը ևս կասկածելի է, չնայած որ եղած գրերը ճիշտ են արտագրված: Արձանագրությունը Մակարավանքի նախնազույն վիճակագրից է և վերաբերում է Հովհաննես Ա-ի առաջնորդության ժամանակներին: Հավանական է կարծել, որ չին եկեղեցու այս երկու նորահայտ, ինչպես և արևելյան ճակատի նվիրագրերում հիշված նվիրատուները կատարվել են ի նպաստ եկեղեցու նորոգության, որ ինչպես տեսանք, տեղի է ունեցել նույն Հովհաննեսի ջանքերով նրա առաջնորդության օրոք:

278. Հին Եկեղեցի. արևելյան խորանի կիսակլոր պատի կենտրոնում, քիվից վերև, չորս քարի վրա, 5 տող.

ՅԱԵՈՒԵ ԱՅ ԱՅ ՍԻՄ ԳԻՐ Է ՅՈՂԱՆԻՍԻ --- Մ ՏՎԱՔ ԱԿԱԿԱ ---

ՄԵՑՅՈՒՍՈՎԵԻ ՄԻԱԲԱՆ ԵՑԱ Ե ԵՏ ԶՈՂ ԵԻ ԱՅԼ ԱՐԴԻՆՔ ԵԻ Բ: ԱՉՁՈՐ: Բ: ԳԻՆԵՐ

ԵԻ ԳՐԵՑԱԲԵՆ ՄԱ ԻՍԿԻ ՍՐԲՈՅԷ --- ԱՅԱՅԻՆ Ս: Բ: ԽՄԱՍ Մ ՊԱՏ

ԱԿԳԵԼ ԻՔՍ ՄԱՍՉՎԱՐԴԱՎԱՌՆ --- ՈՎ ԱՓԱՆԵ՛ ԿԱՄԱՉՔԱՎԱՅՈՒՐ

ԱՅ ԱՌՑԷ ԵԻ ՆՈՐԱ ՄԵՂԱՑՆ ՏԵՐ Է ԿԱՄԱՉՔԱՎԱՅՈՒՐ: ԱԵՆ:

ՔՈՒՆՈՒՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՅՈՂԱՆԻՍԻ, . . . ՏՎԱՔ ԱԿԱՆՋՍ, . . . ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱԻ ԵՒ ԵՏ ՀՈՂ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻԻՆ ԵՒ :Բ: ԱԻՉ ՋՈՒՐ :Բ: ԳԻՇԵՐ|: ԵՒ ԳՐԵՑԱՔ ՆՄԱ Ի ՏԱԻՆԻ ՍՐԲՈՅՆ . . . ԱԾԱԾՆԻՍ :Բ: ԽՈՐԱՆՍ ՈՐ ՊԱՏՄԱՐԱԳԵԼ Ի ՔՄ ՄԱՏՁԻ, ՈՐՉԱՓ ԱՅՍ . . . : ՈՎ ԽԱՓԱՆԵ, ՎԱՐՉ ՅՈՒԻԻԱՅԼԻ, ԱՌՑԷ ԵՒ ՆՈՐԱ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ: ԱՄԵՆ:

Գիտելիք. Բնագիրը զգալի չափով տուժել է վերևից հոսող անձրևաջրերից և հնարավոր չէ ամբողջությամբ վերծանել: Փորագրման ժամանակը որոշում ենք նվիրատուի՝ Ակաճը իշխանի հիշատակությամբ, որը վկայված է նաև Աստվածածին փոքր եկեղեցու զլխավոր խորանի արևմտյան պատին պահպանված ընդարձակ նվիրագրում՝ իրև հուշարձանի կառուցումը նյութական միջոցներով նպաստավորող: Բացի դրանից, այստեղ հիշատակված Հովհաննեսը, անշուշտ, վանքի առաջնորդն է որը 1198 թ. կառուցել է Աստվածածին եկեղեցին: Զ-րդ շարքում :Բ: աւզ ջուր :Բ: գիշեր..., պետք է հասկանալ, որ Ականջը վանքին է հատկացրել իրեն պատկանող երկու ջրավազանների ջուրը՝ երկու գիշերվա ընթացքում վանքապատկան հողերը ջրելու համար: Ջրօգտագործման կարգը ցերեկը կամ գիշերը սահմանելու մասին այս բնագիրը միակը չէ միջին դարերի հալ վիմագրության մեջ. այլ պայմաններում նույն կարգը վկայված է դեռևս Արուճի տաճարի (867), Բյուրականի (985), Կոշի (1061) և Մբենի (1025) արձանագրություններում:

279. ԽԱՉՔԱՐԻ ՀՈՐԱ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ, ՈՐՈՆՔ ԸՆԿԱԾ ԵՆ ԳԼՍԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐՎԱՅԻՆ ՎՊԱՏԻՑ ՈՂ ԿԵՆՈՒ, ՎԱՐՍՎԱՎՊԱՏԻՑ ԴՈՒՐՍ: ԲԵԿՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ ԿԵՆԵԼՅԱԼՆ Է:

ա. խաչքարի հիմնական, կենտրոնական մասի երկու բեկորներն ընկած են իրար մոտ, շրջված վիճակով, եկեղեցուց 15 մ. հարավ, կիսաքանդ շենքի հատակին: Բեկորներից մեկի թիկունքին խորաքանդակ գեղեցիկ երկաթագրով փորագրված է յոթ տող, իսկ մյուս բեկորի վրա՝ նույն բնագրի շարունակությունը՝ վեց տող:

բ. մյուս բեկորն ընկած է վերոհիշյալներից մոտ 30 մ. հարավ, սրա թիկունքին փորագրված է արձանագրության շարունակությունը, սակայն նրանց արանքում պակասում է մեկ կամ երկու տող:

. ԱՅ ԱՅՍ ՈՐ
 ՀՈՂ ՏՎԱՔ
 ՏՎԱՔ ԱԿԱՆՋՍ
 ՄԵԾ ՅՈՒՍՈՎ
 ՄԻԱԲԱՆԵՑԱԻ
 ԵՒ ԵՏ
 ՀՈՂ
 ԱՅԼ
 ԱՐԴԻԻՆ
 ԵՒ :Բ:
 ԱԻՇ
 ՋՈՒՐ :Բ:
 ԳԻՇԵՐ
 |
 ԵՒ ԳՐԵՑԱՔ
 ՆՄԱ
 Ի ՏԱԻՆԻ
 ՍՐԲՈՅՆ
 ԱԾԱԾՆԻՍ
 :Բ:
 ԽՈՐԱՆՍ
 ՈՐ
 ՊԱՏՄԱՐԱ
 ԳԵԼ
 Ի ՔՄ
 ՄԱՏՁԻ,
 ՈՐՉԱՓ
 ԱՅՍ :
 ՈՎ
 ԽԱՓԱՆԵ,
 ՎԱՐՉ
 ՅՈՒԻԻԱՅԼԻ,
 ԱՌՑԷ
 ԵՒ
 ՆՈՐԱ
 ՄԵՂԱՑՆ
 ՏԷՐ
 Է:
 ԿԱՏԱՐԻՉՔՆ
 ԱԻՐՀՆԻՆ
 ՅԱՅ:
 ԱՄԵՆ:

դ. վերջին բեկորը խաչքարի գլխամասն է, գտնվում է նախորդից 15 մ. հարավ, նույն գծի վրա, մի փոքրիկ բացատում: Քիվի վրա խոշոր ծաղկաքանդակ գրեթե փորագրված է արձանագրության սկիզբը՝ մի տողով, իսկ հակառակ կողմում՝ սրա շարունակութունը՝ երկու վնասված տող:

ԲՔՄ՝ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ՝ . . . Ի ԹՈՒԻՆՆԻ ՀԱՅՈՑ ՈԾԴ Ի ԹՍԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՆԻ ԹԱՄՍՐԱՅԻ . . . ՄԵԾ ԵՒ ՀԶԱԻՐ ԻՇԵԱՆԻՆ ԿԱՅԵՆԿՈՑ ՍԱԴՈՒՆԻՆ ԵՒ ՅԱՌԲԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆՆԻ ՄԻ ՈՒԽՏԻՍ ՅՈՂԱՆԻՍԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ԴՐԻԴՈՐՈՑ, ԵՍ՝ ՎԱՐԴԱՆ ԴՍՈՒՍՅ՝ ԱՅ, ՈՐԴԻ ԲԱԶԱԶԱ ԻՇԵԱՆԻ ԶՐԿԵՑՊԱ Ի ՍԻՐԵԼԻ ԵՂՖԱՐՑՆ ԻՄՈՑ ԶՈՐԵՑՈՒՆԵՑ՝ ՈՐՈՎ ԱՆՄԵԻԹԱՐ ԼԱՅԻ ԶԱՒՈՒՐՍ ԻՄ՝ ԱՐԴ ՎԱՄՆԻ ՍԻՐՈՑՆ ՆՈՑԱ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂՅԵՑԻ ԵՒ ԵԴԻ Ի ՎԵՐԱՅ ԶԵԱԶՍ ԼՈՒՍՈՑ ԵՒ ՅԱՌՆԵԼՆ ԶԱՅՍ ՈՉ ԶՈՔ ՈՒՆԵԻ ԱԻԴՆԱԿԱՆ, ԲԱՅՑ ՄԻԱՅՆ ԶՀՈԿԵՈՐ ԵՂՖԱՑՐՆ ՄԵՐ ԱԼԵՔՍԱՆՈՍ, ԶԻ ԵՒ ՍԱ ԲՈՂՅԱՆԱԿ ԹԱՂԵԼՈՑ ԶԻՍ, ԵԴԱԻ ԶԵՈՒՄԲՍ . . . ԱՆԴՐԱՆԻԿՆ ՄԵՐ ՎԱՀՐԱՄ . . . ԵՒ ՍԱՐԳԻՍ ԵՐԿՈՒՔՆ ԿԱՆԻ . . . ԻԿՔ: ԱՐԴ, ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԻՔ՝ ԻՑԻՇԵՆՑԵՔ ԶՄԵԶ Ի ՔՈՒ ՅՍ:

Հասանկ. 101

Գրեցի իք. խաչքարն անսովոր մեծություն, ֆիլիստալին տուֆից կերտված հուշարձան է, որը, հավանաբար, դրված է եղել ղլխավոր եկեղեցու հարավային պատի մոտ, նրա արևելյան անկյանը կից: Երկրաշարժի հետևանքով եկեղեցու տանիքից թափվող քարերը տապալել են խաչքարը և մի քանի կտորների բաժանելով՝ գլորել ցած: Որ պահպանված չորս բեկորները նույն հուշարձանի մասերն են՝ հաստատում են ոչ միայն քարատեսակը, շարվածքի գծերը, զարդաքանդակների համապատասխանությունը, այլև արձանագրության բեկորների տառատեսակների նույնությունը, տողերի համընկնելը և ամբողջ բնագրի բովանդակության միասնությունը: Որոշ կասկածի տեղիք կարող է տալ միայն խաչքարի ճակատի բեկորը, որի վրա փորագրված բառերը դժվար են կապակցվում շարունակության հետ: Սակայն այստեղ էլ օգնության է գալիս խաչքարի ճակատի և մարմնի միացման եղանակը. պարզվում է, որ նրանք միացվել են երկաթի հատուկ պահանգով, որն ամրացվել է միացվող մասերի վրա փորված փոսիկներին: Թե՛ ճակատի և թե՛ երկրորդ բեկորի վրա մնում են այդ փոսիկները և ապացուցում, որ սրանք նույն խաչքարի մասերն են:

Առաջին շարքում. Քա ած ողորմեա... բառերից հետո պետք է լինեի եկեղեցին կառուցողի և խաչքարը կանգնեցնողի՝ Բագագի որդի Վարդանի անունը, սակայն կասկածելի համարելով, դժվարանում ենք վերականգնել:

2-րդ շարքում ՈԾԴ թվագրից հետո վերականգնում ենք. ի թագաւորութեան... հետևելով այլ վիճակներին (օրինակ Սանահնում, Հատիճում), որտեղ նույնպես Վրաց թագուհի Թամարի տիրապետությունը այսպես է որակվում և ոչ թե յիշխանութեան կամ յաշխարհակալութեան ձևերով:

4-րդ շարքում մեծ եւ հզար բառերին պետք է հաջորդեին Մահկանարեղի իշխան Սաղունի տիտղոսները և ավարտվեին ոչ զրեբով: Պակասող մասի տարածությունը նկատի ունենալով, վերականգնում ենք [իշխանին Կայեց] ոչ Սագունին: Արդ, ով է այս մեծ և հզոր իշխան Սաղունը: Սա Կայենի և Մահկանարեղի մեծ իշխան, աթաբեկ ամիրսպասալար Սաղուն Բ-ի պապն է, Ամիր Քուրդ Արծրունու որդին, Շերբարոքի հայրը: Այս Սաղուն Ա-ի տոհմագրության համար հավաստի տվյալներ է տալիս Կ. Գանձակեցին: Խոսելով Ամիր Քուրդի մասին նա հայանում է. «Սա է հայր Սաղունին և Դաւթի, պապ Շէրբարոքին, հօրն Սաղունին», միայլ տեղ՝ «այլոց իշխանաց բարեպաշտաց, որդուց Քուրդին՝ Դաւթի և Սաղունին»¹ Բացի այս տեղեկություններից, Սաղուն Ա-ի մասին հիշատակություն կա նաև Շամշադինի շրջանի Ծաղկավան գյուղի մոտ գտնվող Շխմուրադ կոչվող վանքի մի արձանագրության մեջ, որտեղ ասված է. «Ես՝ Գրիգոր շինեցի զխորանիկս ածաբնակ հրամանաւ Սաղունոյ մեծի իշխանի»: Այս արձանագրության թվականը արտահայտված է անսովոր ձևով, հավանաբար հայկական փոքր կամ Սարկավագաղի տոմարով. «լամի : Կ : երորդի : Ե : երորդի նորո շրջագախս...», այսինքն պետք է հասկանալ՝ 1116+65 (ԿԵ)—1181թ., որը և համապատասխանում է Քուրդի և նրա որդի Սաղուն Ա-ի իշխանության տարիներին: Այս բնագրի առաջին հրատա-

¹ Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 209. 215:

լակի: Մ. Բարխուդարյանցը վերը հիշված կապակցութիւն մեջ Սադունի անունը վերծանել է Սա-
դորնո մեծի իշխանի², ուստի և այս անվամբ առանձին անձ է համարվել Հր. Աճառլանի բառարանում³:
Մինչդեռ, ինչպես երևաց Կ. Գանձակեցու տոհմագրութիւնից, Շխմուրադի Սադունը նույնն է Մա-
կարավանքի խաչքարի բնագրում հիշատակված Սադունի հետ, որը Գուրգ Արծրունու որդին էր:

6—7-րդ շարքերում յառաջնորդութեամբ ուխտիս Յոհաննիսի եւ վարդապետիս Գրիգոր-
ոյ... Յոհաննեսը վանքի առաջին առաջնորդն է, Աստվածածին եկեղեցին կառուցողը, իսկ ով է
վարդապետ Գրիգորը և ինչու է նրա անունը նշված վանահոր հետ միասին: Հավանաբար Գրիգորը
հոգևոր կենտրոնի միաբանութիւն աչքի ընկնող և ազդեցիկ վարդապետներից է, Յովանեսի օգնա-
կանը կամ գուցե աթոռակիցը, այլապես անհասկանալի կմնա նրա անվան հիշատակութիւնը մի
այսպիսի կարևոր շինարարական արձանագրութիւն մեջ:

8-րդ շարքում Վարդանի հոր անունը Բազազա իշխանի բնագրում պարզ ընթերցվում է և որևէ
տարակալս չի հարուցում: Անձնանունը առաջին անգամ է հանդիպում հայ իրականութիւն մեջ և
այլուստ ավանդված չէ: Անշուշտ կարող էր առաջանալ արաբ. bazzaz—գործվածքեղեցի վանառա-
կան բառից:

12—13-րդ շարքերում՝ շինեցի եկեղեցիս եւ եղի ի վերայ զխաչս լուսոյ... չպետք է բառացի
հասկանալ, ուզում է ասել, թե եկեղեցու շինութիւնն ավարտել է այս խաչքարի կանգնումով, որը
ամփոփումն է շինարարական աշխատանքների:

14—15-րդ շարքերում ոչ զոք ունեի աւգնեակն, բայց միայն զհոգևոր եղբայրն մեր Ալեք-
սեոս... հրատարակող Գ. Մարգարանը Ալեքսեոսին վանքի միաբաններից է համարում: Բնագիրը
այսպիսի եզրակացութիւն հիմք չի տալիս: Այստեղ Վարդանը իր չորս եղբայրներից զրկվելով,
օգնութիւն է ստանում «հոգևոր եղբայր» Ալեքսէոսից, որը տվյալ դեպքում եղբայրացյալի իմաստ
է արտահայտում և կարող է հոգևորական կամ վանական չլինել: Տողի շարունակութիւնը զալիս է
հաստատելու այս միտքը. զի և սա (Ալեքսեոսը—Ս. Ա.) փոխանակ թաղելոյ զիս, եղաւ ձեռամբ...
ի գերեզմանի: Մարգարանի վերծանութիւն մեջ այս տողն աղավաղված է «փոխանակ թաղելոյ զիս,
եղաւ ձեռամբ...» և իմաստ չի արտահայտում: Այդպիսով, եթե Ալեքսէոսը վանքի միաբաններից
լիներ, Վարդան իշխանը նրա մասին չէր գրի... եղաւ ձեռամբս ի գերեզմանի...:

4-րդ բեկորի ձախակողմյան մասը թեքութեամբ շարված է. ուստի և 17—19-րդ տողերի
սկիզբները, մոտ 10 տառաչափ պակասում են, որով և դժվարանում է շարահյուսական կապը նա-
խորդ բեկորի բնագրի հետ: Հավանաբար, 16 և 17 տողերի արանքում եղել է առնվազն մեկ տող ևս,
որը շարվել է: Ընդհանուր առմամբ այս վերջին բեկորի արձանագրութիւն առաջին երկու տողերը
լավ չեն վերծանվում, իսկ վերջին երկուսը՝ անեծքի հանրահայտ բանաձևը լինելով, այդ վիճակով
էլ վերականգնվում են հաջողութեամբ:

280. ԳԼԽՍՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, հարավային պատին, պատուհանի տակ,
թռչունի բարձրաքանդակից ներքև, 10 տող:

ՅՈՒՍՈՎՆԱՅԵՍՅՈՎԱԵՍԲԱՅԱ
ԱՅԵՏՈՒԶԻՄՅՈՒՄԱԴԴԻՄԵՑ
ՆԵՑԻՅԱՆՏԵԱԶԱՅԻՐԱԷՆՈՐԵՑ
ՆՉԱՅԻՆԵԻԸՆԾԱԵՑԻԱԾԱԾՆԻ
ՍՅՈՎԱԵՍԱՌԱԶՆՈՐԵՍԷՆԲՍ
ԵՏՈՒԵԲ:ՁԱԻՏԱՆԻԱՇԽԱՅԱՄ
ՐԱ:Ա:ՁԱՆԻՆԶ:Ա:ԻՄԱԻՆՉՈՒԶԻՆՈՎՉԱՅԻՐ
ԽԱՓԱԷ:ՅԱՅ:ԳԾ:ԷՎԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԱՆԻԾԱԾԵ

ԹՎ. ՉԹ

² Մ. Բարխուդարյանց. Արքաի, Բաբու, 1895, էջ 335.

³ Տե՛ս Հր. Աճառլան, Հայոց անձ. բառարան, Գ, Երևան, 1948, էջ 337.

:ՅՈՒՍՈՒՆ ԱՅ, ԵՄ՝ ՅՈՎԱՆԵՍ ՔԱՂԱՆՍԱՅ ԷՏՈՒ ՁԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ, ԷԳՆԵՑԻ ՅԱՐՏԱԻԱԶԱ ՅԻՒՐ ԱՄԷՆ ՈՐԴԵՑԻ ՉԱՅԳԻՆ ԵՒ ԸՆԾԱՆԵՑԻ ԱԾԱԾՆԻՍ: ՅՈՎԱՆԷՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍԵՏՈՒՆ Բ: ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ԱՇԽԱՐՀԱՄՍՏՐԱՆ, :Ա: ԺԱՄՆ ԻՆՁ, :Ա: ԻՄ՝ ՄԱԻՐՆ՝ ՉՈՒՉԻՆ: ՈՎ ՉԱՅԳԻՆ ԽԱՓԱՆԷ,: ՅԱՅ: ԳՃԺԸ: ՀԱՅ-ՐԱՊԵՏԱՑՆ ԱՆԻԾԱԾ Է:ԹՎԻՆ՝ ՉԹ:

Լուսանկ. 103

Իրաւիք. Բնագիրը փորագրված է գեղեցիկ, խորաքանդակ գրերով և պահպանվել է միանգամայն անաղարա, ուստի և նախորդ հրատարակողներն այն վերծանել են համարյա անսխալ:

2—3-րդ շարքերում եզրեցի յԱրաւաւազա զայգիւն, բոլոր ընդօրինակողները կարդացել են՝ եւ գեցի յԱրաւաւազա, որ սխալ է. նախ՝ առաջին գիրը ոչ թե ե է, այլ՝ ե, և ապա՝ քարի վրա չկա ռ գիրը: Մեր կարծիքով այստեղ ոչ թե եւ շաղկապն է, այլ անցյալ կատարյալ ժամանակի բայածէկ ե(=ե) նախահավելվածը, որն ինչպես ցույց ենք տվել, ավելադրաբար գործածական էր այդ դարերում¹:

3—4-րդ շարքերում ...յիւր ամէն որգեցն, սպասելի էր կանոնավոր որդուցն կամ որդեացն, ըստ այդմ, տեղի է ունեցել եա երկբարբառի պարզում ե ձայնավորի, սակայն շեշտակիր վանկում: Թողնում ենք բնագիրը, այն բարբառային արտասանութիւնն համարելով:

7-րդ տողում ...իմ մաւրն՝ Ջուզիւն, իգական անձնանվան տրական հոլովածէն է, ուղիղ ձևը այլուր վկայված է Ջուզայ, որ նշանակում է արծաթի դրամ. ըստ այդմ տրականը պետք է լիներ Ջուզային, բայց խոսակցական լեզվի արտասանութիւմբ դարձել է Ջուզիւն, այսինքն այ հնչյունակապակցաթիւնը սղվել է (հմմտ. աղայ-աղայիւն-աղիւն, փեսայ-փեսայիւն-փեսիւն):

8-րդ շարքում ԳՃԺԸ պետք է վերծանել ՅԺԸ (318) հայրապետացն անիծած է (ԳՃ=300): Նույն շարքի վերջում զայգիւն ավելացված է հետագայում. նախապես անեծքի բանածէն սկսվել է ով խափանէ բառերով, իսկ հետո մտածել են ավելի կոնկրետացնել այն, և բնագիրը խմբագրել են ով խափանէ զայգիւն, ուստի և զայգիւն փորագրվել է հարևան քարի վրա:

9-րդ շարքում այլ, ավելի մուգ քարի վրա, ԳՃԺԸ գրերից ներքև փորագրված է ԹՎԶԹ, իսկ սրանից մոտ մեկ մետր ցած կրկնված է ԹՎԶԹ. նախորդ բանասերները այս թվականը չեն նրկատել կամ սուլն արձանագրութիւնը չհամարելով՝ չեն հրատարակել: Մեր կարծիքով այդ թվագրերը վերաբերում են քննվող բնադրին և ցույց են տալիս նրա ժամանակը:

281. ԳԼԽՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևելյան պատին, հյուսիսային որմնախորշից դեպի աջ, փոքրիկ սլատուհանի տակ, 6 տող.

+ՅԱՆՈՒՆ ԱՅ ԱՅՍԻՄԳԻՐԷԱՇՈՏՈ ՎԱՍԱԿԱՌԿԱՍԱՆԱՄԷՏՈՒՄԷ ՉՄԱՐԳՍԻ
ԻՄԱԿԱՎԱՎԱՍԻՅՈՎԱՍԻՄԱԾԵՂԲԱՅՐՍՄԵՐԿԵՆԱՅՈՒՄԵՐՈԳԵՆՈՅՍՈՒՄԵՐԾՆ
ՈՂԱՅՅԻՇԱՄԱԿԻՆԻ ՈՎԱՅՍՄԲԱՆԻՍՅԱՅՑՈՂԵՈՒԿԱԿԱՌԱԿՈՒԿԱՄԱՅԼՅԵՏ
ՈՒՆԻ:ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏ ԱՅՆՉ ՈՎ ԱԾԵ ՅՈՒՄԱԻ ՎԱՂԱՔՆԷՍԱՄԱՆԱԻՄԱՍՆ
ԱԿԻՑԷ: ԵՍՅՈՎԱՆԷՍԵԻԱՅԼՍԻՄԱՆԷՍՍՈՒՄԱՔԱՇՈՏՈՒՄԱՐԻՆ: Դ: ՁԱԻՄԱՆԻ
ՄՐԲ ՈՅՔԱՌԱՍՆԻՑԻ ՈՒ ԽԱՓՆԷ ԴԱՏԻՅԱՅ

+ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ԱՇՈՏՈ, ՎԱՍԱԿԱ ՈՒ ՀԱՍԱՆԱ, ՈՐ ԷՏՈՒԱՔ ՉՄԱՐԳՍՆ Ի ՄԱԿԱՐԱՎԱՆՍ Ի ՅՈՂԱՆԷՍԻ ԻՄՍ ԱՄՏՈՒԱԾԵՂԲԱՅՐՍ, ՈՐ ՄԵՐԿԵՆԱՅ ՈՒ ՄԵՐ ՈԳԵՆՈՅՍ ՈՒ ՄԵՐ ԾՆՈՂԱՅ ՅԻՇԱՍԱԿ ԼԻՆԻ: ՈՎ ԱՅՍ ԲԱՆԻՍ ՅԱՅՑՈՂ Է ՈՒ ՀԱԿԱՌԱԿ ՈՒ ԿԱՄ ԱՅԼ ՅԵՏՈՒՆԻ: ԵԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ՆՁՈՎԱԾ Է, ՅՈՒԴԱԻ ՎԱՐՉԱԻՔՆ Է, ՍԱՍԱՆԱԻ ՄԱՍՆԱԿԻՑ Է: ԵՄ՝ ՅՈՂԱՆԷՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՈՒԱՔ ԱՇՈՏՈ Ի ՏԱՐԻՆ :Դ: ԺԱՄ Ի ՏԱԻՆԻՄՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

¹ Տե՛ս Ս. Ավագյան, Վիճակագրական որոշումներ, ԳՔԸ, 1968, № 4, էջ 207:

Հրատ. Մարգարյան, 1954, Դ, 33
Լուսանկար 103

Գիտելիք. Նվիրատվութիւնը կատարված է Աշոտ, Վասակ ու Հասան եղբայրների անունից, իսկ հատուցումը սահմանվում է միայն Աշոտի համար, հիշատակարանն էլ միայն նրա անունով է, այս ըմ գիրքն, ~~զորով որ~~ ~~պատահաբար~~ ~~հանձնար~~ ~~հանձնար~~ ~~է~~ ~~պատահում~~. այս իմ գիրքն Դաւթի, որ տուաք...

այս իմ գիրքն Յոնաթանի, որ տուաք: Այստեղ, հավանաբար նպատակ է հետապնդում շեշտել զըլ-խավոր, առաջնակարգ հեղինակի անունը: Քննվող բնագրում թեև երեք եղբայրներն են նվիրատունեռո, բայց նրանցից ավագը, առաջնակարգը, հեղինակավորը երևի Աշոտն է, ուստի և բանաձևում ընդգծված է նրա անունը (այս իմ գիրքն): Առաջին շարքում հառաք զՄարգսն, անշուշտ, Մարգս տեղանունն է, հավանաբար գլուղի կամ հանդամասի անուն, որ ծագում է մարգ բառից: Կառուաք անց. ևստարյալ ժամանակի հոգնակի ի դեմքի բայաձևում է նախահավելվածը ավելադրութիւմը է գործածված, որ հանդիպում է նույն ժամանակների այլ վիմագրերում:

2-րդ շարքում ի Յոնաթանի իմ անեղբայրս (աստուածեղբայր), այսպես կամ տեառեղբայր էր կոչվում արդար Յակովբոսը Մ. Գրքում, հոմանիշ է արդարութիւն: Տվյալ դեպքում ցանկացել է շեշտել Յովանեսի արդարամտութիւնը: Նույն շարքում որ մեր կենաց ու մեր ոգեւոյս ու մեր ծնողաց յիշատակ լինի-ոգեւոյս ձևը դժվար է բացատրել գրարարի կանոններով. մեր կարծիքով այստեղ գործ ունենք միջին հայերենի հոլովաձևի հետ-ոգի բառի հոգնակին դասական ոգիք-ի դիմաց միջին հայերենում կլինի ոգեւի, որի սեռականը՝ ոգեւոյ, այստեղից էլ՝ ոգեւոյս (ոգեւացս, ոգւոցս), այսինքն՝ մեր ոգիներին:


3-4-րդ շարքերում՝ ով այս բանիս յայցող է ու հակառակ ու կամ այլ յետ ունի., այստեղ յայցող է նշանակում է ով այս բանիս դեմ է, հայցող է, բողոքավոր: Կամ այլ յետ ունի, նշանակում է կամ այլ միտք ունի, այլ նպատակ է հետապնդում (յետ = հետո, հետագա, գալիք):

4-5 շարքերում Յուզաի վարձաւքն է, սատանաի մասնակից. այստեղ վարձաւքն է ընթերցումը կասկածելի է, քանի որ հստակ չի երևում, թե ինչ գիր է կցված Ա-ի աջ ստեղծի վրա՝ ւ, թե ն: Հետեւելով Գ. Ասրգսյանին, մենք նույնպես վերծանում ենք Յուզաի վարձաւքն է. արդ ինչպես հասկանալ այս կապակցութիւնը. առաջին հայացքից թվում է, թե վարձաւքն վարձ բառի հոգնակի գործիական հոլովաձևն է, իրականում դա անհավանական է, ըստ որում վարձը միայն ու հոլովման է՝ վարձու, վարձուց, վարձուք. բացի դրանից անիմաստ է Յուզաի վարձաւքն է եթե վարձաւքն դիտենք իբրև գործիական հոլովաձև: Թվում է, այս տառաշարքը պետք է վերականգնել վարձաւք, որ նշանակում է վատ արարքների համար տրվող վարձ, նաև՝ պոռնկավարձ և համապատասխանում է բնագրի իմաստին:

Արձանագրութիւնն ուշագրավ է նաև այն տեսակետից, որ շարադրանքում առատորեն գործածված է ոչ թե և շաղկապը, որ սովորական է այդ դարերում, այլ՝ ու: Հավանաբար իրողութիւնը պետք է բացատրել խոսակցական լեզվի ազդեցութիւմը. թեև դասական հայերենում էլ ու-ն սակավ դեպքերում կիրառվում էր: Անժխտելի է, որ ու շաղկապը IX—XIV դարերի վիմագրութիւն մեջ հազվադեպ է:

282. ԳԻՍՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ, արևելյան պատին, փոքրիկ պսակավոր պատուհանի վերևում և երկու կողմերին, 11 տող.

ԻՅԱՆ ՈՂ ԱՅ ԱՅՍԻՄԳԻՐԵՎԱՍԱԿԱԿՈՒՄ ԿԱՄՈՒՄԵՆՈՒՄ ՈՒՄԻՆԿԱՆԻՅԱ
ՅԱՌԱՋԻՄԴՈՒՄ ԵՅՈՒՆԻՍԻՋԻՄԴՈՒՄ ԱՅ ԿԿԱՌԹ ԿԵՆԵՊ ԱՅՐՈՒՄ
ԿԱԿԱՅՈՒՄ ԱՇՈՍ ՈՒՄԳՐԻԳՈՒԵՎԱՋԵԻԵԻԻԲԵՍՄԱՐՆԵԻՉՈՒՆԻՒՇՆ ՈՒՄ
ՅԱՅԻՐԱ ԱՄՅԱՋԱՅՆԱՅԻՆԱՍՈՒՄԵՍ
ԵՆՈՋՅԻՄԱՋԳԵՆՈՋՅԱՄԱՅՈՋԵՆԱՆԵՌՈՋ
ՄԲԵՄԵՆԴԻՄԱ ԱՅ ԵՎԱԵԼ ԶԱՆՆՈՒ
ԵՍՅԵՅԱՒՄԵՎԱՎԱՌԱ
ՅՁՐԿԵՍՅԻ ԵՅԵՄՄԱՅԱ
ԲՁԱՅԱՎ ԿԻԳԵԼԲ ԱՌ
ԼՐՅԻՄՎԱՅԱԿԱՅԱՆ ՈՒՆԱՐԱ
ՍՅԵՆ ՈՎ ԽԱՓԱԵՂԱՄԻՅԱՅ



+ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՎԱՍԱԿԱ ԿՈՒՏԿԱՆԱ, ՈՐ ԷՏՈՒԻ ԶԱՅԳԻՆ ՎԱՆԻՑՍՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ՛ԵԱՆՆ՝ ՅՈՀԱՆԻՍԻ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹ՛ԵԱՄԻԲ ԱՅ, ՎԿԱՌԻԹ՛ԵԱՄԻԲ ԱՍԷՆ ԵՂԲԱՅՐՈՒԹ՛ԵԱՆՆՍՍ, ԿԱՄԱԿՑՈՒԹ՛ԵԱՄԻԲ ԱՇՈՏՈ ԵՒ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՎԱԶԷԻ ԵՒ ԻՐԵԱՆՑ ՄԱԻՐՆ: ԵՒ ԶՈՒՆԻ ԻՇԽԱՆՈՒԹ՛ԻԻՆՆՅԱՅ ՀՐԱՄԱՆԱՑՆ ԶԱՅՆ ԱՅԳԻՆ ՅԱՍ ՈՒԽՏԷՍ ԴԱՆՆԵՆ, ՈՉ ՅԻՄ ԱԶԳԷ ԵՒ ՈՉ ՅԱԻՏԱՐԱՑ, ՈՉ ԻՇԽԱՆ ԵՒ ՈՉ ԴԱՅՂՆ ՈՔ: ԵՒ ՈՐ ԲՆԴԻՄԱՆԱՅ ԵՒ ԶԱՆԵՆ, ՆԶՈՎԵՍՏԻ ԵՒ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՓԱՌԱՅՈՒՑ ԶՐԿԵՍՑԻ: ԵՒ ՅԵՏ ՄԱՀՈՒՄՆՆ՝ Բ: ԺԱՄ ՅԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ՛ԱԻՐՆ ՅԻՄ՝ ՎԱՍԱԿԱ ՅԱՆՈՒՆ ԱՐԱՍՑԵՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Սարգսյան 1954, Դ. 33
Լատակար 103

Գիտելիք. Առաջին շարքում հստակ չէ նվիրատուի անունը: Սարգսյանն այն կարդացել է Վա- սակա Կուտկանա, որից չի հասկացվում, թե ինչ հարաբերություն ունի Կուտկան(ա) անունը Վա- սակի հետ: Եկեղեցու ներսի, հյուսիսային ավանդատան արձանագրության մեջ իշխան Վասակը Կուտկանի թոռն է (ես՝ Վասակ իշխան, թոռն Կուտկանի): Մեր կարծիքով ոչ մի հիմք չկա այս Վասակներին տարբեր անձեր համարելու, ուստի հարմար է կարդալ. Վասակա Կուտկանա..., են- թադրելով, որ փորագրողը բաց է թողել թոռնի բառը, կամ գուցէ առանց դրան էլ Կուտկանա հատ- կացուցիչը մատնանշել է Վասակի ով լինելը (Վասակ Կուտկանա): Բնագրում Կուտկանա անվան վեր- ջին գիրը պարզ չի երևում և կարող է կարդացվել Ա կամ Ս: Ինչ վերաբերում է Կուտկան անձնան- վան տարբեր հոլովումներին (Կուտկանի, Կուտկանա), ապա այդպիսի փոխանցումները սովորական երևույթ են ոչ միայն այդ ժամանակների վիմական բնագրերում, այլև գրաբար մատենագրական աղբյուրներում (Գրիգորի, Գրիգորոյ, Արշակի, Արշակայ այլն):

Նույն շարքում որ ետու ի գայգին Սարգսյանը մ գրի վերականգնումով վերծանել է՝ ետու ի[մ] գայգին, թեև զ նախդիրի նման կիրառությունը դժվար բացատրելի է, քանի որ այս պարագայում սպասելի էր ետու գիմ գայգին: Մենք վերծանում ենք. որ ետու ի գայգին, որտեղ ի-ն առաջին դեմքի (անց. կատարյալ ժամանակ) սաստկացման արտահայտությունն է և հաճախ է պատահում այլ բնագրերում ևս:

4-րդ շարքում գայն գայգին յաւ ուխտես, կարող է յ գրի պատահական բացթողում լինել (յաւս>յաւ), բայց հնարավոր է նաև այստեղ դիտել այ երկբարբառի պարզում ա-ի, որ հաճախ է դիտվում այս դարերի վիմագրության մեջ և արդյունք է բարբառային արտասանության ազդե- ցություն:

6-րդ շարքում բնդիմանայ բառը թողնում ենք անփոփոխ, ենթադրելով որ երկրորդ դ-ի բաց թողումը արտացոլում է այդ հնչյունի անկում արտասանության մեջ:

8-րդ շարքում եւ յետ մեհեան, Սարգսյանը կարդացել է և յետ մեհեան, հավանաբար երկրորդ Ա-ի աջ ստեղծի վրա նկատելով լ գիր: Քարի վրա և լուսանկարում այդ տառաշարքը հստակ կար- դացվում է մեհեան, ուստի այստեղ որևէ հնչյունափոխական երևույթ չնկատելով, վերականգնում ենք հեղինակի բաց թողած ու-ն և վերծանում յետ մեհ [ու]ան:

Կուտկանի թոռ Վասակը, հավանաբար, տեղական մեծահարաստ և ազդեցիկ իշխաններից է, Մահկանաբերդի Արծրունիների վասալներից. այդ երևում է ոչ միայն նրա մեծարժեք նվերներից (մի այգի և 80 դահեկան), այլև այս արձանագրության ողջ շարադրանքից և տոնից: Այսպես, Վա- սակն ինքն է սահմանում նվիրված այգու դիմաց իրեն հասանելիք պատարագների չափը, փոխա- նակ վանքի առաջնորդն այդ անելու (Բ: ժամ յաւագ ցինգզաբաթ աւրն յիմ՝ Վասակա յանուն արասցեն): Հայտնի է, որ Զաքարյան իշխանները և նրանց վասալները նույնպես իրենք էին որո- շում հատուցման չափը՝ արձանագրություններում հատուկ բանաձևով հաստատելով վանական կենտ- ռոնի պարտականությունը՝ եղի լուծ ի վերայ սպասաւորաց սորա (Մորո ձորո) վանք, 1213 թ.), եղի սահման գայս սք յաւագ խորանց պատարագի զքս յիմ յանուն (Հառիճ—1201 թ.) և այլն: Մակարավանքի վիմագրության տվյալներով դժվար է որոշել, թե ովքեր են այստեղ հիշատակված, Աշոտը, Գրիգորը, Վաչեն և նրանց մայրը, որոնց կապակցությամբ Վասակը կատարում է իր նվիրաբերությունը:

2-րդ շարքում եւ զիմ այգին յԱրքունիքն այգեպանով... Ջալալյանցը վերծանել է՝ եւ զիմ այգին արքունիքն, այգեովն, որ անիմաստ է: Սարգսյանը ստույգ վերծանելով՝ յանքունիքն՝ այգեպանով... յարքունիքն տեղանուն չի դիտել: Մեր կարծիքով յԱրքունիքն պետք է հասկանալ այն վարի (դուղ, դաշտամաս, անտառ) անունը, որտեղ գտնվել է նվիրվող այգին: Այգու հետ վանքին է նվիրվել նաև շինականը, այգեպանը: Սա մեր քննած արձանագրություններում առաջին դեպքն է, երբ գլաղացի է նվիրվում վանական կենտրոնին: Մեր նպատակից դուրս է պարզել, թե այդ այգեպանը վանքից ինչ աստիճանի կախման մեջ է գտնվել: Մի բան պարզ է, որ այս օրինակը գալիս է ավելացնելու վանքերին շինական նվիրելու հիշատակությունները՝ XII — XIV դարերի վիճակագրական հուշարձաններում:

320. ԳԱՎԻԹ. ներքուստ, հյուսիսային պատին, լուսամուտից աջ, նախորդի տակ, տառերը կարմրադեղնով ներկած, 3 տող.

ԵՍՇՐՈՒԱԼԵԾՅՈՒՍՈՎԱԲԱԲՆԱԵՏԱԱԾԱԾՆԻՍԵԻԵՏՈՒԻ: ԴԱՀԵԿԱՅԵԿԵՂԵՑ
 ԻՍԱՌԱՋՆՄԻՄԴԵԻԹԵԻՄԱԲՆԱՔՍԵՏՈՒՆԻԶԲԱԲԶԱԴԻՍԱԼԵՆՅՈՎԱՆՈՒՄՄ
 ԱԵՄՏԻՆՈՎԻԱՓՆԱԵԻՄԵՂԱՅՆ ՏԵՐԷ

ԵՍ՝ ՇՐՈՒԱՆ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ԱԾԱԾՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ : Խ: ԴԱՀԵԿԱՆ ՅԵԿԵ-
 ԴԵՑԻՍ: ԱՌԱՋՆՈՐԴՍ ԳԱԻԹ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ : Բ: ԱԻՐ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ
 ՅՈՎԱՆՆՈՒ, ՆՈՐ ՏՍԱՐԵՄՏԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԵՐ Է:

Հրատ. Ջալալյանց, Ա. 150, Սարգսյան, 1954, Ե, 50;
 Լուսակ. 124

Գիտելիք. Նվիրատուի անունը Ջալալյանցը վերծանել է Շրուևայ, իսկ Սարգսյանը՝ Շրուան: Տարբերության տեղիք է տվել Ն-ի գրության եղանակը. այն փորագրված է Ա-ի ձախ ստեղծի վրա, այնպես որ տառակցումը կարելի է կարդալ և նա, և ան: Շրուան ավելի ճիշտ ենք համարում այն հիմքով, որ անձնանունն այս ընթերցմամբ վկայված է այլուոա և ստուգաբանվում է (Շիրվան, Շրուան)¹, մինչդեռ Շրուևայ(յ) ձևը ոչ միայն ավանդված չէ, այլև անբացատրելի է մնում: Անձնանունն այստեղ նախնագույնն է, քանի որ մինչև այս նույն անունը կրող Շար գյուղի իշխաններից մեկը հիշատակված է 1411 թ.²: Գրվող արձանագրության ժամանակը պետք է որոշել Դավթի առաջնորդության տարիներով (1220 — 1250):

¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, 165:
² Նույն աեռում է՝ 166:

2—3-րդ շարքերում. ի տաւնի Յովհաննու նոր տարեմտին, Զալալանցը վերծանել է՝ ի տաւնի Յովհաննու տարեմտին, իսկ Սարգսյանը՝ ավելի է հեռացել իրականից, ընթերցելով՝ ի տաւնի Յովհաննուն, որ տարեմտին, որն անհասկանալի է:

321. ԳԱՎԻԹ. ներքուստ, հյուսիսային պատին, նախորդի տակ, 3 տող.

ԵՍԱԵԻԿԱԵԾՅՈՒՍՈՎԱԲԱՆԵՑԱՄԾԱԾՆԻՍԵԵՏՈՒԻԻԴԱՆԵԿԱՆԻԳ
ԱԻԻԹՍԱՌԱԶՆՄԴՍԴԻԹԵԲԱԲՆԱՔՍԵՏՈՒՆԵՂ:Ա:ԺԱԽԵՆԻՅՈՎԱ
ՆՈՒՄՏԱԷՄՏԻՆՈՎԱ ՓՆԵԽԵՂԱՅՆՏԵՐԷ

ԵՍ՝ ԱՐԵԻԿ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԱԾԱԾՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ :Ի: ԳԱՀԵԿԱՆ Ի ԳՍ-
ԻԻԹՍ: ԱՌԱԶՆՈՐԳՍ ԳԱԻԹ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Ա: ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՅՈՎԱ-
ՆԻՆՈՒ, ՆՈՐ ՏԱՐԷՄՏԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՅՆ ՏԵՐ Է:

Հրատ. Զալալանց, Ա. 151, Սարգսյան, 1954, Ն, 50,
Լուսանկ. 124

Գիտելիք. նվիրատուի անունը Զալալանցը վերծանել է Արեւի, չնկատելով փոքր-ինչ եղծված բառավորչի կ-ն: Այս վկայության հիմամբ Ն. Մառը հավաստում է ի՛նչ փաղաքջական մասնիկի հնչյունափոխություն Ի-ի, որ նրա կարծիքով տեղի է ունենում հալ բարբառներում (համտ. աղջիկ > ախլի)¹: Արևիկ ար. իգ. անձնանուն է՝ ավանդված XII—XIII դարերի աղբյուրներում:

3-րդ շարքերում... ի գաւիթս առաջին անգամ է հիշատակվում շինքի անունը, մինչդեռ Սարգսյանը այն անվանում է ժամատուն, իսկ գավիթը համարում է գլխավոր եկեղեցուց արևմուտք, նրան կից կառուցված շինությունը:

2—3-րդ շարքերում՝ ի տաւնի Յովհաննու նոր տարեմտին, Զալալանցը և Սարգսյանը վերծանել են կրկնելով նախորդ արձանագրության սխալը՝ ի տաւնի Յովհաննուն որ տարեմտին: Արձանագրության ժամանակը որոշվում է գավթի շինության և Դավթի առաջնորդության տարիներով (1220—1250):

322. ԳԱՎԻԹ. ներքուստ, հյուսիսային պատին, լուսամուտից աջ, զրեբի փոսերը կարմրադեղով ներկած, 6 տող.

ԵՍՎԱԶԷԱՆԲԵՐԹԵՑԻ Ի ՇԻԱՆԱՅԻՇԻՆԵՏՈՒՄԵՑՎԱԿԻ
ԴՍՀԵԿԱԻՇԻՆՈՒԹԵԳԱԻ ԹԻՍՁԵՌԱԲԳԻՐԴՄՎԱԴԱԴԱԴԵՐԻՆԵԻ
ՅԱՌԱԶՆՄԴՈՒԹԵՆԵՐԳ ԱԹԻԵԻՍՈՔՍԵՏՈՒՆԵՂ Ա ՁԱՌՈՒՄԱՆ
ԵԻԾՍԱՌՁԱՐԴԱՆՁԱԵՆ ԵԿԵՆԵՑԻՔՍԻՆՁՊԱՄԱԳԵԱԼՁՔՍ ՈՎԱ

ՓԱԷՄԵՂԱ
ՅՆՏԵՐԷ ԵՂ

ԵՍ՝ ՎԱԶԷ ԱՆԲԵՐԹԵՑԻ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ ԵՏՈՒՎԵՑ ՀԱՐԻԻՐԳՍԱՀԵԿԱՆ Ի ՇԻՆՈՒ-
ԹԵՐԱՆՂ ԳԱԻԹԻՍ, ՁԵՌԱՄԲ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ ԵԻՅԱՌԱԶՆՈՐԳՈՒԹԵՐԱՆՂ ՀԱՌ
ԳԱԻԹԻ: ԵՒ ՍՈՔՍ ԵՏՈՒՆ ՁՂԱԶԱՐՈՒ ՏԱԻՆՆԵԻ ՁԾԱՌՁԱՐԳԱՐՆ ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵ-
ՑԻՔՍ ԻՆՁ ՊԱՏԱՐԱԳԵ(Ա)Ղ ՁՔՍ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԻՄ ՄԵՂԱՅՆ ՏԵՐ Է: ԱՄԷՆ:

Հրատ. Զալալանց, Ա. 149, Սարգսյան, 1951, Ն, 49,
Լուսանկ. 125

¹ Տե՛ս «Վիճական տարեգիր», Առաջաբան, էջ X1:

Գիտելիք. Արձանագրությունը անվթար է պահպանվել, ընթերցվում և վերծանվում է հաջողությամբ: Այն հյուսիսային պատի խորշում հատվածի երեք բնագրերից հնագույնն է: Նվիրատու՝ Վաչե Անբերդեցին պատմական հալտնի անձնավորությունն է, Վաչուտյանց տոհմի նշանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Վաչե Բ, Սարգիս Բուրդ Ա-ի որդին: Իշխանաց իշխան Վաչե Բ Վաչուտյանցը Արագածոտնի, Շիրակի և Ամբերդի վերակացու էր կարգված Ջաքարե սպասալարի կողմից և այդ գավառներում իշխել է XIII դարի առաջին աստիճաններում: Նա կառուցել է Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցին (1215) և նպաստավորել Հովհաննավանքի կաթողիկոս եկեղեցու շինությունը (1217): Ամենայն հավանականությամբ, այդ ժամանակներին է վերաբերում և սույն արձանագրությունը կատարվող նվիրատվությունը: Արդեն նշել ենք, որ գավթի հնագույն արձանագրությունը թվադրված է Ուր (1224 թ.), ուրեմն այդ թվականին շինքի կառուցումն արդեն ավարտված էր, ուստի, եթե նրա շինության տեղությունը ընդունենք մոտ 7—8 տարի, կարող ենք հիմնադրումը համարել 1215—1217թթ., որոնք և կլինեն Վաչե Անբերդեցու նվիրատվության տարեթիվը, թեև այդ մասին քննվող արձանագրությունը պետք է փորագրված լիներ շինքը կառուցվելուց հետո: Մի բան ակնհայտ է, որ Վաչեի 600 դահեկան՝ այդ ժամանակների համար պատկառելի գումարը սովորական օտանդակ նվեր չէ, այլ գավթի շինության վրա ծախսված հիմնական դրամագույն: Այլ կերպ ասած, գավթի հոլակերտ շինքը կառուցվել է հիմնականում իշխանաց իշխան Վաչե Ամբերդեցու գումարներով, քանի որ մյուս նվիրագրերում հիշատակված ընծաներն անհամեմատ նվաղ չափերի են և մեծ մասամբ կատարված գավթի շինությունն ավարտելուց հետո:

Առաջին շարքում ուշագրավ է Անբերդեցի անվան մեջ 'Ի>Ր' դիրքային հնչյունափոխությունը, որ անշուշտ տեղի է ունենում ր-ին հաջորդող դիրքում: Նույն տողում դահեկանների քանակը վեց հարիւր հազվադեպ է, սպասելի էր նույն թվի արտահայտումը այբուբենի գրերով, սվլալ դեպքում ԶՃ կամ Ո: Մեր կարծիքով վեց հարիւր է գրված նվիրատվությունն ավելի ցալտուն տալու, նրա մեծությունն ընդգծելու նպատակով:

1—2 շարքերում ետու վեց հարիւր դահեկանի շինութեան գաւթիս ձևումը Գրիգոր վարդապետին... տարակույս է հարուցում ձեռամբ Գրիգոր վարդապետին կապակցությունը: Սովորաբար նման դեպքերում, ինչպես ցուց է տվել Ս. Բարխուդարյանը, կապակցությունը հասկացվում է իբրև շինքը կառուցող ճարտարապետի կամ վարպետի անվան մատնանշում: Սակայն սվլալ իրադրության մեջ այդպիսի մեկնաբանությունն անհավանական է: Ավելի բնական է ենթադրել, որ Վաչե Անբերդեցին ձեռամբ Գրիգոր վարդապետին ասելով, նպատակ է ունեցել նշել, որ 600 դահեկանը գավթի շինության համար նվիրվել է Գրիգոր վարդապետի միջոցով, վանահայր Դավթի առաջնորդությամբ, քանի որ շարունակության մեջ շեշտվում է, որ այդ գումարի դիմաց սոքա (Գրիգորը և Դավիթը — Ս. Ա.) ետու... ինձ պատարագել... և այլն: Ուրեմն, Գրիգորը ոչ թե գավթի շինող վարպետը կամ ճարտարապետն է, այլ վանքի ազդեցիկ վարդապետներից մեկը, գուցե և Դավիթ առաջնորդի ամբողջակիցը: Արդյոք այս Գրիգոր վարդապետը նույնը չէ գլխավոր եկեղեցու հարավային պատի տակ երբեմն կանգնեցված մեծ խաչքարի չորս բեկորների արձանագրության Գրիգորի հետ, որը այստեղ նույնպես հիշատակված է Մակարավանքի առաջնորդի, այս դեպքում Յովհաննես Ա-ի հետ (...յառաջնորդութեան սր ուխտիս Յոհաննիսի եւ վարդապետիս Գրիգորոյ...): Այո ենթադրության դեմ չի կարող առարկել արձանագրության ժամանակը, որը 1205 թ. է՝ գլխավոր եկեղեցու շինությունն ավարտելու և խաչքարը կանգնեցնելու տարին:

323. ԳԱՎԻԹ. ներքուստ, հյուսիսային սլատին, Վաչե Անբերդեցու արձանագրության տակ, 5 տող.

ԵՍԳՐԻԳՐՎԱՐԴԱՊԵՏՈՐԴԱՐԱՊԵՏՆԻ ՄԵԾՅՈՒՄՈՎՄԻԱ
ԲԱՆԵՅԱՄԾԱԾՆԻՍԵԻԵՏՈՊԱՏՈՒԱԿԱԳՐԵՆՔԵԻՒԱՉՄԱՍԱՄԲ
ՅԱՌԱՋՆՈՐՈՒԹԵՎԵՐԴԵՐԵԻՍԻԱԲԱՆԱՅ ՍԵԻՍՈՔԱԵՏՈՒՆՉ
ՏԱԼՈՍՍԿԵԱՅՉԱԵՆԵԿՅԵՅԻ ՔՍԻՆՉՊԱՏԱԳԵԱԼ ՉԲՍՈՎԵԱՓԱ
ԷԿԱՉԻԱՉՍԱՉԳՐԵԱՆՍՎԱՆԵԼՋԱՆԱՊԱՏՁԵՍՅԻՅԱՅ ՈՉՉ:

ԵՈՒ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, ՈՐԴԻ ԱԲԱՍԱ ԻՇԽԱՆԻ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ԱՊՈՒԼՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԵԱՆՔ ԵՒ ԽԱԶ ՄԱՍՍՄԲՈՒ, ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆՆԻ ՀԱԻՐ ԳԱԻԹԻ ԵՒ ՄԻԱԲԱՆԱՑՄԱՆ ԵՒ ՍՈՒՔԱ ԵՏՈՒՆ ԶԵՍԱԻՆ ՈՍԿԵԱՆՅ ՉԱՐԵՆ, ԵԿԵՂԵՑԻՔՍ ԻՆՉ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՄ: ՈՎ ԽԱՓԱՆԻԷ ԿԱՄ ԶԽԱԶ ԿԱՄ ԶԳՐԵԱՆՍ ԶԱՆԵԼ ԶԱՆԱ, ՊԱՏԺԵՍԾԻ ՅԱՑ: ՌԻԹՈՒԻՆ՝ ՈԶԶ (1237):

Հրատ. Զալալյանց, Ա, 149, Սարգսյան, 1954, Ե, 49, Լուսաեկ, 125

Գիտելիք. Արձանագրութիւնը պահպանվել է անվթար և վերծանվում է հաջողութեամբ: Նվիրաւորաբար Արաւ իշխանի որդի Գրիգոր վարդապետը Սանահնի և Հառիճի վանքերի նշանավոր հոգեւոր ու գիտական գործիչներից է, բազմիցս հիշատակվում է Սանահնի վանքի վիմագրութեան մեջ: Առաջին անգամ Գրիգոր վարդապետը հիշվում է Մեծ գավթի 1211 թ. երկու նվիրագրերում՝ առաջնորդը ար ուխտիս հայր վարդապետ և վարդապետ Գրիգոր, այսինքն այդ ժամանակ նա աթոռակից է եղել Սանահնի առաջնորդ Վարդանին: 1214, 1215 թթ. երկու այլ նվիրագրերում Գրիգոր վարդապետը իբրև աթոռակից է հիշվում Սանահնի առաջնորդ Փիլիպոսին՝ առաջնորդը ար ուխտիս Փիլիպոս հայր և Գրիգոր վարդապետ: Սկսած 1215թ. Գրիգորը հանդես է գալիս իբրև վանքի միանձնյա առաջնորդ և հիշատակված է 1215, 1217, 1229 և 1234 թթ. արձանագրութիւններում: Գրիգորի առաջնորդութիւնը Սանահնի վանքում ընդհատվում է 1219 թ., երբ նա տեղափոխվում է Հառիճի վանք և դառնում այնտեղի վանահայրը: Այդ մասին տեղեկանում ենք մի ձեռագրի հիշատակարանից: Սկսած 1221 թ, մինչև 1229 թ. Սանահնի վանքի առաջնորդ է հիշված Զաքարի և Իվանի քնոորդի Հովհաննեսը, 1229 թ. երկու և 1234 թ. մեկ արձանագրութիւններում նորից Սանահնի առաջնորդ է հիշատակվում Գրիգոր վարդապետը: Սանահնի վանքի հիշվալ բոլոր արձանագրութիւններում Արաւի որդի Գրիգորը հանդես է գալիս իբրև վանքի առաջնորդի աթոռակից կամ ինքնուրույն առաջնորդ, որը ընդունում է նվիրատուների ընծաները և զրանց դիմաց սահմանում հատուցում-պատարագներ: Բացառութիւն է կազմում միայն փոքր գավթի մուտքի 1217 թ. իր իսկ Գրիգորի արձանագրութիւնը, որտեղ նա առաջնորդ լինելով, հանդես է գալիս նաև որպես նվիրատու՝ ետու յԱժժածինս խաչ մի մեծ, ԺԳ դիրք, ետու և այլ արդիւնք:

Մակարավանքի գավթի քննութեան առարկա նվիրագրում ևս Գրիգոր վարդապետը միաբանելով վանքին, նվիրել է պատուական գրեանք և խաչ մասամբ: Ըստ երևույթին, Արաւ իշխանի որդի Գրիգորը ունեցել է ձեռագրերի սեփական հարուստ հավաքածու, որից և մաս է հանել Սանահնի (ԺԳ դիրք) և Մակարավանքի գրատներին: Ինքը՝ Գրիգորը ժամանակի զարգացած ուսումնական հոգեւորականներից է եղել, ժամանակակիցների կողմից հորջորջված՝ մեծ քարուքարե: Նրա առաջնորդութեան տարիներին բարձր զարգացման ու ծաղկման է հասել Սանահնի դպրոցը, որի գիտնական ուսուցիչներից մեկն էլ ինքն է եղել: Ներկայումս բանասիրութեան կողմից հաստատված է, որ «Պատճառաց գիրքը» Գրիգոր վարդապետի հեղինակութիւնն է և երկար տարիներ իբրև դասագիրք է ծառայել Սանահնի վանքի ճեմարանում¹, ինչպես տեսանք, Սանահնի վանքի առաջնորդ Գրիգոր վարդապետի վերջին հիշատակութիւնը վերաբերում է 1234թ., զրանից հետո նրա մասին ոչինչ հայտնի չէ: Նրա մեծ տապանաքարը գտնվում է Սանահնի վանքի բակում, մեծ գավթի մուտքի առջև և ունի Գրիգոր ար վարդապետ որդի Արաւայ² տապանագրութիւնը՝ առանց թվագրութեան: Գ. Ղաֆաղարյանը նրա մահվան թվականը համարում է 1234—1240 թթ., ըստ որում առաջին թվականը նրա մասին վերջին հիշատակութեանն է վերաբերում, իսկ վերջինը՝ 1240թ. երբ նա արդեն չկար: Այդ թվականին Սանահնի առաջնորդ է հիշատակված Հովհաննես վարդապետը: Այսպիսով, Մակարավանքի գավթի սույն արձանագրութիւնից մենք իմանում ենք, որ 1237 թ Գրիգորը դեռևս ապրում էր և նվիրներ մատուցում վանքին:

Դժվար է որևէ կարծիք հայտնել Գրիգոր վարդապետի՝ Մակարավանքին միաբանելու, ընծաներ մատուցելու և այդ մասին սույն նվիրագրերը փորագրելու շարժառիթների մասին: Հարցն ավել-

¹ Տե՛ս Կ. Ղաֆաղարյան, Սանահնի վանքը..., Երևան, 1957, էջ 121, 129, 135:

² Նույն տեղում, էջ 116:

³ Նույն տեղում, էջ 58:

⁴ Նույն տեղում, էջ 175:

լի է բարդանում նաև այն պատճառով, որ բնագրում Գրիգորը չի ներկայանում իբրև Սանահնի վանքի առաջնորդ, ինչպես մնացած բոլոր արձանագրություններում. այլ որպես՝ Գրիգոր վարդապետ, որդի Աբասա իշխանի: Մյուս կողմից, ոչ մի հիմք չկա կարծելու, թե այդ ժամանակ (1237) Գրիգորը այլևս վանքի առաջնորդ չէր և Մակարավանք էր գալիս իբրև նույն վանքի շարքային միաբան-վարդապետ: Դժվար են բացատրվում նաև Գրիգոր վարդապետի՝ Հառիճի վանք տեղափոխվելու և մի քանի տարի աճյալ վանահայրություն անելուց հետո նորից Սանահնի վերադառնալու պարագաները: Այս հարցերը մեր նպատակից դուրս են և հնարավորություններից վեր, սուտի ե թողնում ենք մասնագետների տնօրինությունը:

324. ԳԱՎԻԹ. ներքուստ, հյուսիսային պատին, վերևի մասում, նախորդի տակ, 6 տող.

ԱՅՍԳԻՐՅԻՆ ԱՄԱԿԻՍԱՆՄԱԵԼԻՆԵՐԻՍԱԱՐԴԻՄԻԲԱՉ ՈՒՄՈՐ:
ԱՅԹԻՅՆԵՂԵԼԴԻՄԵՑ ՅԱԾԱԾԻՆՍԵԻՆՈՅՆԱՐՅԱՆԿԱՐԾԱԿԻ
ՆԱՍԵԼՆՐԱՄԱՆԱՐԱՉԻՆԱՆԿԵԼՅԵՐԻՎԱԵՆԵԼԿԵԱՆՑԱՂՈՅՍԵԼԹՈՂ
ԿՍԿԻԾ ԾՆՈՂԱՑԵԻԱՄԻՍՆՈՅԵՆՈՔԱՅԵՏՈՒՆՉ ԻՆՉԱՆՄԱՅՄԾԱԾ
ԻՆՍ ԴԵԻԹԵԼԵԱԲՄԵՍԵՏՈՒՆԵԴՅԱՄԻՍԵՆԻՍՈՅՆԳԱԼԱՍԵԱՆՆՈՎ
ԻԱՓԵԴԱՏԻՅԱՅ ՈՂԲՁ

ԱՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԼԵՂ ՍԱՀՄԱՆԵԱՂԼԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ, ՈՐ ԲԱԶՈՒՄ ՈՐՈԳՎԱՅԹԻՑ
ՆԵՂԵԱՂ, ԳԻՄԵԱՂՅ ՅԱԾԱԾԻՆՍ, ԵԻ Ի ՆՈՅՆ ԱԻՐ ՅԱՆԿԱՐԾԱԿԻՂ ՀԱՍԵԱՂ ՀՐԱ-
ՄԱՆ ԱՐԱՐՁԻՆ, ԱՆԿԵԱՂՅ ՅԵՐԻՎԱՐԷՆ, ԵԼ Ի ԿԵԱՆՑԱՂՈՅՍ, ԵԻ ԵԹՈՂԿՍԿԻԾ ԾՆՈ-
ՂԱՑ ԵԻ ԱՄՈՒՍՆՈՅ: ԵԻ ՆՈՔԱՅ ԷՏՈՒՆ ԶԻՆՉՍ ՆՈՐԱ ՅԱԾԱԾԻՆՍ: ԳԱԻԹ ԵԻ ՄԻԱ-
ԲԱՆՔՍ ԷՏՈՒՆ .Դ. ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ ՀՈԳՈՅՆ ԳԱԼՍՏԵԱՆՆ: ՈՎԼԽԱՓԷ, ԳԱՏԻ ՅԱՅ:
ՈՂԲ ԹՐՈՒՆԻ (1243):

Հրատ. Ջալալյան, Լ. 149, Սարգսյան, 1954, Ե, 49.
Լուսակ. 125

Գիտելիք. Թեև բնագիրը դուրսված է ընթերցվում և տարակարծությունների տեղիք չի տալիս, բայց նրա մեկնաբանությունը որոշ դժվարությունների նետ է կապված: Նախորդներից Ջալալյանը բնագիրը ներկայացրել է լատինի խմբագրված և իրականից խիստ հեռացած (սահմանափակ լինի իրև. սահմանելի, եւ նոքա Ետուն զեմս, փոխ. եւ նոքայ հտուն զինչս և այլն). ուստի նրա վերծանությունը ոչ մի չափով չի օժանդակում դժվար բացատրելի հատվածների մեկնությունը: Սարգսյանը ավելի ստույգ է ընդօրինակել բնագիրը, սակայն նրա մոտ պակասում են ծանոթագրությունները:

Առաջին շարքում այս գիր յիշատակի է սահմանելից երիտասարդի, որ... պարզ չէ, թե ինչ է նշանակում սահմանել (ից) երիտասարդ... արդյոք, երիտասարդ տվյալ իրադրության մեջ հասարակ անուն է, թե անձնանուն, ինչպիսին էր գլխավոր եկեղեցու բնի ճակատի դարդաքանդակված աստղիկների երիտասարդը: Մեր կարծիքով սահմանել տառաշարքում պետք է վերականգնել անցյալ դերբայի վերջավորության ա-ն, որը սղված է բնագրի մյուս անցյալ դերբայներում ևս՝ նեղել (<նեղեալ), հասել, անկել, և սահմանեալ-ը դիտել իբրև երիտասարդի որոշիչ: Այս դեպքում սահմանեալ, սահմանել կարող է նշանակել ի սահման անգր, յեզր կամ ի վախճան հասուցանել, վախճանել: Ուրեմն սահմանեալ երիտասարդ նշանակում է վախճանեալ, վախճանված, ըստ այսմ, առաջին տողի բնագիրը պետք է հասկանալ. այս գիր յիշատակի է վախճանված երիտասարդի, որ... և այլն: Մյուս կողմից, ինչպես արդեն նշել ենք, ութանկյուն աստղիկների մարդու բարձրաքանդակի մոտի երիտասարդ-ը անձնանուն ենք համարում, հուշարձանը քանդակազարդողի կամ

կառուցողի անունը: Ուստի չի բացառվում, որ քննություն ենթակա արձանագրության մեջ ևս երիտասարդը լինի վախճանվածի անձնանունը, թեև բնագրում այն կարող է գործածված լինել նաև հասարակ անվան իմաստով: Շատ գալթակղիչ կլինեի այս երիտասարդներին նույն անձը համարել, որը սակայն բացառվում է, քանի որ եթե սույն արձանագրության երիտասարդը դիմեաց յԱծածինն էլ ի նոյն ար յանկարծակի անկեալ յերիվարեց ել ի կեանցագոյս, ապա բարձրաճանդակի երիտասարդը իբրև ճարտարապետ կամ վարպետ-քանդակող պետք է որ երկար աշխատած լինեի Մակարավանքում, ուստի և նրա մասին չէր կարելի ասել վերոբերյալ բառերը: Բացի դրանից, ժամանակագրորեն ևս անհնար է այդ նույնացումը, որովհետև, ինչպես տեսանք. գլխավոր եկեղեցու շինությունն ավարտվել, հետևապես և երիտասարդի զարդաքանդակներն ու մակագրությունը կատարվել են 1205 թ. առաջ, մինչև սույն երիտասարդի մահը և այդ առթիվ գիր յիշատակին կատարվել է 1243 թ.:

1—2-րդ շարքում որ ի բազում որոգայթից նեղեալ դիմեաց յԱծածին չի հասկացվում, թե ինչ որոգայթներից է նեղվել և Մակարավանքին ապավինել երիտասարդը: Ժամանակը համընկնում է մոնղոլական ավերիչ արշավանքների առաջին տարիներին, նրանց ասպատակությունների և կոտորածների արյունալի ժամանակներին, սակայն դժվար է անվերապահորեն որոգայթները վերագրել մոնղոլների վախճանություններին, որքան էլ հավանական համարենք այդ ենթադրությունը: Մոտավորապես նույն բովանդակությունն ունի Ն. Վարազ վանքի գավթի հարավային մուտքի ճակատակալի 1261թ. արձանագրությունը, որտեղ ասված է. ես՝ Հայրուտ վանեալ զձիավարծ իշխանուքից և հասեալ յայլիս զարհուրեցա ի սպառնալեաց և դիմեցի եղբայրացոց Անապատիս, իհարկե անհասկանալի է մնում, թե ինչ սպառնալիքներից է ապավինում վանքին, արդյոք դա վերաբերվում է օտարազգի ջարդիչների հալածանքներին, դավանական անհամաձայնություններին, թե անձնակախ աշխարհիկ մեղանջումներին, ինչպես այդ նկատում ենք Հայրուտի որդու՝ Յոհանեսի մոտ, նույն արձանագրության շարունակության մեջ. զարհուրեցա ի գործոց իմոց:

325. ԳԱՎԻԹ. հարավ-արևելյան ավանդատան արևմտյան պատին, դեպի երկրորդ հարկի մուտքը տանող աստիճանների տակ, 5 տող.

ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ
ՄԻՆՊԻԱՏԻԱԳ
ՅՈՎԷՆԻՍԻԲԷ
ՀԱՆԱՅԻԵՈՎ
ԽԱՓԱՆԵԴԱՏ ՅԱՅ

ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆՄԻՆ ՊԱՏԱՐԱԳԹՈՎ
ՎԼԵՆԻՍԻ ՔԱՂԱՆԱՅԻ Է: ՈՎԽՈՒՓԱՆ
ՆԷ, ԴԱՏԻ ՅԱՅ:

Հրատ. Սարգսյան, 1954, Ե, 51;
Լուսակ. 120

Գիտելիք. 2-րդ շարքում մին պատարագ. որոշյալ թվականը գոյականի հետ դժվար է բացատրվում զբարբարի կանոններով: Ինչպես նշել ենք, իրողությունը գալիս է ժամանակի խոսվածքներից և կենդանի է արդի մի քանի բարբառներում: Հիմք ընդունելով բնագրի տառաձևերի հնագրական հատկությունները, այն համարում ենք գավթի հնագույն հիշատակարաններից:


326. ԳԱՎԻԹ. հարավ-արևելյան ավանդատան արևմտյան պատին, աստիճանների տակ, 3 տող.

ԻՆՈՂԱԲՈՒՐՄԻՆ
ՊԱՏԱՐԱԳԵՐԱՆՆ
ԱՀԻԱՆԽԱՓԱՆ

Ի ՆՈՅՆ ԱԻՈՒՐ ՄԻՆՊԱՏԱՐԱԳ
ԵՐԱՆՇՊԱՀԻ ԱՆՈՒՓԱՆ:

Հրատ. Սարգսյան, 1954, Ե, 51;
Լուսակ. 126

Գիտելիք. Մին պատարագ ձևի մասին տեսնել նախորդ բնագրի ծանոթագրությունը: Երանջան անձնանունը, ինչպես նշել ենք, ծագում է Իրան և շահ բառերից, որտեղ Իրանը կիրառված է նախնագույն Երան (Էրան) ձևով: Այստեղ այդ անվան հնագույն գործածությունն է, որն անծանոթ է բանասիրությանը:



ԲՎ ՉԻԷ

Յ ՈՒՍՈՎՆ ԱՅ ԵՍՅՈՂԱՆԵՍԵԻ Ա

ՈՒՍԻՆ ԻՄ ՏԻԿԻՆ ՄԻԱԲՆԵՅԱՔ ԱՅԱԾՆ

ԻՍԵԻ ՏՈՒԱՔ ՉԱԵՐՀՈԳՈՅԱՐԴԻԻՆՍՅԵԿ...Ե

ՂԵՅԻՍ Յ ՈՎԱԷՍԵԻ ԱՍԲԱՔՍԵՏՈՒՆ ԱԶ:Ա:ՁԱԻՏԱՆԻ

ՍՐԲՈՅ ԳԱԻԱՆԵԱՆՅՆ ԿԱՄԱՐԻՉՔՆ ԱՐՀՆԻՆ ՅԱՅ


Ի՛, ԹՎԻՆ՝ ԶԻԷ (1278), ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ԵՍ՝ ՅՈՂԱՆԵՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՏԻԿԻՆ ՄԻԱԲԱՆԵՅԱՔ ԱՅԱԾՆԻՈՒ ԵՒ ՏՈՒԱՔ ԶՄԵՐ ՀՈԳՈՅ ԱՐԴԻԻՆՍ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ՅՈՎԱՆԵՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ ՄԵՁ :Ա: ԺԱՄ Ի ՏԱԻՆԻՍՐԲՈՅ ԳԱԻԱՆԵԱՆՅՆ: ԿԱՍԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱՅ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 151, Սարգսյան, 1954, Ե, 51:

Դիտելիք. Արձանագրությունը Մակարավանքի թվական ունեցող վերջին բնագիրն է և փորագրվել է Յովհանես Բ-ի առաջնորդության ասարիներին: Հուշարձանների պահպանության մարմինների ցուցակներում և շրջանի «Ուղեցույցում» այս արձանագրության թվագիրը սխալմամբ կարդացվում է ՆԻԷ (978թ.) և, անտեսանելի բնագրի բովանդակությունը ու նրանում հիշատակված անձերի ժամանակագրությունը, ենթադրվել է, թե այն պատկանում է Մակարավանքի տեղում հնում գոյություն ունեցած մի կառուցվածքի: Այդ շփոթությանը տեղիք է տվել սույն թվագրի Ձ գրի կիսակոր աղեղի վրայի փորագրությունը, որը հեռավոր նմանություն ունի պատկած Ն գրի հետ և, ըստ երեուլթին, փորագրողի վրիպման արդյունք է: Բնագրի այլ մասերում ես մի քանի դեպքերում վարպետի անփութության հետևանքով չեն փորագրված գրերի որոշ գծիկներ (Ա. Մ, աես բնագրի գծագրական ընդօրինակությունը) կամ հապավման գծիկ-պատիվները (ԱՅ, ՅԱՅ): Որ արձանագրությունը ՉԻԷ (1278) թվականի է, հաստատվում է ոչ միայն նրա նվիրատվական բնորոշ բովանդակությամբ, այլև Յովհանես Բ առաջնորդի հիշատակությամբ, որը գործել է այդ ժամանակներում:

Յ-րդ շարքում նվիրատուի անունը՝ Տիկին հատուկ անուն է և այստեղ հանդես է գալիս իբրև այդ անձնանվան նախնազույն վկայություններից մեկը:

1 Տե՛ս 2. Եղիազարյան, Իջևանի շրջանի պատմական հուշարձանների ուղեցույց, Երևան, 1947, էջ 8:




ԵՍՄԻԹԱՐԻԶՍՄԱԲԱՆԵՑԱԱԾԱԾՆ
 ԻՍԵԻՆՈՒԻ:Խ:ԴԱՆԵԿԱՆՅԱՅՐՅՈՎԱ
 ԷՍԵԻՄԱԲԱՐՍՈՒՄՅԱԿՈՒԲԱՍԱ
 ՆԻՆ:ՄԶԱԷԳՐԵՑԻՆՈՎԻԱՓ
 ԱԷԴԱՍԻՆՆ Է

Հրատ. Ջալալյան, Ա. 151, Սարգսյան, 1954, Ե, 50,
 Լուսակ. 127

Գիտելիք. 2-րդ շարքում՝ եւ ետուի :խ: դահեկան, իս գրի տեղում նախապես փորագրված է եղել ի: Դրան համապատասխան էլ 4-րդ շարքում ավելացվել է պատարագների քանակը՝ Ա ժամը դարձնելով Բ ժամ: Նույն շարքում ետուի բալաձեի վերջի ի-ն ավելորդություն է ե չի արդարացվում գրարարի կանոններով, մինչդեռ խոսակցական լեզվով այն իբրև անցյալ կատարյալի եզ. առաջին դեմքի միակ ցուցիչ՝ օրինաչափ է և անհրաժեշտ: Այս դեպքում արդեն ետուի բալաձեում ավելորդաբար է գործածված ե նախահավելվածը, քանի որ վկայված ժամանակաշրջանում անցյալ կատարյալը առանց դրան էր կազմվում (ոչ թե ետու, այլ տուի>ավի): Այդպիսով ետուի ձևում պահպանվել են թե հին հայերենի ե աճականը ե թե խոսակցական լեզվի I դեմքի ի վերջավորությունը:

4-րդ շարքում... :Բ: ժամ եգրեցից, այստեղ արդեն ե (է) նախահավելվածի կիրառությունը չի արդարացվում ոչ գրաբարի և ոչ էլ տեղական խոսվածքների օրենքներով և ցույց է տալիս, որ նրա նշանակությունը այլևս չէր գիտակցվում և գործածվում էր միայն նախնադարյան ձևերի հետևությունով:




ՅԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵՂԱՆՂ ԳԱԹԻ ԴՐԵ-
 ՑԱԻ.Բ. ԺԱՄ ՍԻՍԱԻՆ Ի ՆՈՐ ԿԻՐԱ-
 ԿԷՆ, :Ա: ԺԱՄ ԲՈՒՐԳԱՆՆ ԵԻ :Ա.
 ԳԵՐԳԱ: ՈՐ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԻ ՅԱՑ:
 Ի ՈՉՋ ԹՈՒԻՆՅ:

Հրատ. Սարգսյան, 1954, Ե, 50,
 Լուսակ. 128

¹ Մանրամասն Ս. Ավագյան, Դավիթ Շոթոկա որդու նվիրագիրը և ե աճականի կիրառությունը վիժական արձանագրություններում, ՊՐԶ, 1968, № 4, էջ 205—215:

Դիտելիք. 2-րդ շարքում Բ ժամ Սիսաին, նվիրատուի անունը Սարգսյանը կարդացել է Սիսան, հիմք ընդունելով շարքի վերջի Գ-ի վրա փորագրված ստեղծի անորոշությունը, որը կարելի է բնորոշ համարել և-ի և ի-ի համար: Մեր վերծանությունը՝ Սիսաին սառլգ ենք համարում ոչ միայն ուն պատճառով, որ Գ-ի վրա պարզ տեսնում ենք ի գրի ստեղծը, այլև նրանով, որ անձնանունը մեր վերականգնած ձևով գործածված է քանիցս, մինչդեռ Սիսան տեսքով հայտնի է: Սիսա տնձնանունը վկայված է Հագարծնի վանքի երկու արձանագրություններում: Բ: պատարագ Խոուն Միսիթարա և Սիսահն, Բ: պատարագ առնեն Սեւոսոյ, Սիսային եւ Տուրքկանն (սուլն հավաքածուի №. № 20, 30): Մյուս նվիրատուի անունը՝ Քուրդիկ, Աճառյանը դնում է Քուրդամիր անունների շարքում, իրեն նրանց ալլաձևությունը: Մեր կարծիքով այնքան հավանական է Քուրդիկը համարել միջին դարերում շատ տարածված Քուրդ անձնանվան փաղաքական ձևը: Երրորդ նվիրատուի անունը՝ Դևրգ, բաղմիցս հանդիպում է X—XIII դդ. վիճագրության մեջ և ծագում է Դեորգ անձնանունից:

330. ԳԱՎԻԹ: հարավ-արևելյան սյան խոյակի արևմտյան երեսին, 5 տող.



ՅՈՒՍՈՎՆ ԱՅ, ԵՍ՝ ՅՈՎԱՆԷՍ, ԱՌԱՋՆՈՐԳ ՄԲ ՈՒԽՏԻՍ, ԿԱՄԱԿՑՈՒԹԲ ԵՎԱՅ
 ՍՍԱՀԱՆԵՑ ԱՔՅ ԱՐՁ ԱՄԿԻՆ ԱՊ
 ԱՐԱԱԳՅԱՆՈՒՆԻ ԱԹՈՒԹ Է
 ԱՎԱՅԵՆԱՆԻ ԱՓ ԱՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա. 150, Սարգսյան, 1954, Ե, 50,
 Լուսանկ. 129

Դիտելիք. Արձանագրության ժամանակը պետք է որոշել Յովհաննես Բ-ի առաջնորդության տարիներով՝ 1250—1276 թթ.: Տարակույս է առաջացնում 3-րդ շարքի սահմանեցաք յար զատկին : Ա: պատարագ, կապակցությունը: Ջալալյանցը վերծանել է... սահմանեցաք տարին Ա պատարագ, որ քիչ է նման իրականին: Սարգսյանը նույն տառաշարքը բառանշատել է սահմանեցաք յամ Ջատկին Ա պատարագ, որ թեև նման է բնագրին, բայց անհասկանալի է մնացել յամ զատկին հատվածը: Մեր կարծիքով այստեղ յար պետք է վերականգնել յարութեան և ողջ տառաշարքը կարդալ... սահմանեցաք յարութեան զատկին Ա պատարագ...: 4-րդ շարքում յանուն հաթուրե արասցեն, անձնանունը Ջալալյանցը կարդացել է հաթուրեին, ինչինչ բնագրում հստակ երևում է՝ հաթուրե: Այս իգ. անունը, որի ուղիղ ձևն անտարակույս պետք է լինի հաթուրի, միայն մեկ անգամ տրական հոլովածակով՝ հաթուրե: Երկու բնագրին էլ փորագրված են Յովհաննես Բ-ի առաջնորդության ժամանակ, հաթուրի անձնանունը անծանոթ է բանասիրությանը և հայտնի է դառնում Մա կարավանքի այս բնագրերով:

¹ Տե՛ս Հր. Անտոյան, Հայոց անձնանունների բառարան, Ե, էջ 225:
² Նույն տեղում, Ա, էջ 455:

333. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ. ԵԿԵՂԵՑԻ. ներքուստ, արևելյան խորանի կիսակլոր պատին, լուսամուտից վերև, 6 տող, խիստ քայքայված.

ՅԱՌՆՅ ԱՅՍ ՄԵՐԳԻՐԷՅՈՂՆԻՍԻԵԻՄԼԻԱԲԱՆՑՍՄՈՒԱՔԱԿՆՁԱ

ՅՈՂԱՄՇԻՆԵՑԱՔՉԵԿԵՂԵՑԻՍԻՄԵՐԾՆՈՂԱՑՆՅԱՌՆԱԿՆՁ ՄԵԾՅՈՅՍ

ԿԱԼԱԻԵԻ ՄԻԱԲԱԵՑԱԻՄԵՉԵԻԱԳՆԱԿՆԵՂԵԻԱԴԵՄԲԻՎԱՐՁՆԵԻՎԵՄԱՅԱՄ

:Գ:ԱՐԻՍԱԻՆ ՄԲՍԱԳՍԻՆ ՄՉԱՓԻՆԲԵԿԵՂԵԻՄԼԻԱԲԱՆԵԻՎԱՐՁՆԵԻՎԵՄԱՅԱՄ

ԱԵԻԿՆԴՅԻՐԱԿՆՁԱՌԼԻԱՓԱՆՂՄՈՅԿԱՄՅԱԻՄԱՑՆՁՈՒՍԱՌՑԵՅՄՅԵՄԱ

ՍՆԸՆԴՅՈՒԴԱԻԱՌԳԵ

ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԱՅՍ ՄԵՐ ԳԻՐ Է ՅՈՂԱՆԻՍԻ ԵԻ ԻՄ ՄԻԱԲԱՆԱՑՍ, ՈՐ ՏՈՒԱՔ ԱԿԱՆՁԱ: ՅՈՐԺԱՄ ՇԻՆԵՑԱՔ ՁԵԿԵՂԵՑԻՍ Ի ՄԵՐ ԾՆՈՂԱՑՆ ՅԱՆՈՒՆ, ԱԿԱՆՁ ՄԵԾ ՅՈՅՍԿԱՆԱԻ ԵԻ ՄԻԱԲԱՆԵՑԱԻ ՄԵՉ, ԵԻ ԱԻԳՆԱԿԱՆ ԵՂԵԻ ԱՐԳԵԱՄԼԻՔ Ի ՎԱՐՁՆ: ԵԻ ՏՎԵՄ Ա ժԱՄ | Գ: ԱԻՐ Ի ՏԱՐԻՆ ՍԲ ՍԱՐԳՍԻՆ, ՈՐՉԱՓ ԻՆՔՆ ԿԵՆԳԱՆԻ Է ԻՐ ՄԱՐԻՆ ԵԻ ՀԱԻՐ ԵԻ ՀԱՍԱՆՍԱ ԵԻ ԿԵՂԵՂԱՆԵԱՅ ԻԻՐ՝ ԱԿԱՆՁԱ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ՏԻՄՈՅ ԿԱՄ ՅԱԻՏԱՐԱՑ, ՆՁՈՎՍ ԱՌՑԷ ՅԱՅ ԵԻ ՄԱՍՆ ԸՆԴ ՅՈՒԴԱԻ ԱՌՑԷ:

Գիտելիք. Չնայած իր երեսլի տեղադրությանը, այս ընդարձակ արձանագրությունը չի նկատվել հուշարձանախումբն ուսումնասիրողների կողմից և չի հրատարակվել: Դրան մասամբ նպաստել է եկեղեցու ներսի անբավարար լուսավորվածությունը, ինչպես նաև գրերի ոչ այնքան խոր փորագրությունը: Բնագիրը թվական չունի, սակայն նրա ժամանակը որոշվում է ոչ միայն Մակարավանքի մեղ հայտնի առաջին առաջնորդ Յովհաննես Ա-ի հիշատակությամբ (մինչև 1215-ական թվականները), այլև բնագրի այն հատուկ մատնանշումով, ըստ որի նվիրատվությունը կատարվել և արդ մասին արձանագրություն է փորագրվել եկեղեցու շինության ընթացքում (յորժամ շինեցաք զեկեղեցիս... Ականջ միաբանեցաւ մեզ և ազգեական եղև արդեամք ի վարձն):

1—2—5-րդ շարքերում նվիրատուի անունը պարզ կարդացվում է Ականջ, ըստ որում 1,5 շարքերում Ականջա տրական հոլովածակով, իսկ 2-րդում՝ ուղիղ, Ականջ ձևով: Նույն տառաշարքը կարելի էր վերծանել նաև Ակնաջ, քանի որ ն գիրը փորագրված է Ա-ի ձախ ստեղծի վրա, ուստի և կցագիրը կարելի է նաև և ան ընթերցել: Մեզ ավելի հավանական է թվում Ականջ ընթերցումը, քանի որ այն գոնե բացատրվում է նույն բառի հասարակ անվամբ, մինչդեռ Ակնաջն ոչ մի մեկնություն չի ենթարկվում: Բացի դրանից, այս բնագրի Ա-ի ձախ ստեղծի վրա ն-ի նման փորագրություն ունեցող բոլոր դեպքերում ճիշտ ընթերցումը ոչ թե նա է, այլ՝ ան (տե՛ս գծագիր ընդօրինակության մեջ յանուն, Յոհանիսի, միաբանացս, ազգեական, կեղեղանի և այլն): Ականջ անձնանունը վկայված է նաև Հին եկեղեցու գլխավոր խորանի թաղի վրայի արձանագրության մեջ, որը թեև անթվակիր, սակայն ակնհայտորեն ժամանակամերձ է քննվող արձանագրությանը: Չի բացատրված նաև, որ այս երկու նվիրատուները նույն անձը լինեն: Այս մասին ավելի մանրամասն խոսվում է Հին եկեղեցու նշված բնագրի ժանրագրության մեջ:

3—4 շարքերում եւ տվեմ Ա ժամ :Գ: աւր ի տարին կապակցության մեջ պարզ չի հասկացվում, թեև գիտենք, որ խոսքը նվիրատուին՝ Ականջին հատուցվելիք պատարագների մասին է:

5-րդ շարքում սկզբի տառաշարքերը վերապահությամբ վերականգնում ենք՝ եւ կեղեղանեաց իւր Ականջա, թեև կեղեղան բառի իմաստը պարզ չենք պատկերացնում: Թվում է, բնագրին այդ

Տասում անավարտ է մնացել, քանի որ նշված է միայն թե Ակաճի կենդանության օրոք ում հիշատակին պետք է արվեն պատարագները, բայց չի նշված այդ պատարագների կատարման կարգը՝ ետ ելից Ակաճա... ըստ երևույթին ավելորդ են համարել առանձին շեշտել այդ կարգը, ինքնին հասկանալի համարելով:

Ակաճը անձնանունը անծանոթ է հալ իրակոնությունը և այստեղ նրա միակ հիշատակությունն է:

333ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. խաչքարի պատվանդանի վրա, հայտնաբերվել է գլխավոր եկեղեցուց 50 մ. հարավ, այժմ գտնվում է Աստվածածին եկեղեցուց դեպի հյուսիս, կիսավեր մատուռում, 10 տող.

ԱԳՆԵՑ
 ԷԻԱԶԱԿ
 ԵՄՆԱԲՅՈ
 ԱՆԻՄԵՆԻ
 ՆԵՑԱՆԻԻ
 ԱՄՈՆՍԱՐ
 ԴԵԼԲՅՈ
 ՆՄԻՄՈՐ
 ՆԱՆԵՉԱՆ
 ԻԳՈՐԵ

ԿԱԳՆԵՑՈՒ ԽԱԶՍ ԿԱՄԱԻ ՀԱԻՐ ՅՈՒՀԱՆԻՈՒ ԵՒ ՇԻՆԵՑԱԻ ՀԻՒՐԱՏՈՒՆՍ ԱՐԻ
 ԴԵԱՄԲԲ ՅՈՒՀԱՆԻՍԻ: ՈՐ ՈՔԻՀԱՆԵ ԶՍԱ...:

Գիտելիք. Արձանագրված քարը խաչքարի պատվանդան է եղել, հայտնաբերվել է գլխավոր եկեղեցուց մոտ 50մ հարավ, Բազազի որդի Վարդանի կանգնեցրած խաչարձանի բեկորների մոտ: Արձանագրության վերջին տողերում փորագրված են եղել անեծքի ձևակերպումը և թվագիրը, որ անհնար է վերականգնել:

Այս շինարարական բնագրի ժամանակը որոշվում է Մակարավանքի առաջնորդ Յոհանիսի հիշատակմամբ, որ արձանագրության տառաձևերի հնագրական հատկություններից դատելով, պետք է Յոհանէս Ա-ն լինի, Մակարավանքի մեզ հայտնի առաջին վանտհայրը, 1198թ. Աստվածածին եկեղեցին կառուցողը: Վանքապատկան հյուրատունը, որի շինության առթիվ կանգնեցվել է խաչքարը, գտնվելիս է եղել գլխավոր եկեղեցուց 10—15մ հարավ, այն սենյակներում, որոնց պատերը, ինչպես վերևում տեսանք, 2—3մ բարձրությամբ գեռ կանգուն են և որոնցից արեելյանի վրա պահպանվել է բուխարիկի խորշը:

Արձանագրությունը հայտնաբերել և ընդօրինակությունը մեզ է տրամադրել վիմադրագետ Ա. Ա. Մանուչարյանը:

Լուսակ. 140

334. ԳԵՐԵԶՄԱՆՈՑ. մի տավակ տապանաքարի վրա, ղլխի կողմում քանդակված է մի ձիավոր, սրանից ցածր՝ երկու կանթավոր, երկարավիզ կուժ, որոնցից մեկը կառուցով և ծաղկանկար: Կժերի մեջտեղում գրված է մի սկիհոձև բաժակ, աջ կողմում՝ մի պնակ: Երկու քանդակների մեջտեղում փորագրված է 8 տող չավածո ասպանագիր:

ԵՄԵՍ ԴԱՊԱՆ
 Ի ԱՍՏԻՃԻ: ՔԱՍ
 ՊԱՐԵՄ. ՈՐԴԻ ԴՈՒ
 ՐՄԻՇԻ: ՈՎ ԿԱՐԴԱՅ
 ՕՂՔ ՉՄԵՉ ՅԻՇԻ
 ՏՐՅԱՐԳԱՈՒԹՆՆ Ի
 ՄԵՉ ԲԱՇԽԻ: Ռ. Մ.
 Բ ԹՎԻ

ԵՄ ԵՍ ԴԱՊԱՆԻ ԱՍՏ ԻՃԻ, ՔԱՍՊԱՐ
 ԵՄ, ՈՐԴԻ ԴՈՒՐՄԻՇԻ, ՈՎ ԿԱՐԴԱՅ-
 ՕՂՔ ՉՄԵՉ ՅԻՇԻ, ՏՐ ՅԱՐԳԱՈՒԹ-
 ԻՆՆ ԻՄԵՉ ԲԱՇԽԻ: Ռ. Մ. Բ ԹՎԻ
 (1753):

335. ԳԵՐԵՉՄԱՆՈՑ. ԺԻ ՎԵՂԱՐԱՃԼ ԽԱՎԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, 3 ԽՈՂ.

ԱՅՍ ՏԱՊԱՆՍ
 ՀԱՅՐ ԹՕՐՈՍԻՆՆԱՅԱ
 ՈՂՈՐՄԻԻ ՀՈԳՈՒՆ
 ԹԻ ՌՃԿԱ

ԱՅՍ ՏԱՊԱՆՍ|ՀԱՅՐ ԹՕՐՈՍԻՆՆ Ա.(Յ)
 Ա.Ծ.Ս. ՈՂՈՐՄԻ ԻՂԻՂ ԼՈԳՈՒՆԻ: ԹՐ-
 ԻՂԻՆ, ՌՃԿԱ. (1712):

336. ԱԶԱԶՈՒՐ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՑ. սպիտակ սալ տապանաքարի վրա 3 ԽՈՂ.

ԱՅԱ ՏԱՊԱՆՍ ԵՐՄԻՆԻ
 ԿՈՂԱԿԻԿ ՊԱԴԱՅԿՈՒԷՆ
 ԹԻ ՌՄԼԳ

ԱՅՍ ԷՍ ՏԱՊԱՆՍ ՏԷՐ ՍԻՄՈՆԻԿՈՂԱ-
 ԿԻՑ ԴԱՍԴԱՅԿՈՒԼԻՆԻ: ԹՎԻՆ ՌՄԼԳ
 (1784):

337. ԱԶԱԶՈՒՐ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՑ, գորշավուն ավաղաքարե տապանաքարի վրա, 9 ԽՈՂ.

ԱՅ ԱԷ
 ՏԱՊԱՆ
 ՍԱԿԱ
 ԱԿԱ
 ԿՅԻՍԱ
 ԳՅՈՐԴ
 ԻՊԱՅ
 ԻՊԱՅ
 ԵՇԵ

ԱՅՍ ԷՍ ՏԱՊԱՆՍ ՄԱԿԱՐՍԱՎԱՆԵՑԻ ՍԱՐԳՍԻ ՈՐԴԻ ԱՊԱՋԻ: Ի ԹՎԻՆ ՌՄԺԵ (1766)

Գիտելիք. Վերծանութունն ստացել ենք բանասեր Հ. Մանուչարլանից:

338. Թեզևազոր ԽԱԶ. ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ հուշարձանախմբից 4 կմ. հարավ-արև-
մուտք, չափերը՝ 2,20×1,20×0,35մ, պատվանդանին ուղղահայաց թևի վրա 9 առղ.

ԵՍԽՈՅԱԴԷՂ
ՍԿԱՆԳՆԵՑԻԶ
ԽԱԶՍԻԲԱՐԵ
ԽԱԽՈՒԹԵՆ
ԳՈՅԻՄՈՅԵԽ
ՃՆՈՂԱՑԻՄ
ՈՅՈՐՔԵՐԿՐՊ
ԱԳԵՔՅԻՆԵՑ
ԷՔԻՔՄ:

ԵՍ՝ ԽՈՑԱԴԵՂՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԻԽԱԶՍ Ի ԲԱՐԵԽԱԽՈՒՍՈՒԹԵՂԱՆ՝ ՀՈԳՈՑ ԻՄՈՅԻ
ԵԻԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ՅԻՇԵՑԻՔ Ի ՔՄ:

Գիտելիք. Վերժանութլունն ստացել ենք բանասեր Հ. Մանուչարյանից:

Ա.Ռ.Ա.ՔԵԼՈՑ Վ.Ա.ՆՔ

Հուշարձանների այս խումբը տեղավորված է Իջևանի շրջանի Գետաշեն գյուղից մոտ 3 կմ արևմուտք, Կանեն գետակի ափերին, անտառապատ լեռների լանջերին և ստորոտներին: Միջնադարում այս ձորը և լեռնալանջերը շատ խիտ բնակեցված են եղել: Այդ են վկայում զանազան բնակավայրերի, ճարտարապետական առանձին կոթողների, կամուրջների, կարավանատների և այլ շինությունների բազմաթիվ մնացորդները, որոնք ամեն քայլափոխի հանդիպում են այստեղ: Պատմական Կալենս գավառի այս շրջանն իր աշխարհագրական հարմար դիրքով լուրատեսակ դարպասէր երեք հարևան երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի առևտրական ճանապարհների համար, որոնք այդ երկրները կապում էին կենտրոնական Հայաստանի տնտեսական-քաղաքական ա. մշակութային կենտրոնների հետ (Այրարատ, Շիրակ, Արագածոտն):

Առաքելոց վանք հուշարձանախմբի և առհասարակ Կունենի ափերի մյուս կառուցվածքների մասին որսամական հիշատակութայններ գրեթե չկան: Նախնակ մերձակալքում ապրած և իր ուսումնառութայնն ավարտած Կիրակոս Գանձակեցի պատմիչը համարլա ոչինչ չի հաղորդում իր մամանուկներում զգալի ծաղկման հասած ախպիսի նշանավոր վանքերի ու բնակավայրերի մասին, որպիսիք են Մակարավանքը, Դեղձուտի վանքը, Կիրանց վանքը, Առաքելոց այլանը՝ իր հոգևոր ու աշխարհիկ բազմաթիվ շինաթյուններով:

Այդ է պատճառը, որ վերոհիշյալ բնակավայրերի և առանձին հուշարձանների պատմական կլանքի միակ վկանելի համաբլում են նրանց որմերին փորագրված արձանագրությունները, որոնք, ցավոք, ախքան էլ հարուստ չեն, կամ իրենք՝ կառուցվածքները, որոնց նշմարները նուխպես կարող են որոշ չափով լրացնել մատենագրական տեղեկությունների պակասը:

Նորագույն տեղագրական գրականութայն մեջ ևս Առաքելոց վանքի հուշարձանները պատշաճ ուշադրութայն չեն արժանացել: Ջալալյանցը, հետադալում նաև Բարխուդարյանցը հարևանցի նկարագրել են Առաքելոցի գլխավոր եկեղեցին և հրատարակել մի քանի արձանագրություն՝ ախ էլ, իրիստ պակասավոր և աղավաղված: Առաջին անգամ Առաքելոց այլանի հուշարձանները հետադոտել և նրանց մասին հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրություն է հրատարակել Գ. Սարգըսյանը («Եղմիածին», 1955, է, էջ 33—40, Բ, էջ 31—39): Այստեղ հեղինակը վիմական բնագրերի զգալի մասը ներկայացնում է իր վերձանութայնբ, իսկ մնացածը՝ հուշարձանների պահպանութայն մարմինների արշավախմբային նյութերից քաղելով: Սակայն երկու դեպքում էլ այդ բնագրերի վերձանությունները թերի են և սխալաշատ: Առաքելոց վանքի հիմնական, պարսպապատ հատվածում պահպանվել են հետևյալ հուշարձանները.

ա. Գլխավոր եկեղեցին գտնվում է վանք-ամրոցի հարթութայն հյուսիս-արևմտյան անկյունում, հյուսիսից կից է պարսպին: Եկեղեցին գմբեթավոր, փոքր չափերի դահլիճ է, արտաքուստ և ներքուստ ուղղանկյուն հատակագծով: Արևելյան գլխավոր խորանը սովորականից ընդարձակ է (այլանդատների հաշվին) և ունի բարձր բեմ, որի հարավային կողմից եռաստիճան սրբատաշ սանդուղք է բարձրանում: Ուշագրավ է եկեղեցու տանիքը, որը երկթեքի փոխարեն միթեք է: Տանիքի հյուսիսային մասն արհեստակտնորեն հարմարեցված է պարսպապատերի բարձրութայնը և կցված

նրան, որտեղից այն աստիճանաբար իջնում է մինչև հարավային պատի եղբու: Եկեղեցու միակ դուռը արևմտյան պատից է, որը բացվում է գավթի մեջ: Ներքուստ կրաշաղախով սվաղված պատերի վրա նկատվում են գունավոր որմնակարների մնացորդներ՝ խիստ եղծված վիճակում: ավետների վրա նկատվում են հյուսիսային պատի կենտրոնական մասի և բեմի կիսակլոր պատի նկարները՝ մարդկային դիմանկարների ուրվագծեր: Եկեղեցու սրբատաշ պատերը զուրկ են զարդաքանդակներից, արձանագրություններ չկան:

բ. Գավիթը կից է եկեղեցուն արևմուտքից, կառուցված է նույն դեղնակապտավուն սրբատաշ քարերով: Սա միջին չափերի (10,4×9մ) անսյուն դահլիճ է, քառակուսի հատակաձևով և կամարակապ ծածկով: Ծածկը գոտկող խաչաձև կամարները հենվում են արևմտյան և հարավային պատերի երկուական կիսամուկթերի և հանդիպակաց պատերից ելնող երկուական ելուստների վրա: Գավթի հյուսիսային և արևմտյան պատերը ընդհանուր են պարսպապատերի հետ, ուստի ավելի հաստ են և արտաքուստ օժտված կիսակլոր աշտարակներով: Առաքելոց վանքի այլ գավիթը միջնադարի հայկական ճարտարապետության մեջ եզակի է իր ծածկի թագակապտված և երդիկի լուրահատուկ հորինվածքով, որը հիշեցնում է ժողովրդական զլխատների տանիքի և երդիկի հազարաչեմ կառուցվածքը, միայն այն տարբերությամբ, որ զլխատների փայտյա գերանների փոխարեն այստեղ օգտագործված են մշակված և նույնպիսի գերանների ձև տված քարե հեծաններ:

Հարավային դռան ճակատակալ կիսակլոր բարավորի վրա փորագրված է մի նվիրատվական ընդարձակ արձանագրություն:

գ. Զանգագատունը մի փոքրիկ (3,5×2,5մ), քառակուսի հատակագծով շենք է, կառուցված գավթի հարավ-արևմտյան անկյանը կից: Եղել է կամարակապ և ունեցել է թաղակապ ծածկ, որից միայն որմնասյուների ներքին մասերն են մնացել: Արևմտյան պատն ընդհանուր է եղել պարըսպի հետ, իսկ հյուսիսայինը՝ գավթի հարավային պատի հետ: պահպանվել են սրանց վրայի որմնասյուներն ու որմնակամարները, իսկ հարավ-արևելյան անկյունում ունեցել է մի ամբողջական սյուն: որի վրա են հենվել թաղակիր կամարները՝ առաջացնելով կամարակապ բացվածքներ: Հարավ-արևմտյան որմնասյան վրա փորագրված են նվիրատվական անթվական արձանագրություններ:

դ. Խաչքար ս. Կարապետ, կանգնած է եկեղեցու պատի տակ, հարավ-արևելյան անկյան մոտ, ավազաքարի ամբողջական սրբատաշ ցածր պատվանդանի վրա: Բուն խաչքարը կարմրագույն տուֆի միակտոր քարից է, շքեղ քանդակազարդված: Նրա ճակատի կենտրոնում, կլոր արձանաղըրված շրջանակի մեջ Քրիստոսն է բազմած գահին և ձեռքերը տարածած՝ մատնացույց է անում շրջանակի վրա փորագրված պատվիրանը: Նրա երկու կողմերին չոքած երկու հրեշտակները բռնել են շրջանակը: Ճակատի մնացած մակերեսը ծածկված է բուսական և երկրաչափական բարձրաքանդակներով, որոնց մեջ նկատվում են նաև խոշոր, ծաղկագիր տառեր, մեծ մասամբ հողմահարված և անընթեռներ:

Խաչքարի միջամասը, խաչթևերի արանքները ծածկված են երկրաչափական նարբ դարդերով, որոնք կատարված են բարձր ճաշակով և անխոցելի վարպետությամբ: Խաչի արտաքին շրջանակի թեք երիզների վրա փորագրված է կիսակրոնական, կիսաաշխարհիկ չափածո արձանագրություն, որը միաժամանակ հաղորդում է խաչարձանը կանգնեցնելու հանգամանքների մասին:

ե. Առաքելոց վանքի երկրորդ եկեղեցին գտնվում է ամրոցի զլխավոր մուտքից հարավ, արեւելյան պարսպին կից: Սա քառանկյուն հատակաձևով արևելքից արևմուտք ձգվող մի պարզ շինություն է, կառուցված շերտավոր որձաքարերով և կրաշաղախով: Ծածկը թաղակապ է, տանիքը հարթ և ծածկված է հողով:

զ. Նախորդից մի քանի մետր հարավ, պարսպին կից հյուսիսից հարավ ձգվող մի ընդարձակ շենքի ավերակներն են՝ ավազաքարով շարված հաստ պատերով: Կանգուն է միայն արևելյան պատը, մյուսները պահպանվել են 2—3 մ բարձրությամբ: Կանգուն պատի մեջ կան երեք կամարակապ խորշեր, որոնցից կենտրոնականի միջով բացվում է շենքի մուտքը: Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս շինությունը եղել է Առաքելոց վանքի սեղանատուև-խոհանոցը:

է. Առաքելոց վանքի պարսպապատ սարահարթի հարավային ծայրին տեղավորված է հուշարձանների զլխավոր խմբի վերջին կառուցվածքը՝ մի մեծ ու ընդարձակ դահլիճ, որի երեք պատերը ընդհանուր են պարսպի հետ: Սենյակի պատերը շարված են խոշոր որձաքարերով՝ խնամքով ծեփ-

ված կրաշաղախով: Լինթադրվում է, որ այս շինությունը վանքի համար ծառայել է իբրև ընդունարան-գահիլին:

բ. Առաքելոց վանքի պարիսպը շրջափակում է այն քարաժայռը, որի հարթութիւնն վրա տեղավորված են հուշարձանախմբի վերը նկարագրված կառուցվածքները: Հարթութիւնն երկարութիւնը մոտ 200 մ է, իսկ միջին լայնութիւնը՝ 100: Ներկայումս նախնական վիճակով կանգուն են պարիսպների հյուսիսային հասվածն ամրող թուխմբ և արևմտյանի մի զգալի մասը՝ չորս աշտարակներով: Մնացած հատվածներից քիչ բան է պահպանվել: Պարսպապատերն ունեցել են երևք գուռ, որոնցից երկուսը կանգուն են. մեկը բացվում է արևմտյան պարսպի միջից և, հավանաբար, ծառայել է բնակավայրի արևմտյան թաղամասի հետ հաղորդակցվելու համար: Երկրորդ դուռը պարսպի հարավ-արևելյան ծայրին է, իսկ երրորդը՝ նրանից դեպի հյուսիս՝ արևելյան պարսպապատի կենտրոնում: Սրանք հազիվ են նշարվում, քանի որ այս հատվածի պարիսպները վատ են պահպանվել:

Առաքելոց վանքի մերձակալքում գտնվող բնակավայրի հարավային թաղամասում, Կունեն գետակի ավերից ոչ հեռու պահպանվել են հետևյալ շինությունները.

ա. Արաբնոցի կամուրջը կառուցված է Կունեն գետակի վրա, միակամար, մոտ 10մ թռիչք ունեցող, բարձր կամար է: Նրա խոշոր կիսամշակ քարերով շարված խելերը հենվում են առափնյա ժայռերի վրա՝ տալով մի բարձր կամար՝ կառուցված ավազաքարի մեծ սալաքարերով՝ արտաքուստ թեթեակի հարթված: Կամուրջի անցուղին մոտ 2մ է: Նա դիմացել է լեռնային գետակի և ժամանակի ավերածություններին, կանգուն է: Կառուցման ժամանակն անհայտ է. անվիճելի է, որ այն ժամանակակից պետք է լինի Առաքելոց վանքի մյուս հուշարձաններին: Արաբնոցի անվանումը ժողովրդական է, առաջացած մոտակալքում կառուցված ձիթահանքի (սրաբնոց) անունից:

բ. Շենք կամուրջի մոտ, գտնվում է կամուրջից մոտ 60մ հարավ-արևելք, գետակից 20մ հեռու, Փոքր, անշուք սենյակ է, կառուցված սովորական լեռնաքարով, մասամբ թրծած աղյուսով: Նենքն սուանց սյուների է, թաղակապ ծածկով: Ներքուստ պատերի մեջ կան նեղ ու բարձր կամարակապ որմնախորշեր՝ սրագագաթ կամարներով, որոնք շարված են թրծած աղյուսով: Նեղ դուռը արևմտյան պատից է և բացվում է ալդտեղով անցնող պատմական ճանապարհի վրա: Այս շենքը հավանաբար ծառայել է իբրև պահակասուն կամուրջի համար կամ թերևս հարկահավաքման կետ, մաքսատուն՝ կամրջով անցնող բեռների համար: Հուշարձանի կանգնման ժամանակն անորոշ է:

գ. Հարավային թաղամասի տափարակի կենտրոնում պահպանվել են արևելքից արևմուտք ձգվող մի ընդարձակ շենքի (15×10մ) ավերակներ, շինված տարբեր չափերի գետաքարի անմշակ բեկորներով: Ծածկը թաղակապ է՝ գոտկված երեք մշակված կամարներով, որոնք շենքի ներսի տարածությունը բաժանում են 4 անհավասար հատվածների: Հուշարձանը իր ընդհանուր տեսքով և ներքին կառուցվածքով հար և նման է Կիրանց վանքի սեղանատանը, թեև պատմական հուշարձանների «Ուղեցուցում» այն անվերապահորեն ձիթահանքի շենք է համարվում, հիմնվելով տեղացիների այն վկայութիւնն վրա, որ շենքի հատակին մի ժամանակ ձիթահանքի քար է եղել ընկած: Սակայն շինությունը ոչնչով չի հիշեցնում ձիթահանքի ավանդական կառուցվածքի տարրերը (րովի, մամլելու բաժինները և այլն), որպիսիք դիտվում են միջին դարերի ձիթահանքերում (Տաթև, Սվերդլով և այլն): Թվում է, շենքը եղել է կարավանատուն կամ անասունների դոմ: Ինչ մնում է ձիթահանքին, ապա այստեղ դրա գոլությունն աներկբայելի է, չէ որ, ինչպես նշեցինք, նրանից է առաջացել Արաբնոցի կամուրջ անվանումը: Եվ հիբավի, նույն տափարակի արևելյան ծայրին գրանըվում է մի այլ, ավելի ընդարձակ շինություն (17×10)մ, հյուսիսից հարավ ձգվող, որի բարձր պատերը դեռ կանգուն են: Շենքը երեք բաժանմունք է ունեցել, որոնցից հարավային ամենամեծը դեպի թեք լանջը բացվող դուռ ունի: Մեղ թվում է, որ բնակավայրերի ձիթահանքի շենքը սա պետք է լինի:

* * *

Առաքելոց պարսպապատ վանքի և բնակավայրերի հարավային թաղամասի հուշարձանների այս համառոտ նկարագրությունից ակնհայտ է, որ այստեղ XIII դարի կեսերին աշխույժ կյանք է ապրել Մահկանաբերդ գավառի ընդարձակ ու ուշագրավ բնակավայրերից մեկը: Շրջակալքում հողամշակութիւնը ու անասնաբուծութիւնը զբաղվելու համար հարմար հողամասեր ու արոտավայրեր գրեթե չկան: Չորս կողմից զառիվայր իջնող, ժայռոտ ու անտառապատ լեռներն ու դրանց բաժանող խոր

ձորերը և միայն տեղ-տեղ երեւցող փոքրիկ սարալանջերի բացատները հազիվ թե բավարարեն այդպիսի մի ընդարձակ բնակավայրի բնակչութեան պահանջները, եթե նրանք պարապեին լոկ գլուղատնտեսութեամբ: Բնակավայրի հարավային թաղամասում պահպանված կարավանատան շենքը, Սրաւնոցի կամուրջը, մաքսատան շենքը ակնառու ապացույց են, որ բնակավայրը հնում եղել է բանուկ ճանապարհների հանգուցի վրա կառուցված մի ավան կամ գլուղաքաղաք: Եվ հիրավի, Ձուրագետի հովտով անցնող առևտրական ճանապարհները այստեղ են միանում Աղստե և Ոսկեպար գետերի եզերքներով ձգվող ճանապարհին, որոնցից առավել նշանակալիցը Ալավերդու շրջանի Գարինջ, Մարց, Ահնիձոր գլուղերով անցնելով, մտնում էր Կունեն գետակի ձորը և Կիրանց վանքի ու Առաքելոցի վրայով տանում դեպի Գուռ գետի հովիտը: Այս հիմնական մայրուղուն Կունեն գետակի և Մամսոնի ջար վտակի խառնման տեղում միանում է մի այլ ճանապարհ, որն անցնում է Դեղձուտի վանքի մոտով և բանուկ է նաև մեր ժամանակներում: Այդ ճանապարհով են անասունները սարերից իջնում Գուռ ձմեռային արոտները: Առաքելոց բնակատեղից, Սրանոցի կամուրջով անցնող ճանապարհի ճլուղավորումը գետակի աջ ափով ընթանալով, հասնում էր մինչև Մակարավանք և Պիպիս գլուղերը, իսկ այստեղից էլ՝ մինչև Կայեն, Մանթաշ և Աղստեի ձորում գտնվող մյուս ամրոցներն ու բնակավայրերը:

Այս ամենից երևում է, որ Առաքելոց բնակատեղը ոչ թե մի գլուղատեղ էր սովորական միջնադարյան իմաստով, այլ բանուկ ճանապարհների վրա կառուցված ընդարձակ և բարդավաճ գլուղաքաղաք, կամ ավան՝ առևտրի և արհեստագործութեան այն բոլոր հաստատութիւններով, որոնք բնորոշ են XII—XIII դարերի նուրբատիպ ավաններին (Բջնի, Գառնի և այլն): Մյուս կողմից, Առաքելոց բնակատեղի արևելյան թաղամասում գտնվող հուշարձանների զլխավոր խմբի վաճառք-ամրոց անվանումը ճիշտ էի արտացոլում այդ կառուցվածքների բնույթն ու առանձնահատկութիւնները: Դա մի սովորական վանական համալիր է՝ շրջափակված պարիսպներով, հար և նման ժամանակամերձ մյուս պարսպապատ հուշարձանախմբերին (Տաթև, Գնդեվանք և այլն) և ոչ մի ընդհանրութիւն չունի ամրոցների կամ իսկական վաճառք-ամրոցների հետ (Ամրերդ):

* * *

Նկարագրելով Առաքելոց բնակավայրի առանձին հուշարձանները, մենք զժվարանում ենք նշել նրանց կառուցման ժամանակը, կառուցողներին կամ այն պարագաները, որոնցում կատարվել է շինարարութիւնը, քանի որ մատենագրական և վիճագրական աղբյուրները այդպիսի հնարավորութիւններ չեն ընձեռում: Նախորդ ուսումնասիրողները նույնպես լռութեամբ են անցել այս հարցի մոտով, և միայն Գ. Սարգսյանը իր հիշյալ հոդվածում աշխատել է ժամանակագրական որոշ կապ ստեղծել այդ կառուցվածքների միջև, պարզել նրանց հիմնադրման և գործունեութեան ժամանակները: Հեղինակի համար ելակետ է ծառայել Առաքելոց վանքի գավթի հարավային դռան ճակատակալի ընդարձակ արձանագրութիւնը, որի թվագիրը, ավաղ, հողմահարված է, եղծված և համարյա անընթեռնելի: Անվերապահորեն ընդունելով նախորդ հրատարակիչների ընթերցումը թվագիրը՝ ՈՂԳ, ՈՂԴ (1244, 1245 թթ.), որ, ինչպես կտեսնենք, առնվազն 60—70 տարով եւր է տանում հուշարձանը, Սարգսյանը իր ժամանակագրութիւնը կառուցում է դրա վրա: Մինչդեռ անհրաժեշտ էր ելակետ ընդունել և ոչ թե այս, այլ պահպանված մյուս թվակիր բնագրերը, որոնք բոլորն էլ պատկանում են XIII դարի վերջերին:

Անցնում ենք հուշարձանախմբի վիճագրութեան քննութեանը, որը զգալի նպաստ արող է լինել Առաքելոց վանքի և բնակավայրի պատմական կյանքի մոտ լոկալները լուսաբանելուն:

թվաչի՛ր՝ ընթերցման ճշգրտութիւնը որոշելու համար: Այդպիսի կովան կարող է ծառայել միայն
աթաբեկ ամիրսպասալար խուժուրուղայի հիշատակութիւնը արձանագրութեան նախաբանում. որը
մեզ է բերված Գրիգորի նվիրատութեան ժամանակը մատնանշելու նպատակով. կամաւ բարերա-
րին այ՛ եւ ողորմութեամբ արթաբեկ ամիրսպասալար խուժուրուղին, ես՝ Գրիգոր թոռն հաչեհի-
սեց... և այլն:

խուժուրուղան Կայենի և Մահկանաբերդի Արծրունիների իշխանական տոհմի աչքի ընկնող
շառավիղներից է, աթաբեկ ամիրսպասալար Վալոնց եւ Վրաց Սադուն Բ-ի որդին: Ինչպես ար-
դեն նշել ենք, Սադուն Բ-ն Մահկանաբերդի իշխանաց իշխանն էր, Հաղբատավանքի և այս գավա-
ռի մի շարք հոգևոր ու մշակութային կենտրոնների (Դեղձուտ, Առաքելոց, Կիրանց վանքեր) պատ-
րոնն ու հովանավորը: Այս իրողութիւնը բաղմիցս վկայված է ոչ միայն մատենագրական աղբյուր-
ներում (Կ. Գանձակեցի, Վարդան Արեւելցի, Գրիգոր Ականցի, Սամուել Անեցի, Ատ. Օրբելյան և
այլն), այլև բազմաթիւ վիմական արձանագրութիւններում՝ սկսած 1250-ական թթ. մինչև 1280-ական
թթ.: Սադունի մահվան թվականը, ուրեմն և խուժուրուղայի ամիրսպասալարութեան տարին,
ստույգ հայտնի չէ. ըստ Վրաց պատմութեան, նրա մահվան թվականն է 1281թ., ըստ Ստ. Օրբել-
յանի ժամանակագրութեան՝ 1282թ., իսկ ըստ Սամուել Անեցու պատմութեան շարունակութեան՝
եւ Սադուն մեռաւ ի Տաշիր ի թւ ՌՄՁԵ (1285թ.): Հոր մահվանից անմիջապես հետո խուժուրուղան
Վրաց Դեմետրե թագավորից ստանում է Վրաց և Հայոց ամիրսպասալարի տիտղոսը, իսկ մի քա-
նի տարի անց՝ նաև աթաբեկութուն, որով և Վրաց արքունիքում հասնում է իր հոր առաջնակարգ
դիրքին:

Այստեղից ակնհայտ է, որ քննվող արձանագրութեան թվագրի ՈՂԳ (1244թ.) ընթերցումը մի-
անգամայն անհարիր է նրանում հիշված ամիրսպասալար և աթաբեկ խուժուրուղայի գործու-
նեութեան ժամանակներին, 1281—1285թթ. մինչև դարավերջը: ՈՂԳ—1244թ. պատմական ասպա-
րեղ չէր իջել ոչ միայն խուժուրուղան, այլև նրա հայրը՝ աթաբեկ Սադունը, որի իշխանութեան
մեղ հայտնի հնագույն վկայութիւնը վերաբերում է 1251թ. (Խնձորուտ հնավայրում կանգնած Բեմ
խաչքարի արձանաղբութիւնը): Բնական է կարծել, որ այդ ժամանակ խուժուրուղան նուրիսկ
դեռ ծնված չէր, քանի որ Բեմ խաչարձանի նշված արձանագրութեան մեջ հիշատակված է իշխա-
նաց իշխան պարոն Սադունի միայն մեկ՝ Պապաց որդին:

խուժուրուղայի որմնանկարը իր հոր եղծված նկարի կողքին պահպանվել է Հաղբատի Ս.
Նշան եկեղեցու հարավային պատի վրա, ներքուստ. պարոն խուժուրուղայ մակաղբութեամբ:

Նա աչքի ընկնող դեր է կատարել Վրաց պատմութեան մեջ մոնղոլական տիրապետութեան
շրջանում, և պատահական չէ, որ նրա ռազմավարական գործերի մասին հիացմունքով են խոսում
վրաց ժամանակագիրները: Նրա հիշատակը հավերժացված է Երուսաղեմի վրացական Սաչ վանքի
հուշարցուցակում, հուլիսի 1-ի օրվա տակ՝ այդ օրը պատարագ և հավիտեանական մաղթանք կա-
տարել խուժուրուղային, Սադունի սրբուն: Աստված ողորմի նրան:

Հակական աղբյուրներում պարոն խուժուրուղայի իշխանութեան հիշատակութեանը առաջին
անգամ հանդիպում ենք Սշտարակի Մարինե հուշարձանի մի չհրատարակված արձանագրութեան մեջ.
Յիշխանութեան] եւ ի տերութեան] պարոն խուժուրուղային, ես՝ Աւետիս, որդի Տերուսմանի
ետու յիմ ձեռնադրութեան] զվերի աւվին ձեռնադրի զջուրն ի սր Մարիանէիս... ի թվին
ՁԼԳ (1285)]: Սրանից երկու տարի անց արդեն ամիրսպասալար դարձած խուժուրուղային հանդի-
պում ենք իր իսկ ընդարձակ արտոնագրում՝ փորագրված Ավանի տաճարի արևմտյան պատին գրը-
սից՝ ի թվիս ՁԼԳ (1287թ) յաշխարհակալութեան] արքայից արքային Արղունին, ես՝ արթաբեկ
և ամիրսպասալար խուժուրուղայ, որդի արթաբեկ և ամիրսպասալար Սադունին, թողի զԱւանայ
զայգեց շարեան և զջուրկերոյն հորակտաւն: խուժուրուղայի մյուս հիշատակութիւնը Առա-
քելոց գավթի քննվող արձանագրութեան մեջ է, որի թվականը, ինչպես տեսանք, ստույգ չի վե-
րականգնվում: Արդ, մինչև եր՞բ է գործել աթաբեկ ամիրսպասալար խուժուրուղան: Հր. Աճառ-
յանի բառարանում և Ն. Մասի վերոհիշյալ հոդվածում այս հարցը բաց է մնացել: Աճառյանը Հաղ-
բատի որմնանկարում պատկերված պարոն խուժուրուղային և Առաքելոց վանքի այս արձանա-
գրութեան աթաբեկ ամիրսպասալար խուժուրուղային տարբեր անձնավորութիւններ է համարում,
հիմք ընդունելով Մ. Բարխուդարյանցի «Արցախը», որտեղ անձնանունը վերծանված է՝ խուժուր-
ուղին (խուրբ: ու Բուղին), իսկ թվագիրը՝ անիրական ՈՂԳ: Մինչդեռ, ինչպես ակնհայտ է դառ-

նում վերը շարադրվածից, դրանք միևնույն անձն են՝ աթարեկ Սադունի որդին՝ ամիրսպասալար Սուլթուրուզան:

Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը Սուլթուրուզալի կառախնամը մեղ անհայտ աղբյուրների հիմամբ գնում է 1293թ.: Մի բան անվիճելի է, որ Սուլթուրուզալի սպանությունը պետք է կատարված լինի մինչև 1294—1295թթ., քանի որ Սաչատուր Կեչառեցու այդ թվականներին գրած Ողբ վասն աւերման տան Արևելեան բանաստեղծության մեջ Սուլթուրուզան հիշվում է մեռած իշխանների շարքում: Ղևուքլուրուղեն յարեան հալավի, գիւր անըման պատկերն ի հողի... այսպես է ողբում նրա վախճանը բանաստեղծը:

Այսպիսով, ամիրսպասալար աթարեկ Սուլթուրուզալի գործունեությունը հարատևել է ավելի քան մեկ տասնամյակ՝ հոր մահվանից (1281—1283) մինչև իր մահը 1293—1294թթ.: Ահա այս տասնամյակի ընթացքում էլ Ստեփան Գծողը փորագրվել է Սաչեխիսենց թոռ Գրիգորի նվիրառը վական արձանագրությունը՝ Առաքելոց վանքի գավթի հարավային մուտքի բարավորի վրա:

